

ԴԱՎԻԹ ԿՆՅԱԶՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
1918-1920 ԹԹ.

ԵՐԵՎԱՆ 2008

ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ «ԱՐՄԷՆ ԵՎ ԲԵՐՍԱԲԷ  
ՃԵՐԵՃԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ», ԱՄՆ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

DAVID KNYAZYAN

**THE CAUCASIAN POLICY OF THE AZERBAIJANI  
DEMOCRATIC REPUBLIC IN 1918-1920**

THIS PUBLICATION WAS MADE POSSIBLE BY "ARMEN  
AND BERSABE JEREJIAN FOUNDATION" INC., USA

YEREVAN 2008

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՂԱՎԻԹ ՎԱՐԴԳԵՄԻ ԿԼՅԱԶՅԱՆ

ԱՂԻԲԵԶԱՆԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՎԿԱՍՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1918-1920 ԹԹ.

A 93816  
II



ԵՐԵՎԱՆ  
Հեղինակային հրատարակություն  
2008



ՀՏԴ 94/99:327  
ԳՄԴ 63.3+66.4  
Կ 624

Կնյազյան Դ.

Կ 624 Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության  
կովկասյան քաղաքականությունը 1918-1920 թթ. -եր.:  
Գեղինակային հրատարակություն, 2008.- 200 էջ:

ԽՄԲԱԳԻՐ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՊԿՏՈՐ  
Ա. Գ. ԱՎԱԳՅԱՆ

Աշխատությունը նվիրված է Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության տարածաշրջանային քաղաքականության, նրա հիմնական ուղղությունների, առաջնությունների, իրականացման մեթոդների ուսումնասիրությանը: Այդ համատեքստում լուսաբանվում են Ադրբեջանի հարաբերությունները Հայաստանի Հանրապետության, Վրաստանի, Ռուսաստանի Հարավի Ձինված ուժերի հետ, ինչպես նաև ներկայացվում է արտաքին ուժերի, մասնավորապես Օսմանյան կայսրության և Մեծ Բրիտանիայի ազդեցությունը Ադրբեջանի կովկասյան քաղաքականության վրա:

Աշխատանքը նախատեսված է պատմաբանների, միջազգայնագետների, ինչպես և ընթերցողների լայն շրջանակի համար:

ISBN 978-9939-53-192-2

ԳՄԴ 63.3+66.4

© Դ. Վ. Կնյազյան, 2008թ.

Աղբբեջանի պատմության ուսումնասիրությունն ունի ոչ միայն քաղաքական գիտական, այլև քաղաքական կարևորություն և արդիականություն ժամանակակից քաղաքական գործընթացների, այդ թվում՝ ԼՂ հիմնահարցի ծագման ուսումնասիրության տեսակետից: Ուսումնասիրության հետաքրքիր դաշտ է հանդիսանում Աղբբեջանական Դեմոկրատական Դանրապետության (այսուհետ՝ ԱԴԴ) կովկասյան քաղաքականությունը, որի շրջանակներում տվյալ աշխատանքի մեջ ընդգրկվում են ԱԴԴ-ի հարաբերությունները Դայաստանի Դանրապետության, Վրաստանի և Ռուսաստանի Դարավի Զինված ուժերի հետ:

Աղբբեջանական պետականության ձևավորման գործընթացն սկսվել է 1917 թ. փետրվարյան հեղափոխության արդյունքում և ավարտվել 1918 թ. մայիսի 28-ին ԱԴԴ հռչակմամբ: Դետագա 23 ամիսները նորաստեղծ պետականության կայացման և ամրապնդման շրջանն էին: Այդ ընթացքում նախանշվեցին Աղբբեջանի տարածաշրջանային քաղաքականության հիմքերն ու գերակայությունները, որոնք նպատակատուղված էին Անդրկովկասում նոր պետության միջազգային դիրքերի ամրապնդմանը, տարածաշրջանի մուտավմանարմակ մարզերի և տնտեսական ու ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող տարածքների (Լեռնային Դարաբաղ, Զանգեզուր, Զարուդ-Լախիջևան և այլն) Աղբբեջանի սահմաններում ընդգրկմանը, իր գլխավոր դաշնակից Օսմանյան Թուրքիայի հետ կայուն տարածքային կապի ստեղծմանը, Ռուսաստանի Դարավի Զինված ուժերի, իսկ հետագայում նաև Խորհրդային Ռուսաստանի՝ իր անկախության ղնչացմանն ուղղված նպատակների չեզոքացմանը, հանրապետության նախանշված սահմաններում գտնվող այլ ազգերի, գլխավորապես հայերի ու ռուսների կոմպակտ բնակության տարածքների թնհկական գտմանն ու Աղբբեջանի թնհկական միատարրության ապահովմանը:

Դենց աղբբեջանական առաջին պետականության շրջանում դրվեցին այն սկզբունքները և հիմքերը, որոնցով առաջնորդվում է Աղբբեջանի իր տարածաշրջանային քաղաքականության նպատակները սահմանելիս: Ներկայիս Աղբբեջանը շատ գծերով որդեգրել է առաջին հանրապետության կովկասյան քաղաքականությունը, օրինակ՝ Լեռնային Դարաբաղի հիմնահարցում, և նկատի ունենալով քննարկվող թեմայի ու արդի տարածաշրջանային իրողությունների և խնդիրների միջև սերտ կապը՝ էլ ավելի է կարևորվում 1918-1920 թթ. ԱԴԴ կովկասյան քաղաքականության ուսումնասիրությունը:

Աշխատանքի մեջ արված եզրահանգումները և մեկնաբանությունները կարող են օգտակար լինել Աղբբեջանի տարածաշրջանային քաղաքականության հիմքերի, իրա էկոլոցիայի համակարգային ընկալման համար: Այստեղ պետք է նկատի ունենալ այն կարևոր հանգամանքը, որ 1991 թ. ստեղծված Աղբբեջանական Դանրապետությունը հանդիսանում է

Աղբբեջանական Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդը, և նրա ներկայիս քաղաքականությունը, այն պայմանավորող գործոնները, նրա խորքային կողմերը և առանձնահատկությունները ճիշտ ըմբռնելու համար կարևորվում է աղբբեջանական առաջին պետականության շրջանի ուսումնասիրությունը:

Աշխատանքում քննարկվող խնդիրների ուսումնասիրության հիմնական սկզբնաղբբոյունների շարքում են Հայաստանի Ազգային Արխիվի նյութերը: Աշխատանքի շարադրման համար կարևոր նշանակություն են ունեցել քննարկվող շրջանի ականավոր հայ և արտասահմանցի պետական-քաղաքական գործիչների ու զորավարների հուշերը, հայկական, խորհրդային ու ռուսական, թուրքական և աղբբեջանական պատմագրության աշխատությունները, ինչպես և արևմտյան հեղինակների հետազոտությունները: Թե՛ թուրքական և թե՛ աղբբեջանական պատմագրությանը բնորոշ է պատմության իրադարձությունների և փաստերի թյուր մեկնարանումը, որի նպատակն է՝ ԱԴՀ-ն ներկայացնել՝ որպես կայացած պետականություն՝ միջազգայնորեն ճանաչված սահմաններով, որի կառավարման համակարգի հիմքում ընկած են եղել ժողովրդավարության սկզբունքները, իսկ տարածաշրջանային քաղաքականության հիմքում՝ հարևան հանրապետությունների հետ խաղաղ բարիդրացիական հարաբերությունների հաստատումը: Հատկապես խեղաթյուրվում են այդ շրջանում ՀՀ և ԱԴՀ հարաբերություններում առկա հակասությունների ելբբյունը և պատճառները, բերվում են Հայաստանի հանդեպ Աղբբեջանի տարածքային հավակնությունների կեղծ հիմնավորումներ: Ուստի անհրաժեշտ է ջափազանց հանգամանալից ուսումնասիրել հատկապես աղբբեջանական պատմագրության մեջ արծարծվող դրույթները պատմության իրադարձություններով և հակասություններով լի շրջադարձային այդ փուլի մասին, ինչը հնարավորություն կտա հայ պատմագրությանը գիտականորեն հերքել այդ բազմաթիվ խեղաթյուրումները:

Ուսումնասիրվող նյութի վերաբերյալ արժեքավոր փաստագրական նյութ է պարունակում այդ շրջանի հայկական, վրացական, աղբբեջանական և ռուսական մամուլը:

Վերջում ուզում են իմ ներախտագիտության խոսքերը հայտնել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ պարոն Աիկոլայ Հովհաննիսյանին սույն գիտական աշխատանքի իրականացման եւ գրքի հրատարակման գործում իր ունեցած անզնախտելի ներդրման համար: Խորին շնորհակալություն են հայտնում պատմական գիտությունների դոկտոր Արսեն Ավագյանին գիտական աշխատանքի ընթացքում իր ցուցաբերած մեծ աջակցության համար:



ԱՐԴՐԵՋԱՆԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՇԱԿՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ  
ԿՈՎԿԱՍՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ  
1918 Թ. ՍԱՅԻՍ-ՀՈԿՏԵՄԲԵՐ

**1.1 ԱՐԴ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԱԽԱՐԴՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԿՈՎԿԱ-  
ՍԻ ԹԱԹԱՐՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԿՈՐԱՄՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Առաջին աշխարհամարտը, խարխլելով Ռուսաստանյան կայսրության քաղաքական, ռազմական և տնտեսական հիմքերը, հանգեցրեց փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությանը: Ցարիզմի տապալումը խթանեց կայսրության տարբեր հատվածներում, հատկապես ծայրամասերում ազգային շարժումները, որոնք կենտրոնական իշխանության թուլացմանը զուգընթաց ազգային-տարածքային ինքնավարության պահանջներն առաջ քաշելուց սկսեցին հետզհետե հակվել դեպի ազգային անկախ պետականությունների ստեղծման գաղափարը: Դրան նպաստում էին ժամանակավոր կառավարության՝ պետության ապակենտրոնացման և ազգային-տարածքային ինքնավարությունների ըստեղծման միջոցով տեղացի ժողովուրդներին լայն լիազորությունների շնորհման քաղաքականությունը և էսորիդրային Ռուսաստանի որդեգրած ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը:

Ազգային շարժումն ակտիվացավ նաև Կովկասի թաթարների շրջանում: Նրանց արդեն իսկ գոյություն ունեցող քաղաքական կուսակցությունների կողքին ստեղծեցին նոր կուսակցություններ և հասարակական-քաղաքական կազմակերպություններ: Ստեղծվեց դրանք համակարգող մարմին՝ Մուսուլմանական հասարակական կազմակերպությունների խորհուրդ (ղեկավար՝ Ալի Մարդան Թուպչիբաշև) և գործադիր կոմիտե (ղեկավար՝ Մամեդ Հասան Հաջինսկի)<sup>1</sup>:

Կովկասի թաթարների քաղաքական կուսակցությունների գաղափարախոսական հիմքում ընկած էին ազգայնականությունը, սոցիալիզմը և պանիսլավիզմը: Ազգայնականության տակ սկզբնական շրջանում հասկացվում էր թյուրքիզմը, իսկ ադրբեջանցիների ազգային ինքնության գաղափարը դեռ տիրապետող չէր: Ազգայնական հողի վրա գործող կուսակցություններն էին՝ Մուսավաթը (Հավասարություն), Ապակենտրոնացման թյուրքական կուսակցությունը (Ֆեդերալիստներ) և Անկախ դեմոկրատների խումբը: Մուսավաթը հիմնադրվել էր Մամեդ Էմին Ռասուլզա-

<sup>1</sup> Տե՛ս Ա. Балаев, Азербайджанское национально-демократическое движение 1917-1920, Баку, Элм, 1990, стр. 5; T. Swietochowski, Russian Azerbaijan: the Shaping of National Identity a Muslim Community, 1905-1920, Cambridge, Cambridge University Press, 1992, p.85; М. Исмаил, История Азербайджана, (Краткий обзор с древнейших времен до 1920 г.), Баку, Азернешр, 1995, стр.92: Ա. Մ. Թուփչիբաշևի և Ադրբեջանի մյուս խոշոր քաղաքական գործիչների կենսագրական տվյալները տես՝ N. Abbasli, Azerbaijan Özgürlük Mücadelesi, İstanbul, Beyaz Balina Yayınları, 2001, s.127-129:

դիւ կողմից 1911 թ. և զործում էր՝ որպէս ընդհատակյա կազմակերպութիւն: Այն Կովկասի թաթարների խոշոր և միջին բուրժուազիայի ու մտավորականության կուսակցությունն էր, որի դիրքերը հատկապես ուժեղ էին Բաքվում: Մուսավաթի գաղափարական հիմքում սկզբում ընկած էին պահպանմանի դրույթները, և նրա ծրագրում ոչ մի խոսք չկար «Ադրբեջանի» և ադրբեջանցիների մասին<sup>2</sup>:

Կովկասի թաթարների ազգային շարժման մյուս ու թերևս իրական կենտրոնատեղին ոչ թե Բաքուն, այլ Ելիզավետպոլն էր: Կովկասի թաթարների քաղաքական կազմակերպություններն իրենց ձեռքը վերցրին իշխանությունը Ելիզավետպոլում և նահանգի զգալի մասում: Ըստ որում, նրանք ի սկզբանե մերժեցին Ելիզավետպոլի տես բնակչության և քաղաքում տեղակայված ռուսական զորամասերի ներկայացուցիչների՝ տեղական իշխանությանը մասնակցության դիմումները: Ելիզավետպոլում փետրվարյան հեղափոխությունից հետո հիմնադրվեց Ապակենտրոնացման թյուրքական կուսակցությունը (Ֆեդերալիստներ): Կուսակցության հիմնադիրն ու ղեկավարը Լասիբ բեկ Ուսուբեկովն էր, ով նաև 1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների շրջանում թաթար ազգայնականների հիմնադրած Չեղափոխական կուսակցությունից էր: Կուսակցությունն իր խնդիրն էր համարում «ազգային-տարածային դաշնային հիմունքներով դեմոկրատական հանրապետության իրականացում Ռուսաստանում՝ ընդհանրապես և, մասնավորապես, Ադրբեջանի, Թուրքեստանի, Կիրգիզիայի, Բաշկիրիայի և Պովոլժիեի ու Ղրիմի թաթարների և ընդհանրապես բոլոր թյուրքական ազգությունների ազգային ինքնավարություն»<sup>3</sup>: Միաժամանակ շեշտվում էր, որ յուրաքանչյուր ինքնավար միավոր կազմում է Ռուսաստանի անբաժան դաշնային մաս, որը կապված է նրա հետ պաշտպանության, արտաքին քաղաքականության, դրամական համակարգի և մաքսային ոլորտներով<sup>4</sup>: Փաստորեն, ի տարբերություն Մուսավաթի, ֆեդերալիստներն ի սկզբանե առաջ էին քաշում ազգայնական գաղափարներ և նույնիսկ իրենց կուսակցության ծրագրում հիշատակում էին «Ադրբեջան»<sup>5</sup> բառը<sup>6</sup>:

<sup>2</sup> Տե՛ս Է. Ս. Գասանա, *Идеология буржуазного национализма в Турции, Баку, Изд-во АН АзССР, 1966, стр. 137*; Мирза-Давуд Гусейнов, *Тюркская демократическая партия федералистов «Мусават» в прошлом и настоящем, Баку, Азгиз, 1927, стр.73*; М. Смит, *Партия «Мусават» и формирование азербайджанского социал-демократического национализма, История национальных политических партий России, Москва, РОССПЭН, 1997, стр.164-166*; R.G. Suny, *The Baku Commune 1917-1918, Princeton, New Jersey, Princeton University Press, 1972, p.19*:

<sup>3</sup> Տե՛ս T. Swietochowski, *Russian Azerbaijan, p.86*; Мирза-Давуд Гусейнов, *նշվ. աշխ., стр.79-85*:

<sup>4</sup> Տե՛ս Мирза-Давуд Гусейнов, *նշվ. աշխ., стр.79-85*:

<sup>5</sup> Իրականում Ադրբեջան կամ Ատրաքստական կոչվում էր Պարսկաստանի ծայր հյուսիս-արևմտյան մահաբզը, որն ըստ Բրոկհաուզի և Էֆրոնի հայտնի հանրագիտարանի՝ հյուսիսում սահմանակից էր Ռուսաստանին (Հարավային Անդրկովկաս), որից այն անջատված է Արարս գետով, իսկ արևելքում՝ ռուսական Թալիշ և պարսկական Գիլան մարզերին: Այսինքն՝ անգամ աշխարհագրական իմաստով «Ադրբեջան» անվանումը ոչ մի առնչություն չունի Արևելյան Անդրկովկասի հետ: Տե՛ս Энциклопедический Словарь, под редакцией профессора И. Е. Андреевского, Т. 1, С.-Петербург, Семеновская Типо-Литография (И.А. Эфрона), 1890, стр.212:



Ազգայնական գաղափարներով տոգորված երրորդ խոշոր քաղաքական կազմակերպությունը Անկախ ժողովրդավարական խումբն էր, որը բնւ չունէր շատ համախոհներ, բայց իր շարքերում ընդգրկում էր ազդեցիկ քաղաքական գործիչների, ինչպիսիք էին Ա. Թովչիրաշևը և Ֆաթալիխան խոյսկին:

Սոցիալիստական գաղափարախոսություն ունեցող հիմնական կուսակցությունը Ն. Նարիմանովի գլխավորած «Յունմեթ»-ն էր (Եռանդ), որը սերտ կապեր ուներ ՌԿ(բ)Կ-ի հետ: Մեկ այլ՝ սոցիալիստական «Ադալեթ» (Արդարություն) կուսակցությունը հիմնադրել էին Պարսկաստանից ներգաղթած քաղաքական գործիչներ Ա. Ղաֆարզադեն, Բ. Ադազադեն և այլն: Ադալեթը հետագայում անցավ Յունմեթի ղեկավարության տակ<sup>6</sup>:

Կովկասի թաթարների կղերական-պահպանողական զանգվածները ներկայացնում էր 1917 թ. սեպտեմբերին Բաքվի «Մուսուլմանները Ռուսաստանում» և Ելիզավետպոլի «Իսլամի միություն» կազմակերպությունների միավորումով ստեղծված Ռուսաստանի մուսուլմանների «Իթիհար» (Միասնություն) կուսակցությունը: Պանիսլամիզմի դիրքերում կանգնած Իթիհարը մերժում էր թյուրքիզմը՝ թշնամաբար վերաբերվելով նաև աղոթքասկանության գաղափարին<sup>8</sup>:

1917 թ. ապրիլի 15-20-ը Բաքվում տեղի ունեցած Կովկասի մուսուլմանների համաժողովի արդյունքներն ի հայտ բերեցին Կովկասի մուսուլմանական կազմակերպությունների շրջանում ֆեդերալիստների կուսակցության գերակայությունը, ինչի արտահայտությունն էր համաժողովի ընդունած որոշումն, ըստ որի՝ «մուսուլմանական ժողովուրդների շահերից է բխում Ռուսաստանի այնպիսի պետական կառուցվածքը, որի հիմքում ընկած կլինի տարածքային դաշնային միավորներից բաղկացած դեմոկրատական հանրապետությունը»<sup>9</sup>: Սակայն համաժողովը հավանություն չտվեց Կովկասի թաթարներին ինքնավար միավորի կարգավիճակ շնորհելու գաղափարին, ինչը պայմանավորված էր ժամանակավոր կառավարության հետ հակասություններից խուսափելու և Ռուսաստանի մյուս մուսուլմանական ժողովուրդների հետ գործողությունների միասնական գիծ մշակելու անհրաժեշտությամբ: Կովկասի թաթարներն իրենց դեռևս այնքան կազմակերպված չէին զգում այդ հարցը բարձրանելու համար<sup>10</sup>:

<sup>6</sup> Sh'u N. Keykurun, *Azerbaycan İstiklal Mücadelesinden Hatıralar (1905-1920)*, Ankara, İlke Kitabevi Yayınları, 1998, s.42:

<sup>7</sup> Sh'u T. Swietochowski, *Russian Azerbaijan...*, p.86-87:

<sup>8</sup> Sh'u A. Балаев, *Азербайджанское национально-демократическое движение...*, стр.10; T. Swietochowski, *Russian Azerbaijan...*, p.88-89:

<sup>9</sup> Sh'u T. Swietochowski, *Russian Azerbaijan...* p. 89-90:

<sup>10</sup> Sh'u A. Балаев, *Азербайджанское национально-демократическое движение...*, стр.6-9; В. Байков, *Воспоминания о революции в Закавказье 1917-1920 гг.*, стр.103-104, Архив русской революции, изданный И. В. Гессеном, Т.9, Москва, Политиздат, Терра, 1991: Կովկասի թաթար միլիտանտը Թալիզը դեմ արտահայտվեց համաժողովի որոշման մեջ «Աղոթքան» անվան ընդգրկմանը՝ գտնելով, որ դա կառաջացներ ժամանակավոր կառավարության երկյուղը: Նրա կարծիքն ընդունվեց, և «Աղոթքան» քառը հանվեց: Sh'u R.G. Suny, *Ձյվ. աշխ.*, p.86:



Ռուսաստանի մուսուլմանների քաղաքական կազմակերպության վերաբերյալ կայսրության մուսուլմանական ժողովուրդների քաղաքական ուժերի շրջանում ձևավորվել էր երկու հակադիր մոտեցում: Էթնիկական խմբերի ներկայացուցիչները, որոնք համեմատաբար կոմպակտ բնակվում էին Անդրկովկասում, Միջին Ասիայում, մերձվոլգյան տարածքներում և այլուր, տարածքային ինքնավարության կողմնակից էին: Իսկ կայսրության տարբեր վայրերում ցրված բաթարները, որոնք հնարավորություն չունեին պահանջելու տարածքային ինքնավարություն, համոզես էին գալիս մշակութային ինքնավարության օգտին մի կենտրոնացված մարմնի շրջանակներում, որը կներկայացներ Ռուսաստանի բոլոր մուսուլմանների շահերը:

Այս երկու հակադիր մոտեցումները բախվեցին համառուսաստանյան մուսուլմանական համաժողովում, որը տեղի ունեցավ Մոսկվայում 1917 թ. մայիսին: Համաժողովում տարածքային ինքնավարության դեմ հանդես եկան սոցիալիստները, որոնց կարծիքով այդ դեպքում տեղերում կուժեղանար հողատերերի և կապիտալիստների իշխանությունը, կդառնար սոցիալիստական առաջընթացը: Մինչդեռ կենտրոնացված ռուսաստանյան հանրապետությունը կապահովեր մուսուլմանների բարեկեցությունը և մշակութային իրավունքները: Պահիսլամիստները նույնպես դեմ էին տարածքային ինքնավարությանը՝ ձգտելով թույլ չտալ մուսուլմանական «ուժմա»-յի տարանջատումն աշխարհիկ հիմքերի վրա ստեղծված ազգային ինքնությունների:

Տարածքային ինքնավարության կողմնակիցների կողմից հանդես եկած Մ. Է. Ռասուլզադեն մշեց, որ որոշ ժողովուրդներ արդեն իսկ գիտակցում են, որ իրենց առաջին հերթին «թյուրքեր են և հետո մոր» մուսուլմաններ<sup>11</sup>: Արդյունքում համաժողովը 446 կողմ և 271 դեմ ձայներով ընդունեց բանաձև, որով կոչ էր արվում Ռուսաստանը վերափոխել դեմոկրատական հանրապետության՝ ազգային-տարածքային դաշնային միավորների հիման վրա: Դրանով հաղթանակ տարան կենտրոնախույս ուժերը: Համաժողովն ստեղծեց համառուսաստանյան մուսուլմանական խորհուրդ: Հուլիս և կոչ արեց ժամանակավոր կառավարությանը թույլ տալ մուսուլմանական զորամիավորումների ստեղծումը: Սակայն համաժողովը, հաշվի առնելով փոքրամասնության շահերը, նաև ընդունեց երկու կարևոր դրույթ, ըստ որի՝ հստակ սահմանված որոշակի տարածքում չբնակվող մուսուլման ժողովուրդներին պետք է շնորհվեր մշակութային ինքնավարություն, ինչպես նաև պետք է ստեղծվեր կենտրոնական մուսուլմանական վարչակազմ, որի իրավասության մեջ կմտնեին Ռուսաստանի բոլոր մուսուլմանների մշակութային և կրոնական գործերը<sup>12</sup>:

Մոսկվայի համաժողովն ավելի հստակեցրեց Մուսավաթի և Ալա-կենտրոնացման թյուրքական կուսակցության գաղափարական մերժեցու-

<sup>11</sup> Տե՛ս T. Swietochowski, Russian Azerbaijan... p. 92:

<sup>12</sup> Տե՛ս T. Swietochowski, Russian Azerbaijan... p. 92; A. Балаев, Азербайджанское национально-демократическое движение..., стр. 9:

մը, որի արդյունքում մայիսի վերջին տեղի ունեցավ նրանց միավորումը մեկ միասնական կուսակցության մեջ՝ Ֆեդերալիստների «Մուսավաթ» քյուրքական կուսակցություն: Հունիսի 20-ին ստեղծվեց միավորված կուսակցության ղեկավար մարմինը՝ Կենտկոմը, որի մեջ մտան նախկին Մուսավաթի չորս անդամներ՝ Ռասուլզադեան, Հաջինսկին, Ռաֆիբեկովը և Վեքիլովը ու չորս ֆեդերալիստներ՝ Ուսուբբեկովը, Ռուստամբեկովը, Աղազադան և Ախունդովը: Կուսակցության գաղափարական հիմքը ֆեդերալիստների կուսակցության ծրագիրն էր: Դրանով Մուսավաթը հրաժարվում էր պանիլավամիզմի գաղափարախոսությունից: Այսպիսով, տեղի էր ունենում Բաքվի բուրժուազիան և Ելիզավետպոլի խոշոր հողատերերին ներկայացնող երկու քաղաքական ուժերի միավորումը ազգայնականության հողի վրա: Նորաստեղծ կուսակցությունը դառնալու էր Կովկասի թաթարների ազգային շարժման հիմքն ու շարժիչ ուժը, որը հետագայում պետք է հանգեցներ նրանց պետականության ստեղծմանը:

Մուսավաթի հարաբերությունները ժամանակավոր կառավարության հետ հետզհետե սկսեցին լարվել, ինչի պատճառը Ռուսաստանի շարունակվող մասնակցությունն էր պատերազմին, մասնավաճի որ պատերազմում նրա հակառակորդները Կովկասի մուսուլմաններին ազգակից թուրքերն էին<sup>13</sup>: Հակասությունների մյուս կարևոր պատճառը ազգային հարցն էր. ըստ Մուսավաթի՝ ժամանակավոր կառավարությունը գործնական քայլեր չէր ձեռնարկում Ռուսաստանի կազմում ազգային-տարածքային ինքնավարությունների ստեղծման և ամրապնդման ուղղությամբ: Սակայն այստեղ իրականությունն այլ էր. ժամանակավոր կառավարությունը նույնիսկ ի վիճակի չէր մեղմել կենտրոնախույս միտումները և կայսրության քայքայումը: Նրա իշխանության թուլացմանը զուգընթաց, ծայրամասերում ուժեղանում էր ազգային խորհուրդների իշխանությունը: Վերջիններն էլ ավելի ամրապնդող գործոն էին դառնում քայքայվող բանակի մնացորդներից ստեղծվող ազգային զինված ուժերը:

Կայսրության քայքայման և կենտրոնախույս շարժումների խորացման պայմաններում արդիական էր դառնում Անդրկովկասի ժողովուրդների տարածքային սահմանազատման հարցը: Ակնհայտ էր, որ Անդրկովկասում ստեղծվելիք մուսուլմանների ազգային-տարածքային ինքնավարության մեջ զերակայող ժողովուրդ էին համդիսանալու Կովկասի թաթարները, սակայն հարց էր, թե ինչ տարածքներ պետք է ընդգրկվեին այդ ինքնավարության սահմաններում: Տարածքային սահմանազատման հարցի քննարկման ժամանակ ի հայտ եկան Անդրկովկասի երեք հանրապետությունների միջև ապագա տարածքային վեճերի հստակ նախանշանները, քանի որ այդ հարցում Մուսավաթն անմիջապես ի հայտ բերեց նվաճողական քաղաքական գիծ՝ պահանջելով ինքնավար «Ադրբեջանի»

<sup>13</sup> Sbu T. Swietochowski, Russian Azerbaijan... p. 96; В. Г. Туян, Карабахский конфликт: историо-геополитический аспект, Ереван, типография ГИУА, 1999, стр.22:



կազմում ընդգրկել Բաքվի և Ելիզավետպոլի նահանգները, Երևանի նահանգի կեսը և Թիֆլիսի նահանգի մի մասը<sup>14</sup>։

Անդրկովկասի երեք հիմնական ժողովուրդների սահմանազատման հարցը քննարկման դրվեց երկրամասում զեմստվոներ մտցնելու հարցի կապակցությամբ<sup>15</sup>։ 1917 թ. հունիսի 1, 2 և 8-ին Պետրոգրադում կայացան հանձնաժողովի նիստերը ցարական շրջանում Ռուսաստանյան կայսրության զեմստվոներից զուրկ մարզերում դրանք մտցնելու հարցի շուրջ, որոնց մասնակցեցին նաև Անդրկովկասի ժողովուրդների ներկայացուցիչները՝ ընդգրկվելով զեմստվոների հանձնաժողովում։ Խորհրդակցությունների ժամանակ անմիջապես հարց ծագեց, թե արդյոք զեմստվոներ պետք է մտցնել Անդրկովկասի արդեն իսկ գոյություն ունեցող վարչական միավորներում, թե անհրաժեշտ է կատարել երկրամասն ունեցող վարչական վերաբաժանում։ Քննարկումների արդյունքում վրացիների ներկայացուցիչները և հանձնաժողովի գրեթե բոլոր մնացած անդամները հավանություն տվեցին հայ ներկայացուցիչների կազմած վարչական վերաբաժանման նախագծին, որը ժամանակավոր կառավարության ներքին գործերի նախարարության կողմից անճշակ փոփոխություններով ներկայացվեց ՕԶԱ-ԿՈՄ-ին։ Սակայն պետք է նշել, որ Կովկասի թաթարների ներկայացուցիչները չմասնակցեցին քննարկումներին՝ պատճառաբանելով համապատասխան լիազորությունների բացակայությամբ և խնդրո առարկային անտեղյակ լինելով։ Նախագիծը նախատեսում էր Ելիզավետպոլի նահանգի բաժանում երկու՝ հայաբնակ Գանձակի (Ղազախի, Ելիզավետպոլի, Շուշի, Ջանգեզուրի, Ջևանշիրի, Կարյազինի գավառների լեռնային մասեր) և մուսուլմանաբնակ Ելիզավետպոլի (նահանգի մնացած մաս) նահանգների։ Գանձակի նահանգի կեստրոն էր դառնալու Ելիզավետպոլ քաղաքի հայաբնակ մասը։ Ստեղծվելու էր Ալեքսանդրապոլի նահանգ, որն ընդգրկելու էր Ալեքսանդրապոլի գավառը, Էջմիածնի գավառի մի մասը, Կարսի և Կաղզվանի օկրուգները, Ախալքալաքի գավառը և Բորչալուի գավառի հարավային մասը։ Երևանի նահանգը կազմվելու էր մնացած մասերից (Երևանի, Էջմիածնի, Նոր Բայազետի, Սուրմալուի, Շարուրի և Նախիջևանի գավառներ)։ Նման վարչական բաժանումը երկրամասում ապահովում էր ազգային հավասարակշռություն համեմատաբար միատարր բնակչություն ունեցող վարչական միավորների ստեղծման միջոցով (հայաբնակ Ալեքսանդրապոլի և Գանձակի, վրացաբնակ Թիֆլիսի և Քութայիսիի, թաթարաբնակ Բաքվի և Ելիզավետպոլի նահանգ-

<sup>14</sup> Տե՛ս Բ. Գ. Тунян, ցվ. աշխ., стр.20:

<sup>15</sup> Տե՛ս А. Шахатунян, Административный передел Закавказского края, Тифлиси, Ашхатоворь, 1918, стр. 120, 123-136: 1917 թ. հունիսի 29-ին ժամանակավոր կառավարությունը որոշեց Նեղբին գործերի նախարարությանը կից ստեղծել հատուկ խորհրդակցություն Կովկասի տեղակար ինքնակառավարման և վարչակազմի հարցը կարգավորելու համար։ Տե՛ս Բ. Գ. Тунян, ցվ. աշխ., стр. 16:

ներ և հավասար թվով հայ ու թաթար բնակչությունն ունեցող Երևանի նահանգ)<sup>16</sup>։

Երկրամասի վարչական վերաբաժանման հարցը քննարկելու համար ՕԶԱԿՈՒ-ն ստեղծեց հատուկ հանձնաժողով, որն ընդգրկեց 5-ական ներկայացուցիչ Անդրկովկասի հիմնական ազգերից։ Անդրկովկասի վարչական վերաբաժանման հիմքում պետք է ընկնեին նույն սկզբունքները, ինչ որ ժամանակավոր կառավարություններին գործերի նախարարության նախագծում։ Ճանաչվում էր ազգագրական սկզբունքի առաջնակարգ նշանակությունը, ինչպես նաև հաշվի էր առնվում տնտեսական և աշխարհագրական գործոնների դերը։ Նախարարական նախագիծն ընդունելու հայ պատվիրակների առաջարկությունը մերժվեց, իսկ Կովկասի թաթարների ներկայացուցիչներն առաջարկեցին նոր բաժանում, սակայն հանձնաժողովը միաձայն անընդունելի համարեց այն աշխարհագրական, ֆինանսական և ազգագրական տեսակետներից։ Այսպես, Կովկասի թաթարներն առաջարկում էին Ղազախի, Ելիզավետպոլի և Ջևանշիրի գավառների զուտ արոտավայրային շրջաններից կազմել առանձին գավառ (կանտոն)։ Փաստորեն, ելնելով մուսուլման թռչվորների տնտեսական շահերից, առաջարկվում էր նրանց օգտին առանձնացնել Դայկական լեռնաշխարհի մի մասը։ Սակայն ակնհայտ էր, որ դժվարանցանելի և իրարից կտրված լեռնային շրջանները հնարավոր չէր միավորել մեկ զեմստվոյի մեջ, մանավանդ որ նրանք չունեին մշտական բնակչություն։

Ի վերջո, հանձնաժողովի հայ և վրացի ներկայացուցիչները համաձայնության եկան բաժանման մի նախագծի շուրջ, որն իր հիմնական գծերով և դրույթներով կրկնում էր նախորդ նախագիծը։ Այսպես, նախատեսվում էր երկրամասի բաժանում նույն քանակի նահանգների և գավառների։ Ելիզավետպոլի նահանգը բաժանվում էր հայաբնակ և մուսուլմանաբնակ 2 նահանգների։ Ի տարբերություն նախորդ նախագծի, Երևանի նահանգն ունենալու էր 5 գավառ. Սուրմալուի գավառի հայաբնակ մասը՝ Իգդիր քաղաքով միացվելու էր Էջմիածնի գավառին, իսկ քրդաբնակ արևելյան հատվածը Կաղզվանի օկրուգի և Էջմիածնի գավառի մուսուլմանաբնակ մասերի միավորումով կազմելու էր Կոդքի գավառը Ալեքսանդրապոլի նահանգի կազմում։ Գավառում հարաբերական մեծամասնություն էր կազմելու քուրդ բնակչությունը։ Նախագծում շեշտվում էր, որ նոր վարչական բաժանումն ստեղծում էր եթնիկական միատարրություն, որը նաև համապատասխանեցվում էր տնտեսական պայմաններին։

Սակայն Կովկասի թաթարները կրկին դեմ հանդես եկան նախագիծին։ Նրանց ներկայացուցիչ Ա. Շեյխուլիսլամովը, հիմնականում ճանաչելով վերաբաժանման հիմքում ընկած սկզբունքները, կրկին առաջարկեց Զարվանսարայի, Ելիզավետպոլի, Ջևանշիրի, Նոր Բայազետի գավառների լեռնային ոլորդական համայնքներից ստեղծել մուսուլմանական կանտոն։ Սակայն նրա առաջարկությունը հիմնավորված չէր ազգագրական,

<sup>16</sup> Տե՛ս Ա. Շախտунян, Գշվ.աշխ., стр. 120, 123-136; В. Г. Тунян, Գշվ. աշխ., стр. 16-19, 23-26:



տնտեսական, աշխարհագրական տեսակետներից, ուստի անընդունելի ճանաչվեց<sup>17</sup>:

Այսպիսով, Կովկասի թաթարները կորականապես դեմ էին հանդես գալիս ելիզավետյուլի նահանգի հայկական գավառների առանձնացմանը՝ պատճառաբանելով, որ դա վտանգում է մուսուլման քոչվորների տրմտեսական կացութեանը: Մյուս կողմից, նրանք դիտում էին Անդրկովկասի բոլոր մուսուլման ժողովուրդներին որպես մեկ ինքնություն՝ դրա հիման վրա ներկայացնելով չափազանցված տարածքային հավակնություններ:

Հոկտեմբերյան հեղափոխությունը նոր խթան հանդիսացավ Կովկասի թաթարների ազգային շարժման զարգացման և անկախ պետականության ստեղծման ուղու վրա կանգնելու գործում: Ազգերի ինքնորոշման՝ բուլժիկների իռչակած սկզբունքն անխուսափելիորեն պետք է հանգեցներ ծայրամասերի անջատողական շարժումների խորացմանը: Դրա միջանկյալ փուլը Անդրկովկասում կենտրոնից փաստացի անկախ կառավարության՝ Անդրկովկասարիատի ստեղծումն էր, որի անդամներից երեքը ներկայացնում էին Կովկասի մուսուլմաններին<sup>18</sup>:

Ազգային շարժման զարգացման գործում Կովկասի թաթարների ներսում առկա տրամադրությունների յուրատեսակ ցուցանիշ հանդիսացան նոյեմբերի 26-28-ին Սահմանադիր ժողովի ընտրությունները, որոնց մասնակցեցին Կովկասի մուսուլմաններին ներկայացնող չորս կուսակցություններ և խմբավորումներ՝ Մուսավաթը, Մուսուլմանական սոցիալիստական բլոկը, Հունեմբը և Իթթիհադը: Իր շուրջ մուսուլմանական քաղաքական ուժերը համախմբելու Մուսավաթի փորձերը տապալվեցին ազգային շարժման զարգացման ուղղությունների հարցում հակասությունների պատճառով: Մուսավաթն ավելի հետևողական էր Ռուսաստանի դաշնային պետության կազմում ազգային-տարածքային ինքնավարության ստեղծման գործում: Մինչդեռ մնացած երեք կուսակցություններն առաջարկում էին սահմանափակվել ազգային-մշակութային ինքնավարությամբ: Սոցիալիստները Մուսավաթին մեղադրում էին նրանում, որ պաշտպանելով Կովկասի թաթարների ազգային-տարածքային ինքնավարության գաղափարը՝ նա պաշտպանում է խոշոր կալվածատերերի՝ խաների և բեկերի շահերը, որոնք ձգտում են վերջ տալ միասնական համառուսաստանյան հեղափոխական շարժմանը: Իսկ իսլամիստների շահերը ներկայացնող Իթթիհադը գտնում էր, որ Մուսավաթի գիծը տանում է Ռուսաստանի մուսուլմանների միասնական «ունմա»-յի տրոհմանը: Բացի այդ, իսլամիստների կարծիքով Մուսավաթն ուներ չափազանց սոցիալիստական կողմնորոշում<sup>19</sup>: Բայց Մուսավաթին հաջողվեց միասնական

<sup>17</sup> Տե՛ս Ա. Шахатурия, Եզվ. աշխ., стр.136-138, 143-144: Շինյուլիսլամովը գտնում էր, որ ավելորդ է Կոռքի գավառի ստեղծումը, քանի որ քրդերին՝ որպես մուսուլմաններ, պետք է համարել բուրքեր՝ նրանց յառանձնացնելով առանձին ազգային խմբի մեջ:

<sup>18</sup> Դրանք էին՝ պետական հսկողության կոմիտար Ա. Խասմամեյով, հաղորդակցությունների կոմիտար Խ. Մեյիք Ալպամուլ, ասևտրի և արդյունաբերության կոմիտար Ջաֆարով:

<sup>19</sup> Տե՛ս Ա. Балаев, Азербайджанское национальное движение в 1917-1918 гг., Баку, Эли, 1998, стр.126:

ըլոկ ստեղծել անկախ դեմոկրատական խմբի հետ, որի կազմում էին ազդեցիկ քաղաքական գործիչներ Ա. Թովֆիբաշևը, Ֆ. Խան Խոյսպիև և այլն: Ընտրությունների արդյունքները բացահայտեցին Մուսավաթի գերակայությունը Կովկասի մուսուլմանների քաղաքական ուժերի շրջանում: Վերոհիշյալ չորս կուսակցությունների օգտին տրված ձայների 66,5%-ը պատկանում էր Մուսավաթին, ինչը վկայում էր մուսուլմանների մեծ մասի կողմից նրա ծրագրային դրույթների պաշտպանության մասին: Մյուս կողմից, ակնհայտ էր, որ բնակչության զգալի հատվածի՝ մեկ երրորդի մոտ այդ գաղափարները դեռևս խորթ էին<sup>20</sup>:

Ժողովուրդի կողմից Սահմանադիր ժողովի ցրումից հետո վերջինի Անդրկովկասից ընտրված պատգամավորների թվի եռապատկման միջոցով ձևավորվեց երկրամասի ներկայացուցչական մարմինը՝ Սեյմը<sup>21</sup>: Դրանով վերացավ Ռուսաստանի կենտրոնական իշխանությունների հետ Անդրկովկասի քաղաքական ուժերի գործակցության վերջին հնարավորությունը: Կենտրոնի հետ քաղաքական կապերի խզումը նոր խթան դարձավ երկրամասի լիակատար անջատման, հայ ու վրաց ժողովուրդների պետականությունների վերականգնման և երկրամասի մյուս մեծաքանակ ժողովրդի՝ Կովկասի թաթարների պետականության ստեղծման համար:

Սեյմում ի սկզբանե բացահայտվեցին տարածայնություններն Անդրկովկասի երեք հիմնական ազգերի միջև ազգային, խաղաղության և հողային հարցերում: Կովկասի թաթարները հանդես էին գալիս Օսմանյան կայսրության հետ հաշտության կնքման օգտին՝ նպատակ ունենալով վերջինի աջակցության և հովանավորության միջոցով հասնել ազգային և տարածային խնդիրների լուծմանն իրենց օգտին: Աղբբեջանցի պատմաբան Ա. Բալանն այդ կապակցությամբ նշում է. «Անշուշտ, հիմարություն կլիներ հերքել Թուրքիայի հանդեպ Մուսավաթի և ողջ աղբբեջանական ժողովրդի հատուկ համակրանքը: Ասկայն Մուսավաթի թուրքամետ կողմնորոշումը թելադրված էր ոչ թե Աղբբեջանը և Անդրկովկասը Թուրքիային միացնելու ձգտմամբ, այլ այն համազամանքով, որ առկա պայմաններում հենց այդ երկիրն էր հանդիսանում աղբբեջանական ազգի ֆիզիկական գոյության միակ երաշխավորը և նրա բարոյական հենարանը ազգային ազատագրման համար իր պայքարում»<sup>22</sup>:

Օսմանյան կայսրության և Անդրկովկասի մուսուլմանների քաղաքական ուժերի միջև փոխգործակցության համաձայնությունը ձեռք էր բերվել դեռևս Առաջին աշխարհամարտի նախօրյակին: Դրա համաձայն՝ վերջինները պետք է ապստամբություն բարձրացնեին ռուսական բանակների թիկունքում՝ հեշտացնելով թուրքերի ներխուժումն Անդրկովկաս: Ըստ որում, երիտթուրքերը դրա դիմաց մուսուլմաններին խոստանում էին Դաղստանը, Հյուսիսային Կովկասի լեռնային շրջանները մինչև Վլադի-

<sup>20</sup> Տե՛ս Ա. Балаев, Азербайджанское национальное движение..., стр. 127:

<sup>21</sup> Կովկասյան թաթարների չորս քաղաքական կուսակցությունները միասին Սեյմում ունեին 44 տոկ, ինչը բավականին լուրջ թիվ էր կազմում:

<sup>22</sup> Տե՛ս Ա. Балаев, Азербайджанское национальное движение..., стр. 159:



կավկազ, Բաքվի նահանգը և Ելիզավետպոլի նահանգի մի մասը, որոնց վրա ստեղծվելու էր Անդրկովկասի մուսուլմանների ինքնավարություն՝ Թուրքիայի հովանու ներքո<sup>23</sup>։

Իրենց առջև դրված ծավալապաշտական նպատակների իրագործման ճանապարհին Կովկասի թաթարների առջև դրված էր զինված ուժերի ստեղծման խնդիրը<sup>24</sup>։ 1917 թ. վերջին հիմք դրվեց մուսուլմանական կորպուսի ստեղծմանը, որի կազմը համալրվեց միակ կանոնավոր զորամասով՝ թաթարական հեծյալ գնդով։ Այն սկիզբ առավ Ելիզավետպոլի նահանգում, որտեղ կենտրոնացել էին թուրքական բանակի մեծ թվով սպաներ և զործակալներ։ Թաթարական հեծյալ գնդի հետ մեկտեղ կորպուսը համալրվում էր նաև Մուսավաթի զինված խմբերով<sup>25</sup>։ Վերջինների գերակայող ուժերի ճնշման տակ ռուսական փոքրաթիվ զորամասերն ստիպված էին լքել Ելիզավետպոլը<sup>26</sup>։

1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունն արագացրեց Կովկասի թաթարների զինման գործընթացը։ Հաշտության մասին ղեկկցող ընդունումը հանգեցրեց Կովկասյան ճակատի քայքայմանը, որը զանգվածային բնույթ ընդունեց ղեկտեմբերի 5-ի Երզնկայի զինադադարից հետո։ Նման պայմաններում, երբ Արևմտյան Հայաստանի և Անդրկովկասի գլխին կախվում էր օսմանյան նվաճման վտանգը և հապառապ ստեղծվում էին հայկական ու վրացական կորպուսներ ռազմաճակատի զիջող պահելու համար, Կովկասի թաթարները բոլորովին այլ խնդիրներ էին լուծում<sup>27</sup>։ Թուրք զործակալների դրոժամբ Անդրկովկասի մուսուլմանաբնակ շրջան-

<sup>23</sup> Տե՛ս Մ. Կոչար, Армяно-турецкие общественно-политические отношения и Армянский вопрос в конце 19-начале 20 вв., Ереван, Издательство Ереванского Университета, 1988, стр. 214; Г. Абдурагимов, Кавказская Албания — Лезгистан, история и современность, С.-Петербург, Издательство Дагестанского госпединверситета, 1995, стр.262:

<sup>24</sup> Տե՛ս Российский государственный военно-исторический архив ф.2000, Главное Управление Генерального Штаба, оп.1. д.1274, л.2-4; В.Байков, Виз.у.аշխ., стр.113:

<sup>25</sup> Տե՛ս Ն. Keyukurov, Աշխ., ս.44-45; А. Стеклов, Армия мусаватского Азербайджана, Баку, Азгиз, 1928, стр.4; Հայաստանի Ազգային Արխիվ (ՀԱԱ), ֆ.222, Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդ, ց.1, գ.24, ք.115; Մ. Волхонский, В. Муханов, По следам Азербайджанской Демократической Республики, Москва, Издательство "Европа", 2007, стр.60-63: Գեներալ Թ. Նազարբեկյանը նշում է, որ մուսուլմանական և վրացական կորպուսներն ավելի շուտ ստացան կազմավորման պաշտոնական թույլտվություն, քե՛ն մուսուլմանական կորպուսը զորամաս չունեց, մինչդեռ հայերն ունեին 6 զամբարակ: Տե՛ս Գեներալ Նազարբեկյանի հուշերը, Բանբեր Հայաստանի արխիվների, # 3, ՀՀ կառավարությանն առընթեր արխիվային գործի վարչություն, Երևան, 1992, էջ 38, 41:

<sup>26</sup> Տե՛ս Է. Ջեիրարյան, Ազգամիջյան կռիվները Երևանի մահաճգամ 1918 թ., Երևան, Հայագիտակ, 2000 թ., էջ 11:

<sup>27</sup> Այսպես, օրինակ՝ Հայոց Ազգային խորհուրդը հայտարարել էր 19-32 տարեկանների զորահավաք, մինչդեռ Անդրկովկասի կառավարությունը Կովկասի թաթարների ներկայացուցիչների ճնշման ներքո (մրտաց աջակցում էին նաև կառավարության վրացի անդամները) կրճատեց զորահավաքի ծավալները մինչև 19-25 տարեկանները: Տե՛ս Ս. Մուրադյան, Էջեր Հ. Տեր-Ասատյան-աղբյուրների «Աղետների յուշագիրը» նորահայտ օրագրից (1918 թ.), Մերձավոր Արևելքի երկրներ և ժողովուրդներ XXXIII, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, Ջանգալ-97, 2004, էջ 230, Ա. Խատիսեան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթենք, «Նոր օր» տպագրություն, 1930, էջ 20: Տե՛ս նաև Հայրենիք, #1792, 1918 թ. մարտի 19:

ներում սկսվեցին հարձակումներ հաղորդակցության ուղիներին, առանձին գործառնաբերի վրա: Դրանք նպատակ էին հետապնդում քայքայել Կովկասյան ռազմաճակատի թիկունքը և հող նախապատրաստել օսմանյան գործերի առաջխաղացման համար: Ռուսաստանի տարբեր վայրերից հավաքագրվող հայկական զորամասերին թույլ չէր տրվում անցնել ռազմաճակատ<sup>28</sup>: Այսպես, Բաքվի Գայոց Ազգային խորհուրդի Անդրկովկասի բուլր կուսակցություններին և կազմակերպություններին ուղղված հեռագրում նշվում էր, որ Բաքու-Թիֆլիս երկաթգծի փակման և ճանապարհին հայերի հանդեպ բռնությունների հետևանքով Բաքվում կուսակցիկ էր մի քանի հազար հայ զինվոր<sup>29</sup>:

Կովկասի թաթարների զինման հարցի լուծման հիմնական աղբյուր դարձան հարձակումները տունդարձի ճանապարհը բռնած ռուսական զորքերի վրա: Այսպես, 1918 թ. հունվարին Շամխոր կայարանի մոտ Մուսավաթի զինված խմբերը և թաթարական զնդի զորամասերը վրացական ուժերի գործուն մասնակցությամբ դարձանակալեցին և ոչնչացրեցին ռազմաճակատից Ռուսաստան վերադարձող խոշոր ռուսական զորամաս<sup>30</sup>:

Իրենց հսկողության տակ առնելով Ելիզավետպոլի նահանգի մեծ մասը՝ Կովկասի թաթարների քաղաքական ուժերը փորձեցին նույնը անել Բաքվի նահանգում և հենց Բաքվում: Սակայն այստեղ դժվարությունը կայանում էր նրանում, որ ո՛չ Մուսավաթը և ո՛չ Գունմեթը չունեին բացարձակ ազդեցություն Բաքվի ավելի քան 30 մուսուլմանական կազմակերպությունների շրջանում: Բացի այդ, տեղի մուսուլմանների մեջ կային ոչ միայն թաթարներ, այլև պարսիկներ, դաղստանցիներ, Վուլգայի թաթարներ, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր մարմինը<sup>31</sup>:

Բաքվում Մուսավաթի հիմնական քաղաքական հակառակորդը բուլշևիկներն էին Ստ. Շահունյանի գլխավորությամբ, որոնց իրենց հսկողության տակ էին վերցրել Բաքվի խորհուրդը<sup>32</sup>: Մուսավաթի դեմ պայքարում


<sup>28</sup> Տե՛ս Ա. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 21-22; Գ. Абдурагимов, նշվ. աշխ., стр.262:

<sup>29</sup> Տե՛ս Я. Раттаузер, Революция и гражданская война в Баку, Баку, Истпарт отдел ЦК и БК АКП (6), 1927, стр.67:

<sup>30</sup> Տե՛ս N. Keykurun, նշվ. աշխ., с.79-82, Լ. Խորշոտյան, Ստեփան Շահունյան, Երևան, Հայկական ՍՍԸ-ԳԱ հրատարակչություն, 1959, էջ 191; Ա. Խատիսեան, նշվ.աշխ., էջ 2; Արև, #179, 1918 թ. սեպտեմբերի 10:

<sup>31</sup> Տե՛ս R.G. Suny, նշվ. աշխ., p.85:

<sup>32</sup> Տե՛ս М. Волконский, В. Мухомов, նշվ.աշխ., стр.66-67; R.G.Suny, նշվ. աշխ., p.156-171: Սկզբնական շրջանում Մուսավաթը համագործակցում էր բուլշևիկների հետ: Դա պայմանավորված էր նրանով, որ Մուսավաթին հրապտում էր ազգերի ինքնորոշման և պատերազմի հարցերում բուլշևիկների գրաված դիրքորոշումը: Սակայն արդեն 1917 թ. դեկտեմբերին Բաքվի խորհրդի և Մուսավաթի հարաբերությունները սրվեցին, քանի որ ակնհայտ էր դարձել Մուսավաթի բուրջական կողմնորոշումը, նրա հետագումը հեղափոխության գաղափարներից ու Անդրկովկասի մուսուլմանների ազգային-տարածքային ինքնավարություն ստեղծելու նրա ձգտումը: Վերջին հարցում Մուսավաթը մաս հանդես եկավ Դաղստանի լեռնականների պաշտպանությանը, որոնց հակաբուլշևիկյան ապստամբությունը բարձրացնելով՝ կտրել էին Բաքուն Ռուսաստանից: Դա հանգեցրեց Բաքվի մուսուլմանների համընդհանուր շքանմության աճի և նրանցից պարենի առգրավմանը: Ի պատասխան մուսուլմանների բողոքների, բուլշևիկների դեկավարներից Ջավադբեկն նշեց, որ քաղաքական դեկավարությունը չէր ամուսնում մուսուլման բնակչությանը, ուղղակի վերջինները





բուլշևիկներն ունեին դաշնակից, ի դեմս ԳՅԴ-ի: Չնայած զադափարական տարածայնություններին, երկու քաղաքական ուժերն էլ պայքարում էին ընդդեմ Անդրկովկաս թուրքական ներխուժման և տարածաշրջանում նրանց սատարող Կովկասի թաթարների գերիշխանության հաստատման: ԳՅԴ-ն ճանաչել էր Բաքվի խորհրդի իշխանությունը՝ նրանում տեսնելով այն ուժը, որի հետ համատեղ կարելի էր հետ մղել թուրքական վտանգը<sup>33</sup>: Դրանով Արևելյան Անդրկովկասում իշխանության համար Բաքվի խորհրդի և Մուսավաթի միջև քաղաքական պայքարը ձեռք էր բերում նաև ազգային երանգավորում:

Չեզ բերելով զենք ու ստեղծելով զինված ուժեր՝ Կովկասի թաթարներն սկսեցին առաջխաղացումը Բաքվի նահանգի ուղղությամբ: Հարձակումներ տեղի ունեցան Մուղանի ռուսական գյուղերի վրա, մարտի սկզբին գրավվեցին Լենքորանը և Շամախին, միաժամանակ հյուսիսից Բաքվի վրա էր արշավում Դաղստանի լեռնականների զորքը իմանալով Ար-Դին Գոցինսկու գլխավորությամբ: Բաքվի մուսուլմանները ևս ձգտում էին զինվել՝ նկատի ունենալով քաղաքում հայկական զորքերի առկայությունը: Մինչև մարտ Բաքվում փաստորեն գոյություն ունեին երեք զինված ուժեր՝ Կարմիր զվարդիան, Հայոց Ազգային խորհրդի և Մուսուլմանական Ազգային խորհրդի ուժերը<sup>34</sup>: Փաստորեն, ստեղծվել էր մի իրավիճակ, երբ Բաքվի հայությունը և ոչ մուսուլմանական մյուս բնակչությունը երկյուղում էին, որ Բաքվից դուրս մուսուլմանների աճող ազդեցիկ կտարածվեր քաղաքում, մինչդեռ մուսուլմանները վախճանում էին քաղաքում գտնվող հայկական զորքերից, որոնք Բաքվում կուտակվել էին հենց իրենց՝ մուսուլմանների գործողությունների արդյունքում<sup>35</sup>:

Լարվածությունը հանգեցրեց մարտի վերջին քաղաքում ռազմական գործողությունների բռնկմանը մուսուլմանների և Բաքվի խորհրդի միջև: Դրա պատճառ հանդիսացավ Լենքորանում կրած պարտությունից հետո մուսուլմանական Վայրի դիվիզիայի մի զորամասի ժամանումը Բաքու «Էվելինա» շոգենավով: Բաքվի խորհրդի ռազմեղկոնը պատվիրակություն ուղարկեց՝ պարզելու նրա ժամանման պատճառները, սակայն

---

մշակութային առումով ավելի հետամնաց էին, քան մնացած բնակչությունը, և հեղափոխական խմբերը նրանք վրա ազդեցություն չունեին: Դեկտեմբերին Բաքվի խորհրդի ընտրություններում ամիսադուրսում կրած Մուսավաթը հիմառվեց մտնել խորհրդի և նրա Գործադիր կոմիտեի մեջ՝ պատճառաբանելով, որ Խորհուրդը դեմակրատական ճանապարհով չէր ընտրվել: Դա նշանակում էր Մուսավաթի և Բաքվի խորհրդի միջև վերջնական խզում: Տե՛ս T. Swietochowski, Russian Azerbaijan..., p.102, 108; R. G. Suny, *Գլու. աշխ.*, p.142, 188:

<sup>33</sup> Տե՛ս T. Swietochowski, Russian Azerbaijan..., p.114, R. G. Suny, *Գլու. աշխ.*, p.203: Այդ կապակցությամբ Բայելովը գրում է. «Հայերի մեջ խոսում էր ինքնապահպանման բնագոյը: Նրանց տարածքային բնակեցման մեկտասցվածությունը հղի էր մահացու վտանգով մուսուլմանական ժողովուրդների կողմից, որոնք իրենց բուրք եղբայրների օրինակով հայերին ապագայում ոչ մի լավ բան չէին խոստանում: Ուստի հայերի այդ հոգեբանական վիճակով է բացատրվում նրանց տրամադրությունը՝ հարել մույնիակ բուլշևիկներին: Հայերը քայքայեց ասում էին. «Մենք ուսեցինք հետ ենք, թեկուզ նրանք բուլշևիկ լինեն»: Տե՛ս B. Баяков, *Գլու. աշխ.*, стр. 116:

<sup>34</sup> Տե՛ս T. Swietochowski, Russian Azerbaijan..., p.113; R. G. Suny, *Գլու. աշխ.*, p.203:

<sup>35</sup> Տե՛ս R. G. Suny, *Գլու. աշխ.*, p.203; T. Swietochowski, Russian Azerbaijan..., p.113:

վերջինը գնդակոծվեց նավից ու կորուստներ ունեցավ: Բաքվի խորհրդի պահանջով և Հայոց ու Մուսուլմանական Ազգային խորհուրդների միջև համաձայնությամբ նավի անձնակազմը զինաթափվեց, սակայն դրանով լարվածությունը չնվազեց. գիշերվա ընթացքում քաղաքի մուսուլմանները ամրություններ հիմնեցին, այնուհետև հարձակում գործեցին Կարմիր զվարդիայի զորամասի վրա, ինչը հանգեցրեց լայնածավալ ռազմական գործողությունների: Բուլչևիկները համոզված էին, որ ապստամբությունը նախօրոք էր կազմակերպվել Մուսավաթի կողմից, սակայն դեպքերի զարգացումը ցույց է տալիս, որ զինված ելույթը տարերային էր, և հետո Մուսավաթը դրան կազմակերպված բնույթ տվեց<sup>36</sup>: Այնհայտ էր, որ այն կողմը, որը կապահովվեր հայկական զորքերի օգնությունը, կհաղթեր: Մուսավաթը մարտավարական դաշինք առաջարկեց ՅՅԴ-ին, սակայն մերժում ստացավ: Հայոց Ազգային խորհուրդը հռչակեց իր չեզոքությունը, սակայն հետո փոխեց իր դիրքորոշումը և միացավ բուլչևիկներին, ինչը հանգեցրեց մուսուլմանների ընդվզման ճնշմանը, որի արդյունքում քաղաքական պայքարը Մուսավաթի և Բաքվի խորհրդի միջև ստացավ նաև հայ-թաթարական բախումների բնույթ<sup>37</sup>: Սակայն մյուս կողմից, Բաքվի հայությունը մեծ օգնություն ցուցաբերեց մուսուլմաններին՝ իր հովանավորության տակ ամենելով մոտ 13000 մուսուլմանի<sup>38</sup>: Թերևս այս հանգամանքը նկատի ուներ մուսուլման մեծահարուստ Թադիևը՝ Անդրկովկասի կառավարությանն ուղղված հեռագրում նշելով, որ Բաքվի իրադարձությունները հայ-թաթարական ընդհարումների բնույթ չէին կրում<sup>39</sup>: Ապրիլի 1-ին մուսուլմաններն անձնատուր եղան և ընդունեցին խորհրդի վերջնագիրը, որով պահանջվում էր ճանաչել Բաքվի խորհրդի իշխանությունը, անհապաղ բացել Բաքու-Թիֆլիս և Բաքու-Պետրովսկ երկաթուղին: Վերջնագիրը նախատեսում էր Վայրի դիվիզիայի հեռացում քաղաքից և բոլոր այլ մուսուլմանական ու հայկական ազգային զորքերի դուրսբերում Բաքվից կամ էլ դրանց լիովին ենթարկում խորհրդին<sup>40</sup>:

<sup>36</sup> Sb'u Документы по истории борьбы за победу Советской власти в Азербайджане (1917-1918гг.), Т. 1, Баку, 1949, стр.83-84; Л. Խորշուդյան, նշվ. աշխ., էջ 201:  
<sup>37</sup> Ռ. Սյունինը նշում է, որ ապրիլի 1-ին, երբ մուսուլմաններն արդեն պարտվել էին, և ՀՅԴ-ի ուժերը սկսել էին նրանց ջարդը՝ փրծիսնդիր լինելով հայերի հանդեպ բռնությունների համար, Բաքվում քաղաքացիական պատերազմի ազգային բովանդակությունն ակնհայտ դարձավ: Տե՛ս R.G. Suny, նշվ. աշխ., p.218-219, ինչպես նաև T. Swietochowski, Russian Azerbaijan..., p.116; M. Волхонский, В. Муханов, նշվ. աշխ., стр.77-78; Л. Խորշուդյան, նշվ. աշխ., էջ 203:  
<sup>38</sup> Տե՛ս Հայերի կուտորածները Բաքվի և Նիդզալետայոյի նահանգներում 1918-1920 թթ.: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ա.Վիրաբյանի խմբագրությամբ, Երևան, Հայաստանի Հանրապետության Պատմության Արխիվ, 2003, էջ 26-28: Հայության կողմից փրկվածների թվում էր ԱՂՀ ապագա ներքին գործերի նախարար Բնիքոս Խոսն Ջևանշիրը, որը վարձահատույց եղավ նրանով, որ դարձավ սեպտեմբերին Բաքվի հայության ջարդի կազմակերպիչներից մեկը: 1921 թ. հուլիսին նա սպանվեց Կ.Պոլսում հայ վրիժառու Միսաք Թուրաբյանի ձեռքով: Տե՛ս Հայրենիք, #2865, 1921 թ. սեպտեմբերի 30:  
<sup>39</sup> Տե՛ս Հայերի կուտորածները Բաքվի և Նիդզալետայոյի նահանգներում..., էջ 21:  
<sup>40</sup> Տե՛ս R.G. Suny, նշվ. աշխ., p.221; T. Swietochowski, Russian Azerbaijan..., p.116; Л. Խորշուդյան, նշվ. աշխ., էջ 202:



Բաքվի համար պայքարում Մուսավաթի պարտությունը և հետագա իրադարձությունները հստակ արտահայտությունն էին այն իրողության, որ առանց արտաքին ուժի՝ Օսմանյան կայսրության օգնության, Կովկասի թաթարների ազգային շարժման նպատակների իրականացումը, այդ թվում՝ անկախ պետության հիմնումը և տարածաշրջանում գերակայության ձեռքբերումն անհնար էր<sup>41</sup>։ Ուստի Մուսավաթն Անդրկովկասի Սեյմում ակտիվ աշխատանք էր տանում Անդրկովկասի անկախության հռչակման և թուրքիայի հետ հաշտության կնքման ուղղությամբ։ Մարտի 7-ին Անդրկովկասի արևելյան խաղաղ պատվիրակության Տրապիզոն մեկնումն օրը կայացած Սեյմի նիստում Մուսավաթի և անկախ դեմոկրատների խմբի անունից հանդես եկած Ֆ. Խան Խոյսկին հայտարարեց. «Անդրկովկասի բոլոր ժողովուրդները պետք է որոշակիորեն ասեն, թե արդյոք իրենք իրենց համարում են Ռուսաստանի անբաժան մաս, թե՞ ոչ ... Անդրկովկասի անկախության և ինքնուրույնության հռչակումն ստեղծված իրավիճակից միակ ելքն է»<sup>42</sup>։ Երբ մարտի 10-ին Սեյմը հավաքվեց արտահերթ նիստի՝ քննարկելու համար մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի պայմանագրով թուրքիային անցած Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանների պարպման վերաբերյալ թուրքական զորքերի հրամանատար Վեհիբ փաշայի վերջնագիրը, Խան Խոյսկին պաշտպանեց թուրքական դիրքորոշումը՝ նշելով, որ Անդրկովկասի կառավարությունը չի հռչակել իր անկախությունը, ուստի թուրքիան Անդրկովկասը դիտում է՝ որպես Ռուսաստանի մաս և առաջարկում է կատարել Ռուսաստանի ստորագրած հաշտության պայմանները, ինչը տրամաբանական հետևողականությամբ աչքի ընկնող դիրքորոշում է<sup>43</sup>։ Ի պատասխան վրացի մենչևիկների առաջնորդ Ն. Ժորդանիայի հայտարարության, որ ամբողջ դեմոկրատիան պետք է զենքի դիմի հայրենիքի պաշտպանության համար, Խան Խոյսկին առաջարկեց այդ հարցը քննել այն ժամանակ, երբ այն կկարևորվի հաշտության (Օսմանյան թուրքիայի հետ) չգալու պատճառով<sup>44</sup>։

Բնականաբար, Անդրկովկասի կառավարության ներսում նման խոր հակասությունների պայմաններում Տրապիզոնում Անդրկովկասի պատվիրակության բանակցային դիրքերը խիստ թուլանում էին, ինչն էլ վերջո

<sup>41</sup> Տե՛ս Գ. Գալոյան, «Պատմության քառտղիներում, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1982, էջ 219; А. Балаев, Азербайджанское национальное движение..., стр.208; T. Swietochowski, Russian Azerbaijan..., p.117-118; М. Волконский, В. Муханов, նշվ. աշխ., стр.79: Բաքվում կրած պարտությունից հետո Մուսավաթը Սեյմից պառնազեց զինված արշավանք ձեռնարկել Բաքվի խորհրդի դեմ: Բաքվի վրա արշավող ուժերն էին՝ ազդեցական կորպուսը և թաթարական հեծյալ գտնող իշխան Մադարովի և Ալի Աղա Շիխինսկու զինվորությամբ, որոնք ընդունակ էին ջախջախել Բաքվի խորհրդի զորքերին: Տե՛ս Լ. Խորշառյան, նշվ. աշխ., էջ 304-306:

<sup>42</sup> Տե՛ս А. Балаев, Азербайджанское национальное движение..., стр.146; Кавказское слово, #194, 1918 р. Ինչպես ներքինի 12:

<sup>43</sup> Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлиси, Типография Правительства Грузинской республики, 1919, стр.99:

<sup>44</sup> Տե՛ս Ս. Մարտիայան, նշվ. աշխ., էջ 231:

հանգեցրեց բանակցությունների տապալմանը<sup>45</sup>։ Գերմանիայի ներկայացուցիչ Շրյոդերի հետ հանդիպման ժամանակ պատվիրակության մուսավաթական անդամները հայտարարել էին, որ Կովկասի թաթարներն ունենին գերմանա-թուրքական կողմնորոշում, և իրենց հարևաններից որևէ մեկի անհամաձայնության դեպքում նրանց դիրքորոշումը ոչ միայն չէր փոխվի, այլ կտաներ «Ադրբեջանի» անջատմանը<sup>46</sup>։ 1918 թ. ապրիլի 1-ին Անդրկովկասի պատվիրակության նիստին Խ.Խասանմեդովը հայտարարեց. «Եթե հայ և վրաց ժողովուրդներն իրենց հետևում զգում են ուժ և հնարավորություն, թող ստանձնեն պատերազմը սկսելու պատասխանատվությունը և ռիսկը. ադրբեջանցիներն այդ պատերազմին չեն մասնակցի»<sup>47</sup>։

Զգտելով փրկել իրավիճակը՝ ապրիլի 22-ին Անդրկովկասի Սեյմը հռչակեց Անդրկովկասի անկախությունը, սակայն արդեն ուշ էր։ Թուրքիան կանգ չէր առնելու Բրեստ-Լիտովսկի պայմանագրով նախանշված սահմանների վրա և շարունակելու էր իր առաջխաղացումը՝ իր դեմ կանգնած մեծ մասամբ հայկական զորամասերի թիկունքում ունենալով իրեն լոյալ Կովկասի թաթարներին՝ որպես 5-րդ շարասյուն։ Սեյմի մուսուլմանական խմբակցությունները սահմանափակվեցին Անդրկովկասի կառավարության աջակցության մասին հայտարարություններով՝ միաժամանակ ընդգծելով Կովկասի թաթարների հատուկ դիրքորոշումը Թուրքիայի հանդեպ։ Այսպես, Մուսավաթի ներկայացուցիչ Շ. Ռուստամբեկովը Օսմանյան Թուրքիայի դեմ ռազմական գործողություններին Կովկասի թաթարների մասնակցության անհնարինությունը պայմանավորում էր նրանց զինապարտ չլինելով և Թուրքիայի հետ կրոնական կապով<sup>48</sup>։

Այսպիսով, չնայած ադրբեջանցի պատմաբանների պնդումներին այն մասին, որ Կովկասի թաթարների քաղաքական ուժերը միշտ հավատարիմ են եղել Անդրկովկասի անկախության զաղափարին, նրանց իրական նպատակն էր՝ հասնել Անդրկովկասում Թուրքիայի ազդեցության տարածմանը, ինչն իր հերթին նշանակում էր Կովկասի թաթարների գերակայության հաստատումը տարածաշրջանում։ Դրա վկայությունն էր այն, որ դեռևս 1918 թ. հունվարին Ելիզավետպոլում ձևավորված մուսուլմանների Ազգային կոմիտեն որոշում ընդունեց ազգային շարժման ազդեցիկ գործիչներից մեկի՝ Ն. Քեյքուրումի գլխավորությամբ պատվիրակու-

<sup>45</sup> Տրասիլզոնի խորհրդատու ընթացքի և արդյունքների մասին տե՛ս Ա. Խատիսխան, նշվ. աշխ., էջ 28-36։

<sup>46</sup> Տե՛ս Архивы Азербайджана, 1-2, Из истории иностранной интервенции в Азербайджане 1918-1920 гг. документы и материалы, сост. Л.Алиева и др., Баку, 1998, стр.17: Ընդ որում, Շրյոդերի այն հարցին, թե հնարավոր էր արդյոք արևաքին ուժի հրավիրում կարգուկանոն հաստատելու նպատակով, պատվիրակները դրական պատասխան էին տվել՝ պայմանով, որ դա լինի թուրքական զորքերը։

<sup>47</sup> Տե՛ս А. Балаев, Азербайджанские национальное движение..., стр.159; Բանբեր Հայաստանի արխիվների, # 3, Երևան, 1992, էջ 50։

<sup>48</sup> Տե՛ս А. Балаев, Азербайджанские национальное движение..., стр.156-157 և Д. Енукидзе, Крах империалистической интервенции в Закавказье, Тбилиси, Госиздат. Грузинской ССР, сектор политической литературы, 1954, стр.35-36։



յուն ուղարկել Թուրքիա և ռազմական օգնություն խնդրել Բաքվի գրավ-  
ման գործում գիտակցելով, որ իր սեփական ուժերն անբավարար են դրա  
համար: Ուշագրավ է, որ Թուրքիայի ղեկավարության հետ հանդիպումնե-  
րի ժամանակ Ն. Քեյքուրունը ընդգծում էր. «... ազերի բնակչությունը  
թուրք է լեզվով և ավանդույթներով ... բարոյալքված ռուսական բանակը  
չկարողացավ դիմադրել մեր ժողովրդի զինված ուժերին, և երկրի տար-  
բեր մասերում ստեղծված ազգային կոմիտեները վերջ տվեցին անիշխա-  
նությանը»: Քեյքուրունը նշում էր, որ անկախության ճանապարհին Աղդր-  
բեջանը բախվում է մեկ դժվարության, այն է՝ իր ռազմական թուլությունը.  
«Աղդրբեջանի ժողովուրդն ակնհայտ է ձեր օգնությունը ... օգնեք մեզ  
դառնալ անկախ: Մի՛ փորձեք գերիշխել մեզ վրա: Թույլ տվեք մեզ դառ-  
նալ ուժեղ և ամուր ոտքի կանգնել: ... Աղդրբեջան մեծ բանակ մի՛ ուղար-  
կեք: Մեզ անհրաժեշտ են ռազմական հրահանգիչներ և սպաներ...»<sup>49</sup>:  
Փաստորեն Քեյքուրունը գիտակցում էր «մեծ եղբոր» կողմից ապագա  
Աղդրբեջանի անկախությանը սպառնացող վտանգը: 1918 թ. փետրվարի  
10-ին Թիֆլիսում Անդրկովկասի Սեյմի բացման օրը բացակայում էր Մու-  
սավաթի գրեթե ողջ խմբակցությունը, որի անդամներն, ըստ դեպքերի  
ժամանակակից լրագրող Ս. Խեյֆեցի, տեղերում զբաղված էին «Աղդրե-  
ջանը» Թուրքիայի հետ միավորելու նախապատրաստական աշխատան-  
քով<sup>50</sup>:

Իր հերթին Օսմանյան կայսրության ղեկավարությունը գիտակցում  
էր, որ Կովկասի թաթարների ազգային շարժումը, ի տարբերություն հայ և  
վրացի ժողովուրդների ազգային շարժումների, զարգացման ցածր մա-  
կարդակի վրա էր գտնվում և առանց լուրջ քաղաքական, ռազմական և  
նյութական աջակցության, չէր կարող լրջորեն նպաստել թուրքական բա-  
նակի առաջխաղացմանը դեպի Անդրկովկասի խորքերը: «Թուրքերեն  
լեզվով մամուլը հսկողության տակ էր ... ազգային գրականության մա-  
կարդակը բարձր չէր: Աղդրբեջանցիների կրոնը ևս բաժանվում էր երկու  
ուղղությունների՝ սուննի և շիա: Աղդրբեջանի կենտրոն՝ մավթարդյունա-  
հանող Բաքուն կոստոպոլիտ քաղաքի տեք ուներ: Ռուսական և պարս-  
կական ազդեցությունը ու 1908 թ. մեր ապստամբությունից հետո մեր ազ-  
դեցությունը միմյանց էին բախվում: ... Աղդրբեջանը մի բան էր սպասում:  
Օսմանյան բանակը կգար, ճակատամարտերում արյուն կթափեր, աղդրե-  
ջանցի եղբայրներին կազատագրեր: Դրանից հետո մեկ լեզվի, մեկ մշա-  
կույթի, մեկ կրոնի և մեկ հայրենիքի հիմքի վրա Աղդրբեջան պետությունն  
իր տեղը կստանձներ պատմության մեջ», - նշում է 1918 թ. Բաքվի արշա-  
վանքի մասնակից, թուրք պատմաբան Սուրեյա Այդեմիրը<sup>51</sup>:

<sup>49</sup> Տե՛ս N. Keykurun, նշվ. աշխ., ս.97-98: Տե՛ս նաև Հոբիզոն, #101, 1919 թ. մայիսի 29:

<sup>50</sup> Տե՛ս M. Волхонский, В. Муханов, նշվ. աշխ, стр.70, 74-75; Бакинский рабочий, #110, 1918 թ.  
հունիսի 11:

<sup>51</sup> Տե՛ս S. Sureyya Aydemir, Balkanlardan Orta Asyaya: Enver Paşa, Cilt 3, İstanbul, Emre Yayınları,  
1999, s.75:

Շ  
Գիտակցելով Կովկասի թաթարների ազգային շարժման թույլ լինելը ինքնուրույն կերպով հաջողության հասնելու համար՝ Օսմանյան թուրքիան ձգտում էր նրանց օգնությամբ նվաճել երկրամասը՝ ամենևին չթաքցնելով, որ իր վերջնանպատակը Բաքուն է: Անդրկովկասի պատվիրակությանն ուղղված օսմանյան պատվիրակության մայիսի 26-ի վերջնագրում նշվում էր, որ 100000 թուրքեր և մուսուլմաններ Բաքվում և նրա շրջակայքում գտնվում են հրոսակների՝ այսպես կոչված հեղափոխականների լծի տակ, և նրանց սպառնացող աղետը դառնում է ավելի անխուսափելի: Կովկասի մյուս մասերում թուրք և մուսուլման բնակչությունը ևս ենթարկվում է բռնությունների, և Օսմանյան կայսրությունը չի կարող անարարբեր մնալ Կովկասում անիշխանության համոռայ, քանի որ այն վրտանգում է Օսմանյան կայսրության ժողովրդի հետ սերտ ռասայական և կրոնական ազգակցություն ունեցող բնակչության վիճակը<sup>52</sup>:

Թուրքական զորքերի՝ դեպի Անդրկովկաս առաջխաղացման պայմաններում, Սեյմի ինքնալուծարումից և Գերմանիայի հովանավորությամբ Վրաստանի անկախության հռչակումից հետո մայիսի 27-ին Սեյմի մուսուլման պատգամավորների արտակարգ նիստը «միաձայն որոշեց ստանձնել Ադրբեջանի կառավարումը՝ իրեն հռչակելով Ադրբեջանի ժամանակավոր ազգային խորհուրդ»<sup>53</sup>: Ազգային խորհրդի նախագահ ընտրվեց Մ. է. Ռասուլզադեն: Ստեղծվեց նաև Ազգային խորհրդի գործադիր մարմին՝ Ֆ. Խան Խոյսկու գլխավորությամբ:

1918 թ. մայիսի 28-ին Ազգային խորհրդի առաջին նիստի ժամանակ Մուսավաթի ներկայացուցիչ Խ. Խասմամբեդովն առաջարկեց անհավաղ «Ադրբեջանը» հռչակել անկախ հանրապետություն: Չնայած Խան Խոյսկու առաջարկությանը՝ մինչև տեղում որոշ հարցերի պարզաբանումը ձեռնպահ մնալ անկախության հռչակումից՝ բավարարվելով տերությունների հետ խաղաղ բանակցություններ վարելու համար լիիրավ ադրբեջանական կառավարության ստեղծումով, Ազգային խորհուրդը 24 կողմ և 2 դեմ ձայնով հռչակեց «Ադրբեջանի» անկախությունը և հրապարակեց «Ադրբեջանի անկախության ակտը»: Հռչակագրի բնագրի հիմնական մասում նշվում էր. «... Ադրբեջանի ներկայիս քաղաքական դրությունը, որը կապված է Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև պատերազմի դադարեցման հետ, ինչպես նաև անմախաղեպ անիշխանությունը երկրի ներսում թելադրում են Ադրբեջանին՝ բաղկացած արևելյան և հարավային Անդրկովկասից, սեփական պետական կազմակերպության ստեղծման անհրաժեշտությունը՝ Ադրբեջանի ժողովուրդները դուրս բերելու համար այն ծանր ներքին և արտաքին վիճակից, որում նրանք հայտնվել են: Դրա հիման վրա Ադրբեջանի Ազգային խորհուրդը, որն ընտրվել է ժողովրդական քվեարկությամբ, հայտարարում է համայն ժողովրդին»:

<sup>52</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, ց.1, գ.23, ք.7; Н. Байкара, Азербайджан истиглал мубаризэси тарихи, Баку, 1992, с.231; Հորիզոն, #100, 1918 թ. մայիսի 28:

<sup>53</sup> Տե՛ս А. Балаев, Азербайджанское национальное движение..., стр.204:



1. Այսուհետ Ադրբեջանի ժողովուրդները հանդիսանում են ինքնիշխան իրավունքների կրողներ, իսկ Ադրբեջանը՝ բաղկացած արևելյան և հարավային Անդրկովկասից՝ լիիրավ անկախ պետություն:
2. Անկախ Ադրբեջանի քաղաքական կառուցվածքի ձև է հանդիսանում դեմոկրատական հանրապետությունը:
3. Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը (ԱԴՀ) ձեռքտում է բարիդրացիական հարաբերություններ հաստատել միջազգային հանրության բոլոր անդամների և հատկապես հարակից երկրների և ժողովուրդների հետ:
4. ԱԴՀ-ն իր սահմաններում երաշխավորում է քաղաքացիական և քաղաքական իրավունքներ իր բոլոր քաղաքացիներին, առանց ազգի, դավանանքի, սոցիալական դրության և սեռի խտրության:
5. ԱԴՀ-ն իր տարածքը բնակեցնող բոլոր ժողովուրդներին տրամադրում է լայն ասպարեզ ազատ զարգացման համար:
6. Մինչև Ասահմանադիր ժողովի գումարումը, ողջ Ադրբեջանի կառավարման գլուխ է կանգնած Ազգային խորհուրդը՝ ընտրված քվեարկության միջոցով, և ժամանակավոր կառավարությունը՝ պատասխանատու Ազգային խորհրդի աջակցությամբ<sup>54</sup>:

Նույն օրն ստեղծված կառավարությունում ներկայացված էին երկրի հիմնական քաղաքական ուժերը: Կառավարության կազմը հետևյալն էր՝ վարչապետ և ներքին գործերի նախարար Ֆ. Խան Խոյսկի, ֆինանսների և ժողովրդական լուսավորության նախարար Ն. Ուսուբբեկով, ԱԳ նախարար Մ.Հ. Հաջիևսկի, հաղորդակցության ուղիների և փոստի ու հեռագրի նախարար Խ. Մելիք Ասլանով, արդարադատության նախարար Խ. Խասամանդով, հողագործության և աշխատանքի նախարար Ա. Շեյխուլիսլանով, ռազմական նախարար Խ. Սուլթանով, առևտրի և արդյունաբերության նախարար Մ. Յու. Ջաֆարով, պետական հսկողության նախարար Դ. Հաջիևսկի<sup>55</sup>:

Մ. Է. Ռասուլզադեյն ԱԴՀ-ն որակեց՝ որպես առաջին հանրապետություն մուսուլմանական աշխարհում և առաջին պետությունը թյուրքական աշխարհում, քանի որ «թյուրքական ծագման բոլոր այլ պետություններն իրենց ձևավորման մեջ հենվում էին գլխավորապես կրոնական հիմքի վրա, մինչդեռ Ադրբեջանական Հանրապետությունը հիմնվում է ազգային-մշակութային ինքնորոշման ժամանակակից բազայի, թյուրքական ազգային-դեմոկրատական հողի վրա»<sup>56</sup>:

Այսպիսով, իր անկախության հռչակագրում Ադրբեջանի ղեկավարությունը հստակ կերպով առաջ էր քաշում լուրջ տարածքային հավակ-

<sup>54</sup> Шугуевը բերվում է ըստ Т. Swietochowski, Russian Azerbaijan..., p.129:

<sup>55</sup> Ш'у Н. Нәсибзадә, Азәрбајҹан Демократик Республликасы, Баку, 1990, с.87:

<sup>56</sup> Ш'у Н. Бајҹара, նշվ. աշխ., с.267: Ш'у նաև А.Балаев, Азәрбајҹанское национальное движение..., стр.69: Անկախ ԱԴՀ-ի կապակցությամբ Նուրի փաշային ուղղված ԱԴՀ վարչապետ Խան Խոյսկու բարձրակարգ քաղաքական փառաբանող հանդիսատեսը ճաշ տես՝ Գ. Абдуррагимов, նշվ. աշխ., стр.262-263:

նություններ՝ առաջնահերթ հրամայական ունենալով Օսմանյան թուրքիայի հետ ընդհանուր սահմանների ապահովումը: Հենց դրանով էր պայմանավորված պետության սահմանները քննորոշելիս «Անդրկովկասի հարավ» արտահայտության օգտագործումը<sup>57</sup>: Դա նաև վկայում էր Ադրբեջանի մտադրության մասին՝ թուրքիայի հետ ուղիղ տարածքային կապն ապահովել Հայաստանի հաշվին: Նման ագրեսիվ նկրտումների պայմաններում արժեզրկվում և ֆորմալ բնույթ էր ստանում հռչակագրի այն մասը, որտեղ խոսվում էր հարակից երկրների և ժողովուրդների հետ ըարեկամական հարաբերություններ հաստատելու ԱԴՀ-ի ձգտման մասին:

Օսմանյան թուրքիան ի սկզբանե քայլեր ձեռնարկեց Ադրբեջանում իր քաղաքական, ռազմական և տնտեսական գերակայության ամրապնդման նպատակով իրավապայմանագրային դաշտի ստեղծման ուղղությամբ: Թուրք-ադրբեջանական երկկողմ հարաբերությունները կարգավորող առանցքային փաստաթուղթը 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում ստորագրված բարեկամության և խաղաղության պայմանագիրն էր, որը թուրքիայի կողմից ստորագրեցին արդարադատության նախարար և պետական խորհրդի նախագահ Հալիկ Մենթեշեն և Կովկասյան ռազմաճակատի օսմանյան բանակների հրամանատար Մեհմետ Վեհիբ փաշան, իսկ ԱԴՀ կողմից՝ Ազգային խորհրդի նախագահ Մ. Է. Ռասուլզադեյն և Ազ նախարար Մ. Հ. Հաջինսկին: Պայմանագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ թուրքիան ԱԴՀ կառավարության դիմումի դեպքում երկրում կարգուկանոնը վերականգնելու համար ռազմական օգնություն էր ցուցաբերելու: ԱԴՀ-ն պարտավորվում էր երկրից վտարել թուրքիայի հետ պատերազմող երկրների բոլոր սպաներին ու պաշտոնյաներին, ինչպես և ԱԴՀ սահմանամերձ տարածքներից վտարել զինված խմբավորումները: Պայմանագրով կարգավորվում էին նաև կողմերի միջև առևտրատնտեսական, հյուպատոսական, փոստ-հեռագրային հարաբերությունները: Սասնավորապես, կողմերը պարտավորվում էին փոխադարձ արտոնություններ տրամադրել միմյանց երկաթուղային փոխադրումների սակագների ուղորտում:

Պայմանագրին կից երկու հավելվածներով թուրքիան իր համար ամրագրում էր առավել բարենպաստման ռեժիմը առևտրի և նավագնացության ոլորտներում, ինչպես և՛ հատուկ արտոնություններ սահմանամերձ տարածքներում առևտրի ոլորտում: Նույն օրը Բաթումում ստորագրված եռակողմ թուրք-վրաց-ադրբեջանական պայմանագրով սահմանվում էին Բաքու-Բաթում նավթամուղի վերագործարկման պայմանները:

Շարունակվող պատերազմի և թուրքական զորքերի արագ առաջխաղացման պայմաններում տրանսպորտի ոլորտը ռազմավարական նշանակություն էր ստանում թուրքիայի համար: Ուստի նույն օրն ստորագրված երկկողմ ժամանակավոր պայմանագրով Ադրբեջանը պարտա-

<sup>57</sup> ԱԴՀ տարածքային հավակնությունների կապակցությամբ Кавказское слово-ն գրում էր, որ Արևելյան և Հարավային Անդրկովկասի վրա հղում անելը, կարծես թե, նշանակում էր, որ Ադրբեջանի մեջ պետք է մտնեք այն անհնը, ինչը չէր մտնում վրաստանի մեջ: Sb'v Кавказское слово, #110, 1918 թ. հունիսի 1:





մոտ բավական ուժեղ էին Թուրքիայի հետ միավորվելու տրամադրու-  
թյունները<sup>59</sup>:

Սակայն Բաքուն գտնվում էր մեծ տերությունների շահերի բախման  
կիզակետում: Բաքվի հարցը հակասություններ էր առաջ բերել դաշնա-  
կիցներ Թուրքիայի և Գերմանիայի միջև<sup>60</sup>: Խորհրդային Ռուսաստանը ևս  
չէր դադարեցնում ակտիվ գործունեությունը Բաքվում խորհրդային իշ-  
խանության պահպանման ուղղությամբ: Բաքվում խորհրդային իշխա-  
նության տապալումը և քաղաքում անգլիական գործերի հայտնվելը  
Բաքվի ճակատը դարձրեցին Առաջին աշխարհամարտի կարևոր ճակատ-  
ներից մեկը: Շահերի նման խաչաձևման պայմաններում Բաքվի ճակա-  
տագրի հարցում ԱԳՀ կառավարության քաղաքականությունը որևէ եա-  
կան դեր չէր կարող խաղալ:

ԱԳՀ գոյության առաջին շրջանը՝ 1918 թ. հունիս-հոկտեմբերին  
ընդթափվում է Օսմանյան կայսրության բացարձակ գերակայությամբ,  
ուստի ԱԳՀ կովկասյան քաղաքականությունը մեծ մասամբ պայմանա-  
վորվում էր Օսմանյան Թուրքիայի արտաքին քաղաքականության գերա-  
կա նպատակներով ու կազմում էր նրա բաղկացուցիչ մասը:

Անդրկովկասի հանդեպ վարվելիք քաղաքականության գործում  
Օսմանյան Թուրքիայի ռազմաքաղաքական դեկավարության մոտ առկա  
էր երկու հիմնական մոտեցում: Ենվեր փաշան մտադիր էր Անդրկովկասի  
մուսուլմանների միավորումով ստեղծել Օսմանյան կայսրության ազդե-  
ցության տակ գտնվող պետություն, որի կազմում պետք է ընդգրկվեր նաև  
Հյուսիսային Պարսկաստանը: Դեռևս 1918 թ. գարնանը Ենվերն սկսեց  
մշակել Բաքվի գրավման ծրագիր, որի համաձայն՝ իր եղբայր Նուրի փա-  
շան պետք է Պարսկաստանով անցներ Անդրկովկաս և այնտեղ գործող  
Մուսավաթի զինված ջոկատներից ու թուրք ռազմագերիներից ձևավորեր  
Կովկասի Իսլամի բանակ: Իսկ թուրքական կանոնավոր բանակը պետք է  
շարունակեր առաջխաղացումը դեպի Անդրկովկասի խորքերը: Անդրկով-  
կասը և Հյուսիսային Կովկասը գրավելուց հետո թուրքերը պետք է շարժ-  
վեին Անդրկասպյան ճարգ և մերձվոլգյան շրջաններ: Ենվերի համար Բա-  
քուն ոչ միայն Անդրկովկասի տնտեսական կենտրոնն էր և երկրամասի  
մուսուլմանների միավորմամբ ստեղծվելիք պետականության մայրաքա-  
ղաք, այլև կարևոր հենակետ դեպի արևելք իր շարժման ճանապարհին<sup>61</sup>:

Իրավիճակին ծանոթանալու և Կովկասյան ճակատում հետազա-  
գործողությունների ծրագիրը ճշգրտելու նպատակով հունիսի 5-ին Բա-

<sup>59</sup> Տե՛ս Հորիզոն, #129, 1918 թ. հունիսի 2:

<sup>60</sup> Տե՛ս Գ.Վ. Пипия, Политика Германии в Закавказье в 1918 г. Сборник документов, Тбилиси, издательство «Сабчота Сакартвело», 1971, стр. 10:

<sup>61</sup> Տե՛ս S. Surayya Aycemir, «Զի.աշխ.», s.367; Է.Փ. Лудшвейт, Турция в годы первой мировой войны 1914-1918, Москва, Изд-во Московского Университета, 1966, стр.75; Գ. Махмурия, Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг. Бремя белого человека, Ереван, «Лусакн», 2002, стр.17; В. Гурко-Кряжин, Краткая история Персии, История Ирана, Киев-Москва, Альтернатива-Евролини, 2003, стр. 111; Кавказское слово, #106, 1918 թ. մայիսի 28:



թում ժամանած էնվեր փաշայի հրամանով սկսվեց թուրքական զորքերի վերախմբավորումը և համալրումը: Ստեղծվեց Արևելյան բանակների խումբը (Şark Ordular Grubu), որն իր կազմում միավորեց Կովկասյան ճակատում գործող թուրքական 9-րդ և 3-րդ բանակները, Միջագետքում գործող 6-րդ բանակը և այլ զորամիավորումներ<sup>62</sup>:

Սակայն այս մոտեցումն ուներ իր հակառակորդները, հանձին Արևելյան բանակների խմբի հրամանատար էնվերի ազգական Չալիլ փաշայի և Կովկասում թուրքական բանակների հրամանատար Վեհիբ փաշայի, ինչպես նաև Բաթումում թուրքական պատվիրակության ղեկավար Չալիլ Մենթեշի: Նրանք հասկանում էին, որ միջազգային իրադրության առկա պայմաններում, երբ Թուրքիայի և իր դաշնակիցների ռազմական ներուժը գտնվում էր սպառման եզրին, ծավալապաշտական նման ծրագրերն ուղղակի անիրագործելի էին: Ելնելով այս նկատառումներից՝ Չալիլ Մենթեշեն և Վեհիբ փաշան ձգտում էին Անդրկովկասի հանրապետությունների հետ օր առաջ հաշտության պայմանագրեր ստորագրել և կանոնավոր զորքեր տեղափոխել Թուրքիայի համար առաջնահերթ նշանակություն ունեցող Բալկանյան, Սիրիա-պաղեստինյան և Միջագետքի ռազմաճակատներ: Ի վերջո, երկու հոսանքների միջև փոխզիջումային համաձայնություն ձեռք բերվեց Անդրկովկասի լիակատար բռնազավթումից հրաժարվելու, սակայն Բրեստ-Լիտովսկի պայմանագրով նախատեսվածից ավելի շատ տարածքներ ձեռք բերելու վերաբերյալ<sup>63</sup>:

1918 թ. մայիսի 27-ին Ելիզավետպոլ ժամանած 300 սպաներից և հրահանգիչներից բաղկացած ռազմական առաքելությունը Նուրի փաշայի գլխավորությամբ Արևելյան Անդրկովկասի և Բաքվի գրավման նպատակով ձեռնամուխ եղավ Իսլամի բանակի ստեղծմանը: Մինչ այդ ինքնուրույն գործող ադրբեջանական կորպուսի զորամասերը փոքրաթիվ էին ու ընդունակ չէին լուրջ ռազմական գործողություններ վարելու: Կորպուսի միջուկը կազմում էր թաթարական հեծյալ գունդը գնդապետ իշխան Մաղալովի հրամանատարությամբ: Նուրի փաշան կորպուսն ընդգրկեց Իսլամի բանակի կազմում, և դրանով «անկախ» Ադրբեջանի զինված ուժերը ևս դրվեցին Թուրքիայի տրամադրության տակ<sup>64</sup>: Չայտարարվեց տեղական բնակչության զորահավաք, որը սակայն շատ դանդաղ էր ընթանում: Ուստի թուրքական հրամանատարությունն ստիպված էր Իսլամի բանակի կազմում զգալի քանակությամբ կանոնավոր զորք ընդգրկել<sup>65</sup>:

<sup>62</sup> Şb'u T. Sorgun, Halil Paşa İttihad ve Terakki'den Cumhuriyeti'ye Bitmiş Savaş, İstanbul, Beyaz Balina Yayınları, 1997, s.213, 220; Е.Ф. Лудшувейт, Бзվ.աշխ., стр. 213-217; Г.В. Пипия, Бзվ.աշխ., стр.53-54:

<sup>63</sup> Şb'u Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşenin Anıları, İstanbul, Hürriyet Vakfı Yayınları, 1986; s.230, Кавказское слово, #118, 1918 թ. հունիսի 11; Г.В. Пипия, Бзվ.աշխ., стр. 29:

<sup>64</sup> Şb'u T.Sorgun, Бзվ.աշխ., s.220:

<sup>65</sup> Şb'u Государственный архив Российской Федерации, ф.446, оп.2, д.33, стр.126; П. Дарабади, Военные проблемы политической истории Азербайджана начала XX века, Музей истории Азербайджана, Баку, Элм, 1991, стр.116; Е.Ф.Лудшувейт, Бзվ.աշխ., стр.209, 212; Г. В. Пипия, Бзվ.աշխ., стр.63-65:

Այս ամենի արդյունքը եղավ այն, որ երբ 1918 թ. հունիսի կեսերին Ադրբեջանի կառավարությունը որոշեց թիֆլիսից տեղափոխվել Ելիզավետպոլ, Նուրի փաշան արդեն իր ձեռքերում էր կենտրոնացրել իշխանության բոլոր լծակները: Ընդհանրապես, ստեղծված պայմաններում Թուրքիան կարող էր անմիջապես վերջ տալ Ադրբեջանի անկախ կառավարության գոյությանը և իր կազմի մեջ միավորել ԱԳԴ-ն, սակայն չարեք դա դիվանագիտական նկատառումներով՝ առաջին հերթին չուզեցան ընդունել Գերմանիայի հետ առանց այդ էլ լարված հարաբերությունները: Սակայն Թուրքիան քայլեր ձեռնարկեց Ադրբեջանի ղեկավարության մեջ Ելիզավետպոլի նահանգի թուրքամետ տրամադրություններ ունեցող ազնվականության դիրքերի ուժեղացման ուղղությամբ: Դրան նպաստեց այն հանգամանքը, որ թիֆլիսից Ելիզավետպոլ ժամանած՝ իր կազմում Բաքվի բուրժուազիայի և մտավորականության մի շարք ներկայացուցիչներ ունեցող խան Խոյսկու կառավարությունը Ելիզավետպոլի խաների և բեկերի մոտ հեղինակություն չէր վայելում: Այս հարցում իր դերն էր խաղում Ադրբեջանում այդ շրջանում լայնորեն տարածված և մեծ հեղինակություն վայելող «Իլիակ» (Միավորում)՝ Թուրքիայի հետ միավորման շարժումը, որի դիրքերը հատկապես ուժեղ էին Ելիզավետպոլի նահանգում: Վերջինները բազմաթիվ ոչ պաշտոնական պատվիրակներ էին ուղարկել Բաթում, որոնց նպատակն էր Օսմանյան Թուրքիայի ներկայացուցիչներին հայտնել ժողովրդի տրամադրությունները՝ միանալ Թուրքիային: «Հորիզոն»-ն այդ կապակցությամբ գրում էր, որ Գանձակի թուրքերը լսել անզամ չէին ուզում անկախ Ադրբեջանի մասին: Նրանք ճանաչում էին միայն Թուրքիային և նրա փոխարքա Նուրի փաշային: ԱԳԴ կառավարությունը հեղինակություն չուներ ժողովրդի մեջ, քանի որ վերջինի աչքերում հանդիսանում էր Սեյմի ներկայացուցիչ, որի նկատմամբ ժողովուրդը թշնամաբար էր տրամադրված, քանի որ Սեյմի թուրք անդամները ոչինչ չկարողացան անել արևելյան նահանգների համար՝ (Արևելյան Անդրկովկաս - Դ.4.)՝ ո՛չ կարողացան գեներ ստանալ կորպուս կազմավորելու համար, ո՛չ պարեն, ո՛չ կարողացան իշխանություն հաստատել: Անիշխանության պայմաններում ժողովուրդը, բացի թուրքական փաշայից, ոչ մի իշխանություն չէր ուզում ճանաչել<sup>66</sup>:

Նուրի փաշան, բացի ռազմական բնագավառի լիակատար վերահսկողությունից, չէր խորշում նաև հանրապետության քաղաքական կյանքին միջամտությունից: Նա չէր թաքցնում իր համակրանքը պահպանողական և պանիսլամիստական ու պանթուրքական հայացքներ ունեցող քաղաքական ուժերի հանդեպ: Միաժամանակ նա անթաքույց սառնություն էր դրսևորում ձախ ուժերի և ազգայնականների հանդեպ, որոնց համար գերակա նպատակ էր հանդիսանում արդեջանական պետականության ամրապնդումը և հավատարմությունը Ռուսական հեղափոխության ձեռքբերումներին ու նպատակներին, այլ ոչ թե Ադրբեջանի միավոր-

<sup>66</sup> Տե՛ս Հորիզոն, #129, 1918 թ. հունիսի 2; Մշակ, #96, 102, 1918 թ. մայիսի 26, հունիսի 2:



րունը Օսմանյան կայսրությանը: Ուստի նա չէր կարող համակրել նաև Ազգային խորհրդին, քանի որ դրա գոյությունը փաստորեն պայմանավորված էր Ռուսական հեղափոխությամբ<sup>67</sup>:

Նուրի փաշայի հետ համաձայնության գալու Արշ կառավարության փորձերը ծախողվեցին: Նա հրաժարվեց ընդունել Ազգային խորհրդի պատվիրակությանը: Վերջինին ընդունած Նուրի փաշայի խորհրդական Աիսեդ բեկ Աղաևը հայտնեց, որ Ազգային խորհուրդը հեղինակություն չունի, և անգամ առկա է ժողովրդական ընդվզման վտանգ, իսկ այդ դեպքում Օսմանյան կայսրությունը չի պաշտպանի Ազգային խորհրդին և նրա կառավարությանը<sup>68</sup>:

Ի վերջո, Նուրի փաշայի ճնշման ներքո Ազգային խորհուրդն ինքնալուծարման որոշում ընդունեց<sup>69</sup>: Ստեղծվեց ժամանակավոր կառավարություն Ֆ. Խան Խոյսկու զխավորությամբ՝ առանց ծախակողմյան ուժերի մասնակցության: Հին կառավարությունից հեռացվեցին մուսավաթական Մ. Յու. Ջաֆարովը, որը համարվում էր Թուրքիայի հանդեպ թշնամաբար տրամադրված աղբրեջանական ազգայնականության ներկայացուցիչ և մուսուլմանական սոցիալիստական բլոկին պատկանող Դ. Հաջինսկին ու Ա. Շեյխուկիսամովը<sup>70</sup>: Արշ նոր կառավարության ձևավորումից հետո Մ. Ռասուլզադեան, Ա. Սաֆիջուրդսկին և Խ. Խասամեդովը Արշ պատվիրակության կազմում ուղարկվեցին Կ.Պոլիս Քառյակ Միության և Անդրկովկասի հանրապետությունների կայանալիք խորհրդաժողովին մասնակցելու համար: Նրանց Աղբրեջանից հեռացնելով՝ Նուրի փաշան և իլհակիստների ձգտում էին ավելի ամրապնդել իրենց դիրքերը<sup>71</sup>:

Ազգային խորհրդի վերջին նիստում իր ելույթում Մ. Է. Ռասուլզադեան ստիպված էր ընդունել, որ կառավարության հեռանալը թատերաբեմից դեմոկրատիայի նահանջ է և ռեակցիայի հաղթանակ: Բայց նա հույս էր հայտնում, որ Արշ-ն Կովկասում ամենաազատասեր և հեղափոխական հանրապետություն համարվող Վրաստանից ավելի երջանիկ կլինի, քանի որ նրա ներքին գործերին միջամտող ուժերն օտար չեն, այլ ազգակից են<sup>72</sup>: Նոր կառավարության կոչում նշվում էր, որ «ազգի անկուն կամքի և ցեղակից ու կրոնակից մեր եղբայրների՝ Մեծ Թուրանի ավագ որդիների աջակցության շնորհիվ մեր հայրենիքը կլինի՝ երջանիկ և ուժեղ»<sup>73</sup>:

<sup>67</sup> Sbu T. Swietochowski, Russia and Azerbaijan: a Borderland in Transition, New-York, Columbia University Press, 1998, p.70-71:

<sup>68</sup> Sbu H. Bajkara, Եզվ. աշխ., c.240; T. Swietochowski, Russian Azerbaijan..., p.131; A. Балаев, Азербайджанское национальное движение..., стр.209-210; Искра, #4, 1918 p. oqmutnuh 16:

<sup>69</sup> Sbu A. Балаев, Азербайджанское национальное движение..., стр.211-214; Մշակ, #118, 1918 p. հունիսի 22; Кавказское слово, #130, 1918 p. հունիսի 27: Մինչ Ազգային խորհրդի ինքնալուծարումը, նրա կազմից դուրս եկան Հումմերը և մուսուլմանական սոցիալիստական բլոկը:

<sup>70</sup> Sbu H. Bajkara, Եզվ. աշխ., c.240-242; H. Нөсибзаде, Եզվ. աշխ., c.87; Մշակ, #120, 1918 p. հունիսի 25; A. Балаев, Азербайджанское национальное движение..., стр.214:

<sup>71</sup> Sbu A. Балаев, Азербайджанское национальное движение..., стр.214:

<sup>72</sup> Sbu H. Bajkara, Եզվ. աշխ., c.231; P. Векилов, История возникновения Азербайджанской Республики, Баку, Элм, 1998, стр.35:

<sup>73</sup> Sbu ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ.23, p.181:



Հեռագահ ամիսներին շարունակեց խորանալ թուրքիայի ռազմա-  
քաղաքական ազդեցությունն Ադրբեջանում: Հուլիսի 14-ին թուրքական  
ռազմական հրամանատարությունը պայմանագիր կնքեց ԱԴՀ կառավա-  
րության հետ, որով Ադրբեջանում բոլոր երկաթուղիները 5 տարի ժամկե-  
տով անցնում էին Օսմանյան թուրքիայի վերահսկողության տակ<sup>74</sup>:

Օգոստոսին տեղի ունեցավ ադրբեջանական կորպուսի նոր վերա-  
կազմավորում, որի արդյունքում ուժեղացավ նրա օպերատիվ կախվա-  
ծությունը թուրքական հրամանատարությունից: Կորպուսի գնդերը վերա-  
կազմավորվելուց հետո կորցնում էին իրենց ազգային բնույթը ու փաստոր-  
են վերածվում թուրքական գնդերի՝ թուրք սպաների հրամանատարու-  
թյան տակ: Միաժամանակ Իսլամի բանակի շարքերում ավելանում էր  
թուրքական կանոնավոր զորամասերի թիվը<sup>75</sup>:

Այդ ամենի հետ մեկտեղ քաղաքական հարաբերությունները Օս-  
մանյան կայսրության և ԱԴՀ-ի միջև, ըստ էության, չունեին միջպետական  
բնույթ: Այսպես, թուրքիան Ադրբեջանում որևէ պաշտոնական ներկայա-  
ցուցիչ չէր նշանակել, իսկ Ադրբեջանի ներկայացուցիչ Ալի Մարդան բեկ  
Թոպչիբաշևն այդպես էլ չընդունվեց սուլթանի կողմից<sup>76</sup>: Բնութագրելով  
այդ շրջանում ադրբեջանա-թուրքական հարաբերությունները՝ «Հորի-  
զոն»-ը գրում էր, որ ելիզավետպոլում լուրեր են տարածվել, թե թուր-  
քիան Ադրբեջանից պահանջել է իրեն համծնել բոլոր վարչական հաստա-  
տությունները, այդ թվում նաև նախարարությունները: Թերթը նշում էր, որ  
թուրքիան արհամարհանքով էր վերաբերվում Ադրբեջանին, զորացրել և  
թուրքական բանակին էր միացրել ադրբեջանական զորամասերը, որոնք  
սկսել էին ենթարկվել թուրքական շտաբին: Թուրքիայի նման պահանջի  
պատճառներ էին համարվում ադրբեջանական կառավարության անըն-  
դունակ լինելը կառավարել երկիրը և այն, որ թուրքիան դժգոհ է իր կով-  
կասյան արշավանքից ու իրեն ԱԴՀ-ից խաբված է զգում, քանի որ վերջի-  
նը չէր կատարել թուրքական բանակը զորքով համալրելու և նյութական  
աջակցություն ցուցաբերելու իր խոստումները: Այդ խոստումներից ամե-  
նակարևորը զորք տրամադրելը, ուղղակի տապալվել էր: Տեղի բնակչու-  
թյան զինվորագրումը դժվար էր, քանի որ նրանք քոչվոր անասնապահներ  
էին և չէին ենթարկվում զինվորական կարգապահությանը, հսկայական  
չափերի էր հասնում դասալքությունը ադրբեջանական զորքերում<sup>77</sup>:

Շուտով ստեղծվեց ավելի բարենպաստ միջազգային իրավիճակ  
Բաքուն գրավելու համար: Բաքվում խորհրդային իշխանության տապա-  
լումից հետո քաղաք ժամանեցին անգլիական զորքերը գեներալ Դենս-

<sup>74</sup> Տե՛ս R.G. Suny, նշվ.աշխ., p.287-288:  
<sup>75</sup> Տե՛ս Հորիզոն, #162, 1918 թ. օգոստոսի 17:  
<sup>76</sup> Տե՛ս R.G. Suny, նշվ.աշխ., p.288; M. Волхонский, В. Муханов, նշվ.աշխ., стр.93:  
<sup>77</sup> Տե՛ս Հորիզոն, #144, 146, 171, 1918 թ. հուլիսի 23, հուլիսի 25, օգոստոսի 29; Е. Токаревский, Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане, Баку, Академия Наук Азербайджанской ССР, Институт истории, 1957, стр.169; Մշակ, #132, 167, 1918 թ. հուլիսի 10, օգոստոսի 23:

տերվիլի գլխավորությամբ<sup>78</sup>: Գերմանիան անմիջապես արձագանքեց իրավիճակի նման փոփոխությանը: Կովկասում գերմանական դիվանագիտական ներկայացուցչությունը հայտարարեց, որ Բաքվի խորհրդային իշխանության տապալումը յուրաքանչյուր այլ իշխանություն հակառակորդ է դարձնում Գերմանիայի և Թուրքիայի համար, ուստի վերանում են թուրքական զորքերի՝ Բաքվի վրա հարձակումն արգելելու հիմքերը<sup>79</sup>:

Սակայն մյուս կողմից, 1918 թ. օգոստոսի 27-ին ստորագրվեց խորհրդա-գերմանական պայմանագիր, որով Գերմանիան չէր աջակցելու որևէ երրորդ պետության (Թուրքիա-Ղ.Կ.) ռազմական գործողություններին վրաստանի տարածքից և Բրեստ-Լիտովսկի պայմանագրով որոշված Թուրքիայի սահմաններից դուրս: Գերմանիան աջակցություն էր ցուցաբերելու, որ երրորդ պետության ուժերը չափանեին Կուր գետով մինչև Շամախու գավառի սահմանը, այնուհետև Բաքվի գավառի հյուսիսային սահմանով մինչև Կասպից ծով ձգվող բաժանարար գիծը: Իր հերթին Ռուսաստանը պարտավորվում էր Գերմանիային տրամադրել Բաքվում արդյունահանվող նավթի մեկ քառորդը: Համաձայնություն ձեռք բերվեց, որ խորհրդային Ռուսաստանը գերմանական զորքերի կողմից Բաքվից անգլիացիների վտարումը չէր համարելու ոչ բարեկամական ակտ<sup>80</sup>:

Խորհրդա-գերմանական պայմանագիրը իրականացվելու դեպքում վտանգի տակ էր դնում էնվեր փաշայի պանթուրքական ծրագրերը՝ Ադրբեջանից խլելով տարածքներ, որոնք կենսական նշանակություն ունեին իր համար: Դեռևս Կ.Պոլսում գտնվող Մ. է. Ռասուլզադեն 1918 թ. սեպտեմբերի 12-ին հուշագիր հղեց Կենտրոնական տերությունների դեսպանություններին՝ բողոքելով Ադրբեջանի բնական մայրաքաղաք և իր քաղաքական, մշակութային և տնտեսական կենտրոն հանդիսացող Բաքվի հանդեպ Ռուսաստանի ինքնիշխանությունը Գերմանիայի կողմից ճանաչվելու դեմ: Հուշագիրը շեշտում էր, որ դա հակասում է ազգերի ինքնորոշման իրավունքին, որը հռչակվել էր Ռուսաստանի և Ճանաչվել Կենտրոնական տերությունների կողմից<sup>81</sup>:

Սակայն տրամաշրջանում գերմանական զորքերի փոքրաթիվ լինելը գործնականում անհնարին էր դարձնում Թուրքիային հակազդեցություն ցույց տալը: Թուրքական հրամանատարությունը մերժեց նաև թույլ տալ գերմանական զորքերի մասնակցությունը Բաքվի անկումից հետո քաղաքում կարգուկանոնի պահպանմանը<sup>82</sup>: Իսկ Իսլամի բանակն արդեն վաղուց էր հաղթահարել խորհրդա-գերմանական պայմանագրի սահմա-

<sup>78</sup> Տե՛ս Արև, #146, 152, 1918 թ. հուլիսի 27, օգոստոսի 7: Գեներալ Դեմետրիլիի հոյակազիրը տե՛ս Արև, #156, 1918 թ. օգոստոսի 11: Գեներալ Դեմետրիլիի հետապնդած նպատակների մասին տե՛ս В. Гурко-Кряжин, 624. աշխ., стр. 114:

<sup>79</sup> Տե՛ս Հորիզոն, #133, 152, 1918 թ. օգոստոսի 3, հուլիսի 9:

<sup>80</sup> Տե՛ս Е.Ф. Лудиневит, 624. աշխ., стр.251-253; Т. Swietochowski, Russian Azerbaijan..., p.134; З. Аваловъ, Независимость Грузии въ международной политике 1918-1921 гг., Парижъ, Б. И., 1924, стр.113:

<sup>81</sup> Տե՛ս Т. Swietochowski, Russian Azerbaijan..., p.134:

<sup>82</sup> Տե՛ս Т. Sorgun, 624.աշխ., s.223:



նած բաժանարար գիծը և գտնվում էր Բաքվի մատույցներում: 1918 թ. սեպտեմբերի 15-ին քաղաքն ընկավ:

Բաքվի հարցում ԱԳՀ քաղաքականությունը վերլուծելիս պետք է նկատի ունենալ, որ խան խոյսկու կառավարությունն իր առջև նպատակ ուներ քաղաքի գրավուծից հետո ապահովել ԱԳՀ ապագա մայրաքաղաքի թյուրքական նկարագիրը: Բաքուն ԱԳՀ-ին պետք էր առանց հայերի: Քաղաքի հայաթափման համար ԱԳՀ կառավարությունն իր պատկերացմամբ ուներ հարմար պատրվակ 1918 թ. մարտի իրադարձությունների տեսքով, որոնք որակվում էին՝ որպես հայերի կողմից Բաքվի մուսուլման բնակչության կոտորած: Պատահական չէ, որ խան խոյսկու կառավարությունը Կենտրոնականապիական դիկտատուրայի հետ խաղաղ բանակցություններ վարելու համար առաջադրեց հետևյալ նախապայմանները՝ 1. Բաքուն պետք է ճանաչեր ԱԳՀ կառավարության իշխանությունը, 2. Բաքվում գտնվող ուժերը պետք է զինաթափվեին, ԱԳՀ-ին անվճար վիճակում հանձնվում էին քաղաքը, արդյունաբերական ձեռնարկությունները, պետական հաստատությունները և այլն, 4. ԱԳՀ կառավարությունը երաշխավորում էր ողջ բնակչության անձի և գույքի ապահովությունը<sup>83</sup>:

Միաժամանակ Հայոց Ազգային խորհրդի պատվիրակությանը (Ս. Արզումանյան և Ս. Հարությունյան) տարբեր պատճառաբանություններով այդպես էլ չթույլատրվեց մեկնել Բաքու Բաթումի պայմանագրի 11-րդ հոդվածի պայմանների շուրջ բանակցություններ վարելու համար: Աերժվեց նաև Վրաստանի կառավարության առաջարկությունը հանդես գալու՝ որպես միջնորդ, թեև ԱԳՀ կառավարությունը հերքում էր դա<sup>84</sup>: Փաստորեն ԱԳՀ կառավարությանը ձեռնտու չէր համաձայնությունը, քանի որ այդ դեպքում նրա իշխանությունը Բաքվում լիակատար չէր լինի<sup>85</sup>:

<sup>83</sup> Տե՛ս Հորիզոն, #180, 1918 թ. սեպտեմբերի 8; Մշակ, #180, 1918 թ. սեպտեմբերի 5; ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.57, ք.67: Թուրքական հրամանատարությունը քազմիցս մամակով դիմել էր Բաքվի Հայոց Ազգային խորհրդին՝ պահանջելով հանձնել քաղաքը և հակառակ դեպքում սպառնալով կոտորել քաղաքի հայությանը: Տե՛ս Мекра, #15, 1918 թ. օգոստոսի 31; Արեւ, #171, 1918 թ. օգոստոսի 31:

<sup>84</sup> Տե՛ս Հորիզոն, #181, 184, 1918 թ. սեպտեմբերի 10, 13; Մշակ, #181, 1918 թ. սեպտեմբերի 10; Ժողովրդի ձայն, #34, 1918 թ. հոկտեմբերի 13:

<sup>85</sup> Բաքվի հարցում ԱԳՀ քաղաքականությունն առավել լավ է քննդրւում այդ շրջանի վրացական մամուլը: «Եօրեճ» քերքը գրում էր, որ ԱԳՀ-ն, որի մեջքին կանգնած էր Թուրքիան, Բաքվի բնակչությանը խտտաբեռն էր միայն կյանքի և գույքի ապահովություն, և այդ քայքայարտական պայմանների տակ սպառնալիք կար. եթե բնակչությունը շարունակեր դիմադրություն ցույց տալ, քաղաքը կհանձնվեր արյան և ավերածության, ու բոլորը կմորթվեին: «Եօրեճ»-ն եզրակացնում էր, որ բուրջական հրամանատարությունը և ԱԳՀ կառավարությունը չէին ուզում երաշխավորել մույմիսկ բնակչության կյանքն ու գույքը, այլ ձգտում էին կազմակերպել կոտորած և թալան, իսկ այդ պայմանների առաջ քաշումը նպատակ ուներ հասնել նրան, որ Բաքուն չընդուներ դրանք, և այդպիսով «օրինական» առիթ ստեղծվեր կոտորածի և թալանի համար: Այս ամենն ամփոփելով՝ քերքն իրավունք էճում էր, որ Թուրքիայի իշխանությունները և Արցրեզանի կառավարությունը դրանով սպառնուցում են իրենց բարոյական քրոտյունը և քաղաքական տգիտությունը: Տե՛ս Հորիզոն, #182, 184, 1918 թ. սեպտեմբերի 11, 13: Վրացական մամուլի կոչս դիրքորոշումը Թուրքիայի և Արցրեզանի զինված ուժերի հանդեպ մույմիսկ հանգեցրեց Բաքվի սպաշտման կան քաղաքին: Տե՛ս Ժողովրդի ձայն, #17, 1918 թ. սեպտեմբերի 20:



Քաղաք թուրքական կանոնավոր զորքերի մուտքին նախորդեց արդրեջանական զորքերի և զինված խուժանի կողմից հայության կոտորածը և թալանը: Բաքվի հարուստ նավթատերի որդի էսադ բեյը վկայում է, որ քաղաքը երեք օրով զորքի կողմից կոտորածի ու թալանի հանձնելու նախաձեռնությունը պատկանում էր հենց իսան խոյսկու կառավարությանը: Թուրքական հրամանատարության հետ այդ հարցը համաձայնեցնելուց հետո Ադրբեջանի կառավարությունը հրապարակեց որոշում, ըստ որի՝ «թշնամու ոսկին, կյանքը և կանայք» երեք օրով տրվում էին բանակին<sup>86</sup>: Այս և բազմաթիվ այլ վկայությունները ցույց են տալիս, որ Բաքվի հայության կոտորածը Ադրբեջանի իշխանությունների կանխամտածված քաղաքականության արդյունք էր: Այսպես, Վ. Բայկովը նշում է, որ հայկական ամեն ինչին բացահայտ պատերազմ հայտարարվեց, և չէր թաքցվում, որ ոչ մի բնագավառում չի հանդուրժվի հայերի մրցակցությունը: Սկսվեց հայերի ունեցվածքի բռնագրավումը, ականավոր գործիչների հալածանքը և ֆիզիկական ոչնչացումը: Թուրքական հրամանատարությունը որևէ կերպով չփորձեց կանխել կոտորածը՝ պատճառաբանելով, որ հնարավոր չէր զսպել վրեժի ծարավ ժողովրդի արդար ցասումը<sup>87</sup>: Գ. ԱԳև բողոքի հայտագրին ԱԳ. ԱԳև-ը պատասխանեց, որ ԱԳ. կառավարությունը փորձում էր հանդարտեցնել մուսուլմանների զայրույթը Բաքվի մարտի դեպքերից հետո, երբ Բաքվում և Շամախիում բուլշևիկների անվան տակ հայերը կոտորեցին 10000 մարդ, իսկ Երևանի նահանգում ոչնչացրեցին 200 մուսուլման գյուղ: Միաժամանակ հերքվում էր Բաքվի հայության ջարդը ու նշվում, որ սպանվածների թիվն անհամեմատ փոքր էր, և այդ միջադեպերի մեղավոր 100 հոգի կախաղան էր հանվել<sup>88</sup>: ԱԳ. խորհրդարանում իր ելույթում վարչապետ իսան խոյսկին հայտարարեց, որ աշխարհում ոչ մի կառավարություն չէր կարող կանխել դա, քանի որ այդտեղ սպանվել էին մուսուլմաններ և, բացի այդ, քաղաքը գրավվել էր եռամսյա մարտերից հետո, ու բնակչության զայրույթը հասել էր զագաթնակետին<sup>89</sup>: Փաստորեն, «դեմոկրատական» հանրապետության կառավարությունն արդարացնում էր կոտորածը՝ որպես արժանի պատասխան մարտի դեպքերին:

Մի կողմից, Բաքվի գրավումը ԱԳ-ի համար մեծ ձեռքբերում էր, որը խորհրդանշում էր Արևելյան Անդրկովկասի և Բաքվի նկատմամբ ԱԳ-ի ինքնիշխանության հաստատումը: Մյուս կողմից, ԱԳ-ի միջազգային

<sup>86</sup> Sb' Essad-Bey, Blood and Oil in the Orient, Baku, Aran Press, 1997, p.245-246: Նույն հեղինակը վկայում է, որ վրեժ էր լուծվում մարտին սարսնված մուսուլմանների համար՝ մեկ մուսուլմանի դիմաց երկու հայ սկզբունքով: Sb' նաև ժողովրդի ձայն, #39, 1918թ. հոկտեմբերի 9:

<sup>87</sup> Sb' B. Байков, Գլ.աշխ., стр.143-144; T. Sorgun, Գլ.աշխ., s.227: Sb' նաև Ա. Նախիսեան, Գլ. աշխ., էջ 90:

<sup>88</sup> Sb' ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.143, ք.3; Մշակ, #213, 216, 1918 ք. հոկտեմբերի 19,23; Кавказское слав., #202, 1918 ք. սեպտեմբերի 20; F. Kazemzadeh, The Struggle for Transcaucasia 1917-1921, New-York, Philos. Lib., Oxford: Ronald, 1951, p.226: Իրականում Բաքվի կոտորածի զոհերի թիվը զնահատվում է մինչև 30000:

<sup>89</sup> Sb' M. Волконский, В. Муханов, Գլ. աշխ., стр.92:

կարգավիճակը մնում էր անորոշ. Օսմանյան կայսրությունն այդպես էլ չհաստատեց լիարժեք միջպետական հարաբերություններ Ադրբեջանի հետ՝ դրանով փաստորեն ցուցադրելով իր բացասական դիրքորոշումն ադրբեջանական պետականության հանդեպ:

### 1.3 ԱՂԳ ԲԱՐԱԲԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԴՆՅԱՍՏԱՆԻ ՈՒ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎԱՏԱՍԱՐ 1918 Թ. ՀՈՒՆԻՍ - ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ

Բարձրի գրավումից հետո ԱՂԳ-ն ձեռնամուխ եղավ նորաստեղծ հանրապետության իր նախանշած տարածքն անցանկալի տարրերից մաքրելու քաղաքականությանը: ԱՂԳ կովկասյան քաղաքականության մեջ հստակ կերպով գծագրվեց նոր պետականության իր նախանշած տարածքի հայաթափման կուրսը, որի հստակ արտահայտությունն էր, ի թիվս Բարձրի հայության կուրորածի, հուլիսի սկզբին Նուխիի և Արեշի գավառների հայության ջարդը: Ջարդից մազապուճ փախած շուրջ 20 հազար գաղթականությունը ապաստանեց Վրաստանի Սոնախի գավառում: 1918 թ. օգոստոսին Ելիզավետպոլում բանակցություններ տեղի ունեցան Նուխիի և Արեշի հայության ներկայացուցիչների և ԱՂԳ վարչապետ Ֆ. Խան Խոյսկու միջև գաղթականների՝ իրենց բնակավայրեր վերադառնալու հարցի շուրջ: Ֆ. Խան Խոյսկին սկզբունքորեն համաձայնեց հայության վերադարձին՝ նրանց զինաթափման և ԱՂԳ իշխանություններին հպատակման պայմանով: Հայկական պատվիրակությունն ընդունեց այդ պայմանները՝ խնդրելով ապահովել փախստականների կյանքն ու զույգը: Սակայն մյուս օրը ԱՂԳ վարչապետը հայտարարեց, որ Նուրի փաշան հեռագրով խնդրել է մինչև Բարձրի գրավումը ընդունել գաղթականներին, քանի որ Նուխիի գավառը հանդիսանում է զորքի թիկունք, և ցանկալի չէ քայքայել թիկունքն այն ժամանակ, երբ դեռ շարունակվում են ռազմական գործողությունները: Միայն 1918 թ. սեպտեմբերին սկսվեց գաղթականների վերադարձը հայրենի բնակավայրեր: Ծանապարհին նրանք ենթարկվում էին թաքարների հարձակումներին, և արդյունքում Նուխի հասավ 20 հազար գաղթականներից ընդամենը 3,5 հազարը: Հետագայում ԱՂԳ-ն ոչ միայն ամեն կերպ խոչընդոտում էր գաղթականների վերաբնակեցմանը Հայաստան, այլև տեղում շարունակում բռնություններ գործադրել հայության նկատմամբ՝ ջարդի ենթարկելով վերադարձածների զգալի մասին<sup>90</sup>:

Թաքարներն իշխանությունների թողտվությամբ սկսեցին հարձակումներ գործել նաև Մուղանի, Շամախու և Դուբայի գավառների ռուսա-

<sup>90</sup> Տե՛ս Հայերի կուրորածները Բարձրի և Ելիզավետպոլի մահաճակատում... էջ 62-63, 70, 72-73, 76-78, 88, 89, 95-97; Հորիզոն, #134, 145, 161, 196, 1918 թ. հուլիսի 10, հուլիսի 24, օգոստոսի 16, սեպտեմբերի 28; Наше время, #32, 1919 թ. փետրվարի 9; Արև, #10, 1919 թ. փետրվարի 18; Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов, Институт истории Академии Наук Армении, Главное архивное управление при СМ Республики Армения, Кафедра истории Армянского народа Ереванского Государственного Университета, Ереван, Издательство АН Армении, 1992, стр. 347:



կան գյուղերի վրա: Թալանվող և վտարվող ռուսների բնակավայրերում տեղի էր ունենում թաթար բնակչության բնակեցում այն պատճառաբանությամբ, որ նախորդ ռազմական գործողությունների արդյունքում թաթարական գյուղերը ոչնչացվել էին և դրանց բնակչությունը՝ զրկվել սնունդից և կացարանից<sup>91</sup>:

Սակայն, ինչպես և հայության դեպքում, ռուսներն իրենց կոմսակտ բնակության վայրերում՝ Մուղանի դաշտավայրում, կարողացան կազմակերպել դիմադրություն<sup>92</sup>: Դեռևս 1918 թ. սկզբին Կովկասյան ռազմաճակատից տունդարծի ճանապարհը բռնած ռուսական զորամասերի վրա հարծակույնների հետ մեկտեղ, թաթարների զինված խմբերը կարողացան ոչնչացնել Վերին Մուղանի 30 ռուսական գյուղ: Սակայն Միջին և Ստորին Մուղանի ու Լենքորանի բնակչությունը համախմբվեց և հետ մղեց թաթարներին<sup>93</sup>: 1918 թ. սեպտեմբերին Մուղան մեկնած Ռուսական Ազգային կոմիտեի նախագահ Մ. Պողչիբյակինն իր հաշվետվությունում նշում էր, որ Մուղանն ուներ 100 հազար բնակչություն, ապահովված էր պարենով, կար 10-12 հազար կադրային զինվոր, մեծ քանակով զենք, հանդերձանք և հրետանի, և, ըստ նրա ցնահատականի, ԱԳԳ զորքերը նրա համար վտանգ չէին ներկայացնում<sup>94</sup>: Այդ հանգամանքը հաշվի առնելով՝ ԱԳԳ-ն փորձում էր հպատակեցնել Մուղանը՝ օգտվելով թուրքական զորքերի ներկայությունից: Սակայն թուրքական հրամանատարությանը մտահոգում էին առաջին հերթին արտաքին ճակատները: Ուստի ԱԳԳ-ն առժամանակ ստիպված էր անցնել Մուղանի ռուսներին խաղաղ միջոցներով հնազանդեցման քաղաքականության:

Եթնիկական գտումներից և բռնի թյուրքացումից անմասն չմնացին նաև ԱԳԳ տարածքում բնակվող մուսուլման ժողովուրդները, հատկապես, լեզգիները: 1918 թ. սեպտեմբերին Բաքվի գրավումից հետո ԱԳԳ-ն վերջ տվեց լեզգիների քաղաքական կազմակերպությանը՝ «Ֆարուս»-ին (Արդարության պաշտպան), որի անդամները ենթարկվեցին ֆիզիկական ոչնչացման: Գլխատելով լեզգիների քաղաքական ղեկավար մասը՝ ԱԳԳ-ն իր ողջ գոյության ընթացքում հետևողական կերպով իրագործեց լեզգիների բռնի թյուրքացում և ջարդեր<sup>95</sup>:

Միաժամանակ իր գոյության առաջին իսկ օրերից Ադրբեջանը, օգտվելով իր համար բարենպաստ միջազգային իրավիճակից, այն է՝ ԱՆ-

<sup>91</sup> Տե՛ս Բ. Байков, նշվ.աշխ., սր. 158:

<sup>92</sup> Լենքորանը քաղաքականապես կազմակերպվեց դեռ փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ ստեղծվեցին Լենքորանի քանվորների և զինվորների խորհուրդը կոմնետ Գ. Ապրեսովի գլխավորությամբ և էսեռների Մուղանի կոմիտե՛ն՝ Տ. Մոխտրովսկի նախագահությամբ: Լենքորանի և Մուղանի ռուսների քաղաքական կազմակերպմանը նպաստեց կանոնավոր տուսական զորամասերի առկայությունը, որոնք համալրվում էին Պարսկաստանից վերադարձող զորքերով: Տե՛ս Ա. Привольный, Над Муғаныю зарево Октября, Баку, Азербайр, 1967, սր. 17-18, 21:

<sup>93</sup> Տե՛ս. в том же месте, ср. 29-30:

<sup>94</sup> Տե՛ս Բ. Байков, նշվ.աշխ., սր. 139; Ա. Привольный, նշվ.աշխ., սր. 57-58:

<sup>95</sup> Տե՛ս Գ. Абдурагимов, նշվ. աշխ., սր. 275-276: «Ֆարուս» կազմակերպության ստեղծման և գործունեության մասին տե՛ս նույն տեղում, սր. 274-275:



դըրկովկասում Օսմանյան թուրքիայի ռազմաքաղաքական ազդեցության հաստատումից, սկսեց տարածքային հավակնություններ ներկայացնել Հայաստանի և Վրաստանի նկատմամբ: Ադրբեջանն այս կամ այն չափով հավակնում էր Արևելյան Հայաստանի տարածքի մեծ մասի, այն է՝ Ղարաբաղի լեռնային մասի, Ջանգեզուրի, Ղազախի գավառի հարավ-արևմուտյան մասի, Նոր Բայազետի գավառի արևելյան մասի և այլ տարածքների նկատմամբ: Քննարկվող շրջանում ադրբեջանական նկրտումների հիմնական թիրախ դարձան Ելիզավետպոլի նահանգի մեջ մտնող Լեռնային Ղարաբաղը և Ջանգեզուրը<sup>96</sup>:

Լեռնային Ղարաբաղը վարչականորեն մտնում էր Ելիզավետպոլի, Ջևանշիրի, Շուշիի, Կարյազինի գավառների կազմի մեջ: Վարչական բաժանումն այնպես էր կատարվել, որ գավառներն աշխարհագրորեն տարածվում էին արևմուտքից արևելք՝ յուրաքանչյուրը ներառելով հատվածներ Ղարաբաղի լեռնային և դաշտային մասերից: Արդյունքում հայ բնակչությունը մեծամասնություն էր կազմում ընդամենը Շուշիի գավառում, մինչդեռ Լեռնային Ղարաբաղում հայության թիվը կազմում էր 165000՝ ընդամենը 59000 մուսուլմանի դիմաց<sup>97</sup>:

Ադրբեջանի համար Ղարաբաղը և Ջանգեզուրը կարևորվում էին հետևյալ տեսակետից՝

• Ղարաբաղը և ողջ Ելիզավետպոլի նահանգը տնտեսապես կապված էին Ադրբեջանի հետ. հաղորդակցության բոլոր ուղիները Ղարաբաղից տանում էին դեպի արևելք: Ղարաբաղի լեռնային մասն ամառային արոտավայր էր հանդիսանում քոչվորների հոտերի համար, ուստի նրա անջատումը դաշտային Ղարաբաղից վտանգում էր քոչվորային անասնապահությունը:

• Ղարաբաղի և Ջանգեզուրի ռազմավարական նշանակությունը Ադրբեջանի համար կարևորվում էր նաև այն տեսակետից, որ դրանց տիրելը Բաքուի թույլ էր տալիս անմիջական ցամաքային կապ հաստատել Թուրքիայի հետ: Բացի այդ, նրանք հանդիսանում էին Շարուր-Նախիջևանի և Արարատյան դաշտավայրի՝ մուսուլմաններով բնակեցված լայնարձակ տարածքների հետ կապող օղակ, որի գրավումը ԱՂԳ-ի համար հեշտացնում էր իր իշխանության տարածումն այդ տարածքների նկատմամբ:

<sup>96</sup> ԱՂՀ-ն դեռևս հավակնություններ չէր ներկայացնում Նախիջևանի, Շարուր-Ղարաբաղյազի, Սուրմալուի գավառների, Երևանի և Էջմիածնի գավառների մուսուլմանաբնակ մասերի, Կարսի մարզի նկատմամբ, քանի որ Բաքումի պայմանագրով դրանք անցել էին նրա «մեծ եղբոր»՝ Թուրքիայի ձեռքը:

<sup>97</sup> Տե՛ս R.G. Hovannisian, Republic of Armenia, Berkeley-Los Angeles-London, University of California Press, 1982, Vol.1, p.8, Դրօշակ, # 2, 1926 թ. փետրվար, «Գամձակ-Ղարաբաղի վեճը» էջ 46-52: Հարկ է շեշտել, որ Հայ Առաքելական եկեղեցու Ղարաբաղի քեմը 1914 թ. դրությամբ ուներ 206768 ծխական: Տե՛ս Ս. Мурадян, История-память поколений. Проблемы истории Нагорного Карабаха, Ереван, «Айастан», 1990, стр. 94: Իսկ Ղարաբաղի հայության կտմից Կ.Պոլսի խորհրդարանում ներկայացնելու նպատակով կազմված ընդարձակ հուշագրում նշվում է, որ երկրամասի հայ բնակչության թիվը կազմում է 300000՝ 30-40 հազար մուսուլմանի դիմաց: Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.49, ք. 6-9:

Լ. Լեռնային Ղարաբաղը և Ջանգեզուրը ռազմավարական կարևոր նշանակություն ունեին Ադրբեջանի համար՝ հանդիսանալով բնական սահման արևմուտքում: Այլ պետության ձեռքում նրանց հայտնվելը խոցելի էր դարձնում Ադրբեջանի արևմտյան սահմանները<sup>98</sup>:

Հայաստանի և Ադրբեջանի ապագա սահմանագատման հարցը քննարկվել էր դեռևս Բաթումում Սեյմի պատվիրակության հայ և մուսուլման անդամների միջև: Սեյմի մուսուլման անդամները պահանջում էին Ադրբեջանին միացնել ոչ միայն Ջանգեզուրն ու Ղարաբաղը, այլև Երևանը՝ պնդելով, որ այն «թաթարական քաղաք» է, իսկ Հայաստանի ծայրաքաղաք կարող է լինել Վաղարշապատը<sup>99</sup>: Մյուս կողմից, Բաթումում Օսմանյան թուրքիայի պատվիրակության ղեկավար Վեհիբ փաշան Ա. Խատիսյանին բացեիբաց հայտնել էր, որ Ջանգեզուրը չպետք է մնար ԳՀ կազմում, քանի որ այն և Նախիջևանը դեպի Բաթո տանող ճանապարհներից մեկն են ու նշել, որ հայերը պետք է մնան Վաղարշապատի ու Նոր Բայազետի շուրջը<sup>100</sup>: Այսինքն՝ ԱԳՀ ծավալապաշտական ձգտումները պայմանավորված էին Օսմանյան թուրքիայի աշխարհաքաղաքական նպատակներով ու ընթանում էին դրանց ուղեծրում: Այսպես, Բաթումում Վրաստանի պատվիրակ Զ. Ավալովը գրում է. «Ընդհանուր առմամբ մեր մուսուլման բարեկամները հավաստիացնում են, որ ամեն գնով կպաշտպանեն երեք մասից բաղկացած Անդրկովկասը, սակայն իրենք ասում են, թե ի՞նչ կլինի, եթե թուրքերը չիրաժարվեն իրենց պահանջներից, և նախագծվող երեք «կանտոններից» մեկը բացակայի: Իրենք այդ դեպքում կուզենային պահել զոհե իրկու մասից բաղկացած Անդրկովկասը»<sup>101</sup>:

Սահմանագատման հարցի շուրջ բանակցություններ տեղի ունեցան նաև 1918 թ. մայիսի վերջին և հունիսի սկզբին թիֆլիսում Հայոց Ազգային խորհրդի և Մուսուլմանական Ազգային խորհրդի ներկայացուցիչների միջև: Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանը Երևանի Ազգային խորհրդին ուղղված նամակում նշում էր, որ երկու պետությունների սահմանագատման վերաբերյալ պետք է կնքվեր արժանագրություն, որը կցվելու էր խաղաղ պայմանագրին (Թուրքիայի հետ - Դ. Կ.): Նա հայտնում էր, որ ԳՀ-ին էին մնալու Բորչալուի հայկական մասը, Ղազախի

<sup>98</sup> Տե՛ս R.G. Hovannisian, նշվ.աշխ. Vol.1, p.81-82: Ղարաբաղի և Ջանգեզուրի հայության հայրենակցական միության՝ Զառյակ միության և Անդրկովկասի համընթացությունների Կ. Պոլսի խորհրդատուովին ներկայացնելու համար կազմած Ղարաբաղի մասին հուշագիրը ի յիջ էր դարձնում Ադրբեջանի փաստարկները: Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.49, ք.6-9:

<sup>99</sup> Տե՛ս Ա. Խատիսյան, նշվ.աշխ. էջ 58; Դրոշակ, # 3, 1925 թ. սեպտեմբեր, «Հայաստանը եւ իր հարեանները», էջ 70: Անվիճելիորեն ՀՀ-ին էին թողնվում միայն Նոր Բայազետի գավառի և Էջմիածնի գավառի միջև ընկած տարածքները: Տե՛ս Ա. Խատիսյան, նշվ.աշխ., էջ 69; 3. Авагос, նշվ.աշխ., стр.57: Թե՛ն քննարկվող շրջանի աղբյուրների և գրականության մեջ լայնորեն օգտագործվում է «Էջմիածին» անվանումը, աշխատանքի մեջ կիրառվում է Վաղարշապատ անվանումը, քանի որ քաղաքը միայն 1945 թ. վերանվանվեց Էջմիածին: Տե՛ս Հայկական Մոլիտական Հանրագիտարան, հատոր 4, Երևան, Հայկական ՄՍՀ Գիտությունների Ակադեմիա, 1978, էջ 64:

<sup>100</sup> Տե՛ս Ա. Խատիսյան, նշվ.աշխ., էջ 70:

<sup>101</sup> Տե՛ս 3. Авагос, նշվ.աշխ., стр.57:



լեռնային մասը և ողջ Նոր Բայազետի գավառը, իսկ Ելիզավետպոլը, Շուշին, Ջևանշիրը և Ջանգեզուրը մնալու էին Ադրբեջանի կազմում և հավանաբար կազմելու էին հատուկ հայկական կանտոն: Դարալազյազի կարգավիճակի հարցը մնում էր վիճելի<sup>102</sup>:

Փաստորեն, ԳԳ բարդ միջազգային դրուբյունը, Թուրքիայի քաղաքական և դիվանագիտական օգնությունը Ադրբեջանին ու վերջինի ագրեսիվ նկրտումները ԳԳ-ին ստիպում էին խորհել Ջանգեզուրը և Դարաբադը ԱԳԳ-ին զիջելու մասին: Ավ. Ահարոնյանն այդ կապակցությամբ նշում էր, որ միգուցե ԱԳԳ-ի միջոցով հնարավոր լիներ չափավորել Թուրքիայի գիշատիչ բնազդները և ապահովել հայության ֆիզիկական գոյությունը<sup>103</sup>: Սակայն Թիֆլիսի բանակությունները ձախողվեցին, և հարցի վերջնական լուծումը որոշվեց տեղափոխել Կ.Պոլսի խորհրդատուով, որտեղ ևս որևէ համաձայնություն ձեռք չբերվեց<sup>104</sup>:

Այսպիսով, քննարկվող շրջանում կողմերի միջև չստորագրվեց որևէ գրավոր իրավական փաստաթուղթ, որով որոշվում էր հայ-ադրբեջանական միջպետական սահմանը և որոշվում էր Դարաբադի ու Ջանգեզուրի պատկանելությունը կողմերից որևէ մեկին: ԱԳԳ հետագա հավակնությունները Ջանգեզուրի և Դարաբադի նկատմամբ իրենց տակ չունեին որևէ միջազգային իրավական հիմք:

Ստեղծված բարդ միջազգային իրադրության պայմաններում 1918 թ. մայիսին Անդրկովկասի հանրապետությունների ստեղծման պահին Դարաբադի լեռնային մասը կառավարվում էր տեղի հայության կողմից, որի 1-ին համագումարի որոշմամբ հիմնվել էր Ժողովրդական կառավարություն, իսկ Դարաբադը՝ հռչակվել ԳԳ մաս<sup>105</sup>: Սկզբնական շրջանում,

<sup>102</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.24, ք.249; Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Գրադարանական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Գ. Գալստյանի և Վ. Ղազախեցյանի խմբագրությամբ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2000, էջ 41-42, 43-44; P. Кавказджян, К предыстории самоопределения Нагорного Карабаха, Институт Востоковедения Национальной Академии Наук Республики Армения, Москва, Армянская община Москвы, 1997, стр.7-8: Նամակում նշվում էր, որ տեղի բարաբները չէին հավակնում Մուրմալուի գավառի նկատմամբ, որն իրենց կարծիքով Օսմանյան Թուրքիան է վերջը բողոքելու էր ՀՀ-ին: Ավալովը ևս նշում է, որ «տալերը հրաժարվել են Ելիզավետպոլի մահանգի մասերից»: Տե՛ս Յ.Ասալոբ, նշվ. աշխ., стр.57:

<sup>103</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.24, ք.249; գ.120, ք.26: Ինչպես նշում է Ա. Խատիսյանը, Իրքիիսաղ վե քերպրի-ի անդառ Անդիզ Աղանը ՀՀ պատվիրակությանը խոստանալով իր քաղկցությունը, սակայն արդյունքում դիմել տեղի չունեցավ: Տե՛ս Ա. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 71:

<sup>104</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.24, ք.251; Кавказское слово, #156, 1918 ք. հուլիսի 27; Մշակ, #144, 36, 1918 ք. հուլիսի 25, 1919 ք. փետրվարի 15; Ժողովրդի ձայն, #10, 1918 ք. սեպտեմբերի 12; Нагорный Карабах в 1918-1923 гг., стр.6-7:

<sup>105</sup> Տե՛ս Ե. Իշխանեան, Լեռնային Դարաբադ 1917-1920, Երևան, «Հայաստան», 1999, էջ 81-83, 172-174; Հ. Հարությունյան, Լեռնային Դարաբադը 1918-1921 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1996, էջ 17-18, 20, 23, 25: Պետք է ընդգծել, որ մինչև բուրք-ադրբեջանական ուժերի հայտնվելը Դարաբադում, երկրամասի հայ և քաղաք բնակչության միջև տիրում էր ընդհանուր առմամբ խաղաղ մթնոլորտ շնորհիվ դեռևս 1917 ք. դեկտեմբերի 25-ին ստեղծված հայ-քաղաքական կոմիտեի: Այսպես, 1918 ք. ապրիլ-մայիսին տեղի ունեցած հայ-քաղաքական երեք համագումարները կարողացել էին լուծել քոչի հարցը: Տե՛ս Ե. Իշխանեան, նշվ. աշխ., էջ 85, 130-131, 145-146, 150-152, 154:



քանի դեռ Նուրի փաշայի Իսլամի բանակն զբաղված էր Քաջվի խորհրդի դեմ պայքարով, ԱՂԳ-ն ի վիճակի չէր տիրանալ Ղարաբաղին: 1918 թ. օգոստոսին և սեպտեմբերին Ղարաբաղի հայերի 1-ին և 2-րդ համագումարները մերժեցին Նուրի փաշայի պահանջները՝ ճանաչելու ԱՂԳ իշխանությունը՝ պնդելով ստատուս քվոյի պահպանման վրա, մինչև Քառայակ միության և Անդրկովկասի հանրապետությունների 4.Պոլսի խորհրդածորդի կողմից հարցի լուծումը<sup>106</sup>:

Օր առաջ իր նոր սահմաններն ամրագրելու նպատակով ԱՂԳ-ն հունիսին ԳԳ-ին և Վրաստանին առաջարկեց ստեղծել երկկողմ սահմանագատող հանձնաժողովներ, որոնք կքննարկեին և կլուծեին տարածքային բոլոր վեճերը<sup>107</sup>: Ըստ որում, ԱՂԳ-ն ի սկզբանե հրաժարվում էր քննարկել Ղարաբաղի և Ջանգեզուրի պատկանելության հարցը և դրանք համարում ԱՂԳ անբաժան և անվիճելի մասեր՝ հղում անելով Մուսուլմանական Ազգային խորհրդի և Գայոց Ազգային խորհրդի համատեղ միատուն «ընդհանուր գծերով ձեռք բերված բանավոր համաձայնությունը» ԳԳ և ԱՂԳ տարածքների սահմանագատման վերաբերյալ ու ընդգծելով, որ այդ միատուն Ղարաբաղի հարցը չէր բարձրացվել<sup>108</sup>: Միաժամանակ ԱՂԳ-ն պահանջում էր ԳԳ կառավարությունից անհապաղ միջոցներ ձեռնարկել Անդրամիկի ջոկատն իր «անբաժան» մաս հանդիսացող Ջանգեզուրից դուրսբերման ուղղությամբ<sup>109</sup>:

Այս հարցում Օսմանյան թուրքիան Ադրբեջանին ցուցաբերում էր դիվանագիտական աջակցություն. Գալիլ փաշան Ջանգեզուրում Անդրամիկի գործողությունների կապակցությամբ բողոք հայտնեց ԳԳ կառավարությանը: Ի պատասխան, վարչապետ Քաջազունին նրան հիշեցրեց, որ Նուրի փաշան ելիզավետպոլի մահանգը հռչակել է Ադրբեջանի տարածք՝ արգելելով հայկական կանոնավոր ուժերի տեղակայումը Ջանգեզուրում, հետևաբար ԳԳ կառավարությունը չի կարող պատասխանատու լինել այդ

<sup>106</sup> Ղարաբաղի հայերը պատվիրակություն ուղարկեցին Ադրամուս տեղակալված քուրդ-ադրբեջանական զորքերի հրամանատար Ջամալ Ջավիդ թեյի մոտ, սակայն նա մերժեց նրանց առաջարկությունները՝ պնդելով ԱՂ-Հ իշխանության ճանաչումը: Տե՛ս ՀԱԱ, ֆ.24, ք.24, ք.416-421; Ե. Իշխանեան, ճշվ.աշխ., էջ 200-201, 205; Հ. Արքահաձյան, Թուրքական մվաճողների դեմ Ղարաբաղի աշխատավորության մղած պայքարի պատմությունից (1918 թ. օգոստոս-հոկտեմբեր), Բաներ Վայաստանի արխիվների, #2, Երևան, ՀԽՍՀ Միմխտրների Խորհրդին կից Գլխավոր արխիվային վարչություն, 1989, էջ 166-168:

<sup>107</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, ք.17, ք.23; Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, стр. 438; Հորիզոն, #126, 1918 թ. հունիսի 28:

<sup>108</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, ք.17, ք.20, 25, 33; Бакинский рабочий, #131, 1918 թ. հուլիսի 7: Շուշիի գավառում հայերի հալածանքներին վերջ տալու նպատակով ՀՀ-ն ԱՂ-Հ-ին առաջարկեց իր պատվիրակությունն ուղարկել Ղարաբաղ, ինչին Բաքում պատասխանեց, որ ադրամուս էր «ԱՂ-Հ հայ քաղաքացիների վրա մերգործելու» Երևանի մալխանությունը՝ դա գնահատելով որպես ԱՂ-Հ-ի հանդեպ վրայասան «քարի ծառայություն» ու իր եերքին պատրաստակամություն հայտնում մերգործել ՀՀ մտաուժման քաղաքացիների վրա: ՀՀ պատվիրակությունը պետք է ննջարկվել ԱՂ-Հ օրենքներին և գործեր Բաքվի հսկողության տակ: Դրանով Բաքում կրկին շեշտում էր Ղարաբաղի պատկանելությունն իրեն: Տե՛ս նույն գործը, ք.37-39; ֆ.26, ք.42, ք.8, 17, 20:

<sup>109</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, ք.17, ք.31-32:

չրջանում իրադարձությունների համար<sup>110</sup>: Սեկ այլ նամակում ԳԳ ԱԳ նախարարը հայտնում էր, որ ԳԳ կառավարությունը չունի ուղիղ շփումներ Անդրամիկի հետ, որի ջոկատը չի մտնում Գայկական կորպուսի կազմի մեջ: Եվ ԳԳ կառավարությունը ոչ մի հնարավորություն չունի խոչընդոտելու Անդրամիկի անցումը Նախիջևանից Ջանգեզուր, որը դեռևս չի մտնում Գայաստանի սահմանների մեջ: ԳԳ ԱԳ նախարարը միաժամանակ ընդգծում էր, որ Ղարաբաղի լեռնային մասը և Ջանգեզուրի հյուսիսային մասը բնակեցված են հայերով և պետք է պատկանեն ԳԳ-ին<sup>111</sup>: Երևանում օգոստոսի 31-ին Գալիլ փաշայի հետ բանակցությունների ժամանակ վարչապետ Բ. Քաջազնունին, կրկնելով, որ Անդրամիկը ոչ մի կապ չունի ԳԳ իշխանությունների ու զինված ուժերի հետ, պատրաստակամություն էր հայտնում գործ ուղարկել Ջանգեզուր այնտեղից Անդրամիկին հեռացնելու համար, եթե Ադրբեջանը չառարկեր դրա դեմ: Գալիլ փաշան իր հերթին առաջարկեց Անդրամիկի դեմ ուղարկել խառը ջոկատ՝ բաղկացած հայ, թուրք և ադրբեջանցի զինվորականներից, սակայն Քաջազնունին առարկեց՝ ճշելով, որ այդ խառը զորքի ստեղծումը նոր շունջ կհաղորդի Անդրամիկի քարոզչությանը ԳԳ կառավարության դավաճան լինելու մասին, ու Անդրամիկի դրոշի տակ կհավաքվի Ղարաբաղի և Ջանգեզուրի երիտասարդությունը: Մինչդեռ, եթե նրա դեմ ուղարկվեն միայն հայկական զորքեր, ապա հարցը լրիվ այլ բնույթ կստանա: Գալիլը համաձայնեց Քաջազնունու հետ և խոստացավ խոսել ԱԳԳ կառավարության և Նուրի փաշայի հետ, որպեսզի նրանք ԳԳ կառավարությանը թողնեն Անդրամիկին Ջանգեզուրից հանելու գործը<sup>112</sup>: Այս բանակցությունները ցույց են տալիս, որ Անդրամիկի ջոկատը լուրջ գործոն էր դարձել Ջանգեզուրի պաշտպանության գործում, և թուրքական իրամանատարությունն ու ԱԳԳ-ն ստիպված էին հաշվի նստել դրա հետ:

Չնայած ԳԳ պահանջներին՝ սպասել Կոստանդնուպոլսի խորհրդածողովի արդյունքներին, ԱԳԳ-ն Թուրքիայի օգնությամբ ձեռնամուխ եղավ հարցի ռազմական ճանապարհով լուծմանը: Սկսվեց Ելիզավետպոլի գավառի բնակչության զինաթափումը, իսկ Բաքվի գրավումից հետո թուրքական բանակը շարժվեց Ղարաբաղի վրա՝ վերջնագրով պահանջելով հպատակվել ԱԳԳ-ին, զինաթափվել և թուրքական բանակը ներս թողնել Եուզի<sup>113</sup>: Գայությունը կոտորածից փրկելու համար հոկտեմբերին կա-

<sup>110</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.49, ք.29; R.G.Hovarnisian, նշվ. աշխ., Vol. 1, p.88: Իր հերթին Նուրի փաշան Ղարաբաղի, Ջանգեզուրի և Ելիզավետպոլի հայերին ուղղված կոչում պահանջում էր նրանցից անձնատուր լինել՝ սպառնալով, որ ցանկացած դիմադրություն կհամարվեր ուղղված օսմանյան բանակի դեմ: Տե՛ս Մշակ, #190, 1918 ք. սեպտեմբերի 20; Հորիզոն, #188, 1918 ք. սեպտեմբերի 18:

<sup>111</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.49, ք.22:

<sup>112</sup> Տե՛ս Андраник Озаян. Документы и материалы, Институт истории АН Республики Армения, Ереван, Главное архивное управление при Совете Министров РА, 1991, стр. 298-300:

<sup>113</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.49, ք.29; գ.85, ք.2: Նուրիի վերջնագրին իր պատասխանում Անդրամիկը նշում էր, որ Նուրին հերոս է միայն ամենի ու անգին ժողովրդի առջև՝ ամենդեմի ջարդ կազմակերպելու հերոս: Տե՛ս Андраник Озаян. Документы и материалы, стр. 312-313:



յացած Ղարաբաղի հայերի 3-րդ համագումարն ստիպված էր համաձայնել ԱԴԴ իշխանության ճանաչմանը, սակայն կտրուկ դեմ էր զինաթափմանը և թուրքական զորքը մերս թողնելուն<sup>114</sup>։ Չսպասելով վերջնագրի պատասխանին՝ 1918 թ. հոկտեմբերի 8-ին թուրքական զորամասերից բաղկացած երկրորդ թուրքական դիվիզիան Ջամալ Ջավիդ բեյի գլխավորությամբ, որին ուղեկցում էր ԱԴԴ կառավարության մերկայացուցիչ Ադիլխան Ջիյաթխանովը, մտավ Շուշի<sup>115</sup>։ 1918 թ. նոյեմբերի 5-ին Թիֆլիսում թուրք Աբդուլ Քերիմ փաշայի միջնորդությամբ ԴԴ և ԱԴԴ դիվանագիտական մերկայացուցիչներ Ջամալխանի և Ջաֆարովի միջև կայացած հանդիպման ժամանակ Ջաֆարովը հայտարարեց, որ Բաթումի խորհրդատու ղովում ԱԴԴ-ն աջակցել է ԴԴ-ին, և իր ջանքերով ճանաչվել է Հայաստանի անկախությունը, ու, բացի այդ, ԱԴԴ-ն երևանը զիջել է հայերին, քանի որ վերջինները համաձայնել են Ղարաբաղի հարցը չբարձրացնել։ Նա նաև նշեց, որ, եթե ԴԴ-ն չդնի Ղարաբաղի հարցը, ԱԴԴ-ն պատրաստ է նրան զիջումներ անելու՝ դրանով ակնարկելով երևանի նահանգի մուսուլմանաբնակ վայրերը։ Իր հերթին Ջամալխանը հայտնեց, որ, եթե Բաթումում ԱԴԴ-ն օժանդակել է Հայաստանին, ԴԴ կառավարությունը և որ ժողովուրդը շնորհակալ են դրա համար։ Սակայն դա չի ըշանակում, որ հայ ժողովուրդը կարող է թույլ տալ իր կենդանի օրգանիզմից պոկել մի անբողջ կտոր և կցել Ադրբեջանին, և անգամ, եթե ԴԴ-ն գնա զիջումների, Ղարաբաղի հարցը չի լուծվի, քանի որ հայությունը կապստամբի<sup>116</sup>։

Այսպիսով, առժամանակ Ադրբեջանը կարծես թե հասավ հաղթանակի։ Սակայն դա ընդամենը թուրքական սվիմների շնորհիվ մարտավարական հաջողություն էր. Ջրաբերդում, Խաչենում, Վարանդայում և Դիզակում հայությունը շարունակեց դիմադրություն ցուցաբերել՝ առանձին պարտություններ պատճառելով թուրք-ադրբեջանական զորքին։ Առաջին աշխարհամարտը մոտենում էր ավարտին, և հոկտեմբերին սկսվել էր թուրքական զորքերի դուրսբերումը Անդրկովկասից։ Բացի այդ, Ղարաբաղից արևմուտք Անդրանիկի ջոկատի օգնությամբ պայքար էր ծավալել Ջանգեզուրը, ինչը մղում էր Ղարաբաղի հայությանը շարունակելու դիմադրությունը<sup>117</sup>։ Զենարկվող փուլում ռազմաքաղաքական իրադրու-

<sup>114</sup> Ի վերջո, Ե. Իշխանյանն առաջարկեց ժամանակավոր ճանաչել ԱԴԴ իշխանությունը, արտաքուստ զինաթափվել և թույլ տալ մեկ վաշտ զորքի մտադր Շուշի։ Տե՛ս Ե. Իշխանյան, *Նշվ. աշխ.*, էջ 211-213, 224-226։

<sup>115</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.24, ք.416-421; ֆ.200, գ.17, ք.31; ֆ.276, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական մերկայացուցիչ Վրաստանում գ.42, ք.4, Է.Փ. *Лудшувейт*, *Նշվ. աշխ.*, *стр.* 259; Ե. Իշխանյան, *Նշվ. աշխ.*, էջ 239-240; Հ. Հարությունյան, *Նշվ. աշխ.*, էջ 58-60; Нагорный Карабах в 1918-1923 гг., *стр.* 96-97։

<sup>116</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.49, ք.32։

<sup>117</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.24, ք.422-423; Գ. Բ. Գарибджанян, *Страницы истории армянского народа*, Ереван, издательство "Гитутюн" НАН РА, 1998, *стр.* 179; Андраник Ованян, *Документы и материалы*, *стр.* 309-316, 324-329։ Ջավիդ բեյի դիվիզիայից մեկ գումարառակ փորձեց ներխուժել Ջանգեզուրի գավառ, սակայն հայությունն այստեղ Անդրանիկի ջոկատի օգնությամբ ամուր պաշտպանություն էր կազմակերպել, ուստի նույնիսկ թուրքերի մերկայությունը թույլ չտվեց ԱԴԴ-ին տիրանալ Ջանգեզուրին։ Տե՛ս ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.24, ք.422-423։



յունը Ձանգեզուրում և Ղարաբաղում մինչև անգլիական զորքերի մուտքը տարածաշրջան մնաց անփոփոխ<sup>118</sup>։

1918 թ. Ադրբեջանի հարաբերությունները Վրաստանի հետ ևս աչքի էին ընկնում բավականին մեծ լարվածությամբ ու հակասություններով, ինչը պայմանավորված էր տարածքային խնդիրներով, Անդրկովկասի գույքի բաժանման հարցում Վրաստանի կեցվածքով և այլ գործոններով։ ԱՂԴ և Վրաստանի միջև տարածքային վեճի առարկա էին Ջաքաբալայի օկրուգը, Բորչալուի գավառը, Սղնախի և Թիֆլիսի գավառների մուսուլմանաբնակ շրջանները։ Ադրբեջանը մուսուլմանաբնակ տարածքները համարում էր իրենը՝ հղում անելով ազգերի ինքնորոշման իրավունքին և Վրաստանին առաջարկելով ստեղծել սահմանագատող հանձնաժողով սահմանային խնդիրը կարգավորելու համար։ Սակայն Թիֆլիսը կտրականապես հրաժարվում էր քննարկել իր արևելյան սահմանների հարցը՝ գտնելով, որ Թիֆլիսի նահանգի ողջ տարածքն անվիճելիորեն պատկանում է Վրաստանին՝ ծայրահեղ դեպքում համաձայնելով գնալ զիջման միայն Ջաքաբալայի օկրուգի հարցում<sup>119</sup>։

Վրաստանի կառավարության 1918 թ. հունիսի 5-ի նիստում զինվորական նախարարի «Բորչալուի գավառում իրադրության և Վրացական պետության ճշգրիտ սահմանների հստակեցման անհրաժեշտության մասին» զեկույցի հիման վրա որոշվեց. «ներկայումս գոյություն ունեցող սահմանների պաշտպանության համար զինվորական նախարարին ներքին գործերի նախարարի մասնակցությամբ հանձնարարել զինված ուժեր տեղակայել Բորչալուի, Սղնախի և Թիֆլիսի գավառների սահմանների վրա, իսկ սահմանների մանրամասն ճշգրտման համար ձևավորել հատուկ հանձնաժողով, որի կազմի մեջ կմտնեն Դ. Օնիաշվիլին, Ալ. Մդիվանին և Տակայշվիլին ...»<sup>120</sup>։ Դրանից հետո 1918 թ. հունիսի 11-ին կառավարությունը որոշեց. «ստեղծել սահմանային հանձնաժողով Վրացական Դանարպետության սահմանները որոշելու համար՝ Իր. Շերեթելու, Դ. Օնիաշվիլու, Պ. Ինգորովայի, զեներալ Օդիշելիժեի մասնակցությամբ»։ Նույն օրը լսվեց Պ. Ինգորովայի զեկույցը, որի գլխավոր եզրակացության համաձայն՝ Վրաստանը պետք է գտնվեր տնտեսական և ռազմավարական տեսակետներից հարմար սահմաններում։ Միակ բնական սահմանները Արևելյան Վրաստանի արևելյան և հարավային կողմից հետևյալն էին. հարավից սահմանն անցնում էր Փոքր Կովկասի լեռնաշղթայով, անցնում էր Բորչալուի գավառի հարավային սահմանի մոտով՝ Ղարաբիլիսայից հարավ, հասնում էր Սևանա լճի հյուսիսային ափ, անցնում էր

<sup>118</sup> Պետք է նշել, որ Հորիզոն-ը, հղելով «բաջառնդյակ աղբյուրներից», հայտնում էր, որ Հալիլի փաշան ՀՀ կառավարությանն առաջարկել էր Ղարաբաղը կիսել երկու մասի, որից լեռնայինը կանցնե՞ր ՀՀ-ին, իսկ դաշտայինը՝ ԱՂԴ-ին։ Մակայն ՀՀ կառավարությունը հրաժարվել էր այդ ինքնի վրա Հալիլի հետ բանակցություններից։ Տե՛ս Кавказское слово, #239, 1918 թ. նոյեմբերի 6։

<sup>119</sup> Տե՛ս 3. Аваловъ, նշվ. աշխ., стр. 57; Հորիզոն, #151, 1918 թ. օգոստոսի 1։

<sup>120</sup> Տե՛ս Изъ истории армяно-грузинскихъ отношений։ 1918 г., Тифлисъ, Типография Правительства Грузинской республики, 1919, стр. 10։

հյուսիս Աղսթաֆա գետով, հասնում էր Ջեզամ կայարան, ընդգրկում էր Ջաքաթալայի օկրուգը և ավարտվում Սիլավատ լեռով: Փորձագետը նշում էր, որ պատմության ամբողջ ընթացքում նկատելի է եղել վրաստանի ձգտումը դեպի հենց այդ սահմանները, և որ այդ սահմաններից դուրս չկա ոչ մի պաշտպանություն ընդհուպ մինչև Սուրամի լեռնաշղթա: Ինգո-րոկվան կտրուկ մերժում էր սահմանների որոշման ազգագրական սկզբ-րունքը, իբրև պետական շահերին չհամապատասխանող<sup>121</sup>:

Համեմատողովի այդ միտքին կարծիքների փոխանակման նպատակով հրավիրվել էին 33 և ԱԳՀ ներկայացուցիչները, սակայն վերջինները չէին եկել: 37 ներկայացուցիչները պահանջեցին հիմք ընդունել այն գիծը, որի շուրջ նախկինում արդեն համաձայնության էին եկել երեք ժողովուրդների ներկայացուցիչները երկրամասի վարչական վերաբաժանման հարցը քննարկելիս: Համաձայն հայկական կողմի դիրքորոշման՝ Բորչալուի գավառի հայաբնակ երկու երրորդ մասը պետք է անցներ Հայաստանին, իսկ մուսուլմանաբնակ մեկ երրորդ մասի փոխարեն՝ Վրաստանը ԱԳՀ-ին պետք է զիջեր Սղնախի գավառի մի մասը<sup>122</sup>:

Իր հերթին Վրաստանի կառավարող՝ մեմբերներին կուսակցության օրգան «Էրթրբա»-ն գրում էր, որ քանի դեռ Անդրկովկասն իրենից ներկայացնում էր մեկ հանրապետություն, վրացիներն իրական բնակության սկզբունքով (ազգագրական սկզբունք- Դ.Կ.) էին դեկլարավորում, քանի որ միասնական Անդրկովկասը պետք է ունենար միատեսակ տնտեսական քաղաքականություն և ընդհանուր պետական սահման: Իսկ Վրաստանի անկախության հռչակումից հետո երկրի պետական շահերը պահանջում են Վրաստանի սահմաններում ընդգրկել առնվազն Թիֆլիսի նահանգն ու Ջաքաթալայի շրջանը, քանի որ եթե հիմք ընդունվի միայն ազգագրական սկզբունքը, ապա Թիֆլիսը շատ մոտ կգտնվի սահմաններին: Թերթը նշում էր, որ եթե Վրաստանը միայն գործ ունենար Հայաստանի և Ադրբեյջանի հետ, երկյուղելու հարկ չէր լինի: Մինչդեռ բացահայտ նշաններ կան, որ Ադրբեյջանը միանալու է Թուրքիային. Ելիզավետպոլում և Ջաքաթալայում արդեն ծածանվում է թուրքական դրոշը<sup>123</sup>:

1918 թ. հունիսի սկզբին թուրքական զորքերը և տեղական թաթարներից բաղկացած զինված խմբերը վերահսկում էին Բորչալուի գավառի մեծ մասը մինչև Շուլավեր: Սակայն հունիսի 11-ին վրացական զորքերը գերմանական զորամասերի օգնությամբ անցան հակահարձակման և երեք օրվա ընթացքում վերագրավեցին գավառը՝ հասնելով մինչև Սանա-

<sup>121</sup> Տե՛ս Иаз истории армяно-грузинских отношений, стр. 10; Հարիզմ, #117, 1918 թ. հունիսի 18:

<sup>122</sup> См. в том же месте, стр. 11: ՕՋԱԿՈՒ-ի կողմից ստեղծվել էր հատուկ համեմատողով Անդրկովկասի վարչական վերաբաժանման և երկրամասում զենտավոներ մտցնելու հարցը լուծելու համար: Հիմք ընդունելով ազգագրական սկզբունքը՝ համեմատողովը պատրաստեց նախագիծ, որով, ի թիվս այլ փոփոխությունների, նախատեսվում էր Թիֆլիսի նահանգի կազմից առանձնացնել հայաբնակ Ախալքալաքի գավառը և Բորչալուի գավառի հարավային մասը: Տե՛ս А. Шахатуриян, նշվ. աշխ., стр. 136-137:

<sup>123</sup> Տե՛ս Հարիզմ, #120, 1918 թ. հունիսի 21:



հին<sup>124</sup>: Վրաստանի գործողություններն անհապաղ առաջ բերեցին Ադրբեջանի արծազամբը: ԱՂԴ ԱԳ նախարար Մ. Գ. Գաջինսկին հունիսի 14-ին Վրաստանի ԱԳ նախարարին ուղղված նամակում մտահոգություն էր հայտնում, որ Վրաստանի կառավարությունը, Բորչալուի գավառը համարելով իր տարածք, վրացական և գերմանական զորամասեր էր ուղարկել այնտեղ՝ գավառն ավազակախմբերից մաքրելու համար, ինչը հանգեցրել էր խաղաղ մուսուլման բնակչության հետ բախումների: Նշվում էր նաև, որ մամուլի հրապարակումներից հետևում է, որ Վրաստանի կառավարությունը հրաման է տվել զբաղեցնել Անդրկովկասյան երկաթուղիների հարակից տարածքը գրեթե մինչև Պոլլի կայարան<sup>125</sup>: Այս ամենից ելնելով՝ Մ. Գ. Գաջինսկին արտահայտում էր ԱՂԴ կառավարության բողոքը՝ «նկատի ունենալով, որ Բորչալուի, Թիֆլիսի և Սոնախի՝ զուտ մուսուլմաններով բնակեցված մասերը բազմիցս իրենց ներկայացուցիչների միջոցով ցանկություն են արտահայտել լինել Ադրբեջանական Հանրապետության կազմում» և պահանջում էր անհապաղ զորքերը դուրս բերել Ադրբեջանի տարածքներից<sup>126</sup>:

ԱՂԴ հավակնությունները պաշտպանություն էին գտնում թուրքերի մոտ: Դեռ 1918 թ. հունիսի 4-ին Հայոց Ազգային Խորհրդի պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանը Ավ. Ահարոնյանին գրում էր, որ Թուրքիան ուզում էր Ադրբեջանին երկաթգիծը հանձնել ոչ թե Պոլլից, ինչպես դա ուզում էին վրացիները, այլ Կարաթանիից (Թիֆլիսի գավառ)<sup>127</sup>:

Գերմանիայի հովանավորությունը վայելող Վրաստանը չէր պատրաստվում զիջումների գնալ: Պատասխան նամակում Վրաստանի ԱԳ նախարար Ռամիշվիլին ընդգծում էր, որ Բորչալուի գավառը միշտ մտել է Վրաստանի կազմի մեջ և չի եղել վեճի առարկա, թեև նրա եթնիկական կազմը միատարր չէ: Վրաստանն անընդունելի էր համարում նաև իր արևելյան սահմանի քննարկումը ու պահանջում էր այլևս չմիջամտել իր ներքին գործերին<sup>128</sup>:

1918 թ. սեպտեմբերին ԱՂԴ վարչապետը պաշտոնապես դիմեց Թիֆլիսում Գերմանիայի զինվորական ներկայացուցիչ ֆոն Կրեսին՝ նշելով, որ Բորչալուի մուսուլմանները ենթարկվում են բռնությունների տեղի հայության կողմից, ինչը հաճախ հովանավորվում է վրացական և գերմանական զորքերի կողմից: Խան Խոյսկին պահանջում էր դադարեցնել բռնությունները, հայության հաշվին հատուցել մուսուլմանների կրած վնասները, դադարեցնել Վրաստանի կառավարության կողմից մուսուլմանների զինթափումը կամ վերջինը կիրառել ողջ բնակչության, այլ ոչ

<sup>124</sup> Տե՛ս Հորիզոն, #105, 110, 115, 117, 1918 թ. հունիսի 2, 8, 15, 18:

<sup>125</sup> Հունիսի 13-ին Վրաստանի կառավարությունը Թիֆլիսում գերմանական ռազմական առարկությունը հաղորդում էր, որ կարգադրել է գրավել Անդրկովկասի երկաթուղու Բաքվի գծի տարածքը մինչև Պոլլի կայարանի կամուրջը Կուր գետի վրա: Տե՛ս Հորիզոն, #114, 1918 թ. հունիսի 13:

<sup>126</sup> Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, стр.436:

<sup>127</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.23, ք.62:

<sup>128</sup> Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, стр.437:



թե միայն մուսուլմանների հանդեպ: Իր հերթին վրացական մամուլը կոշտ արձագանք տվեց իսան խոյսկու դիմումին՝ այն համարելով միջամտություն Վրաստանի ներքին գործերին<sup>129</sup>: Նշվում էր. «Ադրբեջանի կառավարության ուշադրությունը հրավիրում ենք այն հանգամանքին, որ Վրաստանի կառավարության որոշմամբ Զաքաթալայի օկրուգը, Ղարայազին և ողջ Բորչալուի գավառը կազմում են Վրաստանի անբաժան մասը, և Ադրբեջանը պետք է դրա հետ հաշվի նստի»: Նշվում էր, որ Վրաստանի ինքնիշխանությունը պահանջում է, որ նրա սահմաններն արևելքում տարածվեն մինչև այդ շրջանները, որն, ըստ Վրաստանում գերմանական առաքելությանը կից տեղեկատու բյուրոյի ղեկավար Ցուգմայերի հայտարարության, գերմանիան կպաշտպանի<sup>130</sup>:

Իսկ հուլիսին ադրբեջանա-վրացական հարաբերությունների խիստ լարման պատճառ հանդիսացավ Թիֆլիսի գավառում գտնվող Ղարայազի մուսուլմանաբնակ տափաստանը, որտեղ արդեն վեց ամիս գտնվում էր Վայրի դիվիզիայի մի զորամաս: Օգտվելով այդ հանգամանքից՝ Ադրբեջանը փորձեց վիճարկել այդ շրջանի պատկանելությունը: Իր հերթին Վրաստանը, քաջ գիտակցելով Թիֆլիսի գավառում ադրբեջանական զորամասի տեղակայման հնարավոր չնասակար ազդեցությունը տեղի մուսուլմանների տրամադրություններին՝ վրա, հուլիսի 20-ին ԱԳԿ կառավարությանը վերջնագիր ներկայացրեց՝ պահանջելով 24 ժամվա ընթացքում Ղարայազից դուրս բերել Վայրի դիվիզիան: Դա առաջ բերեց ԱԳԿ բուռն բողոքը:

Ադրբեջանա-վրացական ցանկացած հարաբերությունների լարումը և հնարավոր ռազմական բախումը ձեռնտու չէր ո՛չ Գերմանիային և ո՛չ Թուրքիային, ուստի Թիֆլիսում գերմանական ռազմական առաքելությունը շտապեց միջամտել: 1918 թ. հուլիսի 23-ին Վրաստանի ԱԳՆ-ը ԱԳԿ ԱԳՆ-ին հասցեագրված հայտագրում նշում էր. «... Վրաստանի կառավարությունը նկատում է, որ Ադրբեջանի կառավարությունը մտադիր է գեների ուժով վճռել սահմանների հարցը: Հակառակ դեպքում վերջ կտրվեր Վայրի դիվիզիայի վաշտի մերկայությունը Ղարայազում: Բուռն բողոքում ենք նման քաղաքականության դեմ, բայց որպեսզի սպառված լինեն ընդհարման հարթելու բոլոր միջոցները, Վրաստանի կառավարությունն ընդունում է գերմանական զինվորական պատվիրակության միջնորդությունը...»<sup>131</sup>: Գերմանացիներն առաջարկեցին մինչև 4.000 խորհրդատուներով հարցի կարգավորումը ադրբեջանական զորամասը փոխարինել գերմանականով: Սակայն ԱԳԿ-ն իր հերթին պահանջեց, որ գերմանական զորամասի հետ մեկտեղ շրջանում թողնվի նաև իր զորամասը:

Զաքաթալայի օկրուգի համար վեճում ԱԳԿ-ն ի սկզբանե առավելություն ստացավ, քանի որ այն գրավվել էր թուրքական զորքերի կողմ:

<sup>129</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.57, ք.150; ք.143, ք.6; Հոլիգոմ, #197, 1918 թ. սեպտեմբերի 29:  
<sup>130</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.57, ք.89:  
<sup>131</sup> Ղարայազի շուրջ ադրբեջանա-վրացական ընդհարման մասին տես՝ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.57, ք.11; Հոլիգոմ, #147, 192, 1918 թ. հուլիսի 27, սեպտեմբերի 24; Մշակ, #145, 1919 թ. հուլիսի 27:

մից<sup>132</sup>։ ԱՂԴ-ի մյուս առավելությունն կայանում էր նրանում, որ օկրուգի բնակչության մեջ մեծամասնություն էին կազմում մուսուլմանները։ Կովկասի թաքարներն զբաղեցնում էին օկրուգի ցածրադիր հատվածը, մինչդեռ լեռնային հատվածում բնակվում էին լեզգիները և ինգիլոյցիները<sup>133</sup>։

Վրաստանը օկրուգում ևս ուներ հենարան, հանձին հայ բնակչության և քրիստոնյա ինգիլոյցիների։ Քրիստոնյա ինգիլոյցիների գործադիր կոմիտեի նախագահը Վրաց Ազգային խորհրդին հայտնեց, որ ինգիլոյցիները բռնությունների են ենթարկվում Ջաքաթալայի թաքարների կողմից և նույնիսկ հնարավորություն չունեն բերքահավաք կատարելու։ Այդ առթիվ Վրաստանի կառավարությանը հարցում էր արվում, թե ինչ միջոցներ են ձեռնարկվում դրա դեմ։ Վրաստանի կառավարությանը նմանատիպ խնդրանքով դիմեց նաև Ջաքաթալայի հայերի հայրենակցական միությունը<sup>134</sup>։ Սակայն ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակում Վրաստանը հնարավորություն չունեի օգնություն ցուցաբերել օկրուգի իրեն լոյալ բնակչությանը։ Ընդհակառակը, թուրքական զորքերի օգնությամբ Ադրբեջանն ամրապնդեց իր իշխանությունն օկրուգում<sup>135</sup>։ 1918 թ. հունիսի 26-ին Ջաքաթալայի օկրուգի Ազգային խորհուրդը «հաշվի առնելով, որ մշակութային-տնտեսական, կենցաղային և կրոնական պայմաններով, զբաղմունքի առարկայով, արդյունաբերությամբ և լեզվով Ջաքաթալայի օկրուգը և Ադրբեջանը նույնատիպ տարրեր են և որ Ջաքաթալայի օկրուգի առնչությունները և ապրանքափոխանակությունը խոշոր առևտրաարդյունաբերական կենտրոնների հետ հնարավոր են միայն Ադրբեջանի միջոցով, և գտնելով, որ միացումը Ադրբեջանական Հանրապետությանը առավել համապատասխանում է Ջաքաթալայի օկրուգի նպատակներին և շահերին», որոշում ընդունեց օկրուգը միավորել ԱՂԴ-ի հետ<sup>136</sup>։ Սակայն դրանով ադրբեջան-վրացական հարաբերությունները Ջաքաթալայի հարցում վերջնականապես չհարթվեցին։ Ջաքաթալայի շրջանում պարբերաբար առաջանում էին սահմանային միջադեպեր, որոնք լարում էին մտցնում երկու երկրների հարաբերությունների մեջ<sup>137</sup>։

<sup>132</sup> Տե՛ս Մշակ, #122, 131, 1919 թ. հունիսի 27, հուլիսի 9։

<sup>133</sup> Տե՛ս А.Шахатунян, օշվ. աշխ., սր.66։

<sup>134</sup> Տե՛ս Հորիզոն, #119, 137, 1918 թ. հուլիսի 13, հունիսի 20; Մշակ, #116, 1919 թ. հունիսի 20։

<sup>135</sup> 1918 թ. օգոստոսի 1-ին թուրքական զորքերը զինարարիցեյին Ջաքաթալայի շրջանի հայերին։ Տե՛ս Հորիզոն, #163, 1918 թ. օգոստոսի 18; Մշակ, #107, 108, 110, 111, 115, 176, 1919 թ. հունիսի 8-9, 10-11, 19, սեպտեմբերի 4։

<sup>136</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.57, ք.10; А. Балаев, Азербайджанское национально-демократическое движение..., սր.34։

<sup>137</sup> Ջաքաթալայում ԱՂԴ-Հ սահմանապահ կեղծ համերո և վրացական սահմանապահ կեղծ Ալազանից Ունջալ տեղափոխելու Վրաստանի կառավարության հրահանգի կապակցությամբ ԱՂԴ-ն պահամզում էր յեղյալ հայտարարել այդ հրամանը։ Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.291, ք.142 և Մշակ, #70, 1919 թ. մարտի 30։ Իսկ Աշխատատու քեթքի 1919 թ. ապրիլի 1-ի համարում ձվվում էր, որ ԱՂԴ-ն խորհրդարանի անդամ Քուլտուխանովը խորհրդարանի նախագահին հայտնել էր, որ 2 զեդպակետից, 3 սպայից և 6 զինված միլիցիոներներից քաղկացած վրացական մի կասկածելի առաջնություն շրջում էր Ջաքաթալայի շրջանում և քարոզչություն անում։ Տե՛ս նաև Наше время, #8, 1919 թ. հունվարի 10։



Աղբրեջանա-վրացական երկկողմ հարաբերությունների սրմանը հանգեցրին նաև տարածայնությունները Անդրկովկասյան Հանրապետության գույքի բաժանման հարցում: Վրաստանն այդ հարցում կոշտ դիրքորոշում էր գրավել: Դա պայմանավորված էր նրանով, որ Թիֆլիսի նահանգում էին կուտակված Կովկասյան ռազմաճակատի զինապահեստները, երկրամասային վարչական հաստատություններն իրենց գույքով, երկաթուղային շարժակազմի մեծ մասը և այլն: Փաստորեն Անդրկովկասյան Հանրապետության փլուզումից հետո, հայտնվելով նրա գույքի հիմնական ժառանգորդի վիճակում, Վրաստանը տարբեր պատճառաբանություններով ցանկություն չէր դրսևորում կամովին հրատարվել այդ գույքի մի մասից, հոգուտ իր հարևանների: Նա ստեղծել էր լիկվիդացիոն հանձնաժողով, որին հրավիրել էր մասնակցելու նաև ՀՀ և ԱԴՀ ներկայացուցիչներին, սակայն ոչ թե իրավահավասար անդամների, այլ խորհրդակցականների կարգավիճակով: Վրաստանը նաև ձգտում էր թույլ չտալ ԱԴՀ անկախության հռչակումը Թիֆլիսում՝ պահանջելով թե՛ ԱԴՀ և թե՛ ՀՀ կառավարություններից արագ հեռանալ քաղաքից՝ անընդունելի համարելով Թիֆլիսում մի քանի ինքնիշխան կառավարությունների գտնվելը: Գիտակցելով իրենց շահերի ընդհանրությունը Անդրկովկասի գույքի բաժանման հարցում՝ 1918 թ. հունիսի 1-ին Հայոց և Մուսուլմանական Ազգային խորհուրդների համատեղ խորհրդակցությունը որոշում ընդունեց համատեղ գործողությունների իրագործման մասին: Վրաստանի դիրքորոշման արդյունքում ԱԴՀ-ն իր ներկայացուցիչներին հետ կանչեց լիկվիդացիոն հանձնաժողովից և որոշեց հարցը հանձնել արբիտրա՞մ<sup>136</sup>:

Մյուս պատճառը ֆինանսական ոլորտում հայ-վրացական երկկողմ համագործակցությունն էր: Հուլիսին ՀՀ և Վրաստանի միջև պայմանագիր ստորագրվեց 200 մլն. ռուբլու բոներ բաց թողնելու մասին, որից 120 միլիոնը տրվելու էր Վրաստանին, իսկ 80 միլիոնը՝ ՀՀ-ին: Պայմանագիրն, ըստ էության, շրջանցում էր ԱԴՀ-ն՝ նրան դուրս թողնելով Անդրկովկասի միասնական ֆինանսական համակարգից, ուստի Վրաստանում նրա դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Յու. Ջաֆարովն անհապաղ բողոքեց՝ պահանջելով, որ նոր բոները կրեն միայն ՀՀ և Վրաստանի նշանակները՝ նախկինում թողարկված և Անդրկովկասի երեք հանրապետությունների նշանակները կրող բոներից տարբերվելու և ԱԴՀ շահերը չվնասելու համար<sup>139</sup>:

Միաժամանակ ԱԴՀ-ն սկսեց Վրաստանի փաստացի պարենային շրջափակումը՝ արգելելով ելիզավետպոլի նահանգից հացի արտահանումը Վրաստան: ԱԴՀ մքսային վարչությունը սահմանափակեց Պոլյի կայարանում խստորեն հետապնդում էր Վրաստան պարեն արտահանողներին: Այս կապակցությամբ թուրքական «Վակըթ» թերթը նշում էր, որ ԱԴՀ-ն պատրաստ էր պատասխանատվություն ստանձնել թե՛ նախկինում թ-

<sup>138</sup> Տե՛ս Հոբիզոն, #104, 122, 1918 թ. հունիսի 1, 23; ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.24, ք.249, 340; ֆ.200, ց.1, գ.45, ք.14, 16; Մշակ, #101, 103, 166, 1918 թ. հունիսի 1, 4, օգոստոսի 22:

<sup>139</sup> Տե՛ս Հոբիզոն, #143, 1918 թ. հուլիսի 20:



ղարկված և թե նոր թողարկվելիք բռների համար, բայց պայմանով, որ իր բաժինը կստանար Կովկասյան ռազմաճակատի գույքից: Մինչդեռ Վրաստանը մերժեց և ԳԳ-ի հետ առանձին պայմանագիր ստորագրեց բռների թողարկման վերաբերյալ, ինչի հետևանքով Ադրբեջանի կառավարությունն անհրաժեշտ համարեց դադարեցնել առևտրական հարաբերությունները Վրաստանի հետ՝ թույլ չտալու համար կեղծ դրամի ներհոսքն Ադրբեջան: ԱԴԳ կառավարությունն արգելել էր նաև նավթի արտահանումը Վրաստան՝ դրա վերսկսումը պայմանավորելով Վրաստանի հետ առևտրական համաձայնության կնքումով: Իրավիճակը Վրաստանի համար այնքան լուրջ էր, որ նա արգելեց հանցի արտահանումը երկրից, դադարեցրեց ներկրվող պարենի հրկույնը և համաձայնության եկավ Ադրբեջանի հացարտադրողների հետ ապրանքափոխանակության վերաբերյալ<sup>140</sup>: Վրաստանի պարենային շրջափակման մեկ այլ պատճառը Օսմանյան թուրքիայի հետ ստորագրված պայմանագիրն էր, որով փաստորեն սահմանվում էր թուրքիայի մենաշնորհը ԱԴԳ հետ առևտրում<sup>141</sup>:

Տնտեսական լծակների կիրառումը որոշակի արդյունքներ տվեց. 1918 թ. սեպտեմբերի 6-ին Ադրբեջանը միացավ բռների թողարկման մասին հայ-վրացական պայմանագրին: Փոփոխված պայմանագրով նախատեսվում էր երեք հանրապետությունների պատասխանատվությունն ախլախիումը թողարկված 300 միլիոն բռների համար: Նոր թողարկվելիք բռների չափն ավելացվեց մինչև 280 մլն., որից 120 միլիոն՝ Վրաստանին, իսկ 80-ական միլիոն՝ ԱԴԳ-ին և ԳԳ-ին<sup>142</sup>:

Այսպիսով, 1918 թ. մայիս-հոկտեմբերին ԱԴԳ կովկասյան քաղաքականությունը պայմանավորող թիվ մեկ գործոնը Անդրկովկասում Օսմանյան թուրքիայի ժամանակավոր ռազմաքաղաքական գերակայության հաստատումն էր: Օգտվելով բարենպաստ միջազգային իրավիճակից՝ ԱԴԳ ղեկավարությունը ձգտում էր լուծել իր համար առաջնահերթ հետևյալ խնդիրները՝

1. հնարավորինս ընդլայնել նոր պետականության սահմանները՝ նրանցում ներառելով Անդրկովկասի կոմպակտ մուսուլման բնակչությունն ունեցող տարածքները;
2. իր իշխանությունը տարածել Արևելյան Հայաստանի մասը հանդիսացող Դարբադի, Ջանգեզուրի, կոմպակտ ռուս բնակչություն ունեցող Մուղանի, զգալի լեզգիական, հայ և վրացի բնակչություն ունեցող Ջաջաթալայի օկրուգի և Թիֆլիսի, Մղնախի, Բորչալուի գավառների մասերի վրա;
3. վերոհիշյալ խնդիրների լուծման գործում ապահովել թուրքիայի ռազմաքաղաքական աջակցությունը:

<sup>140</sup> Տե՛ս Հորիզոն, #123, 148, 149, 192, 1918 թ. հունիսի 25, հուլիսի 28, 30, սեպտեմբերի 24; Մշակ, #133, 166, 203, 205, 1918 թ. հուլիսի 13, օգոստոսի 22, հոկտեմբերի 8, 10:

<sup>141</sup> Տե՛ս Գ. В. Пина, Գշվ. աշխ., стр. 147-148:

<sup>142</sup> Տե՛ս Հորիզոն, #185, 1918 թ. սեպտեմբերի 14; Մշակ, #184, 1918 թ. սեպտեմբերի 13:

Ամփոփելով՝ պետք է նշել, որ իր անկախության առաջին շրջանում՝ մինչև 1918 թ. հոկտեմբերը, Ադրբեջանն ինքնուրույն չէր իր քաղաքականության մեջ: Օսմանյան կայսրությունն իր հսկողության տակ էր վերցրել Արշ քաղաքական-պետական կյանքը, տնօրինում էր երկաթուղիները և հաղորդակցության այլ ուղիները, ադրբեջանական զորքերը գտնվում էին Իսլամի բանակի կազմում և ենթարկվում էին թուրքական հրամանատարությանը: Այս ամենի արդյունքն այն էր, որ Արշ-ի շահերը ստորադասվում էին Օսմանյան կայսրության շահերին և մեծ մասամբ պայմանավորվում էին նրանցով: Արդյունքում քննարկվող շրջանում Արշ-ին չհաջողվեց լիարժեք կերպով ապահովել թուրքական զորքերի աջակցությունը զուտ իր շահերից բխող խնդիրների լուծման ուղղությամբ: Այսպես, օրինակ՝ անլուծելի մնացին Ջանգեզուրը, Ղարաբաղը և ռուսաբնակ Մուղանը նվաճելու խնդիրները՝ Բաքվի կառավարողների և նրանց հովանավորի դեմ Ջանգեզուրի և Ղարաբաղի հայության ու Մուղանի ռուս բնակչության կազմակերպած ինքնապաշտպանության շնորհիվ: Այստեղ հարկ է շեշտել, որ գոյություն չունի քննարկվող շրջանում ՀՀ և Արշ միջև ստորագրված որևէ միջազգային իրավական փաստաթուղթ, որով Ղարաբաղը և Ջանգեզուրը անցնում էին Ադրբեջանին: Դրանով իսկ հերքվում են ադրբեջանական պատմագրության այն կեղծ տեսադրույթները, թե Աղըրբեջանը «մեծահոգաբար» ՀՀ-ին է զիջել Երևանը, և անգամ միջնորդել է Օսմանյան թուրքիայի առջև ՀՀ անկախության ճանաչման հարցում, որի դիմադր ասացել է Հայաստանի պարտավորությունը՝ չհավակնել Լեռնային Ղարաբաղի և Ջանգեզուրի նկատմամբ:

Այսեց հստակ գծագրվել այն ծանրակշիռ հանգամանքը, որ Արշ-ն ի վիճակի չէր սեփական ուժերով ապահովել իր ծավալապաշտական կոմկասյան քաղաքականության հրամայականների իրականացումը: Մյուս կողմից, թուրքիայի աջակցությունը թույլ տվեց Արշ-ին զգալի հաջողություններ գրանցել նոր պետականության կայացման ու ամրապլնդման, նրա սահմանների ընդլայնման գործում: Ամենակարևոր ձեռքբերումը Բաքվի և նահանգի նվաճումն էր, որն անհնար էր իրականացնել միայն Արշ ուժերով: Բացի այդ, թուրքական զորքերի աջակցությամբ Արշ-ն իր վերահսկողության տակ վերցրեց և մինչև վերջ պահեց կարևոր ռազմավարական կետ Ղարաբաղում՝ Շուշին՝ դրանով իսկ ամրապլնդելով իր դիրքերը Ղարաբաղի համար հետագա նկրտումներում:



ԱՂԴ ԿՈՎԿԱՍԱՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՆԵՐՋԱՆՈՒԽ ԱՆՏԱՆՏԻ  
ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒԽ. 1918 Ձ. ՆՈՅՆԵՐԻ – 1919 Ձ. ՕԳՈՍՏՈՍ

2.1 ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՋՈՐՔԵՐԻ ՄՈՒՏՔԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ ԵՎ ԱՂԴ ԱՐՏԱՔԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԿՈՂՆՈՐՈՇՈՒԽԸ: ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒԽ ՈՒՒՍԱԿԱՆ  
ԱԶԵՐՅՈՒԹՅԱՆ ՉԵՁՔԱՅՈՒԽ

1918 թ. հոկտեմբերի 30-ին ստորագրված Մուդրոսի զինադադարը նախանշեց Անդրկովկասում Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական գերակայության ավարտը և այդտեղ դաշնակիցների, առաջին հերթին՝ Մեծ Բրիտանիայի ռազմական ներկայության հաստատումը: Անդրկովկասը մեծ նշանակություն ուներ Մեծ Բրիտանիայի համար՝ որպես ռազմավարական դիրքեր ունեցող տարածաշրջան, որը պետք է դառնար բոլշևիկների առաջխաղացումը դեպի Մերձավոր Արևելք կամխող արգելապատնեշ<sup>143</sup>:

Մյուս գործոնը, որով պայմանավորված էր Անդրկովկասի նկատմամբ Մեծ Բրիտանիայի հետաքրքրությունը, նավթն էր: Համաշխարհային տնտեսության համար էներգիայի այդ աղբյուրի նշանակության արագ աճի պայմաններում անգլիացիները չէին կարող անտեսել Բաքվի նավթարդյունաբերությունը և Բաքու-Բաթում նավթամուղը<sup>144</sup>:

Միջազգային իրավիճակի՝ ԱՂԴ-ի համար նման բացասական շրջադարձի պայմաններում երկրի ղեկավարության առջև ծառայած թուրքական սվինների օգնությամբ ստեղծված պետականության պահպանման կենսական խնդիրը, որը կարելի էր լուծել միայն կտրուկ քաղաքական վերակողմնորոշման միջոցով, ինչը և սկսեց իրականացնել Բաքուն: Չըզտելով հնարավորին չափ ներկայանալ՝ որպես ինքնիշխան պետականություն, այլ ոչ թե Օսմանյան թուրքիայի կողմից ստեղծված կազմավորում՝ ԱՂԴ կառավարությունը նոյեմբերի 16-ին վերսկսեց Նուրի փաշայի ջանքերով լուծարված Ազգային խորհրդի աշխատանքները, ինչպես և

<sup>143</sup> Sb'u Audrey L. Altstadt, *The Azerbaijani Turks: Power and Identity under Russian Rule*, Stanford, California, Hoover Institution Press, Stanford University, 1992, p.105; А. Равевский, *Английская интервенция и мусаватское правительство*, Баку, Истпарт. отд. ЦК и БК АКП(6), 1927, стр.23-24:

Անդրկովկասում քրիստոնեական քաղաքականությունը պայմանավորված էր նախկին Ռուսաստանյան կայսրության տարածքում ծավալված քաղաքացիական պատերազմով, որի հանդեպ Մեծ Բրիտանիայի կառավարությունում կար երկու մտտեցում: Տb'u Д. Ллойд Джордж, *Правда о мирных договорах*, Т.1, Москва, Издательство иностранной литературы, 1957, стр 274-276, 279-280 և У. Черчилль, *Мировой кризис*, Москва, Государственное военное издательство, 1932, стр 157:

<sup>144</sup> Sb'u F. Kazemzadeh, *նշվ.աշխ.*, p.167-168; А. Деникин, *Очерки русской смуты*, Т.4, Москва, Айрис Пресс, 2005, стр. 202: Բրիտանական Near East ամսագիրը գրում էր, որ Բաքուն աշխարհի մեծագույն նավթային կենտրոնն էր: Տb'u М. Осипов, *К вопросу об английской интервенции в Азербайджане в 1918-1919 гг.*, Сборник статей по истории Азербайджана, Выпуск 2, Академия Наук Азербайджанской ССР, Институт истории им. А. Бакиханова, Баку, тип. "Красный Восток", 1949, стр. 207:

որոշում ընդունեց սեփական դրոշի մասին (կրկնում է ներկայիս Ադրբեջանի պետական դրոշը)<sup>145</sup>:

1918 թ. նոյեմբերի առաջին կեսին ԱՂԴ պատվիրակությունը Ահմեդ Բեկ Ադախի, Նասիբ Բեկ Ուսուրբեկովի և Ռաֆիկի գլխավորությամբ մեկնեց Էնզելի, որտեղ բանակցություններ վարեց անգլիական զորքերի հրամանատար զեներալ Թոմսոնի հետ: Պատվիրակության առաջնային նպատակը՝ հասնել ԱՂԴ կառավարության ճանաչմանը, տապալվեց: Գեներալ Թոմսոնը միանշանակ հայտարարեց. «մեր տվյալներով գոյություն չունի հանրապետություն, որը ծնվել է՝ համաձայն ադրբեջանական ժողովրդի ընդհանուր ցանկությամբ: Կա միայն կառավարություն, որը ձևավորվել է թուրքական հրամանատարության խարդավանքներով»<sup>146</sup>:

Պատվիրակությունը 1918 թ. նոյեմբերի 16-ի փոխադրում նշում էր, որ անգլիացիները պահանջում էին Բաքվից դուրս բերել ոչ միայն թուրքական, այլև ադրբեջանական զորքերը: Անգլիական զորքերի կողմից զբաղեցվելու էր Բաքուն և նավթային շրջանը: Ադրբեջանը պաշտոնապես չէր ճանաչվում, սակայն Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի ներկայացուցիչները հարաբերություններ կիսատատեին նրա փաստացի կառավարության հետ: Գեներալ Թոմսոնը հռչակվում էր Բաքվի զեներալ-նահանգապետ: Ազգերի ինքնորոշման սկզբունքի վերաբերյալ որոշումն ընդունելու էր խաղաղ խորհրդաժողովը, և Ադրբեջանն, ի թիվս այլ ազգերի, ևս ընդգրկվելու էր այդ որոշման մեջ: Բաքուն զբաղեցնող անգլիական զորքերի կազմում կլինեին զեներալ Բիչերախովի զորքերը, սակայն զինված հայկական զորքեր քաղաք չէին մտցվելու<sup>147</sup>: Փաստորեն, լրջորեն սահմանափակվում էր ԱՂԴ-ի անկախությունը, իսկ նրա կառավարության գոյությունն ուղղակիորեն հարցականի տակ էր դրվում<sup>148</sup>:

Խան հոյսկու կառավարությունն ստիպված էր լռելյայն հաշտվել ստեղծված իրավիճակի հետ: Վարչապետի՝ զեներալ Թոմսոնին ուղղված հեռագրում նշվում էր, որ ԱՂԴ կառավարությունը չէր ընդդիմանում դաշնակիցների զորքերի մուտքին Բաքու և վստահություն էր հայտնվում, որ դա չէր խախտի ԱՂԴ անկախությունը և տարածքային ամբողջականությունը<sup>149</sup>:

<sup>145</sup> Տե՛ս Ա. Балаев, *Азербайджанское национальное движение ...*, стр. 239; Մշակ, #236, 1918 թ. նոյեմբերի 16; *Кавказское слово*, #252, 1918 թ. նոյեմբերի 21; *Ժողովրդի ձայն*, #68, 1918 թ. նոյեմբերի 24; *Нагорный Карабах в 1918-1923 гг.*, стр. 354-355:

<sup>146</sup> Տե՛ս Т. Насиров, *Борьба за власть в Азербайджане 1917-1920*, Баку, 1993, стр. 57:

<sup>147</sup> Տե՛ս В. Аслан, *Turkiye-Azerbaycan İlişkileri ve İbrahim Ebilov 1920-1923*, İstanbul, Kaynak Yayınları, 2004, s.26; А. Балаев, *Азербайджанское национальное движение ...*, стр. 231:

<sup>148</sup> Մշակ-ը գրում էր, որ ԱՂԴ կառավարությունը լիովին գլուխը կորցրել էր և նրա ձեռքում ոչ մի իշխանություն չէր մնացել: Տե՛ս Մշակ, #220, 246, 1919 թ. հոկտեմբերի 29, նոյեմբերի 28:

<sup>149</sup> Տե՛ս Т. Насиров, *Борьба за власть*, стр. 58: Նման բովանդակության պաշտոնական հաղորդագրություն հայտնվեց ԱՂԴ կառավարության պաշտոնաթերթ *Азербайджан*-ում նոյեմբերի 17-ին: Իսկ հենց հաջորդ օրը մույն թերթում զեներալ Թոմսոնի պահանջով տապալվեց այդ հաղորդագրության հեղուակը, ըստ որի՝ դաշնակից պետությունների կառավարություններն ամենևին չէին ճանաչել Ադրբեջանի անկախությունը:



1918 թ. նոյեմբերի 17-ին անգլիական զորքերը և զեներալ Բիչերա-խովի ուժերը մտան Բաքու: Ափ դուրս գալուց անմիջապես հետո զեներալ Թոմսոնը հրամայեց իջեցնել ադրբեջանական դրոշը, ինչը ոչ միայն խորհրդամշակական բնույթ ունեցող քայլ էր, այլև հստակ ազդանշան հասնույսկու կառավարությանը: 1918 թ. նոյեմբերի 19-ին հրապարակված իր հայտարարության մեջ Թոմսոնը նշում էր. «... մենք այստեղ ենք գտնվում նոր ռուսական կառավարության գիտությանը և համաձայնությամբ: ... Դաշնակիցները չեն կարող վերադառնալ տուն, քանի դեռ իրենք չեն վերականգնել կարգուկանոնը Ռուսաստանում: ... Կասկած չի կարող առաջանալ, որ դաշնակիցները մտադիր չեն յուրացնել ռուսական տարածքի ոչ մի քիզ»<sup>150</sup>: Թոմսոնի հայտարարությունից հետևում էր, որ Մեծ Բրիտանիան մտադիր չէր հետևել Էնգելիում ձեռք բերված համաձայնությանը:

Կարևոր նշանակություն ուներ այն հանգամանքը, որ ԱԴԳ-ն հանդիսանում էր թուրքական սվիմի օգնությամբ ստեղծված պետական կազմավորում, ինչն սկզբնական փուլում անխուսափելի էր դարձնում անվստահությունը հանդիսակու կառավարության հանդեպ անգլիացիների կողմից<sup>151</sup>: ԱԴԳ մուսավաթական կառավարությունը վարկաբեկ էր իրեն Օսմանյան կայսրության հետ բարեկամության պայմանագրի կնքումով և երիտթուրքական կառավարության հետ ակտիվ համագործակցությամբ: Այսպես, 1918 թ. դեկտեմբերի 29-ին թուրքամետ ադրբեջանցի և թուրք սպանների զլխավորությամբ Աղաթունում բռնկվեց Դազախի հետևակային զնդի զորամասերի ապստամբությունը: Ապստամբները պահանջում էին Ադրբեջանից անգլիացիների հեռացում, բանակից ռուս սպանների վտարում և նրանց փոխարինում թուրք սպաներով<sup>152</sup>: Անգլիացիները քաջ գիտակցում էին, որ Ադրբեջանի թուրքամետ արտաքին քաղաքականության 180 աստիճան շրջադարձը դեպի Անտանտ պայմանավորված էր միջազգային ասպարեզում կարուկ փոփոխություններով և Ադրբեջանի անելաքելի դրությամբ: Այդ իսկ պատճառով անգլիական հրամանատարությունը երկյուղում էր հնարավոր ադրբեջանաթուրքական ընդվզումից, մանավանդ որ թուրքական բանակների նահանջից հետո ԱԴԳ-ում մնացել էին բազմաթիվ թուրք սպաներ: Վերոհիշյալով էր բացատրվում մուսավաթական կառավարության հանդեպ անգլիական հրամանատարության սառը վերաբերմունքը<sup>153</sup>: Ա. Բալաևը մերժում է այս դրույթը՝ համարելով, որ այդ ժամանակ արիւն իսկ ԱԴԳ արտաքին քաղաքականության մեջ տեղի էին ունեցել զգալի փոփոխություններ, և նոյեմբերին զեներալ Թոմսոնի

<sup>150</sup> Sb'u Архивы Азербайджана 1-2 ..., стр.62 և А. Раевский, Английская интервенция ..., стр. 34; Ժողովրդի ծայր #72, 1918 թ. նոյեմբերի 29 և Մշակ, #249, 1918 թ. դեկտեմբերի 1:

<sup>151</sup> Հենց դրանով էր պայմանավորված այն հանգամանքը, որ անգլիացիները պահանջեցին Բաքվից դուրս բերել ոչ միայն թուրքական, այլև ադրբեջանական զորքերը՝ դրանով իսկ Ադրբեջանը դասելով բշնամտ շարքերում: Sb'u T. Swietochowski, Russian Azerbaijan..., p.142:

<sup>152</sup> Այդ հանգամանքն ընդունում է նաև ադրբեջանական պատմագրությունը: Sb'u А. Балаев, Азербайджанское национальное движение ..., стр. 236:

<sup>153</sup> Sb'u А. Стеклов, նշվ.աշխ., стр.23-25 և А. Раевский, Английская интервенция ..., стр.38:

հետ բանակցությունների ժամանակ ԱՂԴ կառավարությունը պատրաստակամություն էր հայտնել համագործակցել դաշնակիցների հետ<sup>154</sup>:

Պակաս կարևոր չէր նաև այն, որ սկզբնական շրջանում անգլիական զորքերի թիվը մեծ չէր, մինչդեռ Լ. Բիչերախովի ուժերը և ռուսական Կասպիական նավատորմն իրենցից լուրջ գործոն էին ներկայացնում, որի հետ պետք էր հաշվի նստել<sup>155</sup>:

Գեներալ Թոմսոնը ձեռնամուխ եղավ ԱՂԴ կառավարման համակարգի ամրապնդմանը այնպիսի կառավարության ստեղծման միջոցով, որը կընդգրկեր բնակչության բոլոր ազգային խմբերը, առաջին հերթին՝ թաթարներին, ռուսներին և հայերին: Ադրբեջանի երեք հիմնական ազգերի միջև քաղաքական համաձայնությունը կամրապնդելու կայունությունը նորաստեղծ պետությունում, կբարձրացներ անգլիական հրամանատարության՝ որպես խաղաղարարի, հեղինակությունը և կուժեղացներ Մեծ Բրիտանիայի ազդեցությունն Ադրբեջանում: Ուղղակի դեր էր խաղում նաև այն հանգամանքը, որ կռալիցիոն կառավարության ստեղծումով կչեզոքացվեր բացառապես թուրքական եթնոսի հիմքի վրա ստեղծված ԱՂԴ իշխանությունների թուրքամետ կողմնորոշումը: Կռալիցիոն կառավարությունը պետք է գործեր մինչև խաղաղ խորհրդատուղովի կողմից Ադրբեջանի պետական-իրավական կարգավիճակի հարցի լուծումը:

Ռուսական քաղաքական ուժերն Ադրբեջանում ներկայացված էին երեք հիմնական խմբերով: Առաջինն անկուսակցական Մ. Պոզդիբյակինի գլխավորած Ռուսական Ազգային խորհուրդն էր, որը Կամավորական շարժման կողմնակից էր և հանդես էր գալիս միասնական և անբաժան Ռուսաստանի վերականգնման քաղաքական պլատֆորմի վրա<sup>156</sup>: Սկզբից ԱՂԴ-ն հրաժարվում էր 1918 թ. սեպտեմբերին ստեղծված Ռուսական Ազգային խորհրդին տալ ազգային-քաղաքական ուժի կարգավիճակ, բայց հետո տեղի տվեց թուրքական հրամանատարության ճնշման տակ, որը ձգտում էր նրա միջնորդությամբ գերությունից ազատել թուրք, գերմանացի և ավստրիացի ռազմագերիներին, որոնք պահվում էին Նարդեն կղզում: Իսկ Բաքուն ձգտում էր օգտագործել նրան Մուղանը խաղաղ միջոցներով հպատակեցնելու համար<sup>157</sup>: Երկրորդը Կովկաս-Կասպիական կառավարությունն էր Բիչերախովի գլխավորությամբ, որն իր տրամադրության տակ ունենալով զինված ուժեր՝ որդեգրել էր մուսավաթական կառավարության բռնի տապալման և իր իշխանության հաստատման քաղաքականությունը: Երրորդը Սլավոնա-ռուսական ընկերության խորհուրդն էր, որը որդեգրել էր ԱՂԴ կառավարության հետ սերտ համագործակցության մարտավարությունը՝ հուսալով դրանով ամրապնդել ռուսա-

<sup>154</sup> Sbu՝ A. Балаев, *Азербайджанское национальное движение ...*, стр. 232-234:

<sup>155</sup> Անգլիական զորքերի թիվն ընդամենը 2000 էր: Sbu՝ T. Swietochowski, *Russian Azerbaijan...*, p.141:

<sup>156</sup> Sbu՝ ՀԱԱ, ֆ.277, ց.1, գ.5 ք.3:

<sup>157</sup> Sbu՝ В.Байков, *Աշխ.*, стр. 136-137:



կան ազդեցությունն ԱԳՅ-ում և պայմաններ ստեղծել այն Ռուսաստանի հետ վերամիավորելու համար:

1918 թ. նոյեմբերի 17-ին Ռուսական Ազգային խորհրդի հետ գեներալ Թոմսոնի հանդիպման ժամանակ վերջինը հայտարարեց, որ ինքը միայն Բաքվի և օկուպացիոն գոտու գեներալ-նահանգապետն է, և դաշնակիցների նպատակն աջակցելն է ներքին կարգուկանոնի հաստատմանը: Նկատի ունենալով Ադրբեջանում երեք հիմնական ժողովուրդների առկայությունը (Կովկասի թաթարներ, հայեր և ռուսներ)՝ Թոմսոնը դաշնակիցների անունից առաջարկում էր նրանց միմյանց հետ համաձայնության գալ ու հաստատել այնպիսի կարգ, որը կբացառեր դաշնակիցների միջամտությունը և կգոյատևեր մինչև խաղաղ խորհրդատուական վերջնական որոշումը<sup>158</sup>:

Ռուսական Ազգային խորհուրդը որոշում ընդունեց բանակցություններ վարել, սակայն ոչ թե ԱԳՅ կառավարության, այլ Կովկասի թաթարների ներկայացուցիչների հետ<sup>159</sup>: Նա իր մասնակցությունը կոալիցիոն կառավարությանը պայմանավորում էր միասնական Ռուսաստանի ճանաչումով և ԱԳՅ անկախության հարցի լուծումը համառուսաստանյան Սահմանադիր ժողովի իրավասությանը հանձնումով: Հաջորդ օրն սկսված եռակողմ բանակցություններում Կովկասի թաթարների ներկայացուցիչները փաստորեն ընդունեցին Ռուսական Ազգային խորհրդի պահանջները: Ա. Աղաևը նշեց, որ իր ժողովուրդն իր ապագան կապում էր եղբայրական Թուրքիայի հետ: Բայց քանի որ նա ջախջախվել էր, իսկ Ռուսաստանում ռեզակիոն շնորհիվ տապալվել էր մեծապետական և ռեակցիոն ռեժիմը, Անդրկովկասի ժողովուրդներին, մասնավորապես Կովկասի թաթարներին անհրաժեշտ էր հենվել Ռուսաստանի վրա և շփման եզրեր գտնել նրա հետ<sup>160</sup>:

Բանակցությունների արդյունքում որոշվեց, որ Համառուսաստանյան Սահմանադիր ժողովն էր որոշելու ազգային ինքնավարությունների սահմանները և դրանց բնույթը, եթե այդ հարցը մինչ այդ իր լուծումը չգտներ վերսալի խորհրդատուական<sup>161</sup>:

Նման գիշերականությունը խիստ հակազդեցություն առաջացրեց ԱԳՅ կառավարության կողմից, և վերջինի պահանջով Ա. Աղաևը հեռացավ Բաքվից, ու փոխվեց պատվիրակության կազմը<sup>162</sup>: 1918 թ. նոյեմբերի 24-

<sup>158</sup> Տե՛ս В. Байков, *Ազ. աշխ.*, *ստր.* 148:

<sup>159</sup> Տե՛ս в том же месте, *ստր.* 149:

<sup>160</sup> Ըստ Աղաևի՝ Կովկասի թաթարները պետք է հենվեին երկու հարևաններից՝ Ռուսաստանից և Թուրքիայից մեկի վրա, և քանի որ Թուրքիան չկար, պետք էր կապ փնտրել Ռուսաստանի հետ, որի մշակույթը քուրդականից ավելի բարձր էր: Տե՛ս в том же месте, *ստր.* 150:

<sup>161</sup> Տե՛ս В. Байков, *Ազ. աշխ.*, *ստր.* 150:

<sup>162</sup> Բանակցություններից անձամբ մասնակցած Բայկովը նշում է, որ Կովկասի թաթարների պատվիրակությունը խուսափում էր սկզբունքային հարցերի քննարկումից և հարց դնում, թե արդյոք խորհուրդը կհամաձայնի մասնակցել կառավարությանը: Բայկովը նաև նշում է, որ հայերի պատվիրակությունն աջակցություն էր ցուցաբերում խորհրդին: Տե՛ս в том же месте, *ստր.* 149-150:

ին Բաքուն առաջարկեց համաձայնության մախազիծ, որով Ադրբեջանի պետական կազմակերպման ձևի հարցը պետք է լուծվեր խաղաղ խորհրդաժողովում, իսկ մինչ այդ պահպանվում էր գոյություն ունեցող ստատուս քվոն ԱՂԳ քաղաքական կացության մեջ: Եթե Համառուսաստանյան Սահմանադիր ժողովը Ռուսաստանի բոլոր ինքնորոշված ժողովուրդների մասնակցությամբ հրավիրվեր խաղաղ խորհրդաժողովին, ԱՂԳ-ն կմասնակցեր դրան և կպաշտպաներ ազգերի ինքնորոշման իր տեսակետը<sup>163</sup>:

Դա անընդունելի էր Ռուսական Ազգային խորհրդի համար, քանի որ Ադրբեջանը չէր ճանաչում իր ապագա կապը Ռուսաստանի հետ: Նման պայմաններում Ռուսական ազգային խորհուրդը հրաժարվեց մասնակցել խորհրդարանի և կառավարության ձևավորմանը՝ համարելով, որ դրանով նա հավանություն է տալիս Ռուսաստանից Ադրբեջանի անջատմանը<sup>164</sup>:

Այսպիսով, անգլիացիների միջնորդությամբ երկու շաբաթ տևած բանակցությունները ձախողվեցին, քանի որ ԱՂԳ կառավարությունը հրաժարվեց քննարկել Ռուսաստանի կազմի մեջ Ադրբեջանի մտնելու հարցը: Սակայն խորհրդի հույսերը անգլիական հրամանատարության քաղաքական աջակցության վրա ի դերս եղան: Գեներալ Թոմսոնը խորհրդին մեղադրեց քաղաքական իրավիճակը չգիտակցելու մեջ՝ նշելով, թե խորհուրդը չի հասկանում, որ այժմ Ռուսաստանը չկա և պարզ չէ, թե երբ կլինի: Թոմսոնը մտադիր չէր իշխանությունը հանձնել կաղետներին, որոնք ներկայացնում էին տեղական բնակչության շատ փոքր մասը<sup>165</sup>: Թոմսոնը նաև հայտարարեց, որ չբոլոր ռուսներն են պաշտպանում խորհրդի տեսակետը, և ինքը հաշվի է առնում նրանց դիրքորոշումը<sup>166</sup>:

Արդյունքում տեղի ունեցավ անգլիական հրամանատարության խզում Ռուսական Ազգային խորհրդի հետ, և կոալիցիոն կառավարության կազմում ռուս բնակչության ներկայացուցչությունն ապահովելու համար անգլիացիների միջնորդությամբ ԱՂԳ կառավարությունը համաձայնության եկավ լրայլ դիրքորոշում ունեցող Սլավոնա-ռուսական ընկերության խորհրդի հետ<sup>167</sup>:

Բաքվի Հայոց Ազգային խորհրդին ևս առաջարկություն արվեց մասնակցելու խորհրդարանի և կառավարության կազմավորմանը, սակայն նա հրաժարվեց<sup>168</sup>: Բայցևայնպես որոշ ժամանակ անց Ազգային

<sup>163</sup> Sh'u A. Балаев, Азербайджанское национальное движение..., стр. 239-240:

<sup>164</sup> Sh'u Շաղվադի ձայն, #84, 1918 ք. դեկտեմբերի 18:

<sup>165</sup> Sh'u T. Swietochowski, Russia and Azerbaijan..., p.75:

<sup>166</sup> Sh'u B. Байков, նշվ.աշխ., стр. 151, T. Swietochowski, Russian Azerbaijan..., p.142:

<sup>167</sup> Sh'u Единая Россия, #19, 1918 ք. դեկտեմբերի 29: Սլավոնա-ռուսական ընկերության ստեղծման մասին Բայկովը նշում է, որ Ադրբեջանի քաղաքական արկածախնդիրները ռուսների ներկայացուցչությունը կեղծելու համար համոզել էին 20 ռուսների և լեհերի, որոնք Թիֆլիսից եկած, Վրաստանում ազգայնացման պատճառով գործազուրկ մնացած պաշտոնյաներ էին, ստեղծել քաղաքական կազմակերպություն՝ նրանց խոտանալով կառավարության աջակցությունը: Sh'u B. Байков, նշվ.աշխ., стр.153; A. Балаев, Азербайджанское национальное движение ..., стр. 240:

<sup>168</sup> Sh'u Շաղվադի ձայն, # 84, 1918 ք. դեկտեմբերի 18; Наше время, #2 1919 ք. դեկտեմբերի 31:



խորհուրդը որոշում ընդունեց մասնակցել խորհրդարանի աշխատանքներին՝ հուսալով այդ կերպ լուծել Ադրբեջանի տարածքում հայ բնակչության առջև ծառայած լուրջ սոցիալ-տնտեսական խնդիրները<sup>169</sup>:

1918 թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցավ ԱԴՀ խորհրդարանի բացումը, ստեղծվեց նոր կառավարություն խան խոյսկու գլխավորությամբ, որում ընդգրկվեց Սլավոնա-ռուսական ընկերության երեք անդամ<sup>170</sup>: Դրան անմիջապես հետևեց Թոմսոնի 1918 թ. դեկտեմբերի 29-ի հայտարարությունը. «Նկատի ունենալով կոալիցիոն ադրբեջանական կառավարության ձևավորումը խան խոյսկու գլխավորությամբ՝ դաշնակիցների հրամանատարությունը լիակատար քաղկոթություն կցուցաբերի այդ կառավարությանը՝ որպես Ադրբեջանի սահմաններում միակ տեղական օրինական իշխանության»<sup>171</sup>:

Բրիտանական հրամանատարության ճանաչումը մեծ խանդավառությամբ ընդունվեց ԱԴՀ քաղաքական շրջանակների կողմից: Մուսավաթի առաջնորդ Մ. Է. Ռասուլզադեին այդ կապակցությամբ իր ելույթում վստահություն հայտնեց, որ գեներալների կողմից ճանաչմանը շուտով կհետևի դիվանագետների կողմից ճանաչումը<sup>172</sup>:

Թոմսոնի հայտարարությունն, անշուշտ, Ադրբեջանի ստատուս քվոյի պահպանումը հռչակող քաղաքական ակտ էր՝ ուղղված բոլոր այն ուժերի դեմ, որոնք ձգտում էին թույլ չտալ Ադրբեջանի անջատումը Ռուսաստանից: ԱԴՀ ճանաչումը բխում էր Մեծ Բրիտանիայի շահերից: Բրիտանական հրամանատարության կողմից ԱԴՀ կառավարության ճանաչման գործում կարևոր նշանակություն ունեցավ վերջինի քաղաքական վարքագիծը և գործադրած ջանքերը անգլիական հրամանատարության առջև իր լոյալությունը և նախկին կողմնորոշումից հրաժարումն ապացուցելու համար: Առկա քաղաքական իրավիճակում, ի տարբերություն Ադրբեջանի ռուսական քաղաքական կազմակերպությունների, ԱԴՀ կառավարությունը դրսևորեց ավելի մեծ ճկունություն՝ անվերապահորեն ընդունելով անգլիական հրամանատարության բոլոր պահանջները: Կարելի էր խաղաց նաև նրա կողմից արտաքուստ դեմոկրատական քաղաքական գծի դրսևորումը<sup>173</sup>:

Երկրի տարածքում իր իշխանությունն ամրապնդելու ուղղությամբ ԱԴՀ կառավարության հաջորդ կենսական խնդիրը գեներալ Լ. Բիչերախովի գլխավորած Կովկաս-Կասպիական կառավարության չեզոքացումն ու

<sup>169</sup> Տե՛ս Արեւ, #19, 1919 թ. փետրվարի 28; В. Байков, *Եզվ. աշխ.*, *стр.* 157:

<sup>170</sup> Տե՛ս Н. Байкара, *Եզվ. աշխ.*, *с.* 247-248; Т. Swietochowski, *Russian Azerbaijan...*, *p.* 145 և А. Балаев, *Азербайджанское национальное движение ...*, *стр.* 245:

<sup>171</sup> Տե՛ս Наше время, #1 1918 թ. դեկտեմբերի 30:

<sup>172</sup> Տե՛ս А. Раевский, *Английская интервенция ...*, *стр.* 47:

<sup>173</sup> Տե՛ս Т. Swietochowski, *Russian Azerbaijan...*, *p.* 144: Անգլիացիների՝ Բարտ Ժամաման մախսուրիին ԱՄՆ Ազգային խորհուրդի օրինք ընդունեց Սահմանադիր ժողովի ընտրությունների մասին, որը մախստեռում էր տղիղ ընտրություններ, համամասնական ներկայացուցչություն և համընդհանուր ընտրական իրավունք՝ դրանով իսկ ԱՄՆ-ն դարձնելով մուսուլմանական առաջին երկիրը, որն ընտրական իրավունք էր շնորհում կանանց: Տե՛ս նաև Audrey L. Altstadt, *Եզվ. աշխ.*, *p.* 95:

տապալուճը և նրա տրամադրության տակ գտնվող զորքերի վտարումն էր: Ադրբեջանում ռուսական կազմակերպությունների մեջ ԱԴՅ-ի հանդեպ ամենակոշտ դիրքորոշումն զբաղեցնում էր հենց Կովկաս-կասպիական կառավարությունը, որը, չնայած քաղաքական հակասություններին, ճանաչելով Կամավորական բանակի ընդհանուր ղեկավարությունը և իր տրամադրության տակ ունենալով զգալի ուժեր՝ ոչ միայն հաշվի չէր նրստում Ադրբեջանի իշխանությունների հետ, այլև հետզհետե գնում էր վերջինիս հետ բացահայտ առճակատման: Բայու ժամանակու առաջին իսկ օրից Բիչերախովն, իր տրամադրության տակ ունենալով 8-10 հազարանոց զորք և Կասպիական նավատորմը, հրաժարվեց ճանաչել ԱԴՅ իշխանությունը՝ նպատակ ունենալով բռնի տապալել իսան խոյսկու կառավարությունը և այն փոխարինել Կովկաս-կասպիական կառավարության իշխանությամբ<sup>174</sup>: Վերջինն, ի տարբերություն Ռուսական Ազգային խորհրդրդի, կանգնած էր ձախ դիրքերի վրա՝ հանդես գալով հեղափոխության նվաճումների խորացման, կառավարման համակարգի դեմոկրատացման օգտին<sup>175</sup>:

ԱԴՅ կառավարությունը գիտակցում էր Բիչերախովի կողմից բխող վտանգը<sup>176</sup>: Սակայն թուրքիայի հետ իր սերտ կապերով վարկաբեկված, ոչ մի պետության կողմից չճանաչված, թույլ պետական և ռազմական կազմակերպություն ունեցող Ադրբեջանն ուղղակի ի վիճակի չէր գեներել ուժով լուծելու այդ խնդիրը: Ուստի իսան խոյսկու կառավարությունն ստիպված էր ռուսական ազդեցության դեմ պայքարը մղել բացառապես քաղաքական դաշտում: Բիչերախովյան ուժերը Ադրբեջանի տարածքից դուրս մղելու միակ հնարավորությունը անզվիական հրամանատարության միջոցով դա անելն էր: Վարչապետ իսան խոյսկին գեներալ թոմսոնին ուղղված նամակում ընդգծում էր Բաքվի մերձակայքում Կամավորական և հայկական (կամավորական ուղղվածության) զորամիավորումների հավաքագրման անթույլատրելիությունը: Ի պատասխան, թոմսոնը հավաստիացնում էր իսան խոյսկուն, որ ռուսական զորքերի մոբիլիզացիա տեղի չէր ունենում<sup>177</sup>:

<sup>174</sup> Stb՝ В. Байков, вкп.աշխ., стр.147: Բայկովն իր աշխատության մեջ Կովկաս-կասպիական կառավարությունն անվանում է Մերձկասպյան կառավարություն: Նրանում գերակայում էին էսեռները և մեմելիկները, և այն միավորում էր Կասպից ծովին հարող մահաճցները՝ Հյուսիսային Կովկասը, Ստավրոպոլի մահաճցը, Անդրկասպյան Հանրապետությունը և Մուղանի Հանրապետությունը: См. в том же месте, стр.141:

<sup>175</sup> Stb՝ Государственный архив Российской Федерации (ГАРФ), ф.130, оп.2, д.184, стр.13; В. Байков, вкп.աշխ., стр.160: Բայկովը նշում է, որ կառավարությունը քիվ սոցիալիստական ուղղվածություն ուներ և նրա համար բոլշևիկներն ավելի շատ սոցիալիստներ էին, այլ ոչ թե առաջին հերթին Ռուսաստանի թշնամիներ: Ամերդատնադով նրա նպատակներին՝ Բայկովը նշում է, որ մեծ մասամբ հայերից բաղկացած Մերձկասպյան կառավարությունը, քաջնվելով դեմոկրատիայի կարգախոսների տակ, ուզում էր ուսանելի հասնել թաթարների հանդեպ սեպտեմբերյան ջարդի համար, քեև քացիերաց դա չէր արտահայտում:

<sup>176</sup> Stb՝ Т. Насиров, вкп.աշխ., стр. 70:

<sup>177</sup> Stb՝ А. Раевский, Английская интервенция ..., стр. 94:



Ամրապնդելով իր դիրքերն Ադրբեջանում՝ Մեծ Բրիտանիան ձեռնա-  
մուխ եղավ ռուսական զորքերի վերջնական դուրսմղմանը ԱԳՖ-ից: Կով-  
կաս-կասպիական կառավարության գոյությունը երկիշխանություն և լար-  
վածություն էր ստեղծում ԱԳՖ-ում: Այն նպաստում էր Բաքվի բանվորա-  
կան զանգվածների շրջանում ծախս հայացքների տարածմանը, բուլշևիզմի  
դիրքերի ամրապնդմանը, բանվորների քաղաքական ակտիվությանը: Այսպես, 1918 թ. դեկտեմբերին, ի պատասխան անգլիացիների կողմից  
Կովկաս-կասպիական կառավարության անդամների (Ս. Սահակյան, Յա.  
Շտերին, Ա. Վալունց, Ա. Առաքելյան, Ա. Վիտոլ) ձերբակալությանը, էսեռ-  
ների և մենշևիկների ղեկավարությամբ զույմարվեց բանվորական խոր-  
հորդածողով և հայտարարվեց գործադուլ, ինչն ստիպեց անգլիական  
հրամանատարությանն ազատ արձակել ձերբակալվածներին<sup>178</sup>: Անգլիա-  
կան հրամանատարությունը նաև երկյուղում էր, որ Բիչերախովի ջոկատ-  
ները կարող են փորձել տապալել ԱԳՖ կառավարությունը: Անգլիացիների  
առջև դրված խնդիրը նաև հեշտանում էր այն առումով, որ Կամավորա-  
կան բանակը ևս ծգտում էր վերակազմավորել Բիչերախովի ջոկատը:

Քանի որ Լ. Բիչերախովը մեծ ծառայություններ էր մատուցել անգ-  
լիացիներին և վայելում էր բարձր հեղինակություն զորքերում ու Բաքվի  
ծախս քաղաքական ուժերի շրջանում, անգլիական հրամանատարությու-  
նը, նախքան ռուսական զորքերն արտաքսելը, հեռացրեց Բիչերախովից՝  
վերջինիս, ի նշան նրա հանդեպ երախտագիտության, ուղարկելով Մեծ  
Բրիտանիա՝ ներկայանալու թագավորին<sup>179</sup>: Այնուհետև 1919 թ. փետրվա-  
րի 28-ին ԱԳՖ-ում ռուսական զորքերի հրամանատարի պաշտոնում Բիչե-  
րախովին փոխարինած զեմերալ Պրժմալսկուն հանձնված վերջնագրով  
անգլիական հրամանատարությունը պահանջեց 24 ժամվա ընթացքում  
դուրս բերել զորքերը ԱԳՖ տարածքից: Ռուսական զորքերի դուրսբերու-  
մից անմիջապես հետո, օգտվելով Կամավորական բանակի հրամանա-  
տարության ու Կասպիական նավատորմի անձնակազմի միջև տարածա-  
յունություններից, անգլիացիները զինաթափեցին նաև Կասպիական նավա-  
տորմիը<sup>180</sup>: Դրանով էլ ավելի ամրապնդվեց անգլիական ազդեցությունը  
ռազմավարական նշանակություն ունեցող Կասպից ծովի ավազանում:

Դրանով ավարտվեց Արևելյան Անդրկովկասից ռուսական ներկա-  
յության դուրս մղման առաջին փուլը: Ապրիլի 5-ին Ելիզավետպոլից մեծ  
շուքով Բաքու մտան ադրբեջանական զորքերը, ինչն իրենով նշանակո-  
րում էր Բաքվի նկատմամբ ԱԳՖ ինքնիշխան իրավունքների դե ֆակտո  
ճանաչում<sup>181</sup>: Սակայն Բիչերախովի ուժերի նահանջը տեղի ունեցավ ոչ

<sup>178</sup> Տե՛ս Արхивы Азербайджана 1-2..., стр.96, Борьба, #2, 1919 թ. հունվարի 3 և А. Балаев, Азербайджанское национальное движение ..., стр. 242-243:

<sup>179</sup> Տե՛ս Արхивы Азербайджана 1-2..., стр.97; А. Раевский, Английская интервенция ..., стр.94-95 և В. Байков, նշվ. աշխ., стр. 152:

<sup>180</sup> Տե՛ս ГАРФ, ф.130, оп.2, д.184, стр. 15; F. Kazemzadeh, նշվ.աշխ., p.244; Искра #49, 1919 թ. մարտի 6; Кавказское слово # 37, 39, 40, 1919 թ. մարտի 5,7,8:

<sup>181</sup> Տե՛ս ՀԱՄ, ֆ.200. ց.1, գ.198, ք.52; В. Байков, նշվ.աշխ., стр.171:

թե ԱԴԳ վարած քաղաքականության, այլ անգլիական հրամանատարության դիրքորոշման շնորհիվ<sup>182</sup>:

Արևելյան Անդրկովկասի տարածքում ռուսական ազդեցության մյուս կարևոր հենարան շարունակում էր մնալ Մուղան-Լեւնքորանը (Թալիշի երկրամաս): Անգլիացիների Անդրկովկաս մուտքով ստեղծված բարենրպատ քաղաքական իրավիճակի պայմաններում 1918 թ. դեկտեմբերի 28-ին գումարված Հյուսիսային և Հարավային Մուղանի գյուղացիական բնակչության համագումարը միաձայն որոշում ընդունեց երկրամասը միասնական և անբաժան Ռուսաստանի անխազելու մաս ճանաչելու մասին՝ դրանով իսկ իր օրակարգից ընդհանրապես հանելով ԱԴԳ-ի հետ հարաբերությունների բնույթի հարցը: Ստեղծվեց օրենսդիր մարմին՝ խորհուրդ, և գործադիր մարմին՝ Մուղանի երկրամասային վարչություն գնդապետ Իլյաշկիչի, Մ. Ալեքսեևի և Ա. Բեգլարբեկովի գլխավորությամբ: Վարչության մեջ գերակայում էր էսեմների ազդեցությունը, բայց նրա անդամների մեջ մեծ թիվ էին կազմում նաև Ա. Դեմիկինի Կամավորական քանակի կողմնակիցները: Երկրամասի անկախությունն ամրապնդելու նպատակով նույնիսկ փորձ արվեց ստեղծել սեփական դրամական միավոր, որը սակայն անհաջող էր<sup>183</sup>: Փաստորեն համագումարն իր կայացրած որոշմամբ կանգնում էր Կամավորական շարժման քաղաքական պլատֆորմի վրա և մերժում ԱԴԳ իշխանությունը: Մուղան-Լեւնքորանի երկրամասային վարչությունն ակտիվ կապեր ուներ Կովկաս-Կասպիական կառավարության, Թերեք-Դաղստանյան երկրամասի գորբերի հրամանատար գեներալ Էրդելիի, Բաքվի Ռուսական Ազգային խորհրդի հետ:

Իրենց հերթին երկրամասի մուսուլմանները դիմեցին ԱԴԳ վարչապետին՝ խնդրելով վերջ տալ բռնություններին և անօրինականությանը և իրենց մոտ ուղարկել երեք անգլիական սպա ու 30 զինվոր: Միաժամանակ նրանք պահանջում էին զինաթափել Մուղանում գտնվող ռուսական զորքերը և դրանք փոխարինել անգլիական կամ ադրբեջանական զորքերով<sup>184</sup>: 1918 թ. դեկտեմբերի վերջին Մուղան-Լեւնքորանի մուսուլմանների պատվիրակությունը պաշտոնապես դիմեց գեներալ Թոմսոնին՝ պահանջելով երկրամասի վրա՝ որպես Ադրբեջանի տարածքի անբաժան մասի, տարածել ԱԴԳ կառավարության իշխանությունը: Պատվիրակությունը հավաստիացնում էր Թոմսոնին, որ եթե Մուղան ուղարկվի անգլիական զորք, երկրամասի մուսուլմանները կմտնեն նրա շարքերը:

Բաքուն ևս քայլեր էր ձեռնարկում՝ իր կողմը գրավելու երկրամասային վարչությանը և խաղաղ միջոցներով իր իշխանությունը տարածե-

<sup>182</sup> Տե՛ս Ա. Раевский, Английская интервенция ..., стр. 95:

<sup>183</sup> Տե՛ս Наше время # 6, 1919 թ. հունվարի 5; Յառաջ, #2, 1919 թ. հունվարի 14; А. Привольный, նշվ. աշխ., стр. 70:

<sup>184</sup> Այդ կապակցությամբ Наше время թիթը հեզմանքով գրում էր, որ հավանաբար երկրամասում կարգուկանոն հաստատող ուժերը պետք է ադրբեջանական զորքերը լինեն, որոնք արդեն իսկ «կարգուկանոն» են հաստատել երկրի երկաթուղու վրա (նկատի ունի երկաթուղային կայարաններում հայ ճամփորդների թագմարիվ սպառնալույթները և քալանը հենց զինվորների կողմից - Դ. Կ.): Տե՛ս Наше время # 7, 1919 թ. հունվարի 8:



լու գավառի վրա: 1919 թ. փետրվարի սկզբին Մուղան մեկնեց ԱԳԴ կառավարության հատուկ առաքելություն, որը փորձեց իր կողմը գրավել Մուղանի երկրամասային վարչության ղեկավարությանը, սակայն՝ անարդյունք: Առաքելության վերադարձից հետո ԱԳԴ կառավարությունը պաշտոնապես դիմեց գեներալ Թոմսոնին՝ մշելով, որ Մուղան-Լեւնջորանի հարցը շոշափում է ԱԳԴ կենսական շահերը և անհապաղ լուծում է պահանջում: Դիմումում շեշտվում էր, որ Մուղանը գեներալ Բիչերախովի և Բաքվի Ռուսական Ազգային խորհրդի աջակցությամբ՝ ԱԳԴ-ն վարկաբեկելու համար գավառում հռչակեց ինքնուրույն պետություն, որն իրեն համարում է միասնական և անբաժան Ռուսաստանի մաս<sup>185</sup>: Սակայն ԱԳԴ-ի ջանքերը ապարդյուն էին. 1919 թ. մարտին Պրիշիբ գյուղում կայացած մուղանցիների համագումարը կրկին դեմ հանդես եկավ Մուղանը Ադրբեջանին միացնելուն՝ հայտարարելով, որ «ընդհուպ մինչև խաղաղ խորհրդատուական աշխատանքների ավարտը Ռուսաստանի պահպանված այս անկյունը, որը կոչվում է Մուղանի մարզ, մնում է Ադրբեջանից անկախ»<sup>186</sup>: Երկրամասային վարչությունն ակտիվացրեց շփումները կամավորական բանակի և Բաքվի ռուսական կազմակերպությունների՝ Ազգային խորհրդի և Ցենտրոդեմի հետ: Մշտական կապ կար Դենիկինի շտաբի և գեներալ Էրդելիի հետ: Դենիկինի համար Մուղան-Լեւնջորանն իր պարենի պաշարներով և ռազմական ներուժով ռազմավարական նշանակություն ուներ նաև՝ որպես կարևոր հեմակետ Անդրկովկասում<sup>187</sup>:

Միաժամանակ երկրամասում շարունակում էին ամուր մնալ բուլշևիկների դիրքերը, որոնց հենարանը զինվորականությունն էր<sup>188</sup>: Մուղան-Լեւնջորանում երկու հակադիր քաղաքական ուժերի՝ Կամավորական շարժման կողմնակիցների և բուլշևիկների միջև պայքարն ավարտվեց նրանով, որ ապրիլի 24-ին Ռազմհեղկոմի գլխավորությամբ բուլշևիկյան ապստամբություն բռնկվեց, և մայիսի 5-ին Լեւնջորանում կայացած խորհուրդների համագումարում հռչակվեց Մուղանի խորհրդային հանրապետությունը, որը խորհրդային Ռուսաստանի մաս էր դիտվում: Ընտրվեց Մուղանի բանվորների, զինվորների և գյուղացիների երկրամասային խորհուրդ, ստեղծվեցին գործադիր մարմիններ<sup>189</sup>: Խորհրդային Ռուսաստանն անմիջապես կապեր հաստատեց երկրամասի հետ ու սկսեց ռազմական և ֆինանսական օգնություն ցույց տալ նրան<sup>190</sup>: Բուլշևիկների համար Մուղանն ուներ ռազմավարական նշանակություն՝ որպես հեմակետ Անդրկովկասում իրենց իշխանության հաստատման համար<sup>191</sup>:

<sup>185</sup> Տե՛ս А. Привольный, *Աշխ.*, ստր.73:

<sup>186</sup> Տե՛ս. в том же месте, стр.74:

<sup>187</sup> Տե՛ս Н. Байжара, *Աշխ.*, с.249; А. Привольный, *Աշխ.*, стр.75-77:

<sup>188</sup> Տե՛ս Е. Токаржевский, *Աշխ.* стр. 225:

<sup>189</sup> Տե՛ս А. Привольный, *Աշխ.*, стр. 90-93 և *Набат* #16, 1919 թ. մայիսի 23:

<sup>190</sup> Տե՛ս М. Казиев, Нариман Нариманов, Баку, Азербешр, 1970, стр. 100-101:

<sup>191</sup> Տե՛ս И.Б. Гаджиев, Совместная борьба трудящихся Азербайджана и Дагестана за власть Советов в 1918-1920 гг., Махачкала, Дакингиздат, 1968, стр.59 և Е. Токаржевский, *Աշխ.*, стр.226:

Մուղանում բուլձևիկների իշխանության հաստատումը չէր բխում ո՛չ ԱԴԳ, ո՛չ բրիտանական հրամանատարության և ո՛չ էլ Կամավորական բանակի շահերից: Դրանով ԱԴԳ-ի համար նպատակոր քաղաքական իրավիճակ էր ստեղծվում այն իրեն միացնելու համար, քանի որ Կամավորական բանակի հրամանատարությունը կնախնտրեր չարյաց փոքրագույնը, այն է՝ ԱԴԳ իշխանությունը Մուղան-Լենքորանի վրա, քան թե իր թիկունքում բուլձևիկյան պետական կազմավորման սկզբնավորումը:

Հունիսին Պետրովսկում կայացավ գեներալ Էրոնլիի և Բաքվի Ռուսական Ազգային խորհրդի նախագահ Մ. Պողչիբայակինի, Ցենտրոդոմի նախագահ Ա. Լեոնտովիչի և ԱԴԳ-ում ռուսական կազմակերպությունների այլ ներկայացուցիչների խորհրդակցությունը, որից հետո Ռուսական Ազգային խորհուրդն սկսեց բանակցություններ վարել ԱԴԳ կառավարության հետ Մուղան-Լենքորանի դեմ արշավանք կազմակերպելու համար<sup>192</sup>:

1919 թ. հուլիսի 19-ին վարչապետ Ռուսթբեկովի և գեներալ Ջորիի միջև հանդիպման ժամանակ վերջինը ևս խոստացավ աջակցություն ցուցաբերել Մուղան-Լենքորանի հարցի լուծման գործում՝ իր հերթին խնդրելով Ռուսթբեկովին ներազդել Դադստանի վրա՝ կանխելու համար վերջինի ակտիվ ելույթները Կամավորական բանակի դեմ: Նման նպատակոր քաղաքական իրավիճակում ձեռքերի ազատություն ստացած ԱԴԳ-ն ձեռնամուխ եղավ վճռական գործողությունների, տնտեսական և տրանսպորտային շրջափակման ենթարկվեց Լենքորանի գավառը: Միաժամանակ Բաքուն սկսեց զգալի ուժեր կենտրոնացնել Լենքորանի ուղղությամբ:

Լենքորանի ճակատում կենտրոնացած էքսպեդիցիոն կորպուսը գլխավորում էր գլխավոր շտաբի պետ գեներալ Սալիմովը<sup>193</sup>: 1919 թ. հունիսին սկսվեցին ռազմական գործողությունները: Այդ շրջանում երկրամասում մարտեր էին գնում բուլձևիկների և ծերբակալված գնդապետ Իլյաշևիչի կողմնակիցների միջև, ինչն էլ ավելի ջլատեց Մուղանի ուժերը<sup>194</sup>: Հուլիսի վերջին Մուղանում տապալվեց խորհրդային իշխանությունը և կարճ ժամանակով Լենքորան քաղաքում կրկին իշխանության եկան գնդապետ Իլյաշևիչի կողմնակիցները: ԱԴԳ կառավարությունը քաղաքի անարյուն գրավումն ապահովելու նպատակով օգոստոսի 3-ին պատվիրակություն ուղարկեց Լենքորան, որի կազմում էին նաև անգլիական հրամանատարության երկու ներկայացուցիչներ<sup>195</sup>: Պատվիրակությունն Իլյաշևիչից պահանջեց ճանաչել ԱԴԳ իշխանությունը և զինաթափվել: Իր հերթին Իլյաշևիչը պատվիրակներ ուղարկեց Բաքու՝ խնդրե-

<sup>192</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1,զ.291, ք. 457:

<sup>193</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, զ.293, ք. 19, 24-25:

<sup>194</sup> Տե՛ս *Кавказское слово*, #134, 142, 1919 թ. հուլիսի 8, 17: Հուլիսի 22-ին ծանր մարտերից հետո թողնելով Լենքորանը՝ բուլձևիկները նահանջեցին Սառա կղզի, իսկ այնտեղից՝ Աշուր Աղե, որտեղ մասամբ զերվեցին, մասամբ հեռացան Անդրկասպյան մարզ: Տե՛ս А. Пригольный, *Մշվ. աշխ.*, *стр.* 150: Մուղան-Լենքորանում ռուսական ազդեցությունը վերջնականապես ի չիք դարձնելու համար ԱԴԳ իշխանությունների նրահանգով այնտեղից արտաքսվեցին գնդապետ Իլյաշևիչը և մի շարք այլ ռուս սպաներ: Տե՛ս ՀԱԱ, ֆ.276, ց.1, զ.193, ք.16:

<sup>195</sup> Տե՛ս *Борьба*, #175, 1919 թ. օգոստոսի 7:



լով անգլիական հրամանատարության համաձայնությունը մինչև Յամառուսաստանյան Սահմանադիր ժողովի գումարումը իշխանությունը թողնել երկրամասային վարչության ձեռքում: Սակայն անգլիացիներն արդեն վերջնականապես կողմնորոշվել էին երկրամասում ԱԴՀ իշխանության օգտին<sup>196</sup>: Երկար բանակցություններից հետո օգոստոսի 12-ին լենքորանցիների համազումարը իշխանությունը հանձնեց ԱԴՀ-ին<sup>197</sup>:

Ամփոփելով՝ պետք է նշենք, որ հայտնվելով բոլորովին նոր՝ իր համար բացասական միջազգային իրավիճակում, ԱԴՀ-ն դրսևորեց ճկունություն և իրադրության ճիշտ ըմբռնում՝ կարողանալով չեզոքացնել Օսմանյան թուրքիայի հետ փոխգործակցության գործոնը և պահպանել իր պետականությունը, որի ստեղծումն Անտանտի տրուսթյունները կապում էին բացառապես թուրքիայի հետ: Կարճ ժամանակում ԱԴՀ-ն սովորեց հմտորեն օգտվել անգլո-ռուսական հակասություններից՝ իր սեփական նպատակներին հասնելու համար: Դրա վկայությունն էր Բաքվից Կովկասկասպիական կառավարության և նրա զինված ուժերի վտարումը, որով վերջ տրվեց երկիշխանությանը Բաքվում և նրա հարակից շրջաններում, ու Արևելյան Անդրկովկասը դաշնակիցների առջև ներկայացնող միակ պետական մարմին դարձավ ԱԴՀ կառավարությունը: Դրանով լուրջ հարված հասցվեց Ադրբեջանում ռուսական ազդեցությանը, որը տեղայնացվեց՝ կենտրոնանալով բացառապես Մուղան-Լենքորանում:

Լենքորանի գավառի և հարակից շրջանների նվաճումը ԱԴՀ կովկասյան քաղաքականության ևս մեկ լուրջ ձեռքբերում էր: Պարսկաստանի սահմանի մոտ գտնվող Մուղան-Լենքորանը ռազմավարական նշանակություն ուներ, և նրա միացումով ԱԴՀ-ն ամբողջացրեց Արևելյան Անդրկովկասի տարածքների՝ Բաքվի և շրջանի, Մուղան-Լենքորանի միավորումն ադրբեջանական պետականության սահմաններում: Մուղան-Լենքորանի գրավման մյուս՝ ոչ պակաս կարևոր նշանակությունն այն էր, որ ոչնչացվեց ԱԴՀ-ում ռուսական ազդեցության վերջին օջախը:

## 2.2 ԱԴՀ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐԱՎ - ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿՈՎԿԱՍԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Մուղոսի զինադադարի ստորագրումից հետո Օսմանյան կայսրության առջև ծառայավ Անդրկովկասի համրապետությունների հետ կնքված Բաթումի պայմանագրերով իրեն անցած և զինադադարի պայմաններով պարպման ենթակա տարածքների քաղաքական կազմակերպման հարցը: Խոսքը գնում էր առաջին հերթին Կարսի և Բաթումի մար-

<sup>196</sup> Տե՛ս *Кавказское слово* # 158, 1919 թ. օգոստոսի 5: Անգլիական մի սպա էր նույնիսկ ուղարկվել Լենքորան, որին հրահանգվել էր աջակցել գավառում ԱԴՀ իշխանության հաստատմանը: Տե՛ս *Кавказское слово* # 159, 1919 թ. օգոստոսի 5:

<sup>197</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.341, ք.219; *Борьба*, #177, 184, 1919 թ. օգոստոսի 9, 17; [www.zerkalo.az](http://www.zerkalo.az)-20.01.2007:

գերի, Ախալքալաքի և Սուրմալուի գավառների, Ախալցխայի, Շարուր-Դարալագյազի և Նախիջևանի գավառների՝ Թուրքիային անցած հատվածների մասին, որոնց բնակչության մեջ զգալի թիվ էին կազմում մուսուլմանները: Այդ տարածքներում իր ռազմաքաղաքական ազդեցությունը պահպանելու նպատակով Օսմանյան Թուրքիան հնարավորինս դանդաղեցրեց թուրքական զորքերի դուրսբերումը և քաղաքական ու նյութական աջակցություն ցուցաբերեց տեղի մուսուլմանների ինքնակառավարման մարմինների՝ շուրաների (խորհուրդ) ստեղծմանը<sup>198</sup>:

1918 թ. նոյեմբերի 5-ին Կարսում տեղի ունեցավ մարզի մուսուլմանների առաջնորդների համաժողովը (Կարսում տեղակայված թուրքական 9-րդ բանակի հրամանատար Յաքուբ Շևքի փաշայի և Կարսի սանջաքի կառավարիչ Յիլմի բեյի մասնակցությամբ), որում ստեղծվեց Կարսի Մուսուլմանական Շուրան: Համաժողովի մասնակիցներն իրենց քաղաքականության մեջ հենվելու էին Վիլսոնյան սկզբունքների վրա (ազգերի ինքնորոշման իրավունք - Դ.4.) և չէին ճանաչելու Վրաստանի և Հայաստանի իշխանությունը<sup>199</sup>: Ախալցխայի մուսուլմանները ինժեներ Սերվեր բեկ Աբաբեկովի գլխավորությամբ, ստանալով թուրքական 3-րդ դիվիզիայի հրամանատար էյուբ Հալիլ բեյի աջակցությունը, 1918 թ. նոյեմբերի 10-ին նույնպես ստեղծեցին Ախալցխայի Ազգային Շուրա: Այսպիսով, Թուրքիայի հովանու ներքո ստեղծվող պետական կազմավորումներին դաշնակիցների աջքերում լեզիտիմություն հաղորդելու համար դրանց ստեղծման հիմքում դրվում էր ինքնորոշման սկզբունքը:

1918 թ. նոյեմբերի 30-ին Կարսում գումարվեց մեծ համաժողով Կարսի և Բաթումի մարզերի, Ախալցխայի, Սուրմալուի, Մարդարապատի, Նախիջևանի, Շարուրի, Օրդուբադի և այլ շրջանների մուսուլմանների ներկայացուցիչների մասնակցությամբ, որը որոշեց «Ազգային Մուսուլմանական Շուրա» անունով տեղական կառավարություն ստեղծել՝ օսմանյան բանակի նահանգի պայմաններում հայրենիքի պաշտպանության գործն իրականացնելու համար<sup>200</sup>: Շուրայի նախագահ ընտրվեց Իբրահիմ բեյ Տիմուրգիորլուն: Օսմանյան կայսրության աջակցությամբ Կարսի և Բաթումի մարզերի մուսուլմանների պետական կազմավորման ստեղծման ամփոփիչ ակտն էր 1919 թ. հունվարի 17-18-ին Կարսում մեծ համաժողովի գումարումը, որը որոշում ընդունեց բոլոր գավառների և

<sup>198</sup> St'ru R.G. Hovannisian, նշվ.աշխ., Vol. 1, p.207; А.Начыев, Гарс әә Араз-Турк Республикаларынын тарихында, Баку, 1990, с.20:

<sup>199</sup> St'u Cem-Ender Arslanoğlu, Kars Milli – İslam Şurası 5.11.1919-17.1.1919 ve Cenubigarbi Kafkas Hükümeti Muvakkata-1 Milliyesi 18.ocak – 13.nisan.1919, Ankara, Azerbaycan Kültür Demeği Yayınları, 1986, s.80:

<sup>200</sup> St'u Cem-Ender Arslanoğlu, նշվ.աշխ., s.81-82; А. Гаджиев, Демократические республики юго-западного Кавказа, (Карсская и Араз-Тюркская Республики), Азербайджанский институт стратегических исследований развития Кавказа, Баку, Нурлан, 2004: Արդանանում և 1919 թ. հունվարի սկզբին տեղի ունեցած երկու համաժողովները որոշեցին հնարավորինս դիմադրել Մուսուլի զինապարսի պայմանների կատարմանը և ոչ միայն չզինաբաժնվել, այլև բարձրական բանակի օգնությամբ վերագինվել, կամավորներ հավաքագրել ու ստեղծել զինված խմբեր:



շրջանների ազգային Շուրաների միավորումով ստեղծել «Հարավ-արևմտյան Կովկասի ժամանակավոր ազգային կառավարություն» Իրրահիմ բեյ Ջհանգիրօղլուի գլխավորությամբ: Համաժողովը նաև ընդունեց 18 հոդվածից բաղկացած սահմանադրություն, որի համաձայն՝ Հարավ-արևմտյան Կովկասի սահմանները տարածվում էին Բաթումից մինչև Նախիջևան: Պետական կազմավորման կենտրոնը Կարսն էր, պաշտոնական լեզուն՝ թուրքերենը, իսկ դրոշմ՝ թուրքական կիսալուսնով կարմիր դրոշը: Սահմանադրության մեջ սահմանվում էր հարևան պետությունների հետ մշտական բարեկամության և խաղաղ գոյակցության սկզբունքը: Կ.Պոլսում Ռիզա փաշայի գլխավորությամբ ստեղծվեց կոմիտե, որի նպատակն էր՝ հասնել կամ Կարսի, Արդահանի և Բաթումի անկախությանը, կամ էլ նրանց մնալուն Թուրքիայի կազմում<sup>201</sup>:

Դաշնակիցների առջև իր ինքնուրույն գոյության անհրաժեշտությունը Կարսի Շուրան հիմնավորում էր մեծամասնություն կազմող մուսուլմանների ինքնորոշման իրավունքով: Լլոյդ Ջորջին, Պուանկարեին և Վիլսոնին ուղղված դիմումում Հարավ-արևմտյան Կովկասի մուսուլմանները պահանջում էին ճանաչել իրենց իրավունքները Կարսի, Արդահանի, Բաթումի և այլ շրջանների նկատմամբ՝ երեսպաշտորեն հայտարարելով, որ այնտեղ իրենց թիվը կազմում էր 3 մլն., մինչդեռ հայերը և հույները հազիվ կազմում էին բնակչության 10%-ը<sup>202</sup>:

Այսպիսով, Կարսի Շուրայի ձևավորումը պայմանավորված էր բացառապես Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական աջակցությամբ: Այն գտնվում էր Թուրքիայի ազդեցության տակ և ուներ լիովին թուրքական կողմնորոշում: Հռչակվում էր ժամանակավոր կառավարություն, այսինքն՝ ստեղծվում էր միայն ժամանակավոր պետական կազմավորում, որի խորհրդանիշերը համընկնում էին Թուրքիայի պետական խորհրդանիշերի հետ: Դա նշանակում է, որ վերջնական նպատակը այդ տարածքներում ոչ թե ինքնիշխան Հարավ-արևմտյան Կովկասի Հանրապետության ստեղծումն էր, այլ դրանց վերամիավորումը Թուրքիայի հետ:

Մինչդեռ ադրբեջանական պատմագրությունն ԱԴՀ-ին կարևոր դեր է վերագրում Կարսի Շուրայի ձևավորման և գործունեության հարցում: Ադրբեջանցի պատմաբան Ա. Հաջին իր «Демократические республики юго-западного Кавказа» և «Гарс ве Араз-Турк Республикаларынын тарихиндөн» աշխատությունների մեջ նշում է, որ Հարավ-արևմտյան Կովկասի մուսուլման բնակչությունը պատերազմում Թուրքիայի պարտությամբ, Մուղրոսի զինադադարի ստորագրմամբ և Անդրկովկասից թուրքական զորքերի հեռացմամբ պայմանավորված ծանր քաղաքական իրադրության պայմաններում իր հայացքը հառեց դեպի Ադրբեջանը: Այստեղից հեղինակը եզրակացնում է, որ ԱԴՀ կառավարությանն օգնության խնդրանքով դիմելը վկայում է Հարավ-արևմտյան Կովկասում Ադրբեջանի հեղի-

<sup>201</sup> Տե՛ս Cem-Ender Arslanoğlu, նշվ. աշխ., ս. 85-86; Յումազ, #27, 1919 թ. փետրվարի 14:

<sup>202</sup> Տե՛ս Յումազ, #47, 1919 թ. մարտի 11:

նակության աճի մասին: Նա մասնավորապես նշում է. «ԱԴԴ-ն ուներ դեմոկրատական կառավարություն, լուսավորված, եվրոպական կատեգորիաներով մտածող պետական-քաղաքական առաջնորդներ, որոնք ունեին բրիտանական օկուպացիոն իշխանությունների և Դարավային Կովկասի հասարակայնության վրա էական ներգործության ներուժ: ... էթնիկական և կրոնական ընդհանրությունը հանդիսանում էր այդ տարածաշրջանի բնակչության դեպի Բաքու կողմնորոշման ևս մեկ՝ թերևս առավել կարևոր գործոն»<sup>203</sup>: Ա. Հաջիևը, նաև հակադրվելով թուրքական պատմագրությանը, գրում է, որ 1918 թ. դեկտեմբերի 1-ին Կարսի Ազգային Շուրան որոշում ընդունեց «Հարավ-արևմտյան Կովկասյան Դեմոկրատական Հանրապետություն» ստեղծելու մասին, սակայն որեւէ վստահելի սկզբնաղբյուր չի նշում: Դրանով փորձ է արվում ամրապնդել այն տեսակետը, որ Կարսի և Բաթումի մարզերի տարածքում ձևավորվում էր անկախ պետականություն, որն ավելի շատ հակվում էր դեպի ԱԴԴ-ն, քան՝ Թուրքիան<sup>204</sup>:

Առաջին հայացքից անզլիական հրամանատարությունը պետք է զբաղվեր այդ կազմավորման լուծարումով՝ նկատի ունենալով, որ այն՝ նույնիսկ առավել քան ԱԴԴ-ն, ուներ թուրքական սվինի օգնությամբ ստեղծված արհեստական պետական կազմավորման բնույթ, որի գոյությունը նշանակում էր Կովկասյան տարածաշրջանում թուրքական ազդեցության օջախի պահպանում: 1919 թ. հունվարի 8-ին Անդրկովկասում անզլիական զորքերի հրամանատար գեներալ Ֆորեստին Ուոքերի և ԳԳ ԱԳ նախարար Ս. Տիգրանյանի միջև ստորագրված համաձայնագրով Կարսում պետք է նշանակվեր անզլիական զինվորական նահանգապետ, իսկ քաղաքացիական իշխանությունը պետք է կազմվեր հայերից՝ նահանգապետի ենթակայությամբ<sup>205</sup>: Սակայն, նկատի ունենալով Կարսի Շուրայի վճռականությունը հայ զաղթականների վերադարձն իրենց բնակավայրեր թույլ չտալու և զինված դիմադրություն ցուցաբերելու հարցում, անզլիական ուժերի թուլությունը, Կարսի մարզից թուրքական զորքերի դուրսբերման անավարտ լինելը, հայերի ավանդական ռուսամետությունը, անզլիական հրամանատարությունն առժամանակ ձեռնպահ մնաց կտրուկ գործողություններից և դե-ֆակտո ճանաչեց Կարսի Շուրան, ինչպես նաև, չնայած հայկական կողմի խնդրանքներին, կանխեց հայ զաղթականության վերադարձն ու Կարսի մարզում ԳԳ քաղաքացիական և ռազմական իշխանության հաստատումը<sup>206</sup>: Կարսի մարզում հաս-

<sup>203</sup> Տի'ս Ա. Начыјев, Гарс во Араз-Турк Республикаларынын ..., с. 16 և А.Гаджиев, Демократические республики..., стр. 50-51:

<sup>204</sup> Տի'ս Ա. Гаджиев, Демократические республики..., стр. 50-51:

<sup>205</sup> Տի'ս Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան», 1993, էջ 257; Հոդվածների ժայռ, #15, 1919 թ. հունվարի 23; Գ. Махмурян, նշվ. աշխ. стр. 47-48:

<sup>206</sup> Տի'ս Յանաք, #26, 1919 թ. փետրվարի 3; R.G. Hovannisian, նշվ. աշխ., Vol. 1, p.206; Наше время, #41, 54, 1919 թ. փետրվարի 21, մարտի 26:



տատվեց բրիտանական զենեղալ-նահանգապետություն փոխզնդապետ  
Թեմփերլեյի գլխավորությամբ<sup>207</sup>:

Կարսի Շուրան, առժամանակ երկարածգելով իր գոյությունը,  
կանգնեց ընտրության առջև. Օսմանյան կայսրության պարտության և  
կազմալուծման և Կովկասում դաշնակիցների դիրքերի ուժեղացման պայ-  
մաններում բացահայտ կողմնորոշումը դեպի Օսմանյան Թուրքիա նշա-  
նակում էր Շուրայի վերջնական վարկաբեկում ու լուծարում: Ուստի վեր-  
ջինն իր գործողությունների մարտավարության մշակման հարցում ընդ-  
օրինակեց Արճ քաղաքական կուրսը, որը 1919 թ. հունվարին հասել էր  
դաշնակիցների հրամանատարության կողմից դե ֆակտո ճանաչմանը<sup>208</sup>:

Իր հերթին Արճ կառավարությունը մի շարք պատճառներով շահա-  
գրգռված էր Չարավ-արևմտյան Կովկասի Չանրապետությունը կենսու-  
նակ պետական կազմավորում դարձնելու գործում: Այն կապող օղակ էր  
հանդիսանալու Ադրբեջանի և Թուրքիայի միջև՝ նկատի ունենալով, որ  
1919 թ. հունվարին անգլիական հրամանատարությունն արդեն հակվել  
էր դեպի Դարաբաղը և Ջանգեզուրը թեկուզ և ժամանակավորապես Արճ  
կազմի մեջ մտնելու տարբերակը: Չարավ-արևմտյան Կովկասի Չանրա-  
պետության վրայով Արճ-ն ելք էր ստանում դեպի Սև ծով: Անդրկովկասում  
ստեղծվում էր մուսուլմանների ռազմաքաղաքական և տնտեսական գե-  
րակայություն, քանի որ քրիստոնյա երկու հանրապետությունների՝ Չա-  
յաստանի և Վրաստանի կողքին գոյություն էին ունենալու երեք մուսուլ-  
մանական հանրապետություններ՝ Արճ-ն, Չարավ-արևմտյան Կովկասի  
Չանրապետությունը և Լեռնականների Չանրապետությունը, որոնց կազ-  
մում էին լինելու ռազմավարական առումով կենսական նշանակություն  
ունեցող տարածքները, այդ թվում՝ Անդրկովկասի կարևորագույն տնտե-  
սական կենտրոնները: Եվ վերջապես, Արճ-ն այդ կերպ երեք կողմից ռազ-  
մավարական շրջափակման մեջ էր առնում Չայաստանը:

1919 թ. հունվարի 8-ին Արճ ԱԳԼ-ը գեներալ Թոմսոնին ուղղված  
հայտագրում, կեղծելով պատմությունը, նշում էր, որ Կարսի և Բաթումի  
մարզերից ու Ախալցխայի գավառից բաղկացած տարածքը պատմա-  
կանորեն երբեք չի եղել Վրաստանի և Չայաստանի կազմում, ուստի  
նրանց հավակնություններն այդ տարածքների նկատմամբ չունեն իրա-  
վական և քարոյական հիմք: Չայտագրում հիմնավորվում էր, որ վերոհիշ-  
յալ շրջաններն աշխարհագրորեն առանձնացված տարածք են և կարող  
են մասնատվել թերևս միայն բռնի ուժի միջոցով<sup>209</sup>:

Սեփական ուժերով Կարսի Շուրային օգնություն ցուցաբերելու ան-  
կարողությունն ստիպում էր խան Խոյսկու կառավարությանը փորձել  
հասնելու հարցի լուծմանը դաշնակիցների օգնությամբ: Այդ նպատակով

<sup>207</sup> Ընդհանրապես անգլիացիները վերապահումներով էին վերաբերվում Կարսի մարզը Հայաս-  
տանի կազմի մեջ մտնելու հեռավարին: Տե՛ս A. Rawlinson Adventures in the Near East 1918-1922,  
New-York, Dodd a.o., 1924, p.151-152:

<sup>208</sup> Տե՛ս Յաւաթ, #47, 1919 թ. մարտի 11:

<sup>209</sup> Տե՛ս A.Гаджиев, Демократические республики ..., стр.55:

Աղործեանը պահանջում էր ինքնորոշման սկզբունքը կիրառել նաև Դարավարևմտյան Կովկասի մուսուլմանների հանդեպ<sup>210</sup>։ Միաժամանակ Կարսի Շուրային խորհուրդ էր տրվում բանակցություններ վարել անգլիական հրամանատարության հետ և, նկատի ունենալով, որ թուրքական զորքերի նահանջից հետո Կարսի մարզը կարող են գրավել հայերը, իսկ Արդահանի կողմից՝ վրացիները, խնդրել, որ մարզն զբաղեցվի դաշնակիցների զորքերի կողմից մինչև հարցի վերջնական լուծումը խաղաղության խորհրդաժողովի կողմից<sup>211</sup>։

Դաշնակիցների անվճռականությունը, թուրքիայի ռազմական ու նյութական օգնությունը հնարավորություն տվեցին Կարսի Շուրային ոչ միայն որոշ ժամանակ հաջողությամբ պաշտպանվել, այլև հակահարձակում ձեռնարկել։ 1919 թ. հունվարից թուրքական զործակալների աջակցությամբ սկսվեց ուժերի կենտրոնացում Փոցխտվի շրջանում, և տեղի ունեցան հարձակումներ Ախալցխայի գավառի վրա<sup>212</sup>։ Կարսի Շուրայի ներկայացուցիչ Սերվեր բեկ Աթաբեկովը Ախալցխայի գավառի վրա հարձակումն արդարացնում էր Դարավարևմտյան Կովկասի կառավարության միլիցիայի վրա վրացական զորքերի հարձակմամբ։ Վրաստանի կառավարությանը բողոք հայտնելով՝ նա առաջարկում էր ստեղծել խառը հանձնաժողով անցլիական հրամանատարության ներկայացուցիչների մասնակցությամբ<sup>213</sup>։ Գավառի մուսուլմանների մեջ ակտիվ քարոզչություն ծավալվեց, փետրվարի սկզբին մուսուլմանների ապստամբություններ բռնկվեցին Ախալցխայի և Ախալքայաքի գավառներում, որտեղից դուրս մղվեցին վրացական կայազորները<sup>214</sup>։ Փետրվարի 9-ին այդ շրջաններում վրացական զորքերի հրամանատար գեներալ Մազնիեզ հաղորդում էր, որ Ախալցխայի գավառի մուսուլմանները, հրապուրվելով լուրերով, թե իբր թուրքիան հետ է մղել անգլիացիներին, գրավել է Դարդանեւը և շուտով կլինի Կովկասում, ապստամբել էին Վրաստանի դեմ<sup>215</sup>։

Սակայն նույնիսկ նման պայմաններում անգլիացիները շարունակում էին լոյալ վերաբերվել Կարսի Շուրային։ Թիֆլիսից Ախալցխա մեկնած անգլիական հրամանատարության ներկայացուցիչը գեներալ Մազնիևին առաջարկել էր դադարեցնել ռազմական գործողություններն ապստամբների դեմ և հետ քաշել զորքերը՝ պայմանով, որ անգլիացիները

<sup>210</sup> Ավալովմ այս կապակցությամբ նշում է, որ 1919 թ., հավանաբար Աղործեանի նոտ միտք ծագեց «Վիլսոնի կետերի» հիման վրա, այսինքն՝ մուսուլմանների ինքնորոշման միջոցով ստանալ այն ամենը, ինչ թուրքիան ձեռք էր բերել 1918 թ. ու նույն թվականին կորցրել։ Տե՛ս 3. Авалов», նշվ.աշխ., սր.261։

<sup>211</sup> Տե՛ս А. Гаджиев, Демократические республики ..., стр. 57։

<sup>212</sup> Տե՛ս Մշակ, #20, 1919 թ. հունվարի 28։

<sup>213</sup> Տե՛ս Наше время, #27, 1919 թ. փետրվարի 24; Закавказское слово, #13, 1919 թ. փետրվարի 2։

<sup>214</sup> Տե՛ս Cem-Ender Arslanoğlu, նշվ.աշխ., s.84։ Ապստամբությունը ղեկավարում էր Ս. ք. Աթաբեկովը։

<sup>215</sup> Տե՛ս Յառաջ, #24, փետրվարի 11; Մշակ, #32, 1919 թ. փետրվարի 12։



իրենց գրավելին այդ շրջանները, իսկ բնակչությունն օժտվեր ինքնակառավարման իրավունքով<sup>216</sup>։

Պետք է նշել, որ Ախալցխայի մուսուլմանները, հավանաբար ոչ առանց Կարսի Շուրայի գիտության, փորձում էին համաձայնության եզրեր գտնել տեղի հայության և նրանց միջոցով՝ ԴՀ կառավարության հետ և այդպիսով, թույլ չտալ Կարսի Շուրայի դեմ հայ-վրացական համատեղելությունը։ Ապստամբության ժամանակ չէր տուժել Ախալցխայի ոչ մի հայկական գյուղ, և դեռ ավելին, Ախալցխայի գրավումից հետո ապստամբներն ազատ էին արձակել 20 հայ գործիչների, որոնք վրացական իշխանությունների կողմից ձերբակալվել էին «թուրքերի և մուսուլմանների դեմ պայքար» կազմակերպելու համար։ 1919 թ. մարտի 3-ին Վրաստանում ԴՀ դիվանագիտական ներկայացուցչությանը կից տեղեկատու քյուրդյի պետը ԴՀ ԱԳԽ-ին ուղղված նամակում հայտնում էր, որ Արևմտյան Վրաստանում ապստամբած մուսուլմանները բարեկամաբար էին տրամադրված տեղի հայ բնակչության նկատմամբ ու նույնիսկ ոչ պաշտոնապես առաջարկել էին նրանց չեզոքություն պահպանել Վրաստանի դեմ պայքարում<sup>217</sup>։ Փոխարենը մուսուլմանները խոստանում էին ինքնակառավարում տալ հայերին, ինչպես նաև համաձայնում էին, որ Ախալքալաքը զբաղեցվեր հայկական զորքերի կողմից։ Նամակում նշվում էր, որ մուսուլմանները հակված էին ԴՀ կառավարության հետ համաձայնության գալ վիճելի տարածքների, մասնավորապես, Կարսի մարզի հարցում։ Նրանք համաձայն էին ԴՀ-ին հանձնել մարզի հայաբնակ շրջանները, բացի Արդահանի և Օլթիի գավառներից<sup>218</sup>։

Սակայն պաշտոնական Երևանը չեզոքություն էր պահպանում այդ իրադարձությունների ժամանակ։ Երբ Ախալքալաքի վրացական ջոկատը օգնություն էր խնդրել հայկական զորամասից, վերջինի հրամանատար գեներալ Սիլիկյանը հրամայել էր չեզոքություն պահպանել, իսկ վրացական զորամասը ԴՀ տարածք ներս թողնելու խնդրանքին համաձայնություն էր տվել՝ դրա զինաթափման և երկրից հետագա հետ ուղարկման պայմանով։ Վրացիները չէին համաձայնել և մասամբ նահանջել էին լեռներով, իսկ մասամբ մտել էին ԴՀ տարածք, որտեղ և զինաթափվել էին։ Թերևս Երևանի չեզոքության հանգամանքն էր ստիպում վրացական մամուլին այդ շրջանում մեղադրել հայ սպաներին ապստամբությանը մասնակցելու մեջ։

Վրաստանի Սահմանադիր ժողովի ապրիլի 4-ի նիստում պատգամավոր Անջափարիձեն, զեկուցելով Ախալցխայի դեպքերի մասին, նշում էր, որ թուրքական զորքերի նահանջից հետո բեկերը համաձայնության էին եկել տեղի հայության հետ՝ վերջինների օգնության փոխարեն խոստանալով Ախալքալաքի գավառը, որտեղից մուսուլմանները պետք է վերաբնակեցվեին Ախալցխայի գավառ։ Ձեկույցում նշվում էր, որ նրանց մի-

<sup>216</sup> Տե՛ս Մշակ, #32, 1919 թ. փետրվարի 12; Տառաք, #27, 1919 թ. փետրվարի 14։

<sup>217</sup> Տե՛ս *Наше время*, #48, 1919 թ. մարտի 1։

<sup>218</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.114, ք.1,2։

ացյալ պատվիրակությունը մեկնեց Ախալքալաք և Երևան: Պատվիրակության մուսուլմանական մասը Կոստանդնուպոլսի դաշնակիցների առաքելությանը բողոքագիր հղեց Մեսխեթիան և Ջավախքը Վրաստանին միացնելու դեմ: Անջափարհձեմ նաև Ախալցխայի հայերին մեղադրում էր թիկունքից վրացական զորքերի վրա հարձակման մեջ՝ դա բացատրելով հայ-վրացական պատերազմի նախօրեին տեղի հայության շրջանում ԳՅԴ կողմից հակավրացական քարոզչությամբ<sup>219</sup>:

Պաշտոնականորեն իրականացնել Կարսի և Բաթումի մարզերին, Ախալցխայի և Ախալքալաքի գավառներին, Երևանի նահանգի հարավային շրջաններին տիրանալու քաղաքականությունը: Բաքվի պաշտոնաթերթ «Ազերբայձառ»-ը, Վրաստանին մեղադրելով Ախալցխայի գավառի մուսուլմանների հանդեպ բռնությունների մեջ, նշում էր, որ Կովկասի հարավարևմտյան մուսուլմանական հողերը Մեծ Բրիտանիայի հետ պայմանագրի համաձայն՝ պարպվել են թուրքական զորքերից, բայց այդ պայմանագրի մեջ ոչինչ չէր ասված, որ այդ հողերը կցվում են Վրաստանին, այլ ընդհակառակը՝ նշվում էր, որ դրանք ժամանակավորապես գրավվելու էին դաշնակիցների կողմից և գտնվելու էին նրանց կառավարման ներքո, մինչև խաղաղության խորհրդաժողովի որոշումը: Պաշտոնաթերթը նշում էր, որ ԱԳՀ ժողովուրդը, տարածային կապ չունենալով Գարավ-արևմուտյան Կովկասի հետ, այնուամենայնիվ, չէր կարող անտարբեր մնալ Կովկասի մուսուլմանների հալածանքների հանդեպ: Թերթը հույս էր հայտնում, որ վրացական կառավարությունը դադարեցնելու էր բռնաճնշումները, իսկ տեղի մուսուլմանները հնարավորություն կստանային հանգիստ սպասել խաղաղ խորհրդաժողովի որոշմանը՝ վերջինին նախօրոք հայտնելով ինքնորոշման իրենց իրավունքի և ցանկության մասին<sup>220</sup>:

1919 թ. մարտի 7-ին վրացական զորքերը գրավեցին Ախալցխայան՝ շարունակելով առաջխաղացումը մինչև գավառի սահմանագիծը<sup>221</sup>: Դա ամնիքապես առաջացրեց Ադրբեջանի հակազդեցությունը, որն ամեն գնով ձգտում էր երկարաձգել Կարսի Շուրայի գոյությունը: ԱԳՀ ԱԳՆ-ի՝ Վրաստանի ԱԳՆ-ին ուղղված մարտի 3-ի հայտագրում կրկին նշվում էր ինքնորոշման սկզբունքի պահպանման անհրաժեշտությունը և բռնությունների անթույլատրելիությունը: Այդ ամենի հիման վրա Բաքուն պահանջում էր դադարեցնել զորքերի առաջխաղացումը և խաղաղ միջոցներով կարգավորել հակամարտությունը Կարսի Շուրայի հետ<sup>222</sup>:

<sup>219</sup> Տե՛ս Աշխատատար, #68, 1919 թ. ապրիլի 8:

<sup>220</sup> Տե՛ս Ցասաջ, #24, 1919 թ. փետրվարի 11:

<sup>221</sup> Տե՛ս Cem-Ender Arslanoğlu, նշվ. աշխ., s.147: Իսկ ապրիլի 20-ին վրացական զորքերը գրավեցին Արցախանը:

<sup>222</sup> Տե՛ս Աշխատատար, #49, 1919 թ. մարտի 15: Իսկ Ազերբայձառն պաշտոնաթերթն աներկիմաստորին սպառնում էր Վրաստանին՝ նշելով, որ իրենց ազգային ինքնորոշմությանը ձգտող Ախալցխայի մուսուլմանների համընդհանուր պահանջով Վրաստանի քաղաքականությունը վտանգում է ԱԳՀ-ի հետ Վրաստանի քաղաքականությունը և կոչ էր անում դադարեցնել արյունահեղությունը: Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, գ.1, գ.294, ք.76 և 89:



Թիֆլիսն անմիջապես ԱՂԳ-ի այդ քայլը որակեց՝ որպես միջամտություն Վրաստանի ներքին գործերին և միաժամանակ շեշտեց, որ Ախալցխայի գավառը հանդիսանում էր Վրաստանի անբաժան մաս<sup>223</sup>:

Այսպիսով, Ադրբեջանը, խուսափելով բացահայտորեն հավակնություններ ներկայացնել Ախալցխայի գավառի և մյուս տարածքների նկատմամբ, շեշտը դնում էր ինքնորոշման իրավունքի պահպանման անհրաժեշտության վրա, ինչպես և պնդում էր այդ վայրերի մուսուլմանների հետ իր ազգակցական կապի վրա: Իր հերթին Վրաստանը, ձգտելով չեզոքացնել իր համար անբարենպաստ այդ գործոնները, նշում էր, որ ապստամբությունը հրահրվել էր բացառապես դոսի ուժերի՝ թուրք-ադրբեջանական զործակալների կողմից, և Ախալցխայի մուսուլմանները չեն մասնակցել ընդվզմանը: Թիֆլիսը նաև ընդգծում էր, որ տեղի մուսուլմաններն ազգությամբ վրացիներ էին և միշտ հավատարիմ են եղել Վրաստանի կառավարությանը<sup>224</sup>: Սյր իրավիճակում Բաքվի համար սառը ցնցուղ եղավ այն, որ Ախալցխայի գավառի գյուղացիության պատգամավորների խորհուրդը գավառը ճանաչեց Վրաստանի անբաժան մաս՝ հայտարարելով, որ բնակչությունը չունի ԱՂԳ-ի հովանավորության կարիք ու վերջինին խնդրելով չմիջամտել իր գործերին<sup>225</sup>: Դա վկայում էր այն մասին, որ ԱՂԳ-ի հեղինակությունն Ախալցխայի գավառի մուսուլմաններին շրջանում այդքան էլ բարձր չէր՝ հավակնելու համար այդ տարածքին:

Եթե ԱՂԳ-ն հստակ կերպով հանդես էր գալիս Կարսի և Բաթումի մարզերի ու հարակից տարածքների նկատմամբ Կարսի Շուրայի իշխանության պահպանման ու ամրապնդման օգտին, ապա Չայաստանի ու Վրաստանի դիրքորոշումները նրա հանդեպ համընկնում էին՝ երկուսն էլ կտրականապես հրաժարվում էին ճանաչել արևեստածին այդ կազմավորումը: Կարսի Շուրայի և ԱՂԳ հավակնությունների դեմ պայքարում հայ-վրացական զործակցության սերտացմանը նպաստեց նաև այն, որ 1919 թ. հունվար-մարտ ամիսներին հայ-վրացական պատերազմի հետեվանքների վերացման համար հրավիրված խորհրդատուները կարևորագույն որոշումներ ընդունվեցին հարաբերությունների կարգավորման ուղղությամբ (անկախություն փոխադարձ ճանաչում, դիվանագիտական հարաբերությունների հաստատում և այլն), Լոռիի չեզոք գոտու ստեղծումով

<sup>223</sup> Տե՛ս Աշխատատեղ, #49, 1919 թ. մարտի 15: Грүзия քերթը, վերլուծելով Ադրբեջանի հերթական դիվանագիտական դեմարշի պատճառները, նշում էր, որ հավանաբար ԱՂԳ կառավարությունը հավակնություններ չունի Ախալցխայի գավառի հանդեպ՝ մեջբերելով Մ. Է. Ռասուլզադեի, և ԱՂԳ այլ քաղաքական գործիչների հայտարարությունները: Թերթը ԱՂԳ դեմարշի պատճառ համարում էր ԱՂԳ-ում քաղաքացիության մասին օրենքի քացակալությունը և ԱՂԳ խորհրդարանում այլ պետությունների քաղաքացի համդիսացող մուսուլմանների առկայությունը, ինչը հանգեցնում էր նրան, որ Ադրբեջանի ժողովրդի մեջ դեռևս արմատավորված չէր հպատակության հասկացությունը, և նա շարունակում էր իրեն հավասարապես մտերիմ համարել Անդրկովկասի բոլոր մուսուլմաններին: Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.294, ք.91 և Закавказское слово, #28, 1919 թ. փետրվարի 22:

<sup>224</sup> Տե՛ս Յառաջ, #28, 1919 թ. փետրվարի 15; Աշխատատեղ, #52, 1919 թ. մարտի 9; Борьба, #78, 1919 թ. ապրիլի 6:

<sup>225</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.291, ք.138; Борьба, #66, 1919 թ. մարտի 23; Ժողովրդի ձայն, #79, 1919 թ. ապրիլի 13:

հայ-վրացական տարածքային վեճը կորցրեց իր սրությունը: Երկու պետություններն էլ մեղադրում էին անգլիական հրամանատարությունը մուսուլմանների հանդեպ չհիմնավորված մեղավերաբերմունքի համար<sup>226</sup>:

Թիֆլիսն սկսում էր գիտակցել, որ մուսուլմանական վտանգը սպառնում է ոչ միայն Հայաստանին, այլև վրացական պետությանը: Վրացական մամուլն այդ շրջանում ևս համակրանք էր արտահայտում ՀՀ-ի հանդեպ՝ գոհունակություն արտահայտելով առ այն, որ Երևանը խոհեմորեն իր ուշադրությունը հյուսիսից հառում էր դեպի արևմուտք՝ Կարսի մարզ և ավելի հեռուն՝ Թուրքահայաստանի վիլայեթները<sup>227</sup>:

Հայ-վրացական փոխգործակցությունը մեծ դժգոհություն առաջ բերեց Ադրբեջանում: Բաքուն սկսում էր գիտակցել, որ Անդրկովկասի բոլոր մուսուլմանաբնակ տարածքների նկատմամբ իր ինքնիշխանությունը տարածելու քաղաքականությունը հղի է հայ-վրացական միասնական ճակատի հետ քախուռով: Այդ միասնական ճակատի առաջին նախաճրշանը հայ-վրացական խորհրդաժողովն էր: «Азербайджан» պաշտոնաթերթը, մատնանշելով Հայաստանի ու Վրաստանի կողմից միմյանց անկախության փոխադարձ ճանաչումը և Վրաստանի կողմից Բաքվի հայտազրին տրված անբարյացական պատասխանը, դրանցում տեսնելով թշնամական վերաբերմունք ԱԴՀ-ի հանդեպ, հույս էր հայտնում, որ վրացական կառավարությունը երկու ժողովուրդների բարեկամությանը հակասող քայլեր չի անի<sup>228</sup>:

Սակայն իսան խոյսկու կառավարությունն ընդհուպ մինչև Կարսի Շուրայի վախճանը շարունակեց իր ակտիվ դիվանագիտական գործունեությունը՝ Հարավ-արևմտյան Կովկասի Հանրապետությունը Անդրկովկասի քաղաքական կյանքի իրողություն դարձնելու ուղղությամբ: Չօտելով Անդրկովկասի հանրապետությունների առաջիկա խորհրդաժողովում ստեղծել իր համար ձեռնտու ուժերի հարաբերակցություն (երեք մուսուլմանական հանրապետություն ընդդեմ երկու քրիստոնեականի)՝ Բաքուն հանդես եկավ Վրաստանին և ՀՀ-ին ուղղված պաշտոնական առաջարկներով՝ խորհրդաժողովին հրավիրել Հարավ-արևմտյան Կովկասի հանրապետության ներկայացուցիչներին: Համաձայնության դեպքում դա նշանակում էր Կարսի Շուրայի փաստացի ճանաչում: 1919 թ. ապրիլի 2-ին ՀՀ ԱԳ-ն ուղղված հայտազրով ՀՀ-ում ԱԴՀ դիվանագիտական ներկայացուցիչ Մամեդ իսան Թեքինսկին հայտնում էր, որ, նկատի ունենալով Կարսի և Բաթումի մարզերում 5-րդ հանրապետության առաջացումը, որի շահերը սերտորեն կապված էին մյուս կովկասյան

<sup>226</sup> Տե՛ս R.G. Hovannisian, *ՅՎ.պշխ.*, Vol 1, p.211: Կարսի մարզի հարցի շուրջ ՀՀ և Վրաստանի միջև սուր հակասություններ չկային: Տե՛ս ՀՀ ԳԱԱ, ֆ.200, ց.1, գ.181, ք.84; գ.291, ք.176,217:

<sup>227</sup> Տե՛ս R.G. Hovannisian, *ՅՎ.պշխ.*, Vol 1, p.211: Մաքրոփյութ-ն գրում էր, որ, եթե ՀՀ-ում ծավալվի ֆինանսական, պարենային և քաղաքական ճգնաժամ, մյուս փրատակների վրա կստեղծվի մուսլիմանական պետություն, և դա Վրաստանի մուսուլմանների կրթի դեմքով դեպի հարավ, ու Վրաստանը կկորցնի ոչ միայն Արախանն ու Օլթին, այլև Ախալցխան և Բաթումը: Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.291, ք.86, 176:

<sup>228</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.291, ք.187:



հանրապետությունների շահերի հետ, ինչպես նաև ընդհանուր քաղաքական-տնտեսական ծրագրի համաձայնեցման նպատակով, ԱԴԳ կառավարությունը ցանկալի էր համարում խորհրդատուական այդ հանրապետության մասնակցությունը<sup>229</sup>: ԳԳ ԱԳՆ-ը կատեգորիկ կերպով մերժեց այդ առաջարկը:

Վրաստանի ԱԳՆ-ը, ևս կտրուկ մերժելով ԱԴԳ-ի առաջարկությունը, նշում էր, որ «Կովկասյան Գարավ-արևմտյան Գանրապետության» ստեղծման առանձին անձանց փորձերն ընդհանուր ոչինչ չունեին ազգերի ինքնորոշման սկզբունքի հետ և ուղղված էին բացառապես այն բանին, որ էլ ավելի խճճեին առանց այդ էլ բարդ հարաբերություններն առանձին ժողովուրդների միջև: Դրանով Անդրկովկասի ժողովուրդների անկախությանը հարված է հասցվում նրանց կողմից, ովքեր չեն կարողանում հաշտվել անկախ Անդրկովկասյան հանրապետությունների գոյության հետ, և հարավից եկող այդ սպառնալիքը պետք է հավասարապես զգացվեր Անդրկովկասի ժողովուրդների համերաշխության իրական կողմնակիցների կողմից: Խորհրդատուական «Գարավ-արևմտյան Գանրապետության» մասնակցությունը կանխորոշում էր այդ հանրապետության ճանաչման հարցը, ինչի հետ Վրաստանը ոչ մի կերպ չէր կարող համաձայնել<sup>230</sup>:

Վրաստանը՝ Ադրբեջանի հավակնությունները չեզոքացնելու համար ակնարկում էր Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքն իր կողմից ճանաչման հնարավորությունը<sup>231</sup>: ԳԳ-ն և Վրաստանը՝ որպես կապահարված, բարձրացրեցին խորհրդատուական նաև Ղարաբաղի ներկայացուցիչների մասնակցության հարցը, ըստ որում թե՛ Կարսի Շուրայի և թե՛ Ղարաբաղի ներկայացուցիչները պետք է ունենային միայն խորհրդակցական ծայնի իրավունք<sup>232</sup>:

Բախվելով հայ-վրացական ընդհանուր ճակատին՝ Բաբուն ստիպված էր տեղի տալ՝ տարածաշրջանային մեկուսացումից խուսափելու համար: Ապրիլի 3-ին Վրաստանի ԱԳՆ-ին ուղղված հայտագրով Վրաստանում ԱԴԳ դիվանագիտական ներկայացուցիչը նշում էր, որ ԱԴԳ կառավարությունը, քննարկելով Վրաստանի ԱԳՆ մարտի 10-ի հայտագիրը, որոշեց ձեռնպահ մնալ խորհրդատուական Գարավ-արևմտյան Գանրապետության հրավիրման վերաբերյալ պահանջից՝ նշելով, որ չի ցանկանում դանդաղեցնել խորհրդատուական գումարումը<sup>233</sup>:

Այդ շրջանում դաշնակիցները հետզհետե հակվեցին Կարսի մարզը ԳԳ իշխանությանը հանձնելուն: Որոշվել էր, որ մինչև 1919 թ. մայիսի 1-ը

<sup>229</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.149, ք.15: Նման րովանդակությանը հայտագիր մարտի 5-ին հղվեց նաև Վրաստանին: Տե՛ս А. Нечуйев, Гарс в Араз-Турк Республикаларынын..., с.25

<sup>230</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.149, ք.34:

<sup>231</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.291, ք.116: Այսպես, դեռ մարտին վրացական ազգային դեմոկրատների օրգանը Գրչուն-ն գրում էր, որ ԱԴԳ կառավարությունը սխալվում է՝ չափազանց լայնորեն մեկնաբանելով ինքնորոշման զարգացումը, և որ ԱԴԳ-ի համդու պնման մեկնաբանության կիրառումը մրանց անջատում է Ղարաբաղը, Ելիզավետպոլի մահանգի մի մասը և այլ տարածքներ:

<sup>232</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.291, ք.217; գ.181, ք.145; R.G.Hovannian, նշվ.աշխ., Vol. 1, p.356:

<sup>233</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.149, ք.35:

Կարսի մարզում և Նախիջևանի գավառում պետք է հաստատվեր ԳԴ իշխանությունը հայկական զորքերի աջակցությամբ<sup>234</sup>։ Նման դիրքորոշումը խթանող հանգամանք էր այն, որ մարզի մուսուլմաններն ամեն կերպ խոչընդոտներ էին հարուցում դաշնակիցների առջև՝ կանխելով ցորենի արտահանումը մարզից, հարձակումներ գործելով տեղացի ռուսներից կազմված միլիցիայի ու հենց անգլիացիների վրա և, որ ամենագլխավորն է՝ սերտ կապեր հաստատելով Էրզրումում գտնվող թուրքական 9-րդ բանակի հրամանատարության հետ<sup>235</sup>։

1919 թ. ապրիլի 12-ին Կարսի Շուրայի և մեջլիսի անդամները ձերբակալվեցին ու արտոլվեցին մարզից, և անգլիական հրամանատարության կողմից ստեղծվեց ժամանակավոր խորհուրդ (4 թուրք, 2 հույն, 1 քուրդ, 1 ռուս և 1 մոլդկան) Էյաղ Օկտայի գլխավորությամբ, որը լուծարված մեջլիսի նախագահն էր<sup>236</sup>։ Սկսվեց հայ զաղթականների վերադարձը մարզ հայկական կանոնավոր զորամասերի ուղեկցությամբ։ Նման պայմաններում մուսուլման բնակչությունը, հատկապես քրդերը ստիպված էին գոնե արտաքնապես բարյացակամություն դրսևորել հայերի հանդեպ։ Նրանք ոչ միայն ողջունեցին ԳԴ իշխանությունների ժամանումը, այլև նահանգապետ Ստ. Ղորղանյանին խնդրեցին վարչակազմում իրենց տեղեր տրամադրել<sup>237</sup>։

Ամփոփելով՝ կարող ենք մշել, որ Անդրկովկասից Օսմանյան կայսրության հեռանալուց հետո ԱԳԳ կառավարությունը փորձում էր փոխարինել նրան՝ ձգտելով ներկայանալ՝ որպես երկրամասի բոլոր մուսուլմանների պետական կազմավորում։ Անդրկովկասի բոլոր մուսուլմաններին արթբեցնական պետականության սահմաններում ներառելու քաղաքականության առաջնային ուղղություններից էր Կարսի և Բաթումի մարզերի մուսուլմանների վրա ԱԳԳ ազդեցության տարածումը։ Սակայն ինքնորոշման իրավունքի իրականացման քողի տակ անգլիական հրամանատարության առժամանակ թողտվությամբ և Թուրքիայի ռազմաքաղաքական օգնությամբ Կովկասի հարավ-արևմտյան անկյունում ստեղծվող մուսուլ-

<sup>234</sup> Տե՛ս Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ.։ Փաստաթղթեր և նյութեր, Բանբեր Հայաստանի արխիվների, # 1-2, Երևան, ՀՀ կառավարությանն առընթեր արխիվային գործի վարչություն, 1993, էջ 89-90։

<sup>235</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.243, ք.99; Борьба, #77, 1919 թ. ապրիլի 15։ Տե՛ս նաև Кавказское слово, #55, 66, 1919 թ. մարտի 27, ապրիլի 10 և R.G. Hovannisian, նշվ. աշխ., Vol. 1, p.216-217։

<sup>236</sup> Տե՛ս А. Начишев, Гарс во Араз-Турк Республикаларынын..., с.33; Г. Махмурян, նշվ.աշխ. стр.64։ Կարսի գրավման կապակցությամբ ՀՀ-ում ԱԳԳ դիվանագիտական ներկայացուցիչ Մամեդ իսան Թեքիմսկին իր կառավարությանն առաջարկում էր բողոքել Հնդկաստանի, Թուրքեստանի, Աֆղանտանի, Մալայան կղզիների և Կովկասի մուսուլմաններին ու խաղաղ խորհրդածոլովին՝ մի քանի միլիոն մուսուլմանների կես միլիոն հայերին ենթարկելու անգլիացիների ցանկության դեմ։ Տե՛ս Գաղտնի փաստաթղթեր։ Աղբյուրների դասադրական գործունեությունից մի էջ, Երևան, Գլխավոր Շտաբի Տպարան, 1920 թ., էջ 19։

<sup>237</sup> Տե՛ս А.Гаджиев, Демократические республики ..., стр.76-77; R.G. Hovannisian, նշվ. աշխ., Vol. 1, p.219-220; Кавказское слово, #70, 75, 79, 89, 94, 101, 1919 թ. ապրիլի 15, 25, 30, մայիսի 12, 18, 28։ Բաթումի մարզում, Օրբի օկրուգում և Արդահանի օկրուգի մի մասում ստեղծվեց քրիստոնեական ռազմական զենեղա-նահանգապետություն։



մանական անկախ պետական կազմավորումն ամրապնդելու, նրան կենսունակություն հաղորդելու և այն ԱԴԳ ռազմաքաղաքական ազդեցության տակ մտցնելու խան խոչնդելու կառավարության քաղաքականությունն ի դերն ելավ: Դրա հիմնական պատճառներն էին՝ անգլիական հրամանատարության դրական վերաբերմունքի կամ առնվազն չեզոքության վրա հիմնված չափազանցված հաշվարկները, Կարսի և Բաթումի մարզի մուսուլմանների ներուժի և նրանց շրջանում Բաքվի հեղինակության գերազանահատումը և Գայաստանի ու Վրաստանի համատեղ հակազդեցության հնարավորության, ինչպես նաև նրանց ռազմական ներուժի թերազնահատումը: Փաստորեն Կարսի և Բաթումի մուսուլմաններին Բաքվի կողմից իրականացված աջակցության հիմնական դրսևորումը եղան դիվանագիտական դեմարշները, որոնք հիշյալ գործոնների առկայության պատճառով չէին կարող հանգեցնել տեսանելի արդյունքի:

Սակայն ԱԴԳ-ն, չկորցնելով ԳԳ արևմտյան շրջաններում մուսուլմանական պետական կազմավորման ստեղծման հույսը, շարունակեց քողարկված կերպով քաղաքական, դիվանագիտական և նյութական օգնություն ցուցաբերել Կարսի մարզի մուսուլմաններին՝ նրանց նաև օգտագործելով՝ որպես հինգերորդ շարասյուն ԳԳ դեմ իր պայքարում:

### 2.3 ԱԴԳ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒՅՑՈՒՄԸ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔՈՒ ՈՒ ՋԱՆԳԵՁՈՒԻ ԳՄՐՏՈՒՄ 1919 Թ. ԳՈՒՆՎԱՐ - ՕԳՈՍՏՈՍԻՆ

Ադրբեջանին, ըստ էության, չհաջողվեց օգտվել 1918 թ. կեսերին ստեղծված բարենպաստ միջազգային իրավիճակից և թուրքական զենքի ուժով իր օգտին լուծել Լեռնային Ղարաբաղի հարցը: Սակայն 1918 թ. հոկտեմբերին Ջավիդ բեյի գլխավորած թուրքական զորքերի նահանջի պայմաններում, երբ Ղարաբաղում առժամանակ ստեղծվել էր ռազմաքաղաքական վակուում, հարևան Ջանգեզուրում գտնվող Անդրամիկը նույնպես չկարողացավ օգտագործել իրավիճակը՝ Ղարաբաղում հայկական վարչապազմը վերջնականապես հաստատելու և ամրապնդելու համար<sup>238</sup>: Երբ վերջապես նրա ջոկատը սկսեց մարտերով շարժվել Շուշիի ուղղությամբ, Անդրկովկասում միջազգային իրավիճակն արդեն արմատական փոփոխությունների էր ենթարկվել. տարածաշրջանում արդեն հայտնվել էր մի նոր հզոր ուժ՝ անգլիական զորքերը, որոնց հետ հնարավոր էր չէր հաշվի չնստել<sup>239</sup>: Նոր միջազգային իրավիճակից ելնելով՝ Բաքուն համապատասխան մարտավարական փոփոխություններ կատարեց իր տարածաշրջանային քաղաքականության մեջ, որոնք միտված էին Կովկասում բրիտանական ներկայության գործոնն իր համար առավելուք-

<sup>238</sup> Տե՛ս Ե. Իշխանեան, ԳՂՎ.աշխ., էջ 284-292; Հ. Հարությունյան, ԳՂՎ.աշխ., էջ 88-89:

<sup>239</sup> Տե՛ս Ե. Իշխանեան, ԳՂՎ.աշխ., էջ 301; Андраник Озаян. Документы и материалы, стр. 316-319, 323-324; Кавказское слово #271, 1918 թ. դեկտեմբերի 14: Միաժամանակ Ղարաբաղ ժամանած դաշնակիցների առաքելությունը Շուշիի ադրբեջանական կայազորին առաջարկել էր մնալ տեղում, մինչև նոր ջոկատի ժամանումը:

յուն դարձնելուն և աղբրեջանական պետականության անրապնդմանն ու տարածաշրջանում իր առջև կանգնած խնդիրների լուծմանը<sup>240</sup>:

ԱԴԳ խորհրդարանի բացումը, Թոմսոնի կողմից ԱԴԳ կուալիցիոն կառավարության ճանաչումը կանխորոշեցին Աղբրեջանի համար բարենրգապատ քաղաքական իրավիճակի ձևավորման սկիզբը՝ վերսկսելու Ղարաբաղին և Ջանգեզուրին տիրանալու իր քաղաքականությունը<sup>241</sup>: Խան Խոյսկին խնդրում էր դաշնակիցներին ԱԴԳ ներկայացուցիչների մասնակցությամբ հանձնաժողով ուղարկել Ղարաբաղ: Վարչապետ Խան Խոյսկին 1918 թ. դեկտեմբերին դիմեց զեներալ Թոմսոնին՝ բողոքելով Անդրանիկ ջոկատի կողմից Ջանգեզուրում մուսուլմանների հանդեպ բռնությունների դեմ ու նախագուշացնելով, որ նա մտադիր է մուսուլմ կատարել Ղարաբաղում: Սակայն Թոմսոնի հանձնարարությամբ Ջանգեզուր ժամանած անգլիական զինվորական թղթակից Սկոտլանդ Լիդդելը համոզվեց, որ Անդրանիկի հասցեին Բաքվի մեղադրանքները կեղծ էին<sup>242</sup>: Արդյունքում Բաքվում անգլիական զորքերի հրամանատար գեներալ-մայոր Թոմսոնի պահանջով Անդրանիկը դադարեցրեց Շուշիի ուղղությամբ առաջխաղացումը և հրամայեց դադարեցնել ռազմական գործողությունները<sup>243</sup>:

1919 թ. հունվարի 15-ին զեներալ Թոմսոնի հավանությամբ ԱԴԳ կառավարությունը հիմնադրեց Ջանգեզուրի, Կարյազինի, Շուշիի և Ջեվանշիրի գավառներն ընդգրկող գեներալ-նահանգապետություն Խոսրով բեկ Սուլթանովի գլխավորությամբ<sup>244</sup>: Դրանով Անդրանիկի ստում անգլիական զորքերի հրամանատարությունը Լեռնային Ղարաբաղի և Ջանգեզուրի հարցում բացահայտորեն գրավեց ԱԴԳ-ի կողմը՝ փաստորեն պաշտպանելով Խան Խոյսկու կառավարության հավակնությունները Ելիզավետպոլի նահանգի ողջ տարածքի նկատմամբ:

Աղբրեջանամետ դիրքորոշման որդեգրումը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Առաջին, Բրիտանական զաղութային կայսրությունն իր կազմում ներառում էր հարյուր միլիոնավոր մուսուլման-

<sup>240</sup> Տե՛ս Հ. Հարությունյան, *Եզվ.աշխ.*, էջ 127:

<sup>241</sup> Տե՛ս Մշակ #10, 1919 թ. հունվարի 14:

<sup>242</sup> Տե՛ս Մշակ #257, 15, 1918 թ. դեկտեմբերի 12, 1919 թ. հունվարի 22; Ժողովրդի ձայն, #82, 1918 թ. դեկտեմբերի 12; Մ. Աղայան, *Անդրանիկ: Ղարաաշրջան, դեպքեր, դեմքեր, Երևան, ՀՀԸ կրատարակչություն, 1994*, էջ 705-706:

<sup>243</sup> Տե՛ս Մշակ #20, 1919 թ. հունվարի 28; Ցառաք, #13, 1919 թ. հունվարի 29: Թե՛ս Ղարաբաղի հայտնությունը դադարեցրեց ռազմական գործողությունները, մուսուլմանները շարունակեցին հարձակումները հայկական զյուղերի վրա: Տե՛ս *Искра*, #14, 1919թ. հունվարի 22:

Շուշի ժամանած անգլիական ռազմական առաքելությունը դե-Ֆակտո ճանաչեց Ղարաբաղի Հայոց Ազգային խորհուրդը՝ դա պայմանավորելով այն սկզբունքային պահանջով, որ նրա իրավասության մեջ չէր մտնելու քաղաքական ոլորտը, այլ միայն տնտեսական, գաղութականների և նման այլ ոլորտները: Առաքելությունը նշում էր, որ զեներալ Թոմսոնը պետք է որոշում կայացներ մարզի ժամանակավոր կառավարման մասին: Տե՛ս R.G. Hovannisian, *Եզվ. աշխ.*, Vol. 1, p.90:

<sup>244</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.243, ք.100-101: Խոսրով բեկ Սուլթանովը հարուստ հողատեր էր և Սուսավաթի ազդեցիկ անդամ: Ուներ պանթոսթրական հայացքներ և սերտ կապեր երիտթուրքերի հետ: Մասնակցել էր 1918 թ. Բաքվի արշավանքին: 1918 թ. ամռանը հրահրել էր մուսուլմանների հարձակումները Ղարաբաղի հայության վրա: Տե՛ս նաև Ե. Իշխանեան, *Եզվ.աշխ.*, էջ 427:



ների, և պատմության մեջ առաջին մուսուլմանական հանրապետության հովանավորությունը բարենպաստ կերպով կանդրադառնար նրա հեղինակության վրա իր մուսուլման հպատակների շրջանում: Այդ քաղաքական գիծն առավել ընդգծված էր Բաքվում բրիտանական հրամանատարության մոտ, որը մինչ այդ ծառայել էր Հնդկաստանում<sup>245</sup>: Երկրորդ, անգլիացիները չէին մոռանում, որ ԱՂԳ-ն ստեղծվել է թուրքական սվինի օգնությամբ, ուստի նրան թուրքական ազդեցությունից զերծ պահելու համար անհրաժեշտ էր հնարավորինս հանդուրժողական դիրքորոշում գրավել ԱՂԳ կառավարության հանդեպ, ինչպես նաև նպաստել ռազմաքաղաքական և տնտեսական առումով կենսունակ պետականության ստեղծմանը: Բացի այդ, անգլիական հրամանատարությունը գտնում էր, որ ԳԳ-ին միացվելու էին Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթների լայնարձակ տարածքներ, ուստի Ղարաբաղը և Ջանգեզուրը դիտում էր՝ որպես տարածքային փոխհատուցում ԱՂԳ-ին, առավել ևս, որ արևմուտքում տարածքների ձեռքբերումը ԱՂԳ-ի համար բացառվում էր<sup>246</sup>: Դրանով բրիտանական քաղաքականությունն, ըստ իրենց՝ բրիտանացիների, դրսևորում էր իր անկողմնակալությունը: Բացի այդ, Ղարաբաղը և Ջանգեզուրը ԱՂԳ-ին հանձնելով՝ անգլիացիներն առաջացնում էին լարվածության մշտական օջախ տարածաշրջանում՝ պահպանելով իրենց միջամտության հնարավորությունը և դրանով իսկ՝ ազդեցությունը թե՛ երկվանի և թե՛ Բաքվի վրա<sup>247</sup>:

Չարքը ողջ տարածաշրջանում բրիտանական քաղաքականության տեսանկյունից դիտարկելիս՝ կոտեսնենք, որ, ի թիվս Անդրկովկասի մյուս պետությունների, կենսունակ Ադրբեջանը պետք է պատմե՛ջ հանդիսանար վերածնված Ռուսաստանի՝ դեպի հարավ առաջխաղացման ճանապարհին: Իսկ հայերն՝ ըստ անգլիացիների դիրքորոշման, հանդիսանում էին անուղղելի ռուսասերներ: Չենց այդ պատճառով անգլիացիներն շտապեցին Անդրամիկին հեռացնել Չայաստանից<sup>248</sup>: Կարևոր գործոն էր նաև այն, որ Լոնդոնը որոշակիորեն շահագրգռված էր Բաքվի նավթային շրջանի պաշարներով: Այդ նպատակով անգլիական հրամանատարությունն առաջին հերթին վերահսկողության տակ վերցրեց Բաքվի նավթային շրջանը, Բաթումի նավահանգիստը, Բաքու-Բաթում նավթամուղը և Բաքու-Թիֆլիս-Բաթում երկաթուղին<sup>249</sup>:

<sup>245</sup> Տե՛ս Գ. Махмурия, նշվ.աշխ. սր.39; Լրաբեր հասարակական գիտությունների, # 2, 2001, էջ 63:

<sup>246</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 62-63:

<sup>247</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 70:

<sup>248</sup> Տե՛ս Ե. Իշխանյան, նշվ.աշխ., էջ 304, 350; Գ. Махмурия, նշվ.աշխ. սր.44,65; Андраник Озаян. Документы и материалы, стр. 341-343:

<sup>249</sup> Տե՛ս Ա. Առաքիսյան, նշվ.աշխ., էջ 138; R.G. Hovannisian, նշվ.աշխ., Vol. 1, p. 157; Գ. Գալսթյան, նշվ.աշխ., էջ 255; Գ. Махмурия, նշվ.աշխ. սր.23,26,38; Нагорный Карабах в 1918-1923 гг., стр.52-55: Թոմասն անբարյացակալ էր տրամադրված ՀՅԴ-ի հանդեպ՝ համարելով, որ նրա օրոք հնարավոր չէր ՀՀ զարգացումը և հայերի խաղաղ գոյակցությունը հարևան ժողովուրդների հետ: Տե՛ս ՀԱԱ ֆ. 200, ց.1, գ.158, ք.93 ու նաև գ.181, ք.145; Մշակ, #42, 1919 ք. փետրվարի 22:

Բաքուն հստակ գիտակցում էր անգլիական հրամանատարության դիրքորոշումից իր համար բխող օգուտներն ու մտադիր էր իր քաղաքականության մեջ հնարավորինս օգտագործել այդ գործոնը: Այսպես, Խոսրով բեկ Սուլթանովն իր կառավարությանը փետրվարի 25-ին ուղղված նամակում Ղարաբաղի հնագանդեցման իր ծրագրի իրագործումը հնարավոր էր համարում «անգլիացիների ազդեցության պայմաններում»: Շուշիի քաղաքապետ Շահնազարյանի, Սոկրատ բեկ Մելիք Շահնազարյանի ու անգլիական առաքելության ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած խորհրդակցության ժամանակ հայկական կողմը հայտնել էր, որ հայությունն իրեն համարում է ռուսապետակ և հույս ունի, որ Ռուսաստանը կվերածնվի: Մինչդեռ Սուլթանովը հայտնել էր, որ ԱՂԳ-ն ավելի շուտ կգնա Անգլիայի, քան Ռուսաստանի հետ, և, բացի այդ, Անգլիան դժվար թե կրկին Ռուսաստանին հանձնի Զնդկաստան տանող ճանապարհը, որի կողմից ինքը խոցելի է: Նշելով, որ «այդ պահից անգլիացիների ներկայացուցիչներն սկսեցին անվստահություն տածել դեպի հայերը և՛ վստահություն իր նկատմամբ»՝ նա խորհուրդ էր տալիս «գործել անգլիացիների միջոցով, ձերբակալությունների և աքսորի ճանապարհով»<sup>250</sup>:

Անդրկովկասում անգլիական զորքերի հրամանատար զեներալ Ֆորեստին Ուլքերը փետրվարի 19-ին ԶԳ կառավարությանը խիստ կերպով նախազգուշացնում էր վիճելի տարածքները զենքի ուժով գրավման անթույլատրելիության մասին ու պահանջում էր սպասել խաղաղ խորհրդաժողովի վերջնական որոշմանը<sup>251</sup>: Փաստորեն ԶԳ-ից պահանջվում էր ուժ չգործադրել գրավելու համար մի տարածք, որն արդեն իսկ գտնվում էր ԶԳ իշխանության ներքո, և միաժամանակ խրախուսվում էր Ադրբեջանի կողմից քաղաքական և ռազմական ճնշման գործադրումը Ղարաբաղի և Ջանգեզուրի հայությանը հպատակեցնելու գործում: Այս հանգամանքի վրա անգլիական հրամանատարության ուշադրությունն էր գրավում Երեվանը՝ պաշտոնական դիմումներում մատնանշելով նման քաղաքականության անթույլատրելիությունը: Սակայն վերոհիշյալ պատճառներով հայկական կողմի նկատառումները չընդունվեցին<sup>252</sup>:

Չնայած այն հանգամանքին, որ անգլիացիներն ամեն անգամ շեշտում էին Ղարաբաղի և Ջանգեզուրի նկատմամբ ԱՂԳ-ի իշխանության ժամանակավոր բնույթը, ինչը չէր կարող որևէ կերպ պայմանավորել այդ շրջանների պատկանելության հարցի վերջնական լուծումը, ԱՂԳ-ն, օգտվելով անգլիական հրամանատարության՝ իր համար քարենպաստ դիրքորոշումից, փորձ արեց ավարտին հասցնել գործը և վերջնակա-

<sup>250</sup> Sh'u G. Abramyan, Политика английских завоевателей по отношению к Арцаху (ноябрь 1918 — август 1919), *Լրարբեր հասարակական գիտությունների*, # 7, Երևան, Հայկական ԽՍՀ Գիտությունների Ալաղեմիայի հրատարակչություն, 1989, стр.17; *Нагорный Карабах в 1918-1923 гг.*, стр.87-90:

<sup>251</sup> Sh'u R.G. Hovannisian, *Նշվաշխ.*, Vol. 1, p. 163:

<sup>252</sup> *Ibid.*, Vol. 1, p. 163-164:



նապես բռնակցել Ղարաբաղը և Ջանգեզուրը: Գեներալ Թոմսոնի որոշումը որոշակիորեն լեգիտիմացնում էր խան Խոյսկու կառավարության տարածքային նկրտումները, և դա զգալիորեն ամրապնդեց ԱՂՅ-ի դիրքերը Չայաստանի հետ բանակցություններում:

Այսպես, ի պատասխան Ադրբեջանի ԱԳՆ-ին ուղղված ԳԳ ԱԳՆ 1919 թ. հունվարի 26-ի հայտագրի, որում գեներալ-նահանգապետության հիմնումը որակվում էր՝ որպես ԳԳ տարածքային իրավունքների խախտում, ադրբեջանական կողմը նշում էր, որ ԳԳ բողոքը միջամտություն էր իր ներքին գործերին և իր ինքնիշխան իրավունքների խախտում, իսկ Ղարաբաղը և Ջանգեզուրը դիտում էր՝ որպես անվիճելիորեն և անդամալիորեն իրեն պատկանող՝ նշելով, որ Ադրբեջանի իրավական և բարոյական պարտականությունն էր՝ միջոցներ ձեռնարկել իր տարածքում կարգուկանոն հաստատելու և իր քաղաքացիների կյանքն ու գույքը պաշտպանելու համար<sup>253</sup>:

ԱՂՅ-ն Ղարաբաղի և Ջանգեզուրի հանդեպ իր հավակնությունները պաշտոնապես պատճառաբանում էր տնտեսական գործոնով, այն է՝ քոչի խնդրով: Բաքուն ընդգծում էր, որ Ղարաբաղի և Ջանգեզուրի լեռնային շրջանները հարթավայրից անջատելու դեպքում կտուժեին քոչվորների շահերը: Դրա հիման վրա ԱՂՅ-ն պահանջում էր սահմանագատման հիմք ընդունել տնտեսական գործոնը: Ըստ որում, շահարկելով տնտեսական գործոնը՝ Բաքուն աներկիմաստ կերպով նախազուլեացնում էր, որ անջատվելու դեպքում տնտեսական դժվարություններ էին սպասվում նաև Ղարաբաղի հայերի համար: Այսպես, Խ. ք. Սուլթանովը նշում էր, որ եթե Ղարաբաղի լեռնային և հարթավայրային մասերն իրարից անջատվեն, լեռնային մասի բնակչությունը կկոտորվի սովից, իսկ հարթավայրի բնակչությունն առանց լեռների կկործանվի թե՛ տնտեսապես (անասնաբուծության քայքայում) և թե՛ ֆիզիկապես՝ (մայլարիա)<sup>254</sup>:

Իրոք, Ադրբեջանի առջև կանգնած էր լուրջ խնդիր՝ ապահովել իր բնակչության մեջ զգալի մի շերտ կազմող հարյուր հազարավոր քոչվորների համար քոչի հնարավորությունը, ինչը նրանց տնտեսական կացութաձևի միակ միջոցն էր: Արևելյան Անդրկովկասը շատ աղքատ է ալպիական արոտավայրերով (ընդհանրը 55 հազար դեյատին էլիզավետպոլի նահանգի հարթավայրային հատվածում և 506 հազար դեյատին Բաքվի նահանգում): Ուստի Չայկական լեռնաշխարհի արևելյան շրջանների լեռնային արոտավայրերը կենսական անհրաժեշտություն էին հանդիսանում քոչվորների համար: Միայն Ղարաբաղում կար 108 հազար հա արոտավայր, որտեղ երեք ամսվա ընթացքում կարող էր սնվել 400 հազար խոշոր եղջերավոր անասուն: Իսկ ընդհանուր առմամբ, Չայկական լեռնաշխարհի արոտավայրերը թույլ էին տալիս պահել երեք միլիոն անա-

<sup>253</sup> Տե՛ս Յառաջ #17, 21, 1919 թ. փետրվարի 2,7; *Haase время*, #23, 1919 թ. հունվարի 29; Մշակ #29, 1919 թ. փետրվարի 7 և R.G. Hovannisian, *Նշվ. աշխ.*, Vol. 1, p. 163:

<sup>254</sup> Տե՛ս Աշխատատեղ, #72, 1919 թ. ապրիլի 10:

սուն<sup>255</sup>: Այս ամենից ելնելով՝ ԱԴԴ ղեկավարությունը համարում էր, որ Ղարաբաղի հայաբնակ լեռնային հատվածի անջատումը և կցումը ԳԴ-ին պայմանավորված էր բացառապես քաղաքական գործոններով և խախտում էր Ելիզավետպոլի նահանգի աշխարհագրական, տնտեսական և քաղաքական միասնությունը ու, հետևաբար, անարդարացի էր և վնասակար նահանգի բնակչության համար:

Սակայն հնարավոր չէր ընդհանրապես անտեսել էթնիկական գործոնը, քանի որ այդ դեպքում ԱԴԴ-ն հարվածի տակ էր դնում իր հավակնությունները Շարուրի, Նախիջևանի և մուսուլմաններով կոմպակտ բնակեցված այլ տարածքների նկատմամբ, որոնք պատճառաբանվում էին ազգերի ինքնորոշման սկզբունքով: Ուստի ազգագրական գործոնը չեզոքացնելու համար Ադրբեջանը Ջևանշիրի, Շուշիի, Կարյազինի և Ջանգեզուրի գավառները դիտարկում էր՝ որպես մեկ ընդհանուր միավոր, որի դեպքում մուսուլմաններն իրենց թվով որոշ չափով գերազանցում էին հայ բնակչությունը: Ապագա խաղաղ խորհրդաժողովում ԱԴԴ հավակնություններն ավելի ամրապնդելու համար Բաքուն կազմել էր արտակարգ քննչական հանձնաժողովներ, որոնք առջև խնդիր էր դրվել տեղեկություններ հավաքել Բաքվի և Ելիզավետպոլի նահանգների մուսուլմանական բնակչության հանդեպ «հայերի գործադրած բռնությունների մասին»<sup>256</sup>:

Իր հերթին հայկական կողմը գտնում էր, որ քոչի հարցը պետք է քաղաքականացնել և հանուն քոչվորների իրավունքների ապահովման, պահանջել ԱԴԴ-ին միացնել 300 հազար հայ բնակչություն ունեցող Ղարաբաղն ու Ջանգեզուրը: ԳԴ և Ղարաբաղի ու Ջանգեզուրի տեղական Ազգային խորհուրդների դիրքորոշումն այն էր, որ հարկավոր էր իրարից անջատել քոչի և սահմանների հարցը: Թե՛ Ղարաբաղի և թե՛ Ջանգեզուրի Ազգային խորհուրդները պատրաստակամություն էին հայտնում ընդառաջ գնալ քոչվորներին և քաց թողնել նրանց լեռներ՝ պայմանով, որ քոչի հարցը չունենար քաղաքական հետևանքներ, իսկ քոչվորները ենթարկվեին ԳԴ օրենքներին: Դրանով քոչի հարցը նրանք իրավամբ դիտում էին զուտ տնտեսական հարթության վրա<sup>257</sup>:

Այսպիսով, հայկական կողմի դիրքորոշումը շատ ավելի հիմնավոր էր և կառուցողական, քանի որ նրա հիմքում ընկած էր ազգերի ինքնու-

<sup>255</sup> Տե՛ս ՀԱՄ ֆ. 200, ց. 1, գ. 190, ք. 58; А. Шахатурия, 624, աշխ., стр. 28-29:

<sup>256</sup> Տե՛ս Нагорный Карабах в 1918-1923 гг., стр. 40-41:

<sup>257</sup> Տե՛ս ՀԱՄ ֆ. 200, ց. 1, գ. 291, ք. 405-406, գ. 243, ք. 15; Աշակ, #47, 48, 1919 թ. մարտի 2, 4: «Դրոշակ»-ն իրավամբ նշում էր, որ քոչը սահմանագատման հիմքում դնելու համար ԱԴԴ-ին պետք է անցնեին մաս Ջանգեզուրը, Ղարաբաղյազը, Նոր Բայազետը և Դիլիջանի շրջանները, որոնք քոչվորներին պետք էին՝ որպես յարալուրեր: Տե՛ս Դրոշակ, # 5 1927 թ. մայիս, «Անդրկովկաս», էջ 150: Անդրկովկասի խորհրդաժողովում հայկական կողմը, պատրաստակամություն հայտնեց ընդունել քոչվորներին իր տարածքում՝ պայմանով, որ նրանք հարկ վճարեին ՀՀ գանձարան, իրենց հետ վերցնեին սահմանափակ զենք, անցնում ընթացքում չվնասեին ցանքերը և այլն: Սակայն ԱԴԴ տեսակետով ՀՀ-ն իրավամբ չուներ սահմանափակել քոչվորների իրավունքները, և նրանք հարկը պետք է վճարեին Բաքվին: Տե՛ս Наше время, #102, 1919 թ. հունիսի 7; ՀԱՄ ֆ. 200, ց. 1, գ. 146, ք. 16, 23, 31:



րոշման իրավունքը, և մյուս կողմից, հայկական կողմը պատրաստակամ էր քոչի հարցը լուծել հոգուտ քոչվորների: Այդ շրջանում ԱԴԴ-ն տարած-  
քային ամբողջականության գաղափարի տակ ստիպված էր դնել միայն  
տնտեսական գործոնը, որը սակայն բավարար հիմք չէր հավակնելու  
համար Լեռնային Ղարաբաղին:

Դեպքերի զարգացումից երկյուղած Ղարաբաղի հայության 1919 թ.  
փետրվարի 10-21-ը կայացած 4-րդ համագումարը մերժեց ճանաչել ԱԴԴ  
իշխանությունը՝ պահանջելով մինչև խաղաղ խորհրդատուրդի վերջնա-  
կան որոշումը մտցնել կառավարում անգլիական կամ հայ-մուսուլմանա-  
կան խառը հանձնաժողովի միջոցով<sup>258</sup>: Այդ ընթացքում անգլիական զոր-  
քերի ուղեկցությամբ Ղարաբաղ ժամանած Խ.Բ. Սուլթանովը փորձեց բա-  
նակցությունների և դրամի միջոցով ներազդել հայության դիրքորոշման  
վրա, սակայն համագումարը Շուշիի քաղաքապետին և Վահան Եպիսկո-  
պոսին արգելեց շփուսմները նրա հետ: Իր հերթին Սուլթանովի հետ ժամա-  
նած մայր Սոնկ Մեյսոնը Ազգային խորհրդին հայտնեց, որ Սուլթանովը  
կունենա քաղաքացիական զործերով հայ օգնական, նրան կից կգործի 3  
հայից, 3 մուսուլմանից ու անգլիական առաքելության մեկ ներկայացուց-  
չից բաղկացած խորհուրդ:

Փետրվարի 24-ին Ղարաբաղի Ազգային խորհրդի պատվիրակներ  
Վահան Եպիսկոպոսը և Գ. Բահաթյանը Թիֆլիսում և Բաքվում գեներալ-  
ներ Ֆորեստիե Ուոքերի և Թոմսոնի հետ հանդիպումների ժամանակ  
առաջարկեցին խնդրի լուծման փոխզիջումային մի շարք տարբերակներ,  
այն է՝ 1. խառը կառավարում հայ-մուսուլմանական խորհրդի միջոցով,  
որի գործունեությունը կվերահսկվեր Շուշիի անգլիական առաքելության  
ղեկավարի կողմից, 2. Ղարաբաղի միացում ԳԴ-ին, 3. Ղարաբաղում մինչև  
թուրքերի ներխուժումը գոյություն ունեցած կառավարման վերակառուց-  
մուն, Գայկական Ղարաբաղում անգլիական գեներալ-նահանգապետությու-  
յան հիմնում և այլն: Սակայն անգլիացիները, մերժելով այդ բոլոր տար-  
բերակները, սպառնում էին, որ իրենց առաջարկությունները չընդունելու  
դեպքում Ղարաբաղի հայությունը ոչ միայն խստորեն կպատժվեր, այլև  
լուրջ կասկածի տակ կդրվեին խաղաղ խորհրդատուրդում նրա ձգտում-  
ների բավարարման հնարավորությունները<sup>259</sup>:

Նման պայմաններում անգլիական իրամանատարությունն անցավ  
դիվանագիտական հարձակման Ղարաբաղի Ազգային խորհրդի վրա: Ղա-  
րաբաղի հայերի դիմադրությունը մեկուսացնելու համար Բաքու իրավի-  
րվեց Ազգային խորհրդի պատվիրակությունը, որին այլևս չթույլատրվեց

<sup>258</sup> Տե՛ս ՀԱԱ ֆ. 200, գ. 1, գ. 243, ք. 24; Յառաջ, #41, 1919 թ. մարտի 5; Մշակ #58, 59, 1919 թ. մարտի 16, 18; Ե. Իշխանեան, նշվ. աշխ., էջ 340-342, 355-356:

<sup>259</sup> ՀԱԱ ֆ. 200, գ. 1, գ. 243, ք. 24; գ. 243, ք. 37, գ. 271, ք. 10; Մշակ, #63, 1919 թ. մարտի 22: Սուլթանովը հայ ծառայողներին և ոստանիներին խտտաբանում էր ոռոմի վճարել՝ ԱԴԿ իշխանության ճա-  
նաչման պայմանով, սակայն համագումարն արգելեց նրանց դիմել այդ քայլին՝ խտտաբանով  
լուծել այդ հարցը: Տե՛ս Յառաջ, #41, 1919 թ. մարտի 5; Արև, #38, 1919 թ. մարտի 26; Ե. Իշխանե-  
ան, նշվ. աշխ., էջ 362; Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 148:

վերադառնալ Ղարաբաղ: Դրա նպատակն էր՝ մեկուսացնել Ազգային խորհրդի անդամներին երկրամասից՝ դրանով հույս ունենալով վերջ տալ տեղի բնակչության դիմադրությանը<sup>260</sup>: Գեներալ Թոմսոնին իր պաշտոնում փոխարինած գեդրայետ Շատլվորտն ապրիլի 3-ի իր հայտարարությամբ վերահաստատեց չորս գավառներում ԱԴԳ գեներալ-նահանգապետության հիմնումը<sup>261</sup>: Միաժամանակ անգլիական հրամանատարությունն սկսեց ճնշում գործադրել նաև Երևանի վրա՝ պարտադրելու համար հարցի լուծման իր տարբերակը: 1919 թ. մարտին Երևանում վարչապետ Ալ. Խատիսյանի հետ հանդիպման ժամանակ գեներալ Թոմսոնը բերեց Ղարաբաղի հարցը ԱԴԳ օգտին ժամանակավոր լուծման նոր փաստարկներ՝ շեշտելով այնտեղ ապաստանած հայ գաղթականներին պարենով ապահովման և արտաքին աշխարհի հետ Ղարաբաղը կապող հաղորդակցության ուղիների անվտանգության ապահովման անհրաժեշտությունը: Նա նշեց, որ Ադրբեջանը պատասխանատու է Շուշի-Եվլախ ճանապարհի համար, մինչդեռ Շուշիից Երևան տանող ճանապարհի չկա, հետևաբար ինքը չի կարող դիմել ԳԳ կառավարությանը Ղարաբաղը, ինչպես և Ջանգեզուրը կառավարելու առաջարկով: Ի պատասխան Ալ. Խատիսյանի այն առարկությանը, որ Ղարաբաղի հարցը քաղաքական, այլ ոչ թե գաղթականների հարց է, Թոմսոնը կրկին ընդգծեց այն դրույթը, որ կառավարման մուսուլմանների ընդգրկումը դեռ չի նշանակում մարդիկ հարցի վերջնական լուծում: Թոմսոնը նաև առաջարկում էր, որ Երևանը ներկայացուցիչ ունենար Շուշիի անգլիական առաքելությանը կից<sup>262</sup>: Երևանն օգտվեց Ղարաբաղում իր ներկայացուցչին նշանակելու Թոմսոնի առաջարկությունից և այդ պաշտոնում նշանակեց Մ. Արզումանյանին, որը սակայն շուտով վտարվեց Ղարաբաղից՝ հրաժարվելով կատարել անգլիացիների պահանջը և ԳԳ անունից ճանաչել ԱԴԳ իշխանությունը Ղարաբաղում և Ջանգեզուրում: Գեներալ Շատլվորտը գնում էր նույնիսկ խաբեության՝ փորձելով Արզումանյանին ու Ջանգեզուրի Ազգային խորհրդին համոզել, որ թե ԳԳ կառավարությունը և թե Փարիզի խորհրդաժողովը համաձայնություն էին տվել Ղարաբաղը և Ջանգեզուրը ԱԴԳ իշխանության տակ անցնելուն: Արզումանյանին փոխարինեց իշխան Դովսեպ Արղուբեյանը<sup>263</sup>:

Մինչ անգլիական հրամանատարությունը փորձում էր դիվանագիտական միջոցներով ապահովել Բաքվի իշխանության հաստատումը Ղարաբաղում և Ջանգեզուրում, ԱԴԳ կառավարությունն սկսեց նախապատրաստվել դեպքերի անցանկալի զարգացմանը ու գործեր կենտրոնացնել

<sup>260</sup> Տե՛ս Ե. Իշխանեան, նշվ.աշխ., էջ 357-359, 374-375; Աշխատատը, #67, 78, 80, 1919 թ. ապրիլի 5, 24, 26; Հ. Հարությունյան, նշվ.աշխ., էջ 158-159: Ղարաբաղից վտարվեցին Լ. Ջարաֆյանը, Գ. Բարսեղյանը, Ազգային խորհրդի փոխնախագահ Ա. Մելիք Հովսեփյանը, խորհրդի անդամ Հ. Բահարյանը, Ղարաբաղի նախկին կառավարության նախագահ Ե. Իշխանյանը:

<sup>261</sup> Տե՛ս Աշխատատը, #69, 1919 թ. ապրիլի 9; R.G. Hovhannisian, նշվ.աշխ., Vol. 1, p.170: Տե՛ս ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.42, ք.53-54 և Աշխատատը, #79, 1919 թ. ապրիլի 25:

<sup>262</sup> Տե՛ս ՀԱԱ ֆ.200, ց.1, գ.243, ք.71-73; ֆ.276, ց.1, գ.120, ք.54-61; ֆ.276, ց.1, գ.42, ք.59; Աշխատատը, #68, 1919 թ. ապրիլի 8; Ա. Խատիսյան, նշվ.աշխ., էջ 143; Գ. Махмурия, նշվ.աշխ. стр.59-60:

<sup>263</sup> Տե՛ս ՀԱԱ ֆ.200, ց.1, գ.243, ք.93 և գ.309, ք.121-123; Наше время, #105, 1919 թ. հունիսի 12:



Ղարաբաղի ռազմավարական կարևոր կետերում՝ Ասկերանում, Ջարուղում և այլն, ինչը լռելյայն ընդունվում էր անգլիացիների կողմից<sup>264</sup>:

ԱՂԴ կառավարության և անգլիական հրամանատարության համակարգված այս գործունեությունը ևս արդյունք չտվեց: Ղարաբաղի հայերի 1919 թ. ապրիլի 23-29-ին կայացած 5-րդ կամագումարը, որին ներկա էին գեներալ Շատլվորտը, և Խ.թ. Սուլթանովը, վճռականապես մերժեց Ղարաբաղի որևէ վարչական առնչությունը Բաքվի հետ ու ընդգծեց, որ վերջինի կողմից իր իշխանության բռնի հաստատումը հղի է ազգամիջյան բախումներով: Համագումարն, ընդգծելով ԱՂԴ կողմից երկրամասի շրջափակումը և հայերի բնաջնջման ձգտումը, հրաժարվում էր ճանաչել ԱՂԴ իշխանությունը: Գեներալ Շատլվորտի հավաստիացումները, թե ԱՂԴ-ն ընդամենը ուզում է երկրամասում կարգուկանոն մտցրնել ու բացել ճանապարհները և մտադիր չէ նվաճել Ղարաբաղը, արդյունք չտվեցին<sup>265</sup>:

Դեպքերի զարգացումն այլ ուղիով ընթացավ Ջանգեզուրի գավառում, որտեղից Անդրանիկի ուժերի հեռանալուց հետո ԳԴ-ն իր ներկայացուցիչ Ա. Շահմազյանին նշանակեց Ջանգեզուրի և Ղարաբաղի պետական կոմիսար՝ իր իշխանությունն ամրապնդելու և ԱՂԴ-ին հակադրելու նպատակով<sup>266</sup>: Թեև Շահմազյանը նշանակվել էր Ղարաբաղի և Ջանգեզուրի գեներալ կոմիսար, սակայն նրա իշխանությունը սահմանափակվեց միայն Ջանգեզուրի գավառով: Պաշտոնական մակարդակով Երևանը հերքում էր Շահմազյանի ենթակայությունն իրեն և ընդհանրապես՝ իր ներգրավվածությունը Ջանգեզուրի գործերում՝ ձգտելով խուսափել դաշնակիցների դժգոհությունից: Անգլիական հրամանատարությունն այստեղ ևս ճնշում էր գործադրում ԳԴ-ի և Ջանգեզուրի Ազգային խորհրդի վրա՝ ԱՂԴ իշխանությունը պարտադրելու նպատակով: 1919 թ. ապրիլին և մայիսին Ջանգեզուրում եղան գեներալ Շատլվորտը և Շուշիի անգլիական առաքելության ղեկավար մայոր Մոնկ Մեյսոնը, որոնք պահանջում էին Ջանգեզուրի Ազգային խորհրդից քոչվորներին բաց թողնել լեռները, ճանաչել ԱՂԴ իշխանությունը՝ հակառակ դեպքում սպառնալով ուժ կիրառել: Շատլվորտն անգամ զեաց բացահայտ խաբրոնալով՝ պնդելով, թե իբր ԳԴ կառավարությունը և խաղաղության խորհրդաժողովն արդեն համաձայնություն տվել էին Ջանգեզուրը ԱՂԴ-ին անցնելուն: Անգլիացիները պահանջում էին նաև, որ Շահմազյանը հեռանար գավառից<sup>267</sup>:

<sup>264</sup> Տե՛ս Աշխատատր, #50, 61, 62, 1919 թ. մարտի 16, 29, 30:

<sup>265</sup> Տե՛ս Ե. Իշխանեան, նշվ. աշխ., էջ 395-404; Աշխատատր, #87, 99, 1919 թ. մայիսի 6, 20; *Наше время*, #82, 1919 թ. մայիսի 4:

<sup>266</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.243, ք.52; Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 85-87; R.G. Hovannisian, նշվ. աշխ., Vol. 1, p.192; Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 146; Մշակ, #51, 1919 թ. մարտի 7:

<sup>267</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.309, ք.15, 25; Ե. Իշխանեան, նշվ. աշխ., էջ 411, 413-414; Գ. Махмурач, նշվ. աշխ. стр. 71-72; Ռ. Գրիգորյան, Փաստաթղթեր Ջանգեզուրի 1918-1919 թթ. ինքնապաշտպանական կռիվների մասին, Լրաբեր հասարակական գիտությունների, # 6, Երևան, Հայկական ԽՍՀ Գիտությունների Ակադեմիայի հրատարակչություն, 1989, էջ 84-86; Լրաբեր հասարակական գիտությունների, # 2, 2001, էջ 75-76:

1919 թ. մայիսին թիֆլիսում ԳՂ վարչապետ Խատիսյանի հետ հանդիպման ժամանակ գեներալ Թոմսոնը կատեգորիկ պահանջեց չմիջամբարել Դարաբաղի գործերին, հետ կանչել Շահմազյանին Դարաբաղից, բաց թողնել քոչվորներին ու կոչ անել տեղի հայությանը չդիմադրել ԱԳՀ իշխանության հաստատմանը՝ այդ պահանջների կատարումով պայմանավորելով հայ գաղթականների վերադարձը Շարուր-Նախիջևան և այնտեղ ԳՂ իշխանության հաստատումը: Հանդիպման ժամանակ ընթերցվեց գեներալ Շատլվորտի զեկույցն, ըստ որի՝ Դարաբաղում հայկական ուժերը ղեկավարվում էին հայ սպաների կողմից, և հայերի կողմից ընչի կանխման արդյունքում մուսուլմանները հայտնվել էին ծանր վիճակում: Խատիսյանը կրկին հերքեց ԳՂ կառավարության մասնակցությունը Դարաբաղի և Ջանգեզուրի գործերին՝ ընդգծելով, որ այդտեղ հայերի շարժումը պայմանավորված էր ոչ թե Երևանի գործակալների գործունեությամբ, այլ տեղի հայության կամաարտահայտությամբ: Նա նաև շեշտում էր, որ Նախիջևանի փախստականների վերադարձը չթույլատրելը և այդ հարցը Դարաբաղի հարցի հետ կապելը հավասարազոր էր քաղաքականության սկզբունքներին<sup>268</sup>:

Սակայն անգլիացիների դիվանագիտական ճնշումը որևէ արդյունք չտվեց, իսկ Բաքուն չունեւր զինված ուժեր Ջանգեզուրի ներսում, ինչպես Դարաբաղի դեպքում, և դա կանխորոշեց Ջանգեզուրի համար պայքարի ելքը. հունիսին տապալվեց ԱԳՀ-ի փորձը՝ զենքի ուժով սրավելու գավառը<sup>269</sup>: Իր աջքի առջև ունենալով Դարաբաղի փորձը՝ Մուլթանովը, ԱԳՀ կառավարությանը գրելով Ջանգեզուրի հարցում անգլիացիների ձախողման մասին, նշում էր, որ զորքի և զինամթերքի բացակայության պայմաններում իր մնալը Դարաբաղում անիմաստ է ու պահանջում էր անհասպաղ ուղարկել զինված ուժեր և զենք<sup>270</sup>:

Բախվելով Ջանգեզուրի կազմակերպված դիմադրությանը՝ անգլիացիները ևս ստիպված էին ճանաչել ստեղծված ստատուս քվոն. մայիսի 31-ին Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Զորին ԳՂ վարչապետին հայտնեց, որ ինքը ԱԳՀ վարչապետին կտեղեկացնի Ջանգեզուրի նկատմամբ իր իշխանության տարածումից ձեռնպահ մնալու անհրաժեշտության մասին<sup>271</sup>:

Փաստորեն անգլիական հրամանատարությունն սպառեց Դարաբաղում և Ջանգեզուրում ԱԳՀ իշխանության հաստատման խաղաղ միջոցները: Վերադառնալով Բաքու՝ գեներալ Շատլվորտը համաձայնություն տվեց ԱԳՀ իշխանությունների կողմից Դարաբաղում քաղաքական ձեռքարկությունների անցկացմանը և նրա շրջափակմանը<sup>272</sup>: ԱԳՀ կառավարության կողմից կոշտ միջոցների դիմելը պայմանավորված էր ոչ

<sup>268</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.42, ք.77; ֆ.200, ց.1, գ.309, ք.34, 36-38:

<sup>269</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.42, ք.218; Наше время, #131, 1919 թ. հուլիսի 15:

<sup>270</sup> Տե՛ս Нагорный Карабах в 1918-1923 гг., стр.210:

<sup>271</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.309, ք.102:

<sup>272</sup> Տե՛ս R.G. Hovhannisian, նշվ. աշխ., Vol. 1, p.172; Գ. Махмурия, նշվ. աշխ. стр.69:



միայն անգլիական հրամանատարության թողստվությամբ, այլև ԱԴԳ ներքաղաքական իրավիճակով. երկրի քաղաքական ուժերն իշխող կուսակցությունից՝ Մուսավաթից, պահանջում էին վճռական գործողություններ Ղարաբաղի հարցում: Ուսուրբելովի կառավարության 1919 թ. ապրիլի 14-ի հռչակագրում չէր խոսվում Ղարաբաղի մասին, թեև կային դրույթներ Լեւոնորանի, Երևանի և Թիֆլիսի նահանգների մասերի մասին: Դա անմիջապես առաջ բերեց մի շարք քաղաքական ուժերի, մասնավորապես Իթթիհադի մեղադրանքն առ այն, որ նոր կառավարությունն անուշադրության էր մատնում Ղարաբաղի հարցը: Ի պատասխան, Մուսավաթի առաջնորդներից Ռատուզադեն հայտնում էր, որ մի կառավարություն, որը հավակնում էր Երևանի նահանգի մի մասին, չէր կարող գնալ դեպի Երևանի նահանգ, առանց անցնելու Ղարաբաղի լեռների վրայով: «Ղարաբաղի խնդիր չկա, ինչպես և չկա Բաքվի խնդիր»<sup>273</sup>:

Անհաջողության մատնվելով անգլիական հրամանատարության միջոցով Ղարաբաղին և Ձանգեզուրին տիրանալու փորձերում՝ Ադրբեջանն անգլիացիների կողմից փաստացի ամենաթողության պայմաններում գնաց զինված առճակատման ուղիով. ուժեղացվեց Ղարաբաղի տնտեսական շրջափակումը<sup>274</sup>, իսկ 1919 թ. մայիսի 25-ին Խ.Ք. Սուլթանովի հրամանով ադրբեջանական զորքերը շրջապատեցին Շուշին՝ զբաղեցնելով հայկական թաղամասի շուրջ գտնվող բարձրադիր դիրքեր: Քաղաքի հայույթունը, հավաքվելով բրիտանական ռազմական առաքելության շենքի մոտ, խնդրեց նրա պետին կանխել ադրբեջանական զորքերի հարձակումը: Սակայն հունիսի 4-ին սկսվեց ադրբեջանցիների հարձակումը: Սուլթանովը վերջնագրով պահանջեց, որ Ղարաբաղի Դայոց Ազգային խորհրդի անդամները ձերբակալվեն և հանձնվեն իրեն: Չնայած բրիտանական առաքելության ղեկավարի ջանքերին, ընդհարումը շարունակվեց, և անգլիական առաքելության ամվճռականության պայմաններում Սուլթանովն իրականացրեց Շուշիի մոտակա Կայբալիքենդ գյուղի բնակչության ցարդը (մոտ 600 հոգի)<sup>275</sup>:

Պաշտոնական Բաքուն հերքեց իր նախահարձակ լինելը՝ պնդելով, որ հունիսի 4-ին տեղի էր ունեցել հայերի հարձակումը, ինչն ստիպել էր գեներալ-նահանգապետին դիմել գեներալ Լուսի՝ կարգուկանոնը վերականգնելու համար: Ըստ որում, շեշտվում էր, որ հայերի զինված ելույթը վաղորոք էր ծրագրվել Ղարաբաղի Դայոց Ազգային խորհրդի անդամների կողմից, որոնք բրիտանական առաքելության աջակցությամբ ձերբակալվել և վտարվել էին Ղարաբաղից<sup>276</sup>:

<sup>273</sup> Տե՛ս Աշխատատր, #83, 91, 1919 թ. ապրիլի 30, մայիսի 10:

<sup>274</sup> Տե՛ս *Наше время*, #90, 99, 1919 թ. մայիսի 21, հունիսի 4; Հ. Հարությունյան, *ՁՂՎ.աշխ.*, էջ 167:

<sup>275</sup> Անգլիական զորքերն զբաղեցրին հայերի խրամատները՝ ընդհարումը դադարեցնելու նպատակով: Այդ ժամանակ նրանք, ենթարկվելով ադրբեջանցիների հարձակմանը, տվեցին մեկ սպանված և մեկ վիրավոր: Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.291, ք.449; Աշխատատր, #112, 1919 թ. հունիսի 8; Ե. Իշխանեան, *ՁՂՎ.աշխ.*, էջ 431, 434-435, 436-441, 445-446; *Наше время*, #113, 1919 թ. հունիսի 22; Հ. Հարությունյան, *ՁՂՎ.աշխ.*, էջ 170-172; Գ. Мохмурян, *ՁՂՎ.աշխ. стр.77*:

<sup>276</sup> Տե՛ս Աշխատատր, #115, 1919 թ. հունիսի 12:

1919 թ. հունիսի 6-ին ՀՀ ԱԳՆ-ը ԱԴՀ ԱԳՆ-ին ուղղված հայտագրում բողոք էր հայտնում Կայսրալիքենդի հայության կոտորածի դեմ և վերահաստատում էր դիրքորոշումը Սուլթանովին Ղարաբաղում գեներալ-նահանգապետի պաշտոնում նշանակման և այնտեղ աղբյուրաբանական գործերի տեղակայման անընդունելիության վերաբերյալ<sup>277</sup>: Պատասխան հայտագրում Բաքուն հստակ պնդում էր, որ ՀՀ պաշտպանության բողոքները Սուլթանովի քաղաքականության և Ղարաբաղում ԱԴՀ գործերի տեղակայման դեմ միջամտություն են ԱԴՀ ներքին գործերին:

Աղբյուրաբանական պաշտոնական մամուլն այդ շրջանում ամեն կերպ շեշտում էր ԱԴՀ իշխանությունների խաղաղասիրական քաղաքականությունը և հայերի ու մուսուլմանների խաղաղ գոյակցության անհրաժեշտությունը, նրանց տնտեսական ընդհանուր շահերը<sup>278</sup>: «Азербайджань»-ում հրապարակված Սուլթանովի զեկույցում պաշտոնական Բաքուն կըրկին իր գործողություններն արդարացնում էր քույրերի իրավունքների պաշտպանության անհրաժեշտությամբ: Այսպես, նշվում էր, որ Ղարաբաղում և Շուշիում ուժեղ պահակակետերի ստեղծման նպատակն էր՝ ապահովել քույրերի խաղաղ անցումը և բացառել դրսից զինված մարդկանց մուտքը Շուշի, ինչը հանգեցրել էր վրդոված հայերի կողմից երեք զինվորի սպանությանը: Սուլթանովը գրում էր, որ վերջին փաստը դժգոհություն էր առաջ բերել մուսուլմանական բնակչության և գործի կողմից, և սկսվել էր ընդհարում, ու իրեն հազիվ էր հաջողվել զսպել նրանց Շուշիի հայկական մասի լրիվ ոչնչացումից: Իսկ Կայսրալիքենդի ջարդը նա արդարացնում էր քույրերների վրա հարձակումով, ինչի հետևանքով վերջիններն անվտանգ անցումն ապահովելու համար ստիպված էին եղել ոչնչացնել գյուղը<sup>279</sup>:

Կայսրալիքենդի դեպքերը հետաքննելու համար Ղարաբաղ մեկնեց ԱԴՀ խորհրդարանի չորս ներկայացուցիչներից (Չուբարյան, Խոջայան, Ռուստամբեկով, Կարաբեկով) բաղկացած հանձնաժողովը: Հանձնաժողովի վերադառնալուց հետո ԱԴՀ խորհրդարանի նիստում Չուբարյանը հանդես եկավ զեկույցով, ըստ որի՝ Շուշիի և Կայսրալիքենդի դեպքերը նախապատրաստվել և իրականացվել էին Սուլթանովի կողմից ԱԴՀ իշխանությունների թողտվությամբ<sup>280</sup>: Մինչդեռ հանձնաժողովի աղբյուրաբանի անդամներն իրենց զեկույցում նշում էին, որ այդ իրադարձությունները տարերային էին և մեղավորներ չկային<sup>281</sup>: Չուբարյանին հաջորդեց վարչապետ Ռուստամբեկովի ելույթը, որը հայ պատգամավորի զեկույցը որակեց, որպես փորձ՝ արդարացնելու հայերի հանցավոր արարքները՝ հայե-

<sup>277</sup> Տե՛ս ՀԱԱ ֆ. 200, գ. 1, գ. 291, ք. 496:

<sup>278</sup> Տե՛ս ՀԱԱ ֆ. 200, գ. 1, գ. 291, ք. 548; Наше время, #116, 1919 թ. հունիսի 26:

<sup>279</sup> Տե՛ս ՀԱԱ ֆ. 200, գ. 1, գ. 291, ք. 502-503 և Наше время, #113, 1919 թ. հունիսի 22; Աշխատատար, #115, 1919 թ. հունիսի 12:

<sup>280</sup> Տե՛ս ՀԱԱ ֆ. 200, գ. 1, գ. 309, ք. 226-232: Ձեկույցի տեքստն ամբողջությամբ տես՝ Наше время #134, 137 և 138, 1919 թ. հունիսի 18, 22-23:

<sup>281</sup> Տե՛ս Наше время, #135, 1919 թ. հունիսի 19:



րի կողմից ադրբեջանցի զինվորների զինաթափումը, հինգ մուսուլման ընտանիքների անհայտ կորելը և այլն: Ուսուրբեկովը գտնում էր, որ զեկույցի նպատակն էր՝ մեղադրել զեներալ-նահանգապետին և ադրբեջանական զորքերին այդ դեպքերի մեջ, ինչն իրականում այդպես չէր: Ելույթի վերջում ԱՂԳ վարչապետը նույնիսկ շնորհակալություն էր հայտնում ԱՂԳ զորքերին, որոնք պաշտպանում էին բնակչության կյանքը և գույքը<sup>282</sup>: Իր ելույթում արդարացնելով Սուլթանովին՝ Ուսուրբեկովը նշում էր, թե նա պետք է հիմար լիներ, եթե նման բան աներ: Նախ, նա չէր կարող մոռանալ, որ ճանապարհները լիքն են քուչվորներով, և դրանով նա վտանգի է ենթարկում նրանց: Երկրորդ, եթե նա ուզենար ջարդ կազմակերպել, այլ վայր կգտներ, այլ ոչ թե կոտորած կաներ անգլիական հրամանատարության աչքի առաջ: Եվ վերջապես, եթե նա ջարդի նպատակ ունենար, սպա այն կկազկակերպեր ողջ Ղարաբաղում՝ Եվլախից մինչև Գերուսի (Գորիս): Նշելով, որ ադրբեջանական զորքերին մեղադրում են Կայսալիքենդի բնակչությանը չպաշտպանելու մեջ՝ նա փաստորեն կրկին դրա մեղավոր էր համարում հայությանը, քանի որ ադրբեջանական զորքը չէր կարող ցրվել հայկական գյուղերով մեկ՝ նույնիսկ չիմանալով, թե իրեն ինչպես կընդունեն<sup>283</sup>: Արդյունքում խորհրդարանն ընդունեց բանաձև, որի համաձայն՝ տեղական իշխանությունների, մասնավորապես, զեներալ-նահանգապետի գործողություններում հակասօրինական ոչինչ չկար, և հավանություն էր տրվում կառավարության գործունեությանն իրավիճակի կարգավորման ուղղությամբ<sup>284</sup>:

Սուլթանովի քաղաքականությունն արժանի հակահարված չստացավ անգլիացիների կողմից, թեև նրանք ևս տեղյակ էին, որ Կայսալիքենդի կոտորածը նախապատրաստվել էր Սուլթանովի կողմից: Բրիտանական գնդապետ Գլատենբերգը զեներալ Շատլվորտին ուղղված իր զեկույցում նման հետևության էր հանգել, քանի որ Կայսալիքենդի կոտորածից երկու օր առաջ Սուլթանովը քրդեր էր վերաբնակեցրել այդ շրջանում: Գնդապետը գտնում էր, որ Սուլթանովը մեղավոր էր, քանի որ կարող էր կանխել այդ դեպքերը, և հետևաբար, նա պետք է պատժվեր<sup>285</sup>: Ավելին, անգլիական հրամանատարությունն ուժեղացրեց դիվանագիտական ճնշումը ԳԳ կառավարության վրա՝ պահանջելով ճանաչել ԱՂԳ ժամանակավոր իշխանությունը Ղարաբաղի վրա: Գեներալ Քորին ԳԳ վարչապետ Խատիսյանին ուղղված հեռագրում շեշտվում էր, որ Ջանգեզուրի վրա ԱՂԳ իշխանության չտարածվելն արդեն իսկ մեծ զիջում էր, որը չգնահատվեց ԳԳ կառավարության կողմից: Միաժամանակ նա կատեգորիկ կերպով նշում էր, որ չէր կարող թույլ տալ, որ ԳԳ կառավարությունը

<sup>282</sup> Տե՛ս ՀՄԼ ֆ. 200, ց. 1, գ. 344, ք. 119:

<sup>283</sup> Տե՛ս նաև *Наше время*, #112, 1919 ք. հունիսի 21:

<sup>284</sup> Տե՛ս ՀՄԼ ֆ. 200, ց. 1, գ. 344, ք. 110:

<sup>285</sup> Տե՛ս *Наше время* #120, 125, 1919 ք. հուլիսի 1, 1919 ք. հուլիսի 6; Աշխատառք, #129, 1919 ք. հունիսի 29; Р. Казанджян, К предыстории самоопределения..., стр. 10-11; Գ. Գալսյան, նշվ. աշխ., էջ 257:

վարչական որևէ իրավունք ունենար Ղարաբաղում<sup>286</sup>։ Փաստորեն, ստեղծվել էր քաղաքական մի իրավիճակ, երբ դաշնակիցները բույլ էին տալիս Բաքվին շարունակել ուժի քաղաքականությունը Ղարաբաղում, և Ռուսաբեկովի կառավարությունն ընթացեց իր համար ստեղծված բարենդպաստ դրությունը։

Ստեղծված ծանր պայմաններն ստիպեցին Ազգային խորհրդին ընդունել Սուլթանովի առաջարկությունը համագումար գումարելու և բանակցություններ սկսելու վերաբերյալ<sup>287</sup>։ 1919 թ. հունիսի 29-ին Շոշ գյուղում գումարվեց Ղարաբաղի հայության 6-րդ համագումարը։ Հունիսի 30-ին ժամանեցին ԱԳՀ կառավարության ներկայացուցիչներ Ռուստամբեկովը և Շահսուվարովը, որոնց հետ հանդիպման արդյունքում որոշվեց, որ համագումարը պատվիրակություն կուղարկի Բաքու՝ բանակցությունները շարունակելու համար<sup>288</sup>։

Համագումարի մշակած ժամանակավոր համաձայնագրի նախագծի համաձայն՝ Ջևանշիրի, Շուշի, Ջերբախի գավառների վիճելի մասերը ժամանակավոր՝ մինչև խաղաղության վեհաժողովի վերջնական որոշումը, մտնում էին ԱԳՀ կազմի մեջ՝ կազմելով առանձին միավոր։ Ղարաբաղի գեներալ-նահանգապետին կից ստեղծվում էր 3 հայերից և 3 մուսուլմաններից կազմված խորհուրդ՝ դաշնակիցների հրամանատարության ներկայացուցչի մասնակցությամբ։ Խորհուրդն իրավունք էր ստանում վերահսկել գեներալ-նահանգապետի գրասենյակը և նախաձեռնությամբ հանդես գալ կառավարման բոլոր հարցերով։ Գեներալ-նահանգապետի բոլոր հրամանները պետք է ներկայացվեին խորհրդի հավանությանը։ Հայերի կամ մուսուլմանների կոմպակտ բնակության շրջաններում պաշտոնյաները նշանակվելու էին համապատասխանաբար նրանց ներկայացուցիչներից, իսկ խառը բնակության շրջաններում՝ մեծամասնությունն կազմող ազգի ներկայացուցիչներից։ Վերոհիշյալ շրջաններում գործ էր տեղակայվելու, այլ ստեղծվելու էր հայ-մուսուլմանական խառը միլիցիա։ Ըստ որում, բնակչությունը էր զինաթափվելու։ Հայությունն ստանալու էր մշակութային ինքնորոշման իրավունք<sup>289</sup>։

Այսպիսով, Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի նախագծով մարզը ստանալու էր չափազանց լայն ինքնավարություն։ ԱԳՀ գեներալ-նահանգապետը ոչ միայն իր տրամադրության տակ էր ունենալու զինված ուժեր՝ այդպիսով զրկվելով ռազմական գերակայությունից, այլև նրա գործունեությունը վերահսկվելու էր խորհրդի կողմից։ Այսինքն՝ Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղում էր ունենալու ռազմական գերիշխա-

<sup>286</sup> Տե՛ս ՀԱԱ ֆ. 200, գ. 309, ք. 156-157։

<sup>287</sup> ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը գրում էր, որ Ղարաբաղի հայկական գյուղերը պաշարվել էին և չէին կարողանում բերքահավաք կատարել, և հուսալքված ժողովուրդը հակվում էր ԱԳՀ իշխանությունը ճանաչելուն։ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, ք. 166։

<sup>288</sup> Տե՛ս ՀԱԱ ֆ. 200, ց. 1, գ. 309, ք. 212։ Սուլթանովը, որի նախաձեռնությամբ էլ գումարվել էր համագումարը, ոչ միայն որևէ ընդհատաբ քայլ չարեց նրա հանդեպ, այլև նույնիսկ չմասնակցեց նրա աշխատանքներին։

<sup>289</sup> Համաձայնագրի նախագծի ամբողջական դրույթները տես՝ ՀԱԱ ֆ. 200, ց. 1, գ. 309, ք. 214։



նություն, իսկ նրա քաղաքական իշխանությունը զգալիորեն սահմանափակվելու էր: Այս ամենի պատճառով Բաքվում Ղարաբաղի պատվիրակության հետ բանակցությունների ժամանակ ԱԴԳ կառավարությունը չընդունեց առաջարկված պայմանները՝ առաջ քաշելով իր համար ավելի ձեռնտու և Ղարաբաղի ինքնավարությունը սահմանափակող պայմաններ: Ավելին, պատվիրակությանը ԳԳ դիվանագիտական աջակցությունից զրկելու նպատակով արգելվեց ԳԳ դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանի մասնակցությունը բանակցություններին այն պատճառաբանությամբ, որ բանակցությունների առարկան ԱԴԳ ներքին գործն էր<sup>290</sup>:

1919 թ. օգոստոսի 12-ին Շոշ գյուղում գումարվեց Ղարաբաղի 7-րդ համագումարը: Ձրկված լինելով ԳԳ քաղաքական և ռազմական աջակցությունից, ենթարկվելով Բաքվի ճնշմանը, բրիտանական հրամանատարության կողմից Ադրբեջանի բացահայտ հովանավորության պայմաններում նա ստիպված էր ընդունել Բաքվի առաջադրած պայմանները: Դաճագումարի աշխատանքներն ընթանում էին Շոշի վրա ուղղված ադրբեջանական հրանոթների փողերի ներքո: Խ.բ. Սուլթանովը նաև փակել էր Շուշի-Եվլախ ճանապարհը ու վերջնագրով պահանջել էր համագումարից 48 ժամում ընդունել Բաքվում մշակված համաձայնագրի պայմանները: Ըստ որում, Շոշում ներկա էին համագումարի 130 պատգամավորից միայն 62-ը, որոնցից 10-ը ձեռնպահ մնացին համաձայնագրի օգտին քվեարկության ժամանակ<sup>291</sup>: Օգոստոսի 22-ին Շուշիում ստորագրվեց համաձայնագիր ԱԴԳ կառավարության և Ղարաբաղի Դայոց Ազգային խորհրդի միջև, որով Լեռնային Ղարաբաղը ժամանակավորապես ընդունում էր Ադրբեջանի իշխանությունը, մինչև խաղաղության վեհաժողովի վերջնական որոշումը: Շուշիի, Ջևանշիրի և Կարյազինի գավառներն առանձնացվում էին զեներալ-նահանգապետության առանձին վարչական միավորի մեջ և լեռնային՝ հայկական հատվածում վարչությունը նշանակվում էր հայերից: Երեք հայերից և երեք մուսուլմաններից կազմվելիք խորհուրդն իրավունք ուներ վերահսկել զեներալ-նահանգապետության գորսենյակը, սակայն՝ առանց վերջինի գործողություններին միջամտելու: Ազգամիջյան հարաբերություններին վերաբերող սկզբունքային հարցերը չէին կարող իրագործվել, առանց խորհրդի նախնական քննարկման: Խորհուրդը նաև իրավունք ուներ հանդես գալ նախաձեռնությամբ զեներալ-նահանգապետության կազմակերպման և կառավարման հարցերում: Ղարաբաղի հայությունը մշակութային ինքնորոշման իրավունք էր ստանում: Ղարաբաղի 6-րդ համագումարի մշակած համաձայնագրի նախնական նախագծի համեմատ Ադրբեջանի օգտին լուրջ փոփոխություն էր այն, որ Խանքենդիում (Ստեփանակերտ) և Շուշիում տեղակայվելու էին ադրբեջանական կայազորներ: Սակայն մյուս կողմից, Շուշիի, Ջևանշիրի, Կարյազինի գավառների հայկական՝ լեռնային գոտում գորա-

<sup>290</sup> Տե՛ս ՀԱՄ ֆ. 200, ց.1, գ.344, ք.170:

<sup>291</sup> Տե՛ս Слово, # 7, 1919 թ. օգոստոսի 28; Հ. Հարությունյան, նշվ.աշխ., էջ 180-182:

մասերի ամեն մի տեղաշարժ կարող էր իրականացվել միայն խորհրդի անդամների երկու երրորդի համաձայնությամբ: Բնակչության զինաթափումը հետաձգվելու էր մինչև Ղարաբաղի հարցի լուծումը խաղաղության վեհաժողովում<sup>292</sup>:

ԱԴԴ խորհրդարանում հանդես գալով իր կառավարության ծրագրային հայտարարությամբ՝ վարչապետ Ուսուրբեկովը Ղարաբաղը բնորոշեց, որպես Ադրբեջանի հոգի՝ շեշտելով, որ Ղարաբաղի հարցը լուծվեց խաղաղ ճանապարհով՝ «Բացառելով միայն Կայսալիբենդի դեպքը, որի համար մենք շատ ցավում ենք, մի՞թե Ղարաբաղի բարդ հարցը չլուծվեց խաղաղ ճանապարհով՝ ընդունելով հայկական ազգային փոքրամասնության մշակութային իրավունքների ճանաչման պայմանը և նրան կառավարության հովանու տակ վերցնելով»<sup>293</sup>:

ԱԴԴ պաշտոնական մամուլն անհապաղ սկսեց քարոզչական նպատակներով օգտագործել օգոստոսի 22-ի համաձայնագիրը՝ այն ներկայացնելով՝ որպես Ադրբեջանի տարածքում ազգային փոքրամասնությունների հանդեպ «խաղաղասիրական քաղաքականության և ազգային խնդրականության բացակայության» ապացույց: «Աзербайджан» թերթը, խեղաթյուրելով Ղարաբաղի հայության տրամադրությունները, նշում էր, որ նրանք «գիտակցեցին, որ առանց դաշտային Ղարաբաղի և ողջ Ադրբեջանի հետ քաղաքական ու տնտեսական կապի և քաղաքական հարաբերությունների, հնարավոր չէ խաղաղ կյանքը: Ուստի նրանք անիծեցին Երևանի բանասարկությունները և կանգնեցին Ադրբեջանի հետ քաղաքական հարաբերությունների ուղու վրա»<sup>294</sup>:

Ամփոփելով՝ պետք է նշենք, որ 1919 թ. օգոստոսի 22-ի համաձայնագիրը խոշոր քաղաքական հաջողություն էր Ադրբեջանի համար: Երկար ամիսների դիվանագիտական և ռազմական պայքարից հետո Ղարաբաղը թեկուզ և ժամանակավորապես ընդունեց Բաքվի գերիշխանությունը: Իսկ ճկուն քաղաքականություն վարելու դեպքում ԱԴԴ կառավարությունը հնարավորություն էր ստանում անցումային այդ կարգավիճակը վերածել մշտականի: Այդ հաջողությունը Բաքուն ձեռք բերեց՝ դաշնակիցների միջնորդությունը զուգակցելով իր ձեռնարկած ռազմաքաղաքական և տնտեսական միջոցառումների հետ, այն է՝ տնտեսական շրջափակումը, Ղարաբաղի ռազմավարական կետերում կայազորների տեղակայումը, Շուշիի ու Կայսալիբենդի քարոզը և հայության այլ բռնաճնշումները:

Սակայն մյուս կողմից հստակ էր, որ Ղարաբաղի նկատմամբ ԱԴԴ լիակատար ինքնիխանության մասին խոսք գնալ չէր կարող: Համաձայնագիրն ուներ սոսկ ժամանակավոր բնույթ, և երկրամասի կարգավիճակի հարցի լուծումը թողնում էր խաղաղության խորհրդաժողովին:

Նկատի ունենալով, որ այդ շրջանում արդեն Շարուրի և Նախիջևանի մուսուլմաններն ապստամբել էին և իրենց վերահսկողության տակ էին

<sup>292</sup> Համաձայնագրի ամբողջական տեքստը տես՝ ՀԱՄ ֆ. 200, ց.1, գ.50, ք.102:

<sup>293</sup> Տե՛ս ՀԱՄ, ֆ.278, ց.1, գ.4, ք.14-16:

<sup>294</sup> Տե՛ս Աзербайджан, #182, 1919 թ. օգոստոսի 28:



վերցրել այդ գավառները, Ադրբեջանին մնում էր ընդամենը կոտրել Ջանգեզուրի հայության դիմադրությունը և Աղղամից մինչև Ղամարլու կստեղծվեր ադրբեջանական գերիշխանության լայնատարած գոտի, որը մի կողմից՝ Հայաստանը կանջատեր Պարսկաստանից, իսկ մյուս կողմից՝ Ադրբեջանը կկապեր Արարատյան դաշտավայրի, Սուրմալուի գավառի, Կարսի մարզի մուսուլմանաբնակ շրջանների և Մրանց վրայով՝ Թուրքիայի հետ:

**2.4 ԱՂՅ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՆՃԱՆԳԻ ՄՈՒՍՈՒՄՆԱԲԱՆԱԿ ԵՐԱՆՆԵՐՈՒՄ ԻՐ ՈԱՋՄԱՐԱՔԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ**

Անդրկովկասից թուրքական զորքերի նահանջից հետո, ի թիվս այլ տարածքների, Ադրբեջանը բարձրացրեց նաև Բաթումի պայմանագրով Թուրքիային անցած Շարուր-Նախիջևանի, Սուրմալուի գավառի, Երևանի ու Էջմիածնի գավառների մուսուլմանաբնակ հատվածների ու նաև Նոր Բայազետի գավառի արևելյան և հարավ-արևելյան մասերի հարցը: ԱՂՅ-ն ինքնորոշման իրավունքի հետ մեկտեղ պահանջում էր սահմանազատման հիմքում դնել նաև ռազմավարական, պատմական, տնտեսական սկզբունքները: Թե՛ Ադրբեջանը և թե՛ Վրաստանը դա պատճառաբանում էին նրանով, որ բացառապես ազգերի ինքնորոշման սկզբունքը կորող էր կիրառվել, եթե խոսքը գնար վարչական բաժանման մասին, մինչդեռ պետությունների սահմանազատումը պահանջում էր հաշվի առնել նաև մյուս սկզբունքները, որոնք կարևոր էին պետությունների տարբեր մասերի միջև տնտեսական կապերի պահպանման, պետությունների ազգային անվտանգության ապահովման համար հարմար սահմանների ձեռքբերման տեսակետից:

Վերոհիշյալ բոլոր տարածքների պատկանելության հարցում, թվում էր, թե Բաքուն չպետք է ունենար տարածքային հավակնություններ, քանի որ դրանք, գտնվելով Հայաստանի կենտրոնում, կենսական նշանակություն ունեին նրա ազգային անվտանգության համար, ինչպես նաև տնտեսապես անխազելիորեն կապված էին Երևանի մահանգի մյուս մասերի հետ: Այդ տարածքներում մուսուլման բնակչությունը մեծամասնությամբ էր կազմում (դրան նպաստել էին այդ շրջանների հայության ջարդերն ու բռնազաղթը), և Բաքուն, օգտվելով այդ հանգամանքից, հավակնություններ ներկայացրեց դրանց նկատմամբ՝ դա պայմանավորելով ինքնորոշման սկզբունքով<sup>285</sup>: ԱՂՅ հավակնությունները պայմանավորված էին նրանով, որ այդ տարածքները կարևորագույն ռազմավարական նշանա-

<sup>285</sup> ԱՂՎ կառավարությունն իր հռչակագրում սահմանում էր Ադրբեջանի հավակնությունները Երևանի մահանգի մասերի նկատմամբ: Տե՛ս Եօթեճա, #91, 1919 թ. ապրիլի 27: Այդ կապակցությամբ Արև-ը գրում էր, որ ԱՂՎ-ն միակողմանի է մեկնաբանում ինքնորոշման սկզբունքը: Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.291, ք.192: Ազգերի ինքնորոշման հիման վրա Շարուր-Նախիջևանի նկատմամբ ԱՂՎ նկրտումների սնանկության մասին տե՛ս նաև Դեռոշակ, # 3, 1925 թ. սեպտեմբեր, «Շարուր-Նախիջևան եւ թուրք-թաթարական քաղաքականությունը», էջ 74-75:

կություն ունեին մի կողմից՝ Թուրքիայի, իսկ մյուս կողմից՝ իրանական Ադրբեջանի հետ կապվելու տեսակետից: Այսպիսով, Բաքուն ձգտում էր ադրբեջանական պետականության շրջանակներում միավորել Անդրկովկասի տարածքում բնակվող բոլոր մուսուլմաններին: Այդ ձգտումների ճանապարհին առաջին հերթին կանգնած էր Հայաստանը, որը դրանով իսկ վերածվում էր Բաքվի թիվ մեկ հակառակորդի<sup>296</sup>:

Ղեռ 1918 թ. հուլիսին Բաքուն սկսեց բողոքներ հղել Երևանին՝ պահանջելով վերջ տալ Նոր Բայազետի գավառում մուսուլմանների հանդեպ բռնություններին: Ի պատասխան, Երևանը հայտնում էր, որ բռնության ենթարկված բնակիչները պետք է դիմեին իրեն, այլ ոչ թե ԱԴՀ-ին: Երևանն անթույլատրելի էր համարում, որ ԱԴՀ հայերը դիմեին իրեն, իսկ ՀՀ մուսուլմանները՝ Բաքվին՝ դա համարելով միջամտության միմյանց ներքին գործերին: 1919 թ. փետրվարին Բաքուն բողոքի հայտագիր հղեց Երևանին Սևանա լճի շրջանում ԱԴՀ սահմանները խախտելու, ադրբեջանական բնակավայրեր ներխուժելու և բռնություններ գործադրելու դեմ<sup>297</sup>: Հայկական կողմն անհապաղ պատասխանեց, որ Բասարգեչարի շրջանի անկարգություններին չեն մասնակցել ՀՀ կանոնավոր զորքեր, այլ մոտ 10 հազար հայ գաղթականներ են հարծակվել շրջանի մուսուլմանական գյուղերի վրա: Սակայն ՀՀ իշխանությունները մուսուլմաններին վերադարձրել էին իրենց գյուղեր, հանձնել էին նրանցից թայանված գույքը, իսկ մեղավորները պատասխանատվության էին կանչվել<sup>298</sup>:

ԱԴՀ-ն չհապաղեց օգտվել Բասարգեչարի շրջանում ստեղծված լարված իրավիճակից՝ դիվանագիտական դեմարշներից անցնելով գործնական քայլերի: ԱԴՀ տարածքից սկսվեց զինված խմբերի և զենքի առաքումն ապստամբներից: Բաքուն սկսեց մախպատարատվել Բաշքենդը և ճամբարակը գրավելուն ու մոբիլիզացիա հայտարարեց, որում իրեն օգնում էին 100 վրացի սպաներ և միաժամանակ ապրիլի 2-ի հայտագրով կրկին պահանջեց Երևանից իր զորքերը դուրս բերել ԱԴՀ տարածքից: Ի պատասխան, ՀՀ ԱԳՆ-ը հայտնեց, որ Ջոդի շրջան ուղարկվել է արտակարգ քննչական հանձնաժողով՝ հետաքննության անցկացնելու և մեղավորներին պատժելու համար, սակայն զինված մուսուլմանները թույլ չեն տվել նրան մուտք գործել<sup>299</sup>: Բրիտանական հրամանատարության՝ Երեվանից ուղարկված քննչական հանձնաժողովին հաջողվեց խաղաղեցնել

<sup>296</sup> Տե՛ս Ռոբերտ, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ.7, Թեհրան, Գ.հրատարակություն, 1982 թ., էջ 184-187:

<sup>297</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.263, ք.3; գ.44, ք.2-4, 53, 55; Արև, #7, 1919 թ. փետրվարի 13; Յառաջ, #29, 1919 թ. փետրվարի 16:

<sup>298</sup> Տե՛ս Արև, #27, 1919 թ. մարտի 11: Ղետք է նշել, որ Բասարգեչարում իրադրության սրման պատճառը հայկական կողմն էր, ի դեմս արևմտահայ գաղթականների, որոնք մնացել էին անօրևան և ամսնունդ: Երևանի ուղարկած զորամասը գաղթականներից հանեց մուսուլմանական գյուղերից ու վերջինների բնակչությանը վերադարձրեց իրենց տեղեր: Սակայն գորամասի իրամանատար ռոտմիստր Միլիկովի անպատասխանտու վարքագիծը պատրվակ դարձավ մուսուլմանների ընդդիմանը և գործի կտորոճմանը: Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.263, ք.1, 6, 9, 10, 15, 34, 44:

<sup>299</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.263, ք.47, 54-55, 60; գ.294, ք.77:



շրջանը: Հարկ է նշել, որ այդ հարցում անգլիական հրամանատարությունը լիովին գրավել էր ՀՀ կողմը՝ գտնելով, որ պետք էր վճռական միջոցներ ձեռնարկել երկրի տարածքային ամբողջականության պահպանման համար<sup>300</sup>: Միջադեպը հստակ ցույց տվեց, որ Բաքուն այս կամ այն կերպ հավակնում էր այն բոլոր շրջանների նկատմամբ, որտեղ կար կոմպակտ մուսուլման բնակչություն<sup>301</sup>:

Սակայն Երևանի նահանգում Ադրբեջանի կողմից վիճարկվող տարածքներից հիմնականը նահանգի հարավային՝ Նախիջևանի, Շարուր-Ղարալազյազի, Սուրմալուի գավառներն էին և Երևանի ու Էջմիածնի գավառների մուսուլմանաբնակ տարածքները: ԱԴՀ խորհրդարանի 1919 թ. հունվարի 8-ի նիստում նախագահի տեղակալ Ա.բ. Աղաևը հայտարարեց, որ, երբ թուրքերը գրավեցին Սուրմալուի գավառը, Երևանի, Էջմիածնի, Շարուր-Ղարալազյազի, Նախիջևանի գավառների մասերը, տեղի հայերը գաղթեցին ՀՀ սահմաններ, իսկ Հայաստանից այդ վայրեր գաղթեց մոտ 100 հազար մուսուլման գաղթական: Դրանով ստեղծվեց ոչ պակաս քան կես միլիոն մուսուլմաններով բնակեցված տարածք, որի բնակչությունը միշտ իրեն համարել է Ադրբեջանի մաս: Աղաևի ելույթի հիման վրա խորհրդարանը բանաձև ընդունեց, որով ԱԴՀ կառավարությանն առաջարկվում էր իրենից կախված բոլոր միջոցները ձեռնարկել՝ ներագրելու համար ՀՀ կառավարության վրա՝ Երևանի նահանգում արյունահեղությունը դադարեցնելու համար<sup>302</sup>:

Նահանջող թուրքերի հովանավորությամբ Շարուր-Նախիջևանում, Օրդուբադում, Երևանի գավառի հարավում 1918 թ. նոյեմբերի վերջին հռչակվեց այսպես կոչված Արաքսի (Արազդայան) Հանրապետությունը<sup>303</sup>: Նրա ղեկավարության մեջ մեծ դերակատարություն ունեին Ամիր բեկը և Նախիջևանի խաներ Ջաֆար Կուլին ու Քելբալի խանը:<sup>304</sup> Թուրքական բանակի ներկայացուցիչ Հալիլ բեյի, նրա գլխավորած 5 թուրք սպաների ու 300 զինվորների, ինչպես նաև ադրբեջանական սպաների օգնությամբ ստեղծվեցին զինված ուժեր<sup>305</sup>:

1918 թ. դեկտեմբերի վերջին հայկական զորքերն արդեն իսկ հասել էին մինչև Երևանի գավառի հարավային սահմանը՝ պատրաստվելով ներ-

<sup>300</sup> Sh'u Kavkazskoe slovo, #63, 75, 1919 թ. ապրիլի 5, 25; Единая Россия, #63, 1919 թ. մարտի 26:

<sup>301</sup> Քասարգեչյարի ընդվզման հարցով *Наше время*-ն նշում էր, որ ԱԴՀ-ն պատրաստ էր հավակնել ՀՀ ցամաքած գավառի, եթե այնտեղ կար գտնե 2-3 մուսուլմանական գյուղ: Sh'u Наше время, #64, 1919 թ. ապրիլի 6:

<sup>302</sup> Sh'u Ցառաք, #6, 1919 թ. հունվարի 18:

<sup>303</sup> Sh'u R.G. Hovhannisian, նշվ. աշխ., Vol. 1, p.229: Ղարալազյազում հայկական ուժերը 1918 թ. վերջին վտարեցին մի շարք մուսուլմանական գյուղերի բնակչությանը, որոնք բնակեցվեցին մոտ 15000 թուրքահայ գաղթականներով: Դրանով Ղարալազյազը վերջնականապես միացվեց ՀՀ-ին և ցամաքային կապ հաստատվեց Ջանգեղուրի հետ: Sh'u Ռուսթե, նշվ. աշխ., էջ 112-113:

<sup>304</sup> Շառ փաստաթղթերում նույն անձն անվանվում է Քերրալալ խան:

<sup>305</sup> Sh'u A. Natchijev, *Гарс в Араз-Турк Республикаларынын...*, с.47-48; А. Гаджиев, *Демократические республики*, стр. 108; Ցառաք, #3, 1919 թ. հունվարի 15; Kavkazskoe slovo, #56, 1919 թ. մարտի 28:

խուժել Շարուր: Սակայն հայ-վրացական պատերազմը թույլ չտվեց ՀՀ-ին շարունակել առաջխաղացումը դեպի Նախիջևան<sup>306</sup>: Օգտվելով իրենց ընձեռված դադարից՝ Շարուր-Նախիջևանի մուսուլմանները ամրապնդեցին իրենց դիրքերը, և դա ստիպեց անգլիական հրամանատարությանը զինադադար հաստատել կողմերի միջև: Համաձայն զինադադարի՝ հայկական և մուսուլմանական զորքերը մնում էին իրենց դիրքերում, բացվում էր երկաթուղին, Արազդայան-Ջուլֆա երկաթուղու վերահսկողությունն անցնում էր անգլիական հրամանատարությանը, պապահովվում էր ազատ առևտուր կողմերի միջև, մուսուլմանները պարտավորվում էին ՀՀ-ին վաճառել 10000 փուֆ ցորեն: Այդ վիճակը շարունակվելու էր մինչև խաղաղ խորհրդածողովի որոշումը<sup>307</sup>: Այնուհետև անգլիական հրամանատարությունը ռազմական զեներալ-նահանգապետություն հիմնեց Շարուր-Նախիջևանում զենապետ Լաուրոնի գլխավորությամբ: Վերջինի առաջարկությամբ նահանգապետության տարածքում ընդգրկվեց Երևանի գավառի հարավային մասը՝ մինչև Վեդի գետը, որտեղ մնալու էր հայկական վարչակազմը, սակայն դուրս էր բերվում հայկական զորքը, բացի 50 հոգանոց ջոկատից, որը տեղակայվում էր Դավայլուում: Դրա վերաբերյալ 1919 թ. փետրվարի 4-ին կնքվեց համաձայնագիր գնդապետ Լաուրոնի և ՀՀ արտգործնախարար Ս. Տիգրանյանի միջև<sup>308</sup>:

Այսպիսով, մի կողմից ակնառու էր անգլիացիների ձգտումը՝ բացառել զինված բախումները ՀՀ զորքերի և տեղի մուսուլմանների միջև, բայց մյուս կողմից էլ անհասկանալի էր և անընդունելի. որ նրանք խաղաղ միջոցներով ՀՀ իշխանությունը երկրամասում տարածելու փոխարեն՝ ստեղծեցին զեներալ-նահանգապետություն՝ դրանով քաջակերելով տեղի մուսուլմաններին և Բաքվին նոր ելույթների ու տեղի հայության նկատմամբ բռնությունների: Անգլիական զեներալ-նահանգապետին կից ՀՀ ներկայացուցիչ Բ. Բահաթյանը գրում էր, որ իրական իշխանությունը պատկանում էր տեղական խմբերին, երկրամասը պատրաստվում էր միանալ ԱԴՀ-ին և անգամ ընտրություններ էր կազմակերպել ԱԴՀ խորհրդարան պատգամավորներ ուղարկելու համար: Տեղական զորքին վարժեցնում էին ԱԴՀ-ից ժամանած 11 սպաներ զնդապետի ղեկավարությամբ և թուրք ենթասպաներ<sup>309</sup>: Լաուրոնը ոչ միայն վճռական պայքար չէր մղում

<sup>306</sup> Տե՛ս Է. Ջոհրաբյան, Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները», (1918 թ. դեկտ.-1920 թ. ապրիլ), Երևան, «Տիգրան Մեծ», 2002, էջ 22-29, 31-36, 38-39; Ռ. Համբարձումյան, Գարեգին Նժդեհի, կենսագրական յաելումներ, անտիպ գրություններ ու խորհրդածուխումներ, Երևան, Նախիջևան հրատարակչություն, 2005, էջ 156-157:

<sup>307</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.209, ք.2; *Наше время*, #28, 1919 թ. փետրվարի 5; Բանբեր Հայաստանի արխիվների, # 1-2, Երևան, 1993, էջ 78-79, 80:

<sup>308</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.209, ք.16, 37, 41, 48, 51; Է. Ջոհրաբյան, Նախիջևանյան հիմնահարցը..., էջ 55-61; R.G. Hovannisian, *Ոչվ. աշխ.*, Vol. 1, p.231-232; Մ. Ավետիսյան, Նախիջևանի պատմության վավերագրեր (1889-1920 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, # 3, Երևան, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի հրատարակչություն, 1996, էջ 192:

<sup>309</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.209, ք.62-63, 137, 152-160; Բանբեր Հայաստանի արխիվների, # 1-2, Երևան, 1993, էջ 81-85; Г. Махмурия, *Ոչվ. աշխ.*, стр. 49-50, 55:



քաթարների կողմից գործադրվող բռնությունների դեմ, այլև անգամ սահմանափակում էր տեղի հայության իրավունքները: Նա Նախիջևանի խամերին ցուցադրել էր Հայաստանի քարտեզը՝ հայտնելով, որ իր տվյալներով Փարիզում ԳՅ պատվիրակությունն ապագա Հայաստանն ընդունում է Արարատյան հանրապետությունը և Թուրքահայաստանի վիլայեթները ու գծել Հայաստանի սահմանները, որոնցից դուրս էին մնում Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը<sup>310</sup>: Համեմատելով այս քաղաքական գիծը Ղարաբաղում և Ջանգեզուրում Սեծ Բրիտանիայի դիրքորոշման հետ, որը բացառում էր անգլիական զենքերալ-մահանգապետի նշանակումն ու պահանջում էր անհապաղ ճանաչել ԱԴԳ իշխանությունը՝ տեսնում ենք, որ նրա քաղաքականության մեջ ակնհայտ էր շեղումը հոգուտ Բաքվի:

Անգլիացիների դիրքորոշմամբ քաջալերված Բաքուն իր հերթին չհապաղեց դիվանագիտական աջակցություն ցուցաբերել Շարուր-Նախիջևանի մուսուլմաններին՝ բողոքի հայտագիր հղելով ԳՅ ԱԳ-ին հայկական զորքերի հարձակման դեմ ու ընդգծելով, որ Շարուր-Նախիջևանը ԱԴԳ անբաժան մաս էր<sup>311</sup>: Արաքսի Հանրապետության հետ կապեր հաստատելու նպատակով Նախիջևան ուղարկվեց Երևանի մահանգի մուսուլմանների հայրենակցական միության ներկայացուցիչ Միրաբբաս Բաղիրովը և 12 սպա՝ երկրամասի պաշտպանության ամրապնդման աջակցելու համար: Նախիջևանում Բաղիրովին հանդիսավոր ընդունելություն ցույց տրվեց: Ստեղծվեց հանձնաժողով նրա մասնակցությամբ, որը կազմեց պաշտոնական ակտ Նախիջևանի՝ ԱԴԳ-ին միանալու մասին<sup>312</sup>: Իր այցի արդյունքների հիման վրա կազմած զեկույցում Բաղիրովն առաջարկում էր նշանակել Նախիջևանի աղբբեջանցի զենքերալ-մահանգապետ: Ջեկույցում հիմնավորվում էր Նախիջևանի կես միլիոն բնակչությանը նյութական խոշոր օգնություն ցուցաբերելու անհրաժեշտությունը<sup>313</sup>:

<sup>310</sup> Առավել մանրամասն տե՛ս Է. Ջոհրայան, Նախիջևանյան հիմնահարցը..., էջ 73-82:

<sup>311</sup> ՏԵՄ Ցուտաջ, #15, 1919 թ. հունվարի 31:

<sup>312</sup> Բրիտանական զենքերալ-մահանգապետը Բաղիրովին հայտնեց, որ երկրամասը դեռևս ԱԴԳ մաս չէր կազմում, և պարզ չէր, թե ում էր այն պատկանելու, ստաի ԱԴԳ-ն իրավունք չունի իր մարդկանց ուղարկել Նախիջևան: ՏԵՄ Ա. Гаджиев, Демократические республики..., стр. 114:

1919 թ. փետրվարի 26-ին Նախիջևանի մուսուլմանական Ազգային խորհուրդն ուղերձ հղեց անգլիական զենքերալ-մահանգապետին, որում, բողոք հայտնելով Երևանի մահանգի ողջ տարածքը ՀՀ-ին հանձնելու կապակցությամբ, հայտարարում էր, որ ԱԴԳ կառավարությունը երկրամասը համարում է ԱԴԳ անբաժան մաս, Երևանի մահանգի մուսուլմանական շրջանները լծվով, մշակույթով ու ավանդույթներով սերտորեն կապված են ԱԴԳ-ի հետ, իսկ Բաքուն և Երևանապոլսը հանդիսանում են Անդրկովկասի ողջ մուսուլմանության մշակույթի և մտքի կենտրոնները: Նշվում էր, որ այդ ամենից նկնելով՝ Շարուր-Նախիջևանի շրջանի, Մտրմալուի գավառի և Երևանի ու Էջմիածնի գավառների մուսուլմանաբնակ շրջանները փետրվարի 25-ին որոշում էին ընդունել ԱԴԳ-ին միանալու մասին: ՏՄ. в том же месте, стр. 118:

<sup>313</sup> ՏՄ. в том же месте, стр. 113-117: Բաղիրովի այցը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ Նախիջևանում Ամիր քեյի իշխանության տապալմամբ մեծ հարված էր հասցվել ԱԴԳ ազդեցությանը երկրամասում, և իշխանության էին նկել Ջաֆար Կուլի Խան և Ջեյրաի Խան Նախիջևանսիները: Վերջինները համոզեւ էին գալիս երկրամասը Պարսկաստանին միացնելու օգտին և մուլմնիկ պատվիրակություն էին ուղարկել Թավրիզ այդ հարցի քննարկման համար:

ԱՂԳ քաղաքական աջակցությունն ստանալով՝ Շարուր-Նախիջևանի ղեկավարությունն սկսեց ավելի վճռական գործել. 1919 թ. մարտին ԱՂԳ մեկնեց Շարուր-Նախիջևանի պատվիրակությունը՝ «Արաքսի Դան-րաշատության ջրկառուի հրամանատար»<sup>314</sup> Բաղդամ խան Նախիջևան-սկու գլխավորությամբ, որի առջև նպատակ էր դրված Բաքվից խնդրել ռազմական և ֆինանսական աջակցություն: Պատվիրակությունը եղավ նաև Թիֆլիսում, որտեղ լավ ընդունելություն գտավ անգլիացիների մտ-նրանց հետ քննարկելով Արաքսի Դանրապետությունը «Դարավ-արևմըտ-յան Աղբեջան» անվան տակ ԱՂԳ-ին միացնելու հարցը: Թիֆլիսում անգ-լիական առաքելությանը Բաղիբովը ներկայացրել էր՝ որպես «Դարավ-Արև-մըտյան Աղբեջանի ներկայացուցիչ»: Բաղիբովին ընդունել էին նաև Վրաստանի վարչապետը և արտգործնախարարը, որոնք նրան շնորհա-վորել էին Դայաստանի դեմ հաջող պայքարի կապակցությամբ ու խնդրել իրենց անունից ողջունել քաջարի թաթարական զորքերին: Անգլիական հրամանատարությունը համակրանքով վերաբերվեց այդ հարցին ու խոս-տացավ այդ մասին հաղորդել խաղաղ խորհրդատուովին: Բաքվում խանը ԱՂԳ կառավարության առջև բարձրացրեց Շարուր-Նախիջևանում զեներալ-ճառանգապետ նշանակելու հարցը: Բաղդամ խանը բարձրաց-րեց սակ խաղաղ խորհրդատուովում Նախիջևանի կարգավիճակի քնն-նարկման հնարավորության հարցը<sup>315</sup>:

Բաղդամ խանի հետ բանակցություններից անմիջապես հետո Բա-քուն ակտիվացրեց իր գործունեությունը Շարուր-Նախիջևանում. այնտեղ ուղարկվեց սպաների մի խումբ զննապետ Կուզուշևի գլխավորությամբ՝ տեղի զինված ուժերի կազմակերպմանն աջակցելու համար<sup>316</sup>: 1919 թ. մարտին երևանում իր գործունեությունը սկսեց ԱՂԳ դիվանագիտական ներկայացուցիչ Մամեդ խան Թեքինսկին, որը դարձավ Աղբեջանի և Շա-րուր-Նախիջևանի միջև կապող օղակը և Շարուր-Նախիջևանում ԱՂԳ քաղաքականության կորդինացնողն ու իրականացնողը: Խան Թեքինսկու միջոցով Բաքուն սկսեց ֆինանսական օգնություն ցուցաբերել Շարուր-Նախիջևանին: Թեքինսկին ձգտում էր կապ հաստատել նաև Կարսի Շու-րայի հետ, սակայն նրա նախաձեռնությունը վերջինի տապալման արդ-յունքում ուշացավ, և նա իր գործունեությունը հիմնականում կենտրոնա-ցրեց Շարուր-Նախիջևանում: Բայց Բաքուն չիրաժարվեց նաև այդ ուղ-ղությամբ աշխատանքից. մայիսի 6-ին խան Թեքինսկուն հրահանգվեց կապ հաստատել Կարսի կառավարության հետ (Կարսի մարզի մուսուլ-մանական Ազգային խորհուրդ) և նրան աջակցություն ցույց տալ<sup>317</sup>: Խան

<sup>314</sup> Տե՛ս Ա. Гаджиев, Демократические республики..., стр. 121: ՀՀ զինվորական նախարարու-թյան մարտի 13-ի կելույցում նաստատվում է, որ Բաղդամ խանը գլխավորում էր ՀՀ սահմանների մոտ գտնվող ջրկառու: Տե՛ս ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.114, ք.23:

<sup>315</sup> Տե՛ս Յախաջ, #17, 42, 1919 թ. փետրվարի 2, մարտի 6: Ա. Гаджиев, Демократические респуб-лики..., стр. 122: Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.114, ք.23:

<sup>316</sup> Տե՛ս Ա. Начижев, Гарс в Араз-Турк Республикаларынын..., с.53:

<sup>317</sup> Տե՛ս Գալտմի փաստաթղթեր..., էջ 18, 20, 23:



Թեքինսկին անմիջապես նախահարձակ եղավ՝ Երևանին մեղադրելով թուրքական զորքերի նահանջից հետո Երևանի նահանգի մուսուլմանական բնակչության կոտորածների և բռնազաղթի մեջ ու պահանջելով ստեղծել հայ-մուսուլմանա-անգլիական խառը հանձնաժողով՝ պարզելու համար մուսուլմանների կրած վնասների չափը<sup>318</sup>։ Գ իշխանությունները, հերքելով Թեքինսկու մեղադրանքները, նշում էին, որ բռնի գաղթեցվել էին միայն Երևանի նահանգի Միլլի դարայի շրջանի 12 մուսուլմանական գյուղերը, որոնք չէին ցանկացել ճանաչել Գ իշխանությունը։ Գ ՆԳՆ-ին ուղղված զեկույցում նշվում էր, որ Գ սահմաններից հեռացել էր 114650 մուսուլման, որոնցից վերադարձել էին 29000-ը, իսկ մյուսները չէին ուզում վերադառնալ Գ իշխանությունը չճանաչելու, այլ ոչ թե Երևանի քաղաքականության պատճառով<sup>319</sup>։

Ապրիլի վերջին, երբ արդեն պարզ էր, որ անգլիացիները հակվում էին երկրամասը զիջել Գ-ին, իսն. Թեքինսկին իր կառավարությանը հարցում էր անում, թե արդյո՞ք նա ռազմական օգնություն կցուցաբերեր Նախիջևանի ապստամբության դեպքում։ Նա առաջարկում էր Երևանի նկատմամբ ռազմական ճնշում գործադրել՝ Գ սահմանների մոտ կենտրոնացնելով զինված ուժեր, ու միաժամանակ ընդգծում էր Նախիջևանի մուսուլմանների պատրաստակամությունն ընդվզվելու<sup>320</sup>։

Սակայն անգլիական հրամանատարության բացասական դիրքորոշման պայմաններում Բաքուն չէր ցանկանում զնալ կտրուկ քայլերի այդ հարցում։ Այն ժամանակ, երբ խաղաքարտի վրա էր դրված Ղարաբաղ-Չանգեզուրի պատկանելության հարցը, որում անգլիացիները Բաքվի կողմն էին բռնել, վերջինն իր չափազանցված պահանջներով կարող էր վտանգել դրա լուծումն իր օգտին։ Ուստի Բաքուն հայտնում էր, որ խոսք չէր կարող զնալ Նախիջևան գոյք ուղարկելու մասին ու հրահանգում էր բողոք հղել երկրամասի գրավմանն ուղղված գործողությունների դեմ։ Մեկ այլ հեռագրում Բաքուն նշում էր, որ ուրախությամբ կընդունեն տեղի բնակչության կողմից հայկական զորքերի առաջխաղացման կանգնեցումը, առավել ևս, որ Ղարաբաղի հայերը կտրականապես ընդդիմանում էին այնտեղ ԱԳ իշխանության հաստատմանը<sup>321</sup>։ Ինչ վերաբերում է դաշնակցներից բողոք հղելու հարցին, իսն Թեքինսկին մայիսի 2-ին գրում էր, որ անիմաստ է բողոքել դաշնակիցների տեղական հրամանատարությանը, քանի որ այդտեղ չկան բարձրագույն հրամանատարության ներկայացուցիչներ, այլ միայն կան Թիֆլիսից հրահանգներ կատարողներ, որտեղ էլ հենց հարկավոր է անհապաղ քայլեր ձեռնարկել<sup>322</sup>։

Մինչդեռ ԱԳ դիվանագիտական ներկայացուցիչն առաջ էր քաշում մարտավարության նորանոր այլ մեթոդներ, ինչպես օրինակ՝ Հայաստան

<sup>318</sup> ՏԻՆ ՀԱՍ, ֆ.200, ց.1, գ.44, ք.37 և 42:

<sup>319</sup> ՏԻՆ ՀԱՍ, ֆ.200, ց.1, գ.44, ք.50, 16, 34, 47:

<sup>320</sup> ՏԻՆ ՀԱՍ, ֆ.200, ց.1, գ.358, ք.14: Գաղտնի փաստաթղթերը..., էջ 20, 22:

<sup>321</sup> ՏԻՆ ՀԱՍ, ֆ.200, ց.1, գ.358, ք.12: Գաղտնի փաստաթղթերը..., էջ 22-26:

<sup>322</sup> ՏԻՆ Բանբեր Հայաստանի արխիվների, # 1-2, Երևան, 1993, էջ 140:

մազուքի առաջման դադարեցումը: Խան Թեքինսկին նշում էր, որ Կամավորական բանակի հետ հարաբերությունների լարման դեպքում 77-ն ևս հանդես կգար Ադրբեջանի դեմ, ուստի անհրաժեշտ էր Շարուր-Նախիջևանում Հայաստանի համար վտանգ ստեղծել: Նրան հաջողվեց համոզել Բաքվին՝ ուժեղացնել ուշադրությունը երկրամասի գործերի համդեպ: 1919 թ. հունիսի սկզբին ԱԳ նախարար Զաֆարովն իր հեռագրում հավանություն էր տալիս Խան Թեքինսկու գործողություններին ու համաձայնությունը հայտնում ֆինանսավորել զինվորական կազմակերպություններին: Հունիսի 4-ին ԱԳ նախարարին ուղղված հեռագրում Խան Թեքինսկին արդեն իսկ նշում էր, որ իր ձեռք առած միջոցների շնորհիվ Շարուրը, Նախիջևանը և Օրդուբադը արդեն միացել են մեկ ազգային խորհրդի մեջ, որն իր հետ մշտական հարաբերություն ունի<sup>323</sup>:

1919 թ. մայիսին անգլիական հրամանատարության աջակցությամբ սկսվեց 77 իշխանության հաստատումը Շարուր-Նախիջևանում: 1919 թ. ապրիլի 6-ին 77 վարչապետին ուղղված գրության մեջ գեներալ Թոմսոնը փաստորեն 77 իշխանության հաստատումը կարսում և Նախիջևանում կրկին պայմանավորում էր Ղարաբաղում և Ջանգեզուրում ԱԳ7 իշխանության հաստատման գործում Երևանի գիջողականությամբ՝ նշելով, որ «կառավարության ձևը, որ հաջողությամբ հաստատվել է Շուշիում, առաջարկվում է, և ես բարեհաճ եմ հաստատելու նմանատիպ կառավարություններ կարսում և Նախիջևանում նույն անվանմամբ, ինչ որ Շուշիում»<sup>324</sup>: Մայիսի 3-ին անգլիական գեներալ Դևին և Երևանյան խմբի հրամանատար Դրոն կոչ հղեցին երկրամասի բնակչությանը, ըստ որի՝ մինչև խաղաղ խորհրդաժողովի վերջնական որոշումը իշխանությունն անցնում էր Հայաստանին, և ցանկացած դիմադրություն ճնշվելու էր գեներալ Թեքլի<sup>325</sup>: Մայիսի 12-ին վարչապետ Խատիսյանը հասավ Նախիջևան, որտեղ Քելբալի Խան Նախիջևանսկին, իր հպատակությունը հայտնելով անգլիական հրամանատարության որոշմանը, խնդրեց չզինաթափել բնակչությանը, երկրամասի վարչության մեջ հայերին հավասար աշխատանքի ընդունել նաև մուսուլմաններին, չպատժել մուսուլմաններին անցյալ գործունեության համար, ապահովել մուսուլման գաղթականների վերադարձը Ջանգեզուր, Դարալազյազ, Նոր Բայազետ և Երևան: Խատիսյանը դրան համաձայնություն տվեց<sup>326</sup>: Երկրամասում վերջապես հաստատվեց նրա օրինական տիրոջ՝ Հայաստանի Հանրապետության իշխանությունը: Երկրամասում տեղի ունեցած հետագա իրադարձությունները ճիշտ ըմբռնելու համար հարկ է նշել, որ անգլիացիների պա-

<sup>323</sup> Տե՛ս Գաղտնի փաստաթղթեր..., էջ 26-27, 29:

<sup>324</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.243, ք.99: Բանբեր Հայաստանի արխիվների, # 1-2, 1993, էջ 89: ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.42, ք.77: Է. Ջոնարայան, Նախիջևանյան հիմնադրված..., էջ 85-86, 96:

<sup>325</sup> Տե՛ս Բանբեր Հայաստանի արխիվների, # 1-2, 1993, էջ 102-104:

<sup>326</sup> Տե՛ս Ցառաջ, #31, 1919 ք. հուլիսեմբերի 29: Кавказское слово, #81, 96, 97, 1919 ք. մայիսի 9, 21, 22: Իր հուշերում Ա. Խատիսյանը գրում է, որ Նախիջևանի երևելիները պահանջել էին անգամ, որ հայկական զորամասերը չմտնեն երկրամաս, իսկ փախստականները չվերադառնան: Տե՛ս Ա. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 140:



հանջով և ճնշման տակ Շարուր-Նախիջևան մտցվեցին նվազագույն թվով հայկական զորքեր, որի արդյունքում ՀՀ իշխանությունը երկրամասում ամուր չէր<sup>327</sup>։ Դրա հետևանքները երկար սպասեցնել չտվեցին։

1919 թ. հունիսին ավարտվեց անգլիական զորքերի դուրսբերումը Հայաստանի զգալի մուսուլման բնակչություն ունեցող շրջաններից՝ Կարսի մարզից և Շարուր-Նախիջևանից, ինչից չհապաղեց օգտվել Աղղրբեջանը։ Անգլիացիները, հեռանալով Հայաստանից, գիտակցում էին դրա հետ կապված հնարավոր բարդությունները և դրանցում Բաքվի դերը։ Այսպես, ՀՀ վարչապետին ուղղված նամակում Անդրկովկասում անգլիական զորքերի հրամանատար գեներալ Քորին, հայտնելով անգլիական զորքերի մտալուտ հեռանալու մասին, նշում էր, որ ինքը մեկնելու էր Բաքու և բանակցելու էր ԱԴՀ կառավարության հետ, որպեսզի վերջինը սահմանափակեր իր գործունեությունը վիճելի շրջաններում, ինչպես և ծեռնպահ մնար Ձանգեզուրի վրա իր իշխանության տարածումից<sup>328</sup>։ ԱԴՀ անմիջական դիվանագիտական, ռազմական և նյութական աջակցությամբ Շարուր-Նախիջևանում նախապատրաստվեց մուսուլմանների ապստամբություն։ Բաքուն շարունակում էր հակահայկական քարոզչություն վարել Նախիջևանում, այնտեղ առաքել դրամ և սպաներ։ Մանեղ Խան Թեքինսկին, ձուլելով իր կառավարության ուշադրությունը հնարավորին չափ բևեռել Շարուր-Նախիջևանի հարցի վրա, ուղղակիորեն նշում էր. «Քվում է, որ այժմ Աղղրբեջանը Հայաստանից բացի ուրիշ թշնամի չունի, ուստի անհրաժեշտ է Հայաստանի վրա առանձին ուշադրություն դարձնել»։ Խան Թեքինսկին հունիսի 11-ին ԱԴՀ արտգործնախարարին գրում էր, որ Շարուր-Նախիջևանն ունի 6000 կիսականոնավոր զորք՝ հեծելազորով, թնդանոթով ու զնդացրերով, որի թիվը պատերազմի ժամանակ կարող է հասնել 10 հազարի։ Նա նշում էր, որ հրամանատարներին դրանք մաս-մաս բաց կթողնի։ Սակայն ամեն ինչ չէ, որ հարթ էր ընթանում։ Այսպես, արդեն հունիսի 20-ին և 22-ին Բաքու ուղղված հեռագրերում նա նշում էր, որ ժամանակին դրանք չհասնելու պատճառով զորքը ցրվել էր, ու մնացել էր ընդամենը 300 պարտիզան։ Խան Թեքինսկին նաև կարևորում էր քուրդ Սմկոյին հակահայկական ծրագրերի մեջ ներգրավելը<sup>329</sup>։

Բաքվի ակտիվությունը բացատրվում էր նրանով, որ երկրամասում ուժեղ էր պարսկամետ հոսանքը, ի դեմս Նախիջևանի խաների, որոնք Կազի մուլլա Բեգթաշևի գլխավորությամբ նոր պատվիրակություն էին ուղարկել «Պարսկաստան» երկրամասը վերջինին միացնելու առաջարկով։ Հունիսի 8-ին Օրդուբադ ժամանեց աղղրբեջանական սպաների մի նոր խումբ Անմեղովի գլխավորությամբ, որն իրեն հռչակեց Օրդուբադի նահանգապետ ու սկսեց դրամով կաշառել տատանվող բնակչությանը։ Օր-

<sup>327</sup> Տե՛ս Է. Ջոնարյան, Նախիջևանյան հիմնահարցը..., էջ 89, 115; Բանբեղ Հայաստանի արխիվների, # 1-2, Երևան, 1993, էջ 92-94։

<sup>328</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.300, ց.1, գ.309, ք.102։

<sup>329</sup> Տե՛ս Գաղտնի փաստաթղթերը..., էջ 28, 30-31։

դուբադի նշանակությունը ԱՂԳ-ի համար կարևորվում էր այն առումով, որ այն հանդիսանում էր կապող օղակ Նախիջևանի հետ, և Բաքուն անգամ մտադիր էր կառուցել Ալյաթ-Ջուլֆա երկաթուղին, որը պետք է անցներ Օրդուբադի շրջանով<sup>330</sup>:

1919 թ. հուլիսի 1-ին Դավալուի մոտ մուսուլմանների կողմից սպանվեց 9 հայ զինվոր և 12 գյուղացի: Բեյուք Վեդիի հանդարտեցման համար ուղարկված 33 զորամասն ընկավ ծուղակի մեջ և փաստորեն ոչնչացվեց՝ տալով 35 սպանված և 127 վիրավոր: Դրանով բռնկվեց Բեյուք Վեդիի ապստամբությունը, որը կարճ ժամանակում տարածվեց Շարուր-Նախիջևանում<sup>331</sup>: Պարզ դարձավ, որ առանց ուժի կիրառման հնարավոր չէր կարգուկանոն հաստատել շրջանում: 33 կառավարության կողմից անգլիացիների հավանությանը ուղարկվեց պատժիչ ջոկատ ըմբոստ գյուղի դեմ<sup>332</sup>: Հայկական ուժերին չհաջողվեց ճնշել Բեյուք Վեդին, ինչը, ցույց տալով Երևանի ռազմական թուլությունը, հանգեցրեց հուլիսի 19-ին ապստամբության Շարուր-Նախիջևանում և 33 զորամասերի նահանջին Ջանգեզուր<sup>333</sup>: Խլտուումներ սկսվեցին նաև Սուրմալուի գավառում և էջմիածնի ու Երևանի գավառների մուսուլմանաբնակ մասերում, և Հայաստանը փաստորեն երեք կողմից հայտնվեց մուսուլմանական օղակում<sup>334</sup>:

Հուլիսի 17-ին 33 դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը Բաքվից գրում էր, որ Ղարաբաղում, Ջանգեզուրում, Նախիջևանում ապստամբական շարժումները տեղի էին ունենում նախապես մշակված ծրագրով: 33-ն մուսուլմանական օղակով շրջապատելու նպատակով թուրք-թաթարական քաղաքական կազմակերպություններն իրենց գործակալների միջոցով 33 սահմանակից շրջաններում բորբոքում էին հակահայկական շարժում՝ նրանց մատակարարելով զենք, դրամ և այլն, Բաքվում տարվում էր հակահայկական քարոզչություն, քաղաքի արդյունաբերական շրջաններում կոչեր էին արվում կազմել կամավորական ջոկատներ և ԱՂԳ իշխանությունը տարածել Ղարաբաղի, Ջանգեզուրի և Նախիջևանի վրա: Պարսկաստանի վրայով ԱՂԳ-ն Նախիջևան էր ուղարկել 200 հազար փամփուշտ, իսկ Խ.թ.Սուլթանովի միջոցով՝ 3 մլն. ռուբլի:

<sup>330</sup> Տե՛ս Յառաջ, #37, 1919 թ. նոյեմբերի 5: ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.50, ք.13; Է. Ջոնարայան, Նախիջևանյան հիմնահարցը..., էջ 122: Զեյնալի խանն անգամ անգլիացիների ներկայությամբ նահանգապետ Գ. Վարշամյանին զգուշացրել էր, որ Նախիջևանը պետք է միացվեր ԱՂԳ-ին կամ Պարսկաստանին, և որ այն դառնալու էր երկրորդ Մակեդոնիա, ու ղոգոն տարրերը շուտով զինված խմբեր էին կազմելու ու հարձակումներ գործելու: Տե՛ս Բանբեր Հայաստանի արխիվների, # 1-2, 1993, էջ 107:

<sup>331</sup> Հուզումները, հարձակումները հայ զինվորների ու խաղաղ բնակչության վրա սկսվել էին արդեն հունիսի կեսերից: Տե՛ս Է. Ջոնարայան, Նախիջևանյան հիմնահարցը..., էջ 133-135:

<sup>332</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.198, ք.189; Յառաջ, #40, 1919թ. նոյեմբերի 8; *Наше время*, #154, 1919 թ. օգոստոսի 10:

<sup>333</sup> Ուղղման կազմակերպությունների ընթացքի և ՀՀ զորքերի պարտության պատճառների մասին մանրամասն տե՛ս Է. Ջոնարայան, Նախիջևանյան հիմնահարցը..., էջ 139-169:

<sup>334</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.133, ք.173; *Кавказское слово*, #165, *Слово*, #1, 10, 1919 թ. օգոստոսի 13, 21, 31:



Նույն օրը ԱԴԳ խորհրդարանի նիստում առաջարկվել էր Ջանգեզուրի և Նախիջևանի մուսուլմանների կարիքների համար հատկացնել 18 մլն. և 3 մլն. համապատասխանաբար<sup>335</sup>:

ԱԴԳ-ն ուժեղացրեց դիվանագիտական ճնշումը Հայաստանի նկատմամբ՝ պահանջելով դադարեցնել պատժիչ գործողությունները Բեյրութ Վեդիի «ինքնորոշված» բնակչության, Էջմիածնի և Սուրմալուի գավառների մուսուլմանական գյուղերի դեմ ու ընդգծելով իր հավատարմությունը վիճելի հարցերի խաղաղ կարգավորմանը: Դաշնակիցներին բողոք էր հայտնվում Երևանի նահանգում ՀՀ կառավարության կողմից մուսուլմանների հանդեպ հալածանքների դեմ<sup>336</sup>: Տեղեկատվական այդ տարափը կոչված էր քողարկել Հայաստանը բնակեցնող մուսուլմանների լայնածավալ ընդվզումը, որը խնամքով նախապատրաստվել էր ադրբեջանա-թուրքական համատեղ ջանքերով: Խան Թեքինսկին ապստամբներին հաղորդել էր, որ առայժմ ԱԴԳ-ն չի կարող օգնել զորքով, սակայն կփոխհատուցի նրանց կրած բոլոր ծախսերն ու վնասները: Սիսիանում հասնելուց հետո Բաքվի հաղորդում էր տվյալներ ՀՀ զինված ուժերի մասին ու պահանջում ադրբեջանական ուժեր կենտրոնացնել ՀՀ սահմանների մոտ<sup>337</sup>: Հաջորդ քայլն՝ ըստ ԱԴԳ դիվանագիտական ներկայացուցչի, պետք է լիներ Բաքվի առաջարկը անգլիացիներին՝ իրեն հանձնել Ջուլֆա-Շահթախի երկաթուղին՝ Ալյաթ-Ջուլֆա գծով Պարսկաստանի հետ առևտուր անելու համար: Ընդ որում, անգլիացիներին համոզելու նպատակով առաջարկվում էր մատնանշել ՀՀ անկարողությունը, գնացքների անկանոն երթևեկությունը և խոստանալ երկրամասում նոր կարգ հաստատել<sup>338</sup>:

Շարուր-Նախիջևանից անգլիական զորքերի դուրսբերման հետևանքով ծագած ապստամբության արդյունքում երկրամասում դե-ֆակտո հաստատվեց ԱԴԳ ռազմաքաղաքական գերակայությունը, որը ձգտում էր ոչ միայն հնարավորինս ամրագրել այն և քացառել ՀՀ իշխանության վերականգնումն այդ տարածքներում, այլև ընդլայնել իր ազդեցության գոտին՝ ներառելով Երևանի և Էջմիածնի գավառների հարավային մուսուլ-

<sup>335</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.133, ք.174-175; ֆ.278, ց.1, գ.5, ք.39:

<sup>336</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.294, ք.51; գ.44, ք.92; ֆ.276, ց.1, գ.133, ք.157; *Кавказское слово*, #143, 1919 թ. հուլիսի 18: Իր հերթին Մ. Խան Թեքինսկին ապստամբներին ոգեշնչելու համար հայտնեց, որ Բաքուն փոխհատուցելու էր նրանց բոլոր վնասները: Տե՛ս Ցառաք, #47, 1919 թ. նոյեմբերի 16: Նա կատարվածի մեջ մեղադրում էր հայկական կողմին՝ նշելով, թե Ապրեսովի զորամասի վրա կրակ քաջ արվեց այն քամից հետո, երբ հայերը սպանեցին Բեյրութ Վեդիի պատվիրակներից երկուսին: Տե՛ս ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.133, ք.180: Պատասխան հայտագրում Երևանը նշում էր, որ Բեյրութ Վեդին ՀՀ-ին հանձնվել էր անգլիացիների համաձայնությամբ, և նրանք, ովքեր չլին ռազմ դատմալ ՀՀ քաղաքացի, պետք է հետևանային: Տե՛ս ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.133, ք.142; Ժողովրդի ձայն, #158, 1919թ. հուլիսի 26:

<sup>337</sup> Տե՛ս Գաղտնի փաստաթղթեր..., էջ 32-38:

<sup>338</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 38-39:

մանաբնակ մասերը, Սուրմալուի գավառը, Կարսի մարզը<sup>339</sup>։ Այդ նպատակով ԱԴԳ կառավարությունը Շարուր-Նախիջևանի նահանգապետ էր նշանակել Սամեդ բեկ Ջամալիմսկուն, որը մեծ աշխատանք էր տանում երկրամասում Բաքվի իշխանության ամրապնդման համար։ Նրա հրամանով Նախիջևանի գործերի հրամանատար էր նշանակվել Գալի բեյը, իսկ նրա տեղակալ՝ Քելբալի խան Նախիջևանսկին։ Ջամալիմսկու ձեռքբերում էր իշխանության կենտրոնացումը հակազդեցություն էր առաջ բերում Գալի բեյի և Քելբալի խանի կողմից, ինչը հանգեցրեց նրանց միջև հակասությունների խորացմանը (Ջամալիմսկին Բաքվին բողոքում էր, որ Գալի բեյը քարոզում էր ԱԴԳ իշխանության դեմ)։ Այդ պայքարն իրենով մարմնավորում էր թուրքական և ադրբեջանական ազդեցությունների մրցակցությունը երկրամասում գերակայության համար։ Նման պայքար էր ընթանում նաև Կարսի մարզում Քյազիմ Կարաբեքիր փաշայի և ադրբեջանական գործակալ Իսմայիլ բեյի միջև. վերջինը ձգտում էր վերականգնել Գարավարևնտյան Կովկասի կառավարությունը ԱԴԳ հովանու ներքո, ԱԴԳ ծառայության հավաքագրել թուրք սպաների և այլն<sup>340</sup>։

Այսպիսով, թեև Շարուր-Նախիջևանում հաստատվեց ԳԳ իշխանությունը, ի տարբերություն Կարսի մարզի, Բաքուն պահպանեց այդ երկրամասում իր ռազմաքաղաքական գերակայության հաստատման հնարավորությունը։ Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ Շարուր-Նախիջևանի մուսուլման բնակչության առաջնորդները չարտաքսվեցին, և երկրամասը պահպանեց իր քաղաքական կազմակերպող ուժը։ Երկրորդ, չնայած տեղի ունեցավ հայ գաղթականության որոշ մասի վերադարձ, սակայն երկրամասում մուսուլմանները շարունակում էին կազմել մեծամասնություն, իսկ հայկական բնակավայրերը հեռու էին միմյանցից։ Եթե Կարսի մարզում հայկական զորքերն ունեին ամուր հենարան, ի դեմս Կարսի բերդի, ապա Շարուր-Նախիջևանում տեղակայված հայկական կայազորները չափազանց ցրված էին և խոցելի՝ գուրկ լինելով ռազմական ամրություններից։ Երրորդ, Անդրկովկասում բրիտանական հրամանատարության ջանքերով ի սկզբանե սահմանափակվեց ԳԳ քաղաքական և հատկապես ռազմական ազդեցությունը երկրամասում, ինչը բացասաբար անդրադարձավ Շարուր-Նախիջևանում ԳԳ իշխանությունների հեղինակության վրա։ Չորրորդ, Բաքուն կարողացավ կանոնավոր կապ հաստատել Շարուր-Նախիջևանի ղեկավարների հետ իր դիվանագիտական ներկայացուցչի միջոցով, համակարգել նրանց գործունեությունը, առաքել անհրաժեշտ ֆինանսական օգնություն, ուղարկել սպաներ և հրահանգիչներ, որոնք վարժեցնում էին տեղական զորքը։ Այս ամենը թուրքա-

<sup>339</sup> Ադրբեջանա-թուրքական զործակալները որոշ հաջողության հասան Սուրմալուի գավառում, քայք Կարսի մարզի հարավում մուսուլմանների ընդվզումները չեզոքացվեցին։ Տե՛ս R.G. Hovannisian, *Աշխ.աշխ.*, Vol. 2, p.84, 102-105:

<sup>340</sup> Տե՛ս А. Гаджиев, *Демократические республики...*, стр. 146-148; R.G. Hovannisian, *Աշխ.աշխ.*, Vol. 2, p.104-105:



կան ռազմական օգնության հետ մեկտեղ հանգեցրեց ապստամբության և երկրամասի նկատմամբ ԳԴ իշխանության կորստի:

## 2.5 ԿՈՎԿԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՎԺՈՂՈՎԸ: ԱՂԲԵՋԱՆԻ ԵՎ ԿՐԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ ՈԱԶՄԱԿԱՆ ԴԱԾԵԼՔԻ ԿՆՔՈՒՄԸ

ԱՂԴ հարաբերությունները Վրաստանի հետ 1918 թ. վերջին և 1919 թ. առաջին ամիսներին կարելի է բնորոշել՝ որպես համեմատաբար կասկածազուրկ: Աղբրեջանա-վրացական հակասությունները, թեև բազմաթիվ էին, սակայն չունեին սկզբունքային բնույթ: Նրանց միջև վիճելի էին Ջաքաթալայի օկրուգը, Ղարայազի դաշտը (Թիֆլիսի գավառ), Սղնախի և Բորչալուի գավառների մուսուլմանաբնակ տարածքները, Բաթումի մարզը, Արդահանի, Ախալքալաքի և Ախալցխայի գավառները: Սակայն տարածքային հարցն առժամանակ հարթվեց Անդրկովկասում Գերմանիայի և Թուրքիայի ազդեցության գոտիների միջև բաժանարար գծի հաստատման միջոցով, որի արդյունքում Ջաքաթալայի օկրուգը մնաց ԱՂԴ տարածքում, իսկ Թիֆլիսի նահանգի արևելյան գավառների մուսուլմանաբնակ հատվածները՝ Վրաստանի սահմաններում: Պատերազմում Օսմանյան Թուրքիայի պարտությունը ԱՂԴ-ին ստիպեց մեղմել իր ագրեսիվ նկրտումները Վրաստանի նկատմամբ: Դաշնակիցների միջամտությամբ Վրաստանի օգտին լուծվեց Ախալցխայի և Ախալքալաքի գավառների պատկանելության հարցը (Բաթումի մարզը շարունակում էր գտնվել դաշնակիցների ուղղակի կառավարման տակ): Ֆինանսական, Անդրկովկասի գույքի բաժանման խնդիրները ևս կարգավորվեցին ԳԴ-ի և Վրաստանի միջև կնքված համաձայնագրին ԱՂԴ-ի միացմամբ:

Մինչդեռ Աղբրեջանին և Վրաստանին միավորող գործոնները շատ ավելի ազդեցիկ էին և բազմազան: Նրանց տարածքով էին անցնում Անդրկովկասի հաղորդակցության հիմնական ուղիները, այն է՝ Բաքու-Թիֆլիս-Բաթում երկաթուղին և Բաքու-Բաթում նավթամուղը: Վրաստանի և ԱՂԴ տարածքներում էին գտնվում Անդրկովկասի տնտեսական և ռազմավարական նշանակություն ունեցող խոշորագույն կենտրոնները՝ Բաքուն, Բաթումը, Թիֆլիսը: Այդ ամենն անխուսափելի էր դարձնում նրանց միջև տնտեսական ամենասերտ համագործակցությունը: Առկա էին նաև լուրջ նախադրյալներ աղբրեջանա-վրացական քաղաքական գործակցության համար: Նրանք շատ ավելի բարդ տարածքային վիճելի հարցեր ունեին իրենց երրորդ հարևան Գայաստանի հետ: ԱՂԴ-ի և Վրաստանի միջազգային դրությունն ուներ ընդհանուր շատ գծեր ու միաժամանակ բավականին տարբերվում էր Գայաստանի միջազգային իրավիճակից<sup>341</sup>:

<sup>341</sup> Տե՛ս 3. Аваловъ, 62վ.աշխ., стр.170: ԱՂԼ, Վրաստանի ու Լեռնականների Հանրապետության պատվիրակությունները Փարիզում սերտորեն համագործակցում էին միմյանց հետ՝ նրանց միջազգային ճանաչման, Դեմիլիտի դեմ պայքարի, Անդրկովկասի դաշնության ստեղծման և այլ հարցերում: Տե՛ս А. Раевский, Мусаватское правительство на Версальской конференции, Баку, Азербайджанский научно-исследовательский институт, Известия, Т. 1, Выпуск 1, 1930, стр. 38, 43-45:

Սակայն առաջնային գործոնը, որն ստիպեց ԱԴԳ-ին և Վրաստանին մոռանալ ներքին տարածայնությունները և խթանեց նրանց մերձեցումը, հանդիսացավ արտաքին վտանգն, ի դեմս Ռուսաստանի հարավում ուժ հավաքող կամավորական շարժման:

1919 թ. փետրվարի 21-ին Վրաստանի արտաքին գործերի նախարար Ե. Գեգեչկորին ԳԳ, ԱԴԳ և Լեռնականների Զանրապետության կառավարություններին ուղղված հայտագրով առաջարկեց զումարել Կովկասյան հանրապետությունների խորհրդատուով՝ լուծելու համար հանրապետությունների միջև երկաթուղային հաղորդակցության կամոնակարգման, փոստ-հեռագրական կապի հաստատման համար համանման օրենսդրական ակտերի ընդունման, մաշտային, ֆինանսական և ապրանքափոխանակության ոլորտի հարցերը<sup>342</sup>: ԱԴԳ կառավարությունն անմիջապես ստվեց իր համաձայնությունն ու առաջարկեց քննարկել նաև քաղաքական քնույթի հարցերը, այն է՝ 1) խորհրդատուովին մասնակցող կովկասյան հանրապետությունների անկախության փոխադարձ ճանաչում<sup>343</sup>, 2) խաղաղ խորհրդատուովում և ամենուր, որտեղ դա հարկավոր է, համատեղ հանդես գալ ի շահ կովկասյան հանրապետությունների անկախության պաշտպանության, 3) կանխարգելիչ միջոցառումների մշակում իրենց անկախության և կաստմամբ ոտնձգությունների դեմ՝ ուն կողմից էլ որ դրանք լինեն, 4) բոլոր սահմանային վեճերի կարգավորում համաձայնության գալու միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ արբիտրաժով, 5) գաղթականների հարցի լուծում<sup>344</sup>:

Վրաստանը համաձայնեց Ադրբեջանի առաջարկություններին խորհրդատուովի օրակարգի հարցում, մինչդեռ Երևանը ԱԴԳ-ին պաշտոնապես հայտնեց, որ կողմնակից լինելով կովկասյան հանրապետությունների անկախությանը՝ ԳԳ կառավարությունը կտեղեկացնի ԱԴԳ կառավարությանն իր կողմից Ադրբեջանի անկախության ճանաչման մասին՝ այնպես, ինչպես դա արդեն արել է Վրաստանի դեպքում: Իսկ այդ կապակցությամբ բոլոր տերություններին ուղղված հանդիսավոր ակտի իրապարակումը ԳԳ կառավարությունը համարում էր հնարավոր և տեղին միայն հանրապետությունների միջև տարածքային հարցի խաղաղ կարգավորումից հետո: ԳԳ կառավարությունը հայտնում էր, որ տարածքային հարցի լուծումը պետք է նախադրյալ դառնար վերոհիշյալ հանրապետությունների անկախությանն ի շահ հանդես գալու և այդ անկախությունը հնարավոր վտանգներից պաշտպանելու գործում միջոցառումների վերաբերյալ համաձայնագրերի համար<sup>345</sup>: Միաժամանակ Զայաստանը, երկյուղելով խորհրդատուովում Վրաստանի, Ադրբեջանի և Լեռնականների

<sup>342</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.149, ք.11:

<sup>343</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.293, ք.33:

<sup>344</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.149, ք.15: ՀՀ և Լեռնականների կառավարությունները ևս համաձայնեցին խորհրդատուով գումարելուն: Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.149, ք.15; R.G. Hovhannisian, *ԵԿՎ.աշխ.*, Vol.1, p.355:

<sup>345</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.149, ք.21:



րի Հանրապետության կողմից հակահայկական բլոկի ստեղծումից, պահանջ դրեց, որ տարածքային հարցերը լուծվեն երկկողմ, այլ ոչ թե քառակողմ ձևաչափով<sup>346</sup>։ ՀՀ ղեկավարության երկյուղներն անհիմն չէին. վրաց ազգային դեմոկրատները հանդես էին գալիս վրաց-ադրբեջանական ամենասերտ գործակցության օգտին:

1919 թ. ապրիլի 25-ին թիֆլիսում բացվեց Կովկասի չորս հանրապետությունների խորհրդաժողովը<sup>347</sup>, որի մեկուկես ամիս տևած աշխատանքների ընթացքում քննարկվեցին խնդրահարույց գրեթե բոլոր ոլորտները: Մայիսի 3-ին ընդունված օրակարգն ընդգրկում էր երկաթուղային, փոստ-հեռագրական, ֆինանսական, մաքսային, ապրանքափոխանակության, տարածքային սահմանազատման, Կովկասի հանրապետությունների փոխադարձ ճանաչման, նրանց անկախության պաշտպանության գործում համատեղ հանդես գալու, հանրապետությունների անկախության դեմ դավադրությունները կանխելու, հպատակության, գաղթականների, դատախրավական ոլորտների հարցերը<sup>348</sup>: Ստեղծվեց յոթ հանձնաժողով այդ հարցերը քննելու համար: Այդ հանձնաժողովներն էին՝ տարածքային վեճերի լուծման ընդհանուր սկզբունքների մշակման, երկաթուղային և փոստ-հեռագրական, ֆինանսական, քաղաքական, դատախրավական, գաղթականների և քուչվորների հարցերի հանձնաժողովները<sup>349</sup>:

Ի սկզբանե ակնհայտ էր, որ խորհրդաժողովն ի վիճակի չէր լինելու կարգավորել տարածքային վեճերը, ուստի որոշվեց սահմանափակվել դրանց կարգավորման ընդհանուր սկզբունքների մշակմամբ: Ըստ որում, Ադրբեջանի ներկայացուցիչները պնդում էին առաջին հերթին խորհրդաժողովում տարածքային հարցի քննարկման վրա, առանց որի կարգավորման հնարավոր չէին համարում անցնել մյուս հարցերին: Լեռնականների Հանրապետության պատվիրակությունն առաջարկում էր սկզբից քննարկել քաղաքական ոլորտի հարցերը, մինչդեռ Հայաստանի և Վրաստանի ներկայացուցիչները գտնում էին, որ հարցերը պետք է լուծվեին հանձնաժողովներից դրանց գալուստի համընթաց՝ այլ հարցերի կարգավորումը չպայմանավորելով տարածքային հարցերի լուծմամբ<sup>350</sup>:

1919 թ. մայիսի 14-ին կայացավ տարածքային վեճերի լուծման ընդհանուր սկզբունքների մշակման հանձնաժողովի նիստը, որի ժամանակ Ադրբեջանի ներկայացուցիչ Ֆ. Խան Խոյսկին կարևորեց տնտեսական և պատմական սկզբունքները տարածքային հարցի լուծման գործում: Հայկական կողմն իր հերթին չուզում էր, որ խորհրդաժողովը պետք է լուծեր միայն հանրապետությունների միջև հարակից շրջաններին վերա-

<sup>346</sup> Տե՛ս R.G.Hovhannisian, *Աշխատառք*, Vol. 2, p.356:

<sup>347</sup> Տե՛ս Աշխատառք, # 82, 1919 թ. ապրիլի 29; Եօթեճա, #93, 1919 թ. ապրիլի 30:

<sup>348</sup> Տե՛ս Աշխատառք, # 87, 1919 թ. մայիսի 6; Եօթեճա, #97, 1919 թ. մայիսի 6:

<sup>349</sup> Հանձնաժողովների անհատական կազմի տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.291, ք. 308:

<sup>350</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.291, ք.266; Եօթեճա, #97, 1919 թ. մայիսի 6 և R.G. Hovannisian, *Աշխատառք*, Vol. 1, p.358:

քերող վեճերը, ըստ որում դրանց լուծման հիմքում պետք է դրվեին հիմնական՝ ազգային ինքնորոշման և լրացուցիչ այլ սկզբունքները: Գր պատվիրակությունը պահանջում էր մերժել տնտեսական սկզբունքը, քանի որ տնտեսական առումով ողջ Անդրկովկասը ձգտում էր դեպի Ռուսաստանը, իսկ Անդրկովկասի հանրապետությունները՝ դեպի Վրաստանը և, բացի այդ, Թուրքախայստանի ճակատագիրը դեռ չէր վճռվել, ու ԳԳ-ն չունեի ինքնուրույն ելք դեպի ծով: Իսկ վրացական կողմը նշում էր, որ, ի տարբերություն վարչական բաժանման, խոսքը գնում էր պետական սահմանազատման մասին, որի դեպքում ընդունելի չէր բացառապես ազգային ինքնորոշման իրավունքով ղեկավարվելը<sup>351</sup>:

Հանձնաժողովի մայիսի 17-ի նիստում ԱԳԳ պատվիրակ էս. Խասմանդովը ներկայացրեց ԱԳԳ պատվիրակության քեզերը՝ «1. Վիճելի կարող են համարվել այն տարածքները, որոնք հարակից են դրանք վիճարկող հանրապետությունների տարածքին, 2. Տարածքային վեճերի կարգավորման հիմքում պետք է դրվի բնակչության կամաարտահայտության սկզբունքը՝ ինքնորոշումը, 3. Եթե վիճարկվում է մի տարածք, որն իր տնտեսական-կենցաղային և պատմական պայմաններով կապված է ամբողջական այլ շրջանների հետ, ապա հանրաքվեն անցկացվում է բոլոր այդ շրջանների բնակչության մեջ՝ ամբողջության մեջ վերցրած»<sup>352</sup>:

Նման վերապահումով ԱԳԳ-ն առաջարկում էր հանրաքվե անցկացվել փաստորեն ոչ միայն Լեռնային Ղարաբաղում ու Ջանգեզուրում, այլ նաև միաժամանակ Ղարաբաղի դաշտային մասում՝ այն հիմնավորմամբ, որ այդ շրջանները միայնազ հետ տնտեսապես կապված էին: Իսկ ողջ Ղարաբաղում ընդհանուր հանրաքվե անցկացնելու դեպքում նրա արդյունքները կլինեին ԱԳԳ օգտին, քանի որ Ջևանշիրի, Շուշիի, Կարյազինի և Ջանգեզուրի գավառներում մուսուլմանները մեծամասնություն էին կազմում: Այսպիսով, մի կողմից, կարծես թե, Բաքուն համաձայն էր ազգային ինքնորոշման սկզբունքի հետ, մինչդեռ իրականում առաջարկում էր ղեկավարվել տնտեսական սկզբունքով: Ի պատասխան, ԳԳ պատվիրակությունն առաջ քաշեց իր նախագիծը՝ ըստ որի. «Անդրկովկասում ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա սկսված և դեռևս չավարտված Անդրկովկասի հանրապետությունների ձևավորումը պետք է ավարտվի այնպես, որ յուրաքանչյուր ազգին անցնի այնպիսի կոմպակտ տարածք, որը կներառի այդ ազգի զբաղի մեծամասնությունը Անդրկովկասի սահմաններում՝ այլ հանրապետությունների իշխանության տակ թողնելով այդ ազգի աննշան փոքրամասնությունը»: Իսկ Վրաստանի պատվիրակության քեզերն էին՝ «1. Խորհրդաժողովի առջև խնդիր է դրված հեղափոխության մեծ կարգախոս ազգերի ինքնորոշման իրավունքի իրագործման հիման վրա ձևավորված Անդրկովկասի հանրապետությունների սահմանազատումը: 2. Քննարկման ենթակա կարող են լինել միայն

<sup>351</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.291, ք.410-411:

<sup>352</sup> Տե՛ս նույն տեղում:



հարակից շրջանները: 3. Վիճելի հարցերը լուծելիս պետք է ղեկավարվել, բացի բնակչության կամ արտադրատեսակներից, պետությունների պատճառով և Վիճարկվող սահմանների տնտեսական-կենցաղային պայմաններով»<sup>353</sup>: Թեզերի հրապարակումից հետո կողմերը միաձայն ընդունեցին, որ վիճելի կարող էին համարվել միայն հարակից տարածքները: Միաժամանակ ԱԴԴ և Վրաստանի պատվիրակները մերժեցին ԳԳ պատվիրակության նախագիծը: Այսպես, Վրաստանի ներկայացուցիչ Ե. Տակայշվիլին գտնում էր, որ Անդրկովկասի հայերի մեծամասնության ընդգրկումը հայկական պետության մեջ անհնար էր, առանց զգալի վնաս հասցնելու հարևան հանրապետություններին: Նրա կարծիքով հայկական պետությունը իր հարևանների համեմատությամբ շատ ավելի մեծ ծավալով կարող էր ստեղծվել թուրքահայերի հետ միասին<sup>354</sup>: Այսպիսով, տարածքային հանձնաժողովի աշխատանքի հենց առաջին օրերից ի հայտ եկան տարածայնություններ մի կողմից՝ ԱԴԴ-ի և Վրաստանի ու մյուս կողմից՝ ԳԳ-ի միջև. թե՛ ԱԴԴ-ն և թե՛ Վրաստանը ինքնորոշման սկզբունքի հետ մեկտեղ առաջ էին քաշում սահմանազատման տնտեսական, ռազմավարական և այլ սկզբունքներ<sup>355</sup>:

Հանձնաժողովի մայիսի 29-ի նիստում շարունակվեցին բանավեճերը սահմանազատման սկզբունքների առաջնայնության վերաբերյալ: Նույն նիստում ներկայացվեց Լեռնականների Հանրապետության պատվիրակության մշակած նախագիծը, որում առաջնային էր համարվում ազգերի ինքնորոշման սկզբունքը, իսկ հանրաքվեի արդյունքում ձայների բացարձակ կամ սահմանված մեծամասնության չհասնելու դեպքում տարածքային վեճը պետք է լուծվեր այս կամ այն պետության հետ վիճելի տարածքի տնտեսական կապի հիման վրա<sup>356</sup>: Ն. Ռամիշվիլին առաջարկեց, որ հանրապետությունների միջև տարածքային հարցի շուրջ համաձայնության բացակայության դեպքում այն պետք է հանձնվեր արբիտրաժին: Հանձնաժողովն ընդունեց երեք կետերից բաղկացած բանաձև, որի առաջին երկու կետերը կրկնում էին Վրաստանի պատվիրակության ներկայացրած նախագիծի 1-ին և 2-րդ կետերը, իսկ 3-րդ կետում սահմանվում էր. «Վերոհիշյալ վեճերի կարգավորումը հանձնվում է շահագրգիռ հանրապետությունների համաձայնությանը, իսկ դրա բացակայության դեպքում վեճերը լուծվում են արբիտրաժի միջոցով»<sup>357</sup>:

Ի թիվս տարածքային հարցի, խորհրդաժողովի օրակարգի ոչ պակաս կարևոր խնդիր դարձավ Անդրկովկասի հանրապետությունների՝ Ռուսաստանի Հարավի Ջիվված ուժերի հնարավոր հարձակմանը համա-

<sup>353</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.291, ք.410-411:

<sup>354</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>355</sup> Տե՛ս Աշխատատր, #104, 1919 թ. մայիսի 25: Վրաստանի ազգային-դեմոկրատական կուսակցության մամուլը գրում էր, որ խորհրդաժողովի աշխատանքներն արգելակվում էին հայերի տարածքային հավակնությունների պատճառով, ուստի Վրաստանը, Ադրբեջանը և Լեռնականների Հանրապետությունն իրենք պետք է համաձայնության գան: Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.291, ք.396:

<sup>356</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>357</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.291, ք.422:

տեղ դիմադրություն ցույց տալու հարցը: Այն ժամանակ, երբ տեղի էին ունենում խորհրդաժողովի աշխատանքները, Ա. Դեմիկիմի ուժերը փաստորեն ավարտեցին Գյուսիսային Կովկասի գրավումը՝ հասնելով մինչև Դերբենդ: Առաջինը տազնապի ծայրը հնչեց Լեռնականների Դանրապետության պատվիրակության կողմից, որի անդամներից Ա. Օալիկովը խորհրդաժողովին ուղղված բաց նամակում առաջարկում էր առաջին հերթին քննարկել դեմիկիմյան վտանգի հարցը, քանի որ դա Անդրկովկասի բոլոր ժողովուրդներին վերաբերող հարց էր: Նա նշում էր, որ Լեռնական ժողովուրդներին նվաճելուց հետո Դեմիկիմը կգրավեր ողջ Անդրկովկասը, ուստի կոչ էր անում զինված օգնություն ցուցաբերել Լեռնականներին<sup>358</sup>:

Կարևոր նշանակություն էին տալիս այդ հարցին նաև ԱԴԳ-ն և Վրաստանը: Վրաստանի Սահմանադիր ժողովի հունիսի 1-ի նիստում ԱԳ նախարար Ե. Գեգեչկորին նշեց, որ հնարավոր էր ռազմական գործողությունների վերսկսում նաև Սոչիի ճակատում: Գայտնելով, որ Դեմիկիմի դեմ պայքարում Վրաստանը միայնակ չէր, և ԱԴԳ-ն ևս պատրաստվում էր դիմադրություն ցույց տալ, Գեգեչկորին ընդգծեց, որ վտանգն Անդրկովկասի ժողովուրդների մեջ է, և «եթե մեր մեջ կրկին սկսվեն խոսակցությունները չեզոքության մասին և այն մասին, որ տվյալ դեպքում մենք չենք գործում ընդհանուր թշնամու դեմ, ապա այդ ժամանակ հնարավոր է աղետը»<sup>359</sup>:

Վրաստանը և Ադրբեջանը սկսեցին համատեղ դիվանագիտական ճնշում գործադրել հայկական պատվիրակության վրա՝ նիստերի միջև ընկած ոչ պաշտոնական հանդիպումներում փորձելով համոզել հայկական կողմին միավորվել Դեմիկիմի դեմ տարածաշրջանային պաշտպանական դաշինքի մեջ<sup>360</sup>: Սակայն չկարողանալով ոչ պաշտոնական քննարկումների ժամանակ հասնել ԳԳ դիրքորոշման փոփոխությանը՝ վրացական և ադրբեջանական պատվիրակությունները փոխեցին մարտավարությունը. 1919 թ. հունիսի 9-ի պաշտոնական նիստում Ն. Ռամիշվիլին առաջարկեց ընդունել բանաձև, որում դատապարտվում էր Դեմիկիմի ագրեսիան և որոշվում էր նրա դեմ պայքարի նպատակով միավորել Անդրկովկասի պետությունների ռազմադիվանագիտական ջանքերը<sup>361</sup>: Բանաձևի օգտին արտահայտվեց ԱԴԳ պատվիրակությունը, մինչդեռ հայկական կողմը հայտարարեց, որ լիազորված չէ կնքել ռազմական դաշինքներ, ու, բացի այդ, առաջարկված որոշումը միակողմանի է. նրանում խոսվում է միայն դեմիկիմյան վտանգի մասին, որը, միգուցե, չափա-

<sup>358</sup> Տե՛ս Եօրթե, #98, 1919 թ. մայիսի 7:

<sup>359</sup> Իր նյութում Գեգեչկորին ակնարկում էր ՀՀ-ին: Տե՛ս Եօրթե, #120, հունիսի 3: Եօրթե-ն նշում էր, որ, եթե ՀՀ կառավարությունը զմար իր ժողովրդի մեկուսացման ուղիով, ապա դա կնշանակեր դավաճանություն դեմոկրատիայի և ազատության գործին: Տե՛ս Եօրթե, #126, 1919 թ. հունիսի 11:

<sup>360</sup> Տե՛ս R.G. Hovhannisian, նշվ. աշխ., Vol. 1, p.358-359:

<sup>361</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.198, ք.146



զանցված է: Մինչդեռ Անդրկովկասի ժողովուրդների համար վտանգ կա հարավից՝ թուրքերից:

Ի պատասխան, ԱԴԳ պատվիրակ խան խոյսկին իր հերթին հերքեց հարավից վտանգի առկայությունը. Թուրքիան բզկտվում է և Անդրկովկասով զբաղվելու ժամանակ չունի: Այդուհանդերձ, ԱԴԳ պատվիրակությունը չէր առարկում, որ բանաձևի մեջ ուղղում մտցվեր Անդրկովկասի հանդեպ ցանկացած վտանգի դեմ ընդհանուր պայքարի մասին, որտեղից էլ բխեր այդ վտանգը:

Սակայն հայկական կողմը նշեց, որ ռազմական դաշինքի կնքման համար ժամանակ է հարկավոր, և դրա համար պահանջվում է ԳԳ կառավարության կողմից համապատասխան որոշման ընդունում: Բացի այդ, շեշտվում էր, որ խորհրդաժողովի ծրագիրը սկզբից նախատեսում է տնտեսական հարցերի լուծում, ու, քանի դեռ դրանց շուրջ համաձայնություն չի կայացվել, թույլատրելի չի անցնել օրակարգի մյուս հարցերին: ԳԳ ԱԳ նախարար Ս. Տիգրանյանն առաջարկեց ուղղակի ընդունել խաղաղ խորհրդաժողովին ուղղված բանաձև, որը կդատապարտեր արտաքին ագրեսիան Անդրկովկասի հանդեպ: Այլ կերպ ասած՝ ԳԳ պատվիրակությունն առաջարկում էր բավարարվել ոչնչով չպարտավորեցնող բանաձևով<sup>362</sup>:

Այսպիսով, Դենիկինի դեմ բազմակողմ պաշտպանական դաշինքի ստեղծման փորձերի ծախսողման պայմաններում 1919 թ. հունիսի 2-րդ շաբաթուն ընդհատվեցին խորհրդաժողովի աշխատանքները: Սակայն ընդհանուր վտանգն ստիպեց ԱԴԳ-ին և Վրաստանին մի կողմ դնել փոխադարձ տարածայնությունները, և երկու պետությունները սկսեցին նախնական բանակցություններ երկկողմ պաշտպանական դաշինքի ստորագրման ուղղությամբ: Ավելին, թե՛ ԱԴԳ-ն և թե՛ Վրաստանը չէին կարող չգիտակցել, որ հյուսիսային հարևանի և Անդրկովկասի երրորդ հանրապետության՝ Հայաստանի միջև առկա էր շահերի որոշակի ընդհանրություն:

Չկարողանալով Հայաստանը ներքաշել հակադենիկինյան կոալիցիայի մեջ՝ Վրաստանը և Ադրբեջանը ակտիվորեն սկսեցին մերձենալ արտաքին վտանգին դիմակայելու հողի վրա: Սեկնաբանելով վրաց-ադրբեջանական բարեկամությունը ԳԳ ԱԳ նախարար Ս. Տիգրանյանը 1919 թ. հունիսի 16-ի իր զեկույցում գրում էր. «Մոլիվանին օրեր առաջ ասել էր, թե, եթե հայերը չգիջեք, մենք ստիպված կմիանանք թաթարների հետ: Սեր քաղաքական գործակցության անհրաժեշտությունը մերժել էին, իսկ մեր չեզոքությունը, առանց դաշնագրի և կոմբինացիայի, ապահովելու

<sup>362</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.198, ք.146; Աշխատատր, #116-118, 1919 թ. հունիսի 13-15; Борьба, #126, 1919 թ. հունիսի 11; R.G. Hovannisian, նշվ.աշխ., Vol. 1, p.359; Кавказское слово #114, 1919 թ. հունիսի 14: Տե՛ս նաև Հայրենիք, #2324, 1919 թ. դեկտեմբերի 20; Ռուբին, նշվ. աշխ., էջ 256-257; Գ. Պետրոսյան, Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի Հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918 թ. հունիս-նոյեմբեր), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2004, էջ 26-66:

հաստատ ու բավարար միջոցը գտել էին Հայաստանի ներսը և դուրսը մուսուլմանների հարձակումներով ու սպառնալիքներով մեր ուժերը զբաղեցնելու, ջլատելու և չեզոքացնելու մեջ»<sup>363</sup>:

1919 թ. հունիսի 16-ին Թիֆլիսում ստորագրվեց վրաց-ադրբեջանական պաշտպանական դաշինք: Դաշնագրի հիմնական կետերն էին՝ 1. Կողմերը պարտավորվում էին համատեղ բոլոր զինված ուժերով և ռազմական միջոցներով հանդես գալ միմյանց անկախությանը և տարածքային ամբողջականությանն սպառնացող ցանկացած հարձակման դեմ: Հատուկ ծանոթագրության մեջ ամրագրվում էր, որ այդ կետը չէր տարածվում սահմանային ընդհարումների վրա, որոնք կարող էին առաջանալ Անդրկովկասի հանրապետությունների դեռ չավարտված տարածքային սահմանազատման հողի վրա: 2. Համաձայնագիրը կրում էր խիստ պաշտպանողական բնույթ, և եթե կողմերից մեկն իր սեփական նախաձեռնությամբ, առանց նախնական համաձայնության, պատերազմ էր հայտարարում, ապա մյուս պայմանավորվող կողմը պարտավոր չէր մասնակցել դրան: 3. Կողմերը պարտավորվում էին միմյանց միջև ծագող սահմանային բոլոր վեճերը լուծել համաձայնության կամ արբիտրաժի միջոցով: 4. Կողմերը պարտավորվում էին համերաշխ հանդես գալ և վարել երկու պետությունների անկախությանը և ինքնիշխան իրավունքների պաշտպանությանն ուղղված դիվանագիտական բանակցություններ: 5. Արշ-ն և Վրաստանը պարտավորվում էին այլ պետությունների հետ ռազմական պայմանագիր չկնքել, առանց դաշնակցի նախնական համաձայնության: Դաշնագրի 10-րդ կետով նրա պաշտոնական հրապարակումից հետո 15 օրվա ընթացքում անդրկովկասյան երրորդ հանրապետությունը՝ ՀՀ-ն կարող էր միանալ նրան<sup>364</sup>:

Խորհրդածողովից հետո էլ Արշ-ն և Վրաստանը շարունակեցին ակտիվ բանակցությունները ՀՀ-ի հետ՝ վերջինին ռազմական դաշինքի մեջ ներգրավելու համար: Ընդ որում, շարունակաբար ընդօժիվում էր, որ դաշինքը բացառապես պաշտպանական բնույթ ունի և ամենևին նպատակ չունի մեկուսացնել Հայաստանը<sup>365</sup>: 1919 թ. հունիսի 26-ին ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլովի հետ հանդիպման ժամանակ Արշ ԱԳ նախարար Ա. Յու. Ջաֆարովը կրկին առաջարկեց միանալ վրաց-ադրբեջանական դաշինքին՝ նշելով, որ, եթե Թուրքիան ուզեմար անցնել 1914 թ. սահմանները, Ադրբեջանն իր պարտքը կհամարեր իր զորքերն ուղարկել Հայաստան՝ վերջինի շահերը պաշտպանելու համար: Մ. Յու. Ջաֆարովը միաժամանակ հայտնեց, որ 1914 թ. սահմաններից դուրս Ադրբեջանը չէր կարող օգնել ՀՀ-ին, ինչպես և չէր օգնի Վրաստանին, եթե վերջինն, օրինակ, հավակնություններ ներկայացներ Լազիստանի հան-

<sup>363</sup> Տես՝ Մ. Վրացյան, նշվ. աշխ., էջ 367:

<sup>364</sup> Դաշնագրի ամբողջական տեքստը տես՝ *Наше время*, # 112, 1919 թ. հունիսի 21:

<sup>365</sup> Տես՝ *Борьба*, #138, 139, 1919 թ. հունիսի 25-26; *R.G. Hovhannissian*, նշվ. աշխ., Vol. 1, p. 382: Վրացական մամուլի արձագանքների համար տես՝ նաև, ՀԱԱ, ֆ.200, գ.291, ք.487, 526; *Наше время*, #113, 1919 թ. հունիսի 22; *R.G. Hovhannissian*, նշվ. աշխ., Vol. 1, p.383:



դեպ: Իր պատասխան խոսքում Լ. Եվանգոլուովն անհավանական էր համարում, որ ԱԴԳ-ն և Վրաստանը ռազմական գործողություններ կսկսեին Կամավորական բանակի դեմ՝ նշելով, որ կադրային ռուս սպաները չէին կռվի իրենց նախկին զինակիցների դեմ, Ադրբեջանն արդեն իսկ Կամավորական բանակին նավթ էր մատակարարում, իր տարածք էր բաց թողնում զննացքներ նրա հսկողության տակ գտնվող տարածքից՝ միաժամանակ սահմանափակումներ մտցնելով ԳԳ-ի համար<sup>366</sup>:

Այսպիսով, չհաջողվեց ադրբեջանա-վրացական դաշինքը դարձնել եռակողմ: Ամեն դեպքում Ադրբեջանի քաղաքական ղեկավարությունը Վրաստանի հետ ռազմական դաշինքը համարում էր կարևոր ձեռքբերում երկրի անվտանգության ապահովման գործում: Համարելով, որ Ադրբեջանին սպառնում է պատերազմ երկու ճակատով՝ ընդդեմ Կամավորական բանակի և Հայաստանի, Ուսուրբեկովի կառավարությունը 1919 թ. հունիսի 16-ի դաշինքը դիտում էր՝ որպես այդ սպառնալիքը որոշակի չափով չեզոքացնող գործոն: Ադրբեջանի զինվորական նախարար գեներալ Մեհմանդարովը գրում էր Պետական պաշտպանության կոմիտեին. «ռազմական դաշնագիրը Վրաստանի հետ ամրապնդեց մեր ռազմաճակատը Ղաղըստանի և Հայաստանի հետ սահմանի պաշտպանության գործում»<sup>367</sup>:

Ադրբեջանական բանակի գլխավոր շտաբը մշակեց գործերի ծավալման ծրագիր, որով ենթադրվում էր Կամավորական բանակի հարձակումը Հայաստանի անպայման մասնակցությամբ: Փաստաթղթում, մասնավորապես, նշվում էր. «Ի լրումն «Վրաստանի հետ ռազմական համաձայնագրի հարցի շուրջ ընդհանուր նկատառումներ» գրությանը, ... պետք է հայտնեն հետևյալը՝ վերջին վեց ամսվա ընթացքում բավականին հստակ արտահայտվեցին Կամավորական բանակի ագրեսիվ մտադրությունները և Հայաստանի հետ սերտ կապը: Այսպես, Ղաղստանում Կամավորական բանակի առաջխաղացմանը զուգընթաց՝ հայերը սկսեցին կենտրոնանալ Ղարաբաղի սահմանների և Դիլիջանի մոտ: Իր հերթին դեպի Ջանգեզուր արշավի սկսվելուն պես Կամավորական բանակը ձեռնարկում է մի շարք հարձակողական գործողություններ Ղաղստանում՝ թույլ զանգեզուրյան ջոկատին որպես օգնություն արդեն իսկ ուղարկված մեր պահեստի ուժերը շեղելու համար: ... Այդ բոլոր տվյալները ստիպում են Կամավորական բանակի հետ ընդհարման դեպքում հաշվարկների մեջ մտցնել Հայաստանի պարտադիր մասնակցությունը, որը դեռ անավարտ հաշիվներ ունի Վրաստանի և Ադրբեջանի հետ»: Փաստորեն, ԱԴԳ ղեկավարությունը ռազմական շինարարության գործում ելնում էր երկու ճակատով պատերազմելու հավանականությունից: Վերոհիշյալ փաստաթղթի համաձայն՝ «հավանական օպերատիվ ուղղությունները, որոնցով հնարավոր է կամավորականների և հայերի հարձակումը, հանդիսանում են՝ 1.Յալամա կայարան-Խաչմազ-Բաքու, 2.Դիլիջան-Ղազախ-Աղստաֆա,

<sup>366</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ.200, ց.1, գ.181, ք.425:

<sup>367</sup> Տե՛ս А. Раевский, Английская интервенция..., стр. 108:

3. Դիլիջան-Կեդաբեկ-Գյանջա (Գանձակ), 4. Գերուսի (Գորիս)-Շուշի-Եվլախ ուղղությամբ»։ ԳԳ-ին Դեմիկիմի հետ համագործակցության մեջ մեղադրում էր նաև Վրաստանը։ ԳԳ դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլովին զինվորական նախարարի տեղակալ զեմերալ Գեդևանովը հայտարարեց, որ ԳԳ-ն ոչ իրապարակային դաշինքի մեջ է ծովակալ Կուչակի և զեմերալ Դեմիկիմի հետ, ու ինքն ունի դրա ապացույցները<sup>368</sup>։ ԳԳ-ում ԱԳԳ դիվանագիտական ներկայացուցիչ Մ.Խ. Թեքիմսկին ևս մատնանշելով, որ Կամավորական բանակի առաջխաղացումը հայերին ուրախություն է պատճառում, գրում էր. «Եթե մեր հարաբերությունները Կամավորական բանակի հետ լարվեն, հայերը դեպի մեզ թշնամական դիրք կգրավեն, ուստի անհրաժեշտ է Հայաստանի համար Շարուր-Նախիջևանում ստեղծել վտանգ»<sup>369</sup>։

Այսպիսով, ԱԳԳ և Վրաստանի մերձեցման հիմքում էին ընկած հետևյալ գործոնները.

\* Երկու հանրապետություններն էլ տարածքային հավակնություններ ունեին ԳԳ-ի նկատմամբ, և դա կանխորոշեց Անդրկովկասի խորհրդածողվում նրանց դիրքորոշումների համանմանությունը տարածքային հարցի լուծման սկզբունքների և մեթոդների հարցում։

\* ԱԳԳ-ի և Վրաստանի համար իրական սպառնալիք էին հանդիսանում Ռուսաստանի Հարավի Ձինված ուժերը Ա. Դեմիկիմի գլխավորությամբ, և այդ ընդհանուր վտանգն ստիպեց նրանց հետին պլան մղել քաղաքական, սահմանային, տնտեսական հակասությունները և միավորել ջանքերն իրենց անկախությունն արտաքին ագրեսիայից պաշտպանելու համար։

\* Երկու պետությունների առջև կանգնած էր միջազգային ճանաչման կարևորագույն խնդիրը, որի լուծումը երկուսի համար էլ բարդանում էր Քառյակ միության հետ սերտ հարաբերությունների և համագործակցության պատճառով։

## 2.6 ԱԳԳ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱԿԻ ԶԻՆԱՎՈԾ ՈՒՇԵՐԻ (ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՆԱԿ) ՀԵՏ

Ադրբեջանի կովկասյան քաղաքականության առաջնային ուղղություններից մեկը հանդիսացել են հարաբերությունները զեմերալ Անտոն Դեմիկիմի գլխավորած Ռուսաստանի Հարավի Ձինված ուժերի հետ, որոնք առանցքային նշանակություն ունեին ԱԳԳ կովկասյան քաղաքականության ընդհանուր կուրսի և Հայաստանի, Վրաստանի, Լեռնականների Հանրապետության հետ երկկողմ հարաբերությունների համար։ Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ ադրբեջանական պետականության կայացման, ամրապնդման և միջազգային ճանաչման ճանապարհին հիմնական խոչընդոտը շարունակում էր մնալ միասնական Ռու-

<sup>368</sup> Տե՛ս А. Стеклов, *«Եվլախ, с. 34-35»*։ Տե՛ս ՀԱՄ, ֆ. 200, ց. 1, գ. 181, ք. 423։

<sup>369</sup> Տե՛ս Գաղտնի փաստաթղթեր..., էջ 27։



սաստանի վերականգնման հնարավորությունը, որի ջատագովմ ու հետևողական իրականացնողը Ա. Դենիկինն էր: Այդ խոչընդոտի վերացումն էլ հանդիսանում էր Ռուսաստանի Հարավի հետ հարաբերություններում ԱԴՀ արտաքին քաղաքականության գերխնդիրը:

Իր տրամադրության տակ միավորելով զգալի ուժեր՝ Դենիկինն անհապաղ ձեռնամուխ եղավ դեպի հարավ առաջխաղացմանը՝ կովկասյան ուղղությունը համարելով քաղաքացիական պատերազմի ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող ուղղություններից մեկը: 1918 թ. նոյեմբերին սկսված և 1919 թ. հունվարի վերջերին ավարտված ռազմարշավի արդյունքում Կամավորական բանակը գլխովին ջախջախեց Հյուսիսսային Կովկասում գործող խորհրդային բանակները և ընդհուպ մոտեցավ Դաղստանի ու Անդրկովկասի հանրապետությունների սահմաններին<sup>370</sup>: Բաքվի առջև ծառայավ երկրի անկախության պաշտպանության ուղղությամբ միջոցներ ձեռք առնելու, այդ թվում՝ դաշնակիցներ փնտրելու կարևորագույն արտաքին քաղաքական խնդիրը:

Կամավորական բանակի դեմ պայքարում ԱԴՀ-ն ուներ երկու բնական դաշնակից՝ Վրաստանը և Հյուսիսսային Կովկասի ու Դաղստանի Լեռնականների Հանրապետությունը<sup>371</sup>:

Հյուսիսսային Կովկասի գրաված տարածքները Կամավորական բանակի կողմից միավորվեցին Թերեք-Դաղստանյան երկրամասի մեջ, իսկ Լեռնականների կառավարությունից պահանջվեց վայր դնել լիազորությունները՝ փոխարենը առաջարկվելով լեռնական ժողովուրդներին տրամադրել լայն ինքնավարություն<sup>372</sup>: Սակայն Անդրկովկասում անզլիական զորքերի հայտնվելուց հետո Ադրբեջանի օրինակով իր կողմնորոշումը կտրուկ փոխած և անզլիական հրամանատարության կողմից դե ֆակտո ճանաչում ձեռք բերած Լեռնականների կառավարությունը պահանջում էր, որ Կամավորական բանակը պարպեր հանրապետության տարածքները<sup>373</sup>: առաջարկելով գումարել լեռնականների համագումար՝ երկրամասի հետագա ճակատագրի որոշման նպատակով: Մարտին Եկատերինոդարում և ապրիլին Գորզնիում Լեռնականների կառավարության և Կամավորական բանակի միջև անզլիական հրամանատարության մերկայացուցիչների մասնակցությամբ կայացած բանակցությունների արդյունքում որևէ համաձայնություն չկայացավ կողմերի անզիջողականության պատճառով<sup>374</sup>:

<sup>370</sup> Տե՛ս Ցառաջ, # 33, 1919 թ. փետրվարի 21:

<sup>371</sup> Տե՛ս Документы по внешней политике Закавказья и Грузии, стр. 391-416; Наше время, #34, 36, 1919 թ. փետրվարի 12; 14; R.G. Suny, The Making of the Georgian Nation, Bloomington and Indianapolis, Indiana University Press, 1994, p.203; А. Деникин, Взл. узлу., Т.4, стр.223-224; 3. Авалов, Взд. узлу., стр. 196-208:

<sup>372</sup> Տե՛ս А. Деникин, Взд. узлу., Т.4, стр.178:

<sup>373</sup> Լեռնականների կառավարությունը հավակնում էր չեղքեզական շրջաններին, Օսիային, Կարդոային, Չեչնիային, Ինգուշեթիային և Դաղստանին:

<sup>374</sup> Տե՛ս Кавказское слово, # 57, 72, 76, 1919 թ. մարտի 29, ապրիլի 17, 26; Աշխատավոր, # 89, 1919 թ. մայիսի 4, նաև Աշխատավոր, # 72-73, 76, 1919 թ. ապրիլի 17-18, 26:

Ի սկզբանե, Ադրբեջանը Կամավորական բանակի ու Լեռնականների հանրապետության միջև հակամարտությունում գրավեց վերջինի կողմը: 1919 թ. ապրիլին Ն. Ուսուրբեկովի գլխավորությամբ ձևավորված նոր կառավարության հռչակագրում ընդգծվում էր Ադրբեջանի համակրանքը Լեռնականների հանդեպ Դեմիկիմի դեմ նրանց պայքարում: Հռչակագրում նույնիսկ նշվում էր, որ Լեռնականների Հանրապետությունը երկրորդ հայրենիք էր ադրբեջանցիների, իսկ Ադրբեջանը՝ Լեռնականների համար<sup>375</sup>: ԱՂԳ այդ դիրքորոշումը պայմանավորված էր այն ժանրակչի հանգամանքով, որ անկախության կորստի վտանգը սպառնում էր նաև իրեն, ու, հետևաբար, Բաքուն ձգտում էր պահպանել Կամավորական բանակի ու իր սահմանների միջև բուֆերային գոտին, ի դեմս Լեռնականների Հանրապետության:

Երկրորդ, Լեռնականների Հանրապետությունը տարածաշրջանում երկու մուսուլմանական հանրապետություններից մեկն էր, և նրա գոյությունը Բաքուն դիտում էր՝ որպես Անդրկովկասում քաղաքական հավասարակշռության պահպանման գրավական՝ նկատի ունենալով, որ Անդրկովկասի չորս պետություններից երկուսը՝ Վրաստանը և ԳԳ-ն, քրիստոնյա պետություններ էին<sup>376</sup>: Կարևոր գործոն էր նաև Լեռնականների կրոնական և ազգակցական կապը ԱՂԳ-ի հետ:

Հրապարակավ պաշտպանելով Լեռնականների Հանրապետության անկախությունը՝ ԱՂԳ ղեկավարությունը դրա հետ մեկտեղ լրջորեն քննարկում էր Դաղստանը Ադրբեջանի կազմի մեջ ընդգրկելու հնարավորության հարցը: Նման դիրքորոշման որդեգրումը պայմանավորված էր ոչ թե Ադրբեջանի ռազմական ներուժի աճով և Դաղստանը զենքի ուժով գրավելու հնարավորության ի հայտ գալով, այլ դաղստանցիների որոշակի մասի մոտ տիրող քարենպաստ տրամադրություններով և Անդրկովկասում անգլիացիների քաղաքականությամբ:

1919 թ. ապրիլին ԱՂԳ կառավարությունը սկսեց գործնական քայլեր ձեռնարկել Դաղստանում Ադրբեջանի հանդեպ դրական մոտեցման ձևավորման և երկրամասի միավորումը նախապատրաստելու ուղղությամբ: Ապրիլին Բաքուն Լեռնականների կառավարությանը կից իր դիվանագիտական ներկայացուցիչ Հախվերդովին խնդրում էր տեղեկություններ հաղորդել Դաղստանի միացման հնարավորության հարցի վերաբերյալ: Ի պատասխան, Հախվերդովը հայտնում էր, որ Դաղստանի մի շարք հասարակական գործիչներ սպասում են ԱՂԳ ղեկավարության պատասխանին՝ աշխատանքն այդ ուղղությամբ սկսելու համար: Նա մասնավորապես նշում էր. «Հողը պատրաստ է: Ադրբեջանի հետ միավորման մեջ տեսնում են երկրի հետագա բարեկեցությունը՝ հաշվի առնելով պաշտ-

<sup>375</sup> Տե՛ս Եօրեճա, #91, 1919 թ. ապրիլի 27:

<sup>376</sup> Տե՛ս Աշխատավոր, # 56, 1919 թ. մարտի 23:



պանական ուժերի լիակատար անհուսալիությունը, ինչպես նաև դրուբ-  
յունը փրկելու կառավարության անընդունակությունը»<sup>377</sup>:

Ելնելով այս գործոններից՝ Բաբուն սկսեց դիվանագիտական  
աջակցություն ցուցաբերել Լեռնականների կառավարությանը: Սեփական  
ռազմաքաղաքական փոքր ներուժի պայմաններում Ադրբեջանի կառա-  
վարությունը ծգտում էր իր նպատակներին հասնելու գործում ապահովել  
տարածաշրջանում բրիտանական ուժերի հրամանատարության քաղա-  
քական-դիվանագիտական և նյութական աջակցությունը: ԱՂԳ կառավա-  
րության՝ գեներալ Թոմսոնին հասցեագրված 1919 թ. մարտի 6-ի հայտա-  
գրում բողոք էր հայտնվում լեռնական ժողովուրդների ինքնորոշման  
իրավունքի խախտման և բռնի զինվորագրման անցկացման դեմ ու  
խնդրվում էր միջնորդել Կամավորական բանակի ագրեսիայի դադարեց-  
ման գործում<sup>378</sup>: Նման պայմաններում Սեծ Բրիտանիան կանգնած էր  
երկընդունքի առջև՝ թույլ տալ Դեմիկինին իր գերիշխանությունը տա-  
րածել Գյուխսային Կովկասում կամ պահանջել ստատուս քվոյի պահպա-  
նում, մինչև խաղաղ խորհրդաժողովի որոշումը:

Կամավորական բանակի գործողությունների բազան ընդլայնելու և  
նրա տրամադրության տակ մարդկային և նյութական ռեսուրսներով հա-  
րուստ նոր շրջաններ դնելու անհրաժեշտությունից ելնելով՝ Դեմիկինի  
շտաբին կից բրիտանական առաքելությունը հակված էր նրան, որ Կամա-  
վորական բանակի վերահսկողության տակ դրվեր ողջ Գյուխսային Կով-  
կասը, այդ թվում՝ Դաղստանը: Միաժամանակ կարևոր խնդիր էր համար-  
վում նրա գործունեությունն ուղղել բացառապես դեպի հյուսիս՝ Անդրկով-  
կասը գերծ պահելով նրա ներխուժումից<sup>379</sup>: Մինչդեռ Բաբուն բրիտանա-  
կան գործերի հրամանատարությունը Դաղստանը դիտում էր՝ որպես իր  
գործողությունների գոտի, որը պետք է քաղաքական, ռազմական և  
տնտեսական առումով կապված լիներ Անդրկովկասի հետ: Սեծ Բրի-  
տանիան հակվեց Թոմսոնի դիրքորոշմանը, 1919 թ. մարտի 11-ին փաս-  
տորեն վերջնագրային կերպով պահանջելով Դեմիկինից չնեխուժել  
Դաղստան, բացառությամբ այն դեպքերի, երբ դա պահանջում էր բու-  
շկիկների դեմ պայքարը և ձեռնպահ մնալ ցանկացած գործողություննե-  
րից, որոնք կարող էին ուժեղացնել լարվածությունն Անդրկովկասի ժողո-  
վուրդների հետ՝ հակառակ դեպքում սպառնալով դադարեցնել Կամավո-  
րական բանակին ցուցաբերվող աջակցությունը<sup>380</sup>: Այսպիսով, Սեծ Բրի-  
տանիան, ելնելով իր աշխարհաքաղաքական շահերից, Անդրկովկասում  
վարում էր հակառուսական քաղաքականություն, իսկ Կովկասից հյուսիս

<sup>377</sup> Տե՛ս Ա. Раевский, Английская интервенция ..., стр. 102: Նույն Հախվերդյուի զեկույցների մեջ  
նշվում էր, որ Դաղստանի շրջանների զգալի մասը կոտր էր Ադրբեջանի հետ միավորմանը՝ դրա-  
նում տեսնելով կամավորականների փրկվելու միակ ճանապարհը:

<sup>378</sup> Տե՛ս Бореба, # 57, 1919 թ. մարտի 12; А. Деникин, նշվ. աշխ., Т.4, стр. 179: Նույնաման  
դեմարշ ձեռնարկեց նաև Վրաստանը: Տե՛ս А. Деникин, նշվ. աշխ., Т.4, стр. 179:

<sup>379</sup> Տե՛ս А. Деникин, նշվ. աշխ., Т.4, стр. 188-189:

<sup>380</sup> Տե՛ս Աշխատատը, #86, 1919 թ. մայիսի 4:

վարում էր Սպիտակ շարժմանն աջակցելու քաղաքական գիծ՝ ելնելով բուլշևիզմի դեմ պայքարի նկատառումներից<sup>361</sup>:

Ադրբեջանն օգտագործեց ընձեռնված դադարը՝ երկրի քաղաքական ուժերը հակադեմոկրատիայի պլատֆորմի վրա համախմբելու համար: Խորհրդարանի նախաձեռնությամբ ստեղծվեց միջկուսակցական հանձնաժողով, որը 1919 թ. ապրիլի 17-ին կոչ արեց ժողովրդին օգնության հասնել լեռնականներից՝ առաջարկելով մտնել այդ նպատակով ստեղծվող կամավորական ջոկատի շարքերը<sup>362</sup>: Լեռնականների Հանրապետության զինված ուժերի ամրապնդման նպատակով ԱԴՀ-ն նաև տրամադրեց 12 մլն. ռուբլի, իսկ Վրաստանը՝ զենք<sup>363</sup>:

1919 թ. մայիսի ընթացքում կամավորական բանակը գրավեց Պետրոպսկը, Դերբենդը և Թեմիրի համ Շուրան: Չեմերալ Հալիլովի Լեռնականների կառավարությունը վայր դրեց լիազորությունները: Տապալված Լեռնականների կառավարության անդամներ Պ. Կոցևը, Թ. Չերժոկը, և ուրիշներ ապաստանեցին Բաքվում, որտեղ ԱԴՀ ֆինանսական աջակցությամբ սկսեցին քարոզչություն իրականացնել Դաղստանում: Դաղստանն ընդունեց Ռուսաստանի Հարավի Ձիմված ուժերի իշխանությունը, իսկ Հալիլովը նշանակվեց նրա կառավարիչ մինչև ժողովրդական խորհրդի գումարումը<sup>364</sup>: Միաժամանակ Դեմիկինը փորձեց գտնել որոշակի համաձայնության եզր ԱԴՀ հետ: Բաքվում անգլիական հրամանատարությանը կից Ռուսաստանի Հարավի Ձիմված ուժերի ներկայացուցիչ գեղապետ Լազարևը Ոսուրբեկովին ուղղված հեռագրում հաղորդեց, որ կամավորական բանակը չունի ազդեցիվ մտադրություններ ԱԴՀ հանդեպ և մինչև Ռուսաստանում գերագույն իշխանության վերականգնումը՝ ճանաչում է նրա ինքնուրույնությունը: Իր հուշերում Դեմիկինը նշում է, որ գեղապետ Լազարևը, իրեն թույլ տալով անձնական նախաձեռնություն, ԱԴՀ վարչապետ Ոսուրբեկովին ուղղված իր հեռագրից հանեց առաջին նախադասությունը «Մենք Ադրբեջանը համարում ենք Ռուսաստանի մաս», ինչպես նաև Ռուսաստանի Հարավի Ձիմված ուժերի գլխավոր հրամանատարության անունից գրված կից նամակում զարգացրեց համադաշնության տեսությունը: Մինչդեռ Դեմիկինի հեռագրի բնօրինակը հնչում էր հետևյալ կերպ. «Մենք Ադրբեջանը համարում ենք Ռուսաստանի մաս: Մինչև Ռուսաստանում գերագույն իշխանության վերականգնումը՝ հնարավոր ենք հա-

<sup>361</sup> Տե՛ս Գ. Махмуриян, նշվ.աշխ. սր.16:

<sup>362</sup> Տե՛ս Ա. Деникин, նշվ.աշխ., Т.4, стр.245 և Աշխատատը, #83, 1919 թ. ապրիլի 30: Իր հերթին Բաքվի բուլժևիզմի խորհրդատու Վլադիմիր Բաքվի 6-ին կոչ արեց Անդրկովկասի հեղափոխական ղեկավարությանը՝ համախմբել Բաքվի պրոլետարիատի հետ Դեմիկինի դեմ պայքարում: Տե՛ս Աշխատատը, #74, 1919 թ. ապրիլի 15:

<sup>363</sup> Տե՛ս Ա. Деникин, նշվ.աշխ., Т.4, стр.183:

<sup>364</sup> Տե՛ս Ա. Деникин, նշվ.աշխ., Т.4, стр.192; Набеть, #18, 1919 թ. մայիսի 25: Տե՛ս В. Байков, նշվ.աշխ., стр. 171:



մարում Ադրբեջանի ինքնուրույն գոյությունը»: Լազարևի այդ քայլի հետևանքով նրան փոխարինեց գնդապետ Պալիցինը<sup>385</sup>:

Սակայն, հայտարարելով ագրեսիվ մատասկներ չունենալու մասին, Դեմիկինը պարտավորվում էր չանցնել Դըզըլ Բուրուն կայարանից հարավ, եթե ԱԳՀ-ն չծեռնարկեր թշնամական գործողություններ: Իր այդ հայտարարությամբ Ա. Դեմիկինը փաստորեն արժեզրկում էր իր բոլոր նախկին խաղաղասիրական հայտարարությունները: Այսպիսով, համաձայն Դեմիկինի նախանշան զգի, Ադրբեջանի իյուսխասային՝ Կուսարիի գավառը ենթակա էր գրավման Կամավորական բանակի կողմից<sup>386</sup>:

ԱԳՀ քաղաքական ուժերի մեծ մասը հանդես եկան Կամավորական բանակի առաջխաղացման դատապարտմամբ: ԱԳՀ ծախ քաղաքական ուժերը մեղադրում էին կառավարությանն անգործության և Դեմիկինին անծնատուր լինելու մեջ<sup>387</sup>: Բաքվի բանավորական խորհրդատուները իր մայիսի 25-ի նիստում, Անդրկովկասի հանրապետությունների մեղադրելով Դեմիկինի հետ փոխգործակցության մեջ, նշում էր, որ Բաքվից զենք է առաքվում Կամավորական բանակին, սակայն կառավարությունը դրան չի արձագանքում: Կարծիք էր հայտնվում, որ Ուսուրբեկովի կաբինետը կամավոր ներս կթողներ Դեմիկինի ուժերին: Իր հերթին Մուսավաթը պնդում էր, որ կառավարությունը բոլոր միջոցները ձեռք էր առել երկրի սահմանների պաշտպանության համար: Հաջորդ նիստում խորհրդատուները կոչ ընդունեց, որում կառավարությունից պահանջվում էր ոտքի հանել մուսուլմանական դեմոկրատիան՝ վտանգը ետ մղելու համար և խոսք էր տրվում, որ Բաքվի պրոլետարիատը կաջակցի նրան այդ պայքարում<sup>388</sup>:

Սակայն ԱԳՀ ոչ բոլոր քաղաքական ուժերն էին հակված Դեմիկինի դեմ պայքարի: Կառավարական օղակներին մոտ քաղաքական շրջանները հակված էին համաձայնության Դեմիկինի հետ: Այսպես, Անկուսակցականների խումբը ապագա Ռուսաստանի հետ համաձայնության գալու կողմնակից էր: Այդ խմբի մեջ մեծամասնություն էին կազմում Բաքվի խոշոր բուրժուազիայի, մտավորականության ներկայացուցիչները, որոնք դժգոհ էին այն բանից, որ կառավարության մեջ զերակշռում էին Ելիզավետպոլի խաները և բեկերը: Ըստ Բայկովի՝ այդ խումբը, հաշվի առնելով Ադրբեջանի պետական կազմակերպության թուլությունը, նրա կառավարության տգիտությունը և բոլշևիկների աճող քարոզչությունը, ուղիներ էր փնտրում՝ հենվելու համար մեկ այլ իշխանության վրա, որը կերաշխավորեր իրենց վերահաս բոլշևիկյան սպառնալիքից<sup>389</sup>:

<sup>385</sup> Տե՛ս Ա. Деникин, նշվ.աշխ., Կ.4, стр.245; Աշխատավոր, # 110, 1919 թ. հունիսի 6; Наше время, #97, 1919 թ. հունիսի 1:

<sup>386</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.291, ք.465; Աշխատավոր, #111, 1919 թ. հունիսի 7; Ա. Деникин, նշվ.աշխ., Կ.4, стр.192:

<sup>387</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.291, ք.403; Набатъ #19, 23, 26, 1919 թ. մայիսի 27, հունիսի 3, 6:

<sup>388</sup> Տե՛ս Набатъ, #19, 20, 1919 թ. մայիսի 27-28; А. Г. Караев, Из недавнего прошлого. Материалы к истории Азербайджанской Ком. Партии (6), Баку, "Бакинский рабочий", 1926, стр.22; Кавказское слово, #103, 1919 թ. մայիսի 31:

<sup>389</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.291, ք.399; В. Байков, նշվ.աշխ., стр.166-167:

1919 թ. մայիսի 26-ին ԱԴՀ խորհրդարանի նիստում վարչապետ Ուսուրբեկովը ներկայացրեց կառավարության պաշտոնական դիրքորոշումը՝ հայտարարելով, որ ոչ-ոք չի անցել ԱԴՀ սահմանը և կանցնի միայն իրենց դիակների վրայով: Նա մշեց, որ ԱԴՀ դիվանագիտական ներկայացուցչից տեղեկանալով Դեբրենոյ Կամավորական ջոկատի ժամանման մասին՝ ինքն անգլիական հրամանատարությանը բողոքի հայտագիր է հղել՝ պահանջելով վճռական միջոցներ ձեռք առնել Կամավորական բանակի՝ Դադստանից հետքաշման ուղղությամբ: Վարչապետը նաև հանդիպել էր գեներալ Շատլվորտի հետ, որը վերահաստատել էր անգլիական հրամանատարության դիրքորոշումն առ այն, որ Դեմիկինը չպետք է անցնե՝ Դեբրենոյից հարավ, ինչպես նաև ընդունել էր Ադրբեջանի անկախության պաշտպանության Ուսուրբեկովի կառավարության իրավունքը: Վարչապետը հավաստիացրեց, որ կառավարությունը բոլոր միջոցները ձեռք է առել երկրի սահմանների պաշտպանության ուղղությամբ, և անհրաժեշտության դեպքում կհայտարարվի ընդհանուր մոբիլիզացիա: Խորհրդարանը նրա զեկույցի հիման վրա որոշեց հավաքություն տալ կառավարության միջոցառումներին երկրի պաշտպանության գործում և խոստանալ աջակցություն<sup>390</sup>:

1919 թ. հունիսի 5-ին ԱԴՀ խորհրդարանը հավանություն տվեց կառավարության ծրագրին՝ ստեղծել պետական իշխանության նոր մարմին՝ ԱԴՀ պետական պաշտպանության կոմիտե, որին տրվեցին արտակարգ լիազորություններ՝ ընդհանուր մոբիլիզացիայի և ռազմական դրության հայտարարում, կամավորական խմբերի կազմավորում, օրենքների գործողության դադարեցում, ֆինանսների անսահմանափակ տնօրինում: Կոմիտեի մեջ մտնում էին վարչապետ Ուսուրբեկովը, հաղորդակցության ուղիների նախարար Խուդադաթ բեկ Մելիք Ալանովը և աշխատանքի նախարար Ալան բեկ Սաֆիբուրդսկին<sup>391</sup>:

Ադրբեջանը կնքեց ռազմական դաշինք Վրաստանի հետ ընդդեմ Դեմիկինի, սկսեց նախապատրաստել Բաքվի էվակուացիան, վրացադրբեջանական դաշինքի հիման վրա Ադրբեջանին հանձնվեց մեծաքանակ զենք և զինամթերք և այլն<sup>392</sup>: Բայցևայնպես ԱԴՀ ուժերը չափազանց թույլ էին Կամավորական բանակի հետ ռազմական ընդհարման, ինչպես և Դադստանին բացահայտ ռազմական աջակցություն ցուցաբերելու համար: Խորհրդարանի նիստում այդ մասին բացեփառ հայտարարեց գեներալ Մեհմանդարովը՝ նշելով, որ բանակը մարտունակ չէ և ի վիճակի չէ դիմադրել Կամավորական բանակին: Դեմիկինի դեմ դուրս բերվելիք ուժերի քանակից դուրս հանած հայկական և լենգորանյան ռազմաճա-

<sup>390</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.291, ք.400,419; Наше время, #97, 1919 թ. հունիսի 1; Աշխատավոր, #106, 110, 1919 թ. մայիսի 31, հունիսի 6:

<sup>391</sup> Տե՛ս *Набатъ*, #28, 1919 թ. հունիսի 8; А. Раевский, *Английская интервенция ...*, стр.107; R.G. Hovannisian, *նշվ. աշխ.*, Vol.2, p.380; *Кавказское слово*, #114, 1919 թ. հունիսի 14:

<sup>392</sup> Տե՛ս А. Стеклов, *նշվ. աշխ.*, стр. 39:



կատները՝ դեմիկիմյան հետախուզության կողմից ԱՂԴ բանակի թիվը գնահատվում էր 2-2,5 հազար զինվոր»<sup>393</sup>:

Նման պայմաններում ԱՂԴ-ն ստիպված էր դիմել դաշնակիցների, առաջին հերթին՝ անգլիական հրամանատարության օգնությանը և միջնորդությանը: ԱՂԴ պատվիրակությունը Փարիզում ակտիվ դիվանագիտական աշխատանք ծավալեց՝ այդ հարցում գործակցելով Վրաստանի, Լեռնականների Ֆանապետության և Ռուսաստանյան կայսրության տարածքում ստեղծված այլ հանրապետությունների՝ Էստոնիայի, Լատվիայի և այլնի հետ: Դաշնակիցների կողմից Շովակալ Կուչակի կառավարությունը՝ որպես համառուսաստանյան իշխանություն ճանաչման կապակցությամբ հունիսի 17-ին նրանք համատեղ բողոքի հայտագիր հղեցին Փարիզի խորհրդատուներին, ի պաշտպանություն իրենց անկախության: Գունիսի 23-ին նման հայտագիր ընդդեմ Դեմիկիմի հղվեց ԱՂԴ, Վրաստանի և Լեռնականների պատվիրակությունների կողմից<sup>394</sup>:

Դաղստանի արագ գրավումն առաջ բերեց նաև Մեծ Բրիտանիայի մտահոգությունը<sup>395</sup>: Ա. Դեմիկիմին ուղղված հեռագրում Մեծ Բրիտանիայի ռազմական նախարար Ու. Չերչիլը նշում էր, որ զենքերալ Դեմիկիմի կողմից Դերբենդի գրավումը չի նպաստում Կովկասում խաղաղության հաստատմանը, ուստի հակասում է իր իսկ շահերին: 1919 թ. հունիսի 11-ին Անդրկովկասում անգլիական զորքերի հրամանատար զենքերալ Քորին ԱՂԴ կառավարությանն ուղղված նամակում հայտարարեց զենքերալ Դեմիկիմի և կովկասյան պետությունների միջև բաժանարար գծի հաստատման մասին: Այն անցնում էր Բզիբի գետաբերանից դեպի հյուսիս, այնուհետև արևելք՝ Սուխումիի, Քութայիսիի, Թիֆլիսի, Դաղստանի նահանգների սահմաններով մինչև Պետրովսկ – Վլադիկավկազ երկաթուղուց 5 մղոն հարավ գտնվող կետը, իսկ այնտեղից՝ երկաթուղուն զուգահեռ դեպի հարավ-արևելք՝ մինչև Պետրովսկից հարավ՝ Կասպից ծովի ափին գտնվող կետը: Դեմիկիմի ուժերը չպետք է անցնեին այդ գծից հարավ, իսկ Անդրկովկասի հանրապետությունները՝ հյուսիս: Վերջինները պետք է ձեռնպահ մնային Կամավորական բանակի դեմ ագրեսիվ գործողություններից և համագործակցեին զենքերալ Դեմիկիմի հետ<sup>396</sup>:

<sup>393</sup> Տե՛ս В. Байков, 62վ.աշխ., стр.173; А. Деникин, 62վ.աշխ., Т.4, стр. 240-241; ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.293, ք.26:

<sup>394</sup> Տե՛ս А. Раевский, Мусаватское правительство на Версальской конференции, стр.43; З. Авалов, 62վ.աշխ., стр.195,199:

<sup>395</sup> Տե՛ս А. Раевский, Мусаватское правительство на Версальской конференции, стр. 54:

<sup>396</sup> Տե՛ս И. Гусейнов, Борьба трудящихся Азербайджана..., стр. 248; Наше время, #118, 1919 թ. հուլիսի 28: Այս դեպքում ևս իրեն զգացնել էր տալիս անգլիական քաղաքականության երկակիությունը, որի վրա ԱՂԴ վարչապետի ուշադրությունն էր դարձնում ԱՂԴ զինվորական նախարար Մեհմանդարովն իր զեկույցում: Տե՛ս А. Абасов, Генерал Мехмандаров, Баку, "О-во Знание АзССР. В помощь лекторам и пропагандистам", 1977, стр. 61; И. Гусейнов, 62վ.աշխ., стр. 249: Մեհմանդարովը, հանդիսանալով ցարական քանակի զենքերալ, այդի էր ընկնում քայրայցական վերաբերմունքով ժուների և առեւտրյամբ՝ անգլիացիների հանդեպ: Տե՛ս նաև А. Стеклов, 62վ. աշխ., стр.17-21; В. Байков, 62վ. աշխ., стр. 173; А. Раевский, Английские друзья и мусаватские патриоты, Баку, Азгиз, 1927, стр.34:

Օգտվելով անգլիացիների միջամտությունից՝ Բաքուն պահանջեց կամավորական բանակից հեռանալ Դաղստանից, սակայն Ա. Դենիկինը Բաքվում իր ներկայացուցիչ գնդապետ Լազարևի միջոցով պատասխանեց, որ կամավոր կերպով միացված Դաղստանը չի լքվի<sup>397</sup>:

Միաժամանակ ԱԴԳ-ն անկտիվացրեց իր զործուներությունը Դաղստանում՝ ձգտելով առավելագույն օգուտ քաղել Մեծ Բրիտանիայի նպաստավոր դիրքորոշումից: Չնայած անգլիական հրամանատարության նախազգուշացումներին՝ Բաքուն չդադարեցրեց լեռնականների ֆինանսական մատակարարումը և կամավորական խմբերի առաքումը Դաղստան: Լեռնականների Դանրապետությունում ԱԴԳ դիվանագիտական ներկայացուցիչ Դախվերդովին հասցեագրված 1919 թ. հունիսի 16-ի հեռագրում հստակ արտացոլվում էին ԱԴԳ մտադրությունները. «... տեղեկացնել Դաղստանի բնակչությանն այն հաջողությունների մասին, որոնց հասել է ադրբեջանական կառավարությունն իր ձեռնարկած դիվանագիտական և ռազմական միջոցառումների շնորհիվ: Դենիկինը պետք է մաքրի Դերբենդը և հեռանա բաժանարար գծից այն կողմ: Լիովին պաշտպանելով Լեռնականների Դանրապետության վերականգնման գաղափարը՝ մեր կառավարությունը նախատեսում է կամավորականների հեռանալուց հետո ժամանակավորապես իր զորամասերով գրավել Դաղստանը: Աշխատե՛ք այդ ուղղությամբ... : Փորձե՛ք հող նախապատրաստել մեր ստորաբաժանումների ոյուրին ժամանման համար»<sup>398</sup>: Այսպիսով, ԱԴԳ-ն, համոզված լինելով բաժանարար գծի հաստատման գործում անգլիացիների վճռականության մեջ, փորձում էր գրավել Դաղստանը:

ԱԴԳ-ն գործի էր դրել քաղաքական-դիվանագիտական և ռազմական բոլոր ռեսուրսները՝ թույլ չտալու համար իր սահմանների անցումը Դենիկինի ուժերի կողմից: Խորհրդային պատմագրությունը և այդ շրջանում Բաքվում հրատարակվող ծախ ուժերի մամուլը ԱԴԳ-ին մեղադրում է նրանում, որ իրականում նա, ի դեմս Դենիկինի, տեսնում էր իր դաշնակցին բոլշևիկների դեմ պայքարում, ուստի և դավաճանական քաղաքականություն էր վարում Դաղստանի հանդեպ՝ մտադիր չլինելով օգնել նրան Դենիկինի դեմ պայքարում: Ավելին, Բաքուն մեղադրվում է Կամավորական բանակի հետ սերտ համագործակցության մեջ, որն ուղղված էր ոչ միայն բոլշևիկների, այլև երկրում բանվորական շարժման դեմ<sup>399</sup>:

<sup>397</sup> Տե՛ս Ա. Деникин, *Взл. шп.», Т.4, стр. 194; ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.70, ք.15; Кавказское слово, #133, 1919 թ. հուլիսի 6:*

<sup>398</sup> Տե՛ս А. Раевский, *Английская интервенция ...», стр. 104:*

<sup>399</sup> Տե՛ս И.Б. Гаджиев, *Совместная борьба трудящихся Азербайджана...», стр. 56; Е. Токаревский, *Взл. шп.», стр. 214-216; Небать, #30, 1919 թ. հունիսի 12: Ըստ Բաքվի ծախ մամուլի՝ «Զորի գծի» հաստատումն անգլիացիների ցուցումով Դենիկինի և ԱԴ-Հ կառավարության միջև անընդունիյան համաձայնության արդյունք էր: Տե՛ս Небать, #35, 1919 թ. հունիսի 19: Այդ համազորակցության դրսևորում էր համարվում Բաքվի թողովության քաղաքականությունը երկրում գործող Դենիկինի զորակազմերի հանդեպ, ԱԴ-Հ տարածքով ռազմական մատակարարումները Կամավորական բանակին և սպասամբներին ռազմական ու նյութական օգնության ատարման կամխումը: Տե՛ս И. Гусейнов, *Борьба трудящихся Азербайджана...», стр. 249:***



Սակայն վերոհիշյալը ցույց է տալիս, որ, հակառակ խորհրդային պատմագրության պնդումների, Բաքուն, այդուհանդերձ, քողարկված կերպով հնարավորինս աջակցում էր Դաղստանին Կամավորական բանակի դեմ պայքարում, ինչպես և պայքարում էր երկրի ներսում Դեմիկինի գործակալների ցանցի դեմ<sup>400</sup>։ Այդ աջակցությունը սահմանափակվում էր Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականությամբ, որն ուղղված էր հարավում Դեմիկինի համար ամուր թիկունք ապահովելուն՝ հնարավորություն տալու համար վերջինիս իր ուժերը կենտրոնացնել Մոսկվայի ուղղությամբ։ ԱԴԳ օգնությունը սահմանափակող մեկ այլ գործոն էր ապստամբական շրջանակներում բոլշևիկյան գործոնի առկայությունը, որի ուժեղացումը չէր բխում իր շահերից։ Մյուս կողմից, կրկին պայմանավորված անգլիական քաղաքականությամբ և սեփական ուժերի թուլությամբ, Բաքուն ստիպված էր համաձայնության եզրեր գտնել Ռուսաստանի Դարավի Ձինված ուժերի հետ և, դեռ ավելին, թույլ տալ ռազմական մատակարարումներ կատարել Կամավորական բանակին իր տարածքի վրայով։

Կամավորական բանակի և ԱԴԳ-ի միջև լարվածության թուլացման նպատակով 1919 թ. հունիսին Կամավորական բանակին կից անգլիական առաքելության ղեկավար գեներալ Բրիգսը Եկատերինոդարում կազմակերպեց Դեմիկինի հետ Կուբանի կառավարությանը կից ԱԴԳ դիվանագիտական ներկայացուցիչ Ռուստամբեկովի հանդիպումը։ Բանակցություններում կողմերը պայմանավորվածության եկան դիվանագիտական ներկայացուցիչներ փոխանակել և ստեղծել փոխադարձ վստահության մթնոլորտ, որն անհրաժեշտ էր Կամավորական բանակի թիկունքի ապահովման և ուշադրությունը բոլշևիկների դեմ պայքարի վրա կենտրոնացնելու համար<sup>401</sup>։ Սակայն կողմերի միջև լարվածությունը Դաղստանում Կամավորական բանակի առաջխաղացման պատճառով թույլ չտվեց իրականացնել համաձայնությունը։

Դաղստանի վերջնական պատկանելության հարցում կարևոր նշանակություն ուներ տեղի մուսուլման հոգևորականության ղեկավարած անհնազանդ տարրերի ենթարկումը<sup>402</sup>։ Դաղստանի հարցում Մեծ Բրիտանիան ևս որոշակիորեն ճնշում էր գործադրում ԱԴԳ կառավարության վրա՝ հարկադրելով նրան հրաժարվել Դեմիկինի դեմ ուղղված քայլերից։ Անգլիացիների նպատակը ոչ թե Դաղստանի նկատմամբ Բաքվի հավակնությունների սատարումն էր, այլ Անդրկովկաս Դեմիկինի ներխուժման բացառումը։ Ուստի անգլիացիներն անտեսեցին Բաքվի պաշտոնական բողոք-

<sup>400</sup> Աղբյուրների ազգային անվտանգության ծառայությունը լուրջ պայքար էր մղում Դեմիկինի գործակալների դեմ։ Նրա անճանակագծի երկու երրորդը՝ Մուսավաթի, իսկ մեկ երրորդը՝ Հումմեթի անդամներ էին։ Ծառայությունը ղեկավարում էր Նաթի Կեյկուրունը, որի տեղակալը էր Լավրենտի Բերիան։ Տե՛ս՝ N. Keykurun, *Ձվ. աշխ.*, s. 120-122:

<sup>401</sup> Տե՛ս՝ A. Раевский, *Английская интервенция ...*, стр.109; A. Раевский, *Английские друзья...*, стр.39-40:

<sup>402</sup> Տե՛ս՝ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.344, ք.100 և *Наше время* # 134, 1919 թ. հուլիսի 18; *Кавказское слово*, #152, 1919 թ. հուլիսի 29; *Слово*, #1, 1919 թ. օգոստոսի 21; *Борьба* #178, 1919 թ. օգոստոսի 10; A. Деникин, *Ձվ.աշխ.*, T.5, стр.658:

ները Դաղստանում Կամավորական բանակի ջոկատների գտնվելու դեմ: Կասպիական նավատորմի հարցում ևս Բաքվին զիջումներ չարվեցին, չնայած վերջինի պատճառաբանությանը, որ առանց ռազմական նավատորմի, Բաքուն ծովի կղզից մնում էր անպաշտպան: Արդեն 1919 թ. հուլիսի վերջին անգլիացիները փաստորեն սկսել էին նավատորմը Դենիկի-նին հանձնելու գործընթացը: 1919 թ. օգոստոսի 4-ին ԱՂԳ-ն դիմեց անգլիացիներին՝ խնդրելով իրեն հանձնել նույն քանակի նավեր, ինչ որ Դենիկինին, սակայն ստացավ պատասխան, որ նավատորմը նախատեսվում է բուլշևիկների դեմ պայքարի համար: Միաժամանակ անգլիացիները Բաքվին հավաստիացնում էին, որ այն չէր օգտագործվելու ԱՂԳ-ի դեմ<sup>403</sup>:

Դաղստանի հարցում անգլիական դիրքորոշման ձևավորման գործում կարևոր նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ Դաղստանում հակադենիկինյան պայքարում առանձնանում էր երկու թշնամական հոսանք, այն է՝ բուլշևիկյան և պանիսլամիստական<sup>404</sup>: Վերոհիշյալ պատճառներից ելնելով՝ անգլիական հրամանատարությունը 1919 թ. օգոստոսի 4-ին ԱՂԳ-ին հայտնեց Կամավորական բանակի և Անդրկովկասի հանրապետությունների միջև նոր բաժանարար գծի սահմանման մասին: Այն անցնում էր ԱՂԳ հյուսիսային սահմաններով և, հակառակ Դենիկինի հավակնությունների, ԱՂԳ կազմում էր թողնում նաև Կուսարիի գավառը: Կասպիական նավատորմը հանձնվում էր Կամավորական բանակին՝ բուլշևիկների դեմ պայքարի անհրաժեշտությունից ելնելով<sup>405</sup>: Փաստորեն, այն իրենից ներկայացնում էր փոխզիջումային մի տարբերակ, որով բավարարվում էին զենքերալ Դենիկինի հավակնությունները Դաղստանի նկատմամբ, սակայն միաժամանակ արգելվում էր Կամավորական բանակի մուտքն ԱՂԳ: Վերջինը բողոքարկեց անգլիական հրամանատարության նոր դիրքորոշումը, սակայն անհրաժեշտ քաղաքական և ռազմական ներուժի բացակայությունը հնարավորություն չէր տալիս ԱՂԳ-ին ընդդիմանալ դրան, և նա ստիպված էր համակերպվել ստեղծված իրավիճակին:

Ամփոփելով՝ պետք է նշենք, որ, թեև Բաքուն պարտվեց Դաղստանի համար Կամավորական բանակի դեմ պայքարում, սակայն անգլիական քարենպաստ քաղաքականության պայմաններում և երկրի ուժերի լարմամբ կարողացավ պահպանել իր ինքնուրույնությունը Կամավորական բանակից:

<sup>403</sup> Տե՛ս ՀԱՄ, ֆ.200, ց.1, գ.344, ք. 281; ֆ.276, ց.1, գ.193, ք.3; Кавказское слово, #155, 156, 158, 1919 թ. օգոստոսի 1-2, 5; Единая Россия, #131, 1919 թ. հուլիսի 6:

<sup>404</sup> Տե՛ս А. Деникин, Եվպաշխ., Т.5, стр.660-661; И.Б.Гаджиев, Совместная борьба бакинское пролетариата и трудящихся Дагестана против английских интервентов и деникинской контрреволюции в 1919-1920 гг., Махачкала, О-во по распространению политических и научных знаний РСФСР, Дагестанское отделение, 1960, стр. 8, 20-21:

<sup>405</sup> Տե՛ս ՀԱՄ, ֆ.200, ց.1, գ.344, ք.308; А. Раевский, Английская интервенция ..., стр. 110; И. Гусейнов, Борьба трудящихся Азербайджана..., стр.248: Անգլիական հրամանատարությունը պահանջում էր ձեռնպահ մնալ Կամավորական բանակի դեմ ելույթներից, շրջափակման մեջ պահել Խորհրդային Ռուսաստանը և աջակցել Դենիկինին՝ նրան մալթ մատակարարելու գործում:



### ԳԼՈՒԽ 3

ԱՐԴ ԿՈՎԿԱՍԱՅԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 1919 Թ. ՕԳՈՍՏՈՍԻՑ 1920 Թ.  
ԱՊՐԻԼ ԸՆԿԱՑ ՇՐՋԱՆՈՒՄ

#### 3.1 ԱՐԴ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՑՈՒՄԸ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՀԱՐՑԻ ԼՈՒՇԱՆԱՆ ԳՈՐԾՈՒՄ 1919 Թ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Դաշնակիցների որոշմամբ Ձանգեզուրում պահպանվեց Հայոց Ազգային խորհրդի իշխանությունը, և ԱՐԴ-ն ստիպված էր համակերպվել այդ իրողության հետ, առավել ևս, որ դեռ չէր լուծվել Ղարաբաղի ենթակայության հարցը: Ասկայն 1919 թ. ամռանը Բեյուք Վեդիի և Նախիջևանի ապստամբությունների արդյունքում ՀՀ իշխանության տակից դուրս եկավ հսկայական տարածք Օրդուբադից մինչև Ղամարլու: Օգոստոսի 22-ին Ղարաբաղի Ազգային խորհրդի հետ պայմանագրով Բաքուն իր իշխանությունը տարածեց Շուշիի, Ջևանշիրի և Կարյազիների գավառների մկատմամբ: Նման պայմաններում Ձանգեզուրի գավառը երկու կողմից հայտնվեց օղակման մեջ՝ դրանով վերածնելով նրան տիրանալու ԱՐԴ-ի ձգտումը<sup>406</sup>:

Ուսուրբեկովի 2-րդ կառավարությունը, իր օգոստոսյան հռչակագրում արձանագրելով հաջողությունները երկրի տարածքային ամբողջականության ապահովման գործում, նշում էր, որ Ձանգեզուրը Ղարաբաղի անբաժան մասն է, իսկ վերջինը՝ Ադրբեջանի ոգին: «Այժմ Ղարաբաղի երեք ու կես գավառներ գտնվում են մեր ձեռքում, իսկ Ձանգեզուրի գավառի կեսը գտնվում է մի քանի խռովարարների ձեռքում»<sup>407</sup>: Ադրբեջանը ձգտում էր հարցը կարգավորել՝ իր առջև ունենալով Ղարաբաղի տարբերակը: Այսպես, «Աзербայджань» պաշտոնաթերթը նշում էր, որ Ղարաբաղի հայերի հետ ձեռք բերված համաձայնությունն արժանի էլք է ստեղծված վիճակից առանց արյունահեղության դուրս գալու համար: Հակառակ դեպքում բացահայտ սպառնալիք էր արտահայտվում Ձանգեզուրի հայերի ֆիզիկական գոյությանը<sup>408</sup>:

Այսպիսով, Ադրբեջանը հստակ խնդիր էր դրել գրավել Ձանգեզուրը և ստեղծել ԱՐԴ տիրապետության տակ գտնվող համատարած գոտի Ադրաձից մինչև Ղամարլու: Ձանգեզուրը վերջին պատվարն էր, որը մնում էր հարթահարել Արաքսի հովտի տարածքներում կոմպակտ բնակվող մու-

<sup>406</sup> Հստ Աзербայджань-ի՝ Ուսուրբեկովը չնչին միջոցներով և մեծ քաղաքական տակտով կառարեց իր պարտավորությունները երկրի տարածքային ամբողջականության ապահովման գործում: Տե՛ս Աзербայджань, #182, 1919 թ. օգոստոսի 28 (ՀԱԱ, ֆ.278, ց.1 գ.44, ք.1): Լրաբեր հասարակական գիտությունների, #6, 1989, էջ 79-80:

<sup>407</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.278, ց.1, գ.4, ք. 17-21:

<sup>408</sup> Տե՛ս Աзербայджань, #182, 1919 թ. օգոստոսի 28 և ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.50, ք.385: Մուրաճովը ձգտում էր կապ հաստատել Ձանգեզուրի հայության հետ՝ խոստանալով էժան մթերքներ: Հաճոխանալով Ղարաբաղի հայերին՝ նա տրամադրել էր 1 մլն. ռուբլի ուսուցիչներին և այլն: Տե՛ս А. Саркисян, Из истории Нагорного Карабаха (1918-1921 гг.), Բաները Հայաստանի արխիվների, #3, Երևան, ՀՆՍՀ Միջխորհրդի Խորհրդին կից Գլխավոր արխիվային վարչություն, 1989, ցր.72-73: Տե՛ս նաև Յառաջ, #39, 42, 1919 թ. նոյեմբերի 7, 11:

սուլճանական զանգվածին միանալու և նրա միջոցով թուրքիայի հետ ուղղակի կապ հաստատելու համար: Նկատի ունենալով խնդրի կարևորությունը՝ Ղարաբաղի նահանգապետ Սուլթանովն անգամ հրաժարվեց ընդունել վարչապետ Ռևուբբեկովի հրավերը՝ ստանձնելու ներքին գործերի նախարարի պաշտոնը՝ գտնելով, որ իր ներկայությունը Ղարաբաղում անհրաժեշտ է երկրի շահերի տեսակետից, և ինքը կարող է «ավելի օգտակար լինել, քան որևէ ուրիշը, Ջանգեզուրի հարցի խաղաղ լուծման գործում»՝ նկատի ունենալով իր քաջածանոթ լինելը Ղարաբաղի հարցում խաղաղ համաձայնագրի ձեռքբերման գործընթացին, Ղարաբաղի հայերի և մուսուլմանների հոգեբանությանը և այլն<sup>409</sup>: Բաքույն սկզբում վործեց դիվանագիտական ճանապարհով ամրագրել իր համար ստեղծված նպաստավոր կացությունը: 1919 թ. հուլիսի 22-ին ադրբեջանական կողմի նախաձեռնությամբ կայացավ հանդիպում Տ. Բեկզադյանի և հաղորդակցության ուղիների նախարար, պաշտպանության խորհրդի անդամ Խ. ք. Մելիք Ասլանովի միջև: Վերջինը, արձանագրելով բազմաթիվ բարդ խնդիրների առկայությունը, առաջարկեց գումարել հայ-ադրբեջանական խորհրդակցություն և ուղղակի բանակցությունների միջոցով լուծել այդ հարցերը: Խորհրդաժողովի օրակարգում առաջարկվեց ընդգրկել երկու կարևոր դրույթ՝ 1) կողմերը համաձայնության էին գալիս վիճելի հարցերը արբիտրաժով լուծելու շուրջ, 2) լուծվելու էին բոլոր տարածքային վեճերը, իսկ դրա անհնարինության դեպքում հաստատվելու էր որևէ պարտադիր բաժանարար գիծ, որը կսահմանագատեր կողմերի ազդեցության ոլորտները, ու միաժամանակ կողմերը կերաշխավորեին ազգային փոքրամասնությունների ինքնավար իրավունքները: Տ. Բեկզադյանն իր հերթին առաջարկել էր տարածքային սահմանագատման հարցը թողնել խաղաղ խորհրդաժողովին, քանի որ այդ հարցի շուրջ հնարավոր չէր համաձայնության գալ, ինչը բարդացնում էր մյուս հարցերի կարգավորումը: Նույն օրը վարչապետ Ռևուբբեկովի հետ հանդիպման ժամանակ ադրբեջանական կողմը կրկին ընդգծեց *modus vivendi*-ի հաստատման անհրաժեշտությունը<sup>410</sup>: Սակայն Մ.Յու. Ջաֆարովի հետ հանդիպման ժամանակ պարզվեց, որ Բաքույն՝ որպես բաժանարար գիծ դիտում էր Նախիջևանի, Շարուրի և Նոր Բայազետի գավառների վարչական սահմանները, որոնք հաստատվել էին դեռ գեներալ թոմսոնի կողմից: Բեկզադյանն ընդգծեց, որ այդ գիծը հնացած է, քանի որ դրանից հետո գեներալ Ջորժին սահման հաստատեց Դակարու գետով և Ջաբուլ գյուղով: Ջաֆարովը Բեկզադյանին հայտնել էր, որ ԱԴԴ կառավարությունը, քննարկելով իբր թե վերջինի կողմից արված առաջարկը *modus vivendi*-ի հաստատման մասին, համաձայնել էր խորհրդակցության գումարմանը: Իր նամակում սակայն Բեկզադյանը նշում է, որ խորհրդաժողովի նախաձեռնողը Մելիք

<sup>409</sup> Տե՛ս Нагорный Карабах в 1918-1923 гг., стр.338-339:

<sup>410</sup> Տե՛ս ՀԱՄԼ. ֆ.200, ց.1, գ.352, ք.1-2:



Ալլահնովն էր, բայց ինքը դրան չտվեց հատուկ նշանակություն, հանուն խորհրդաժողովի գումարման<sup>411</sup>:

Փաստորեն, հանդես գալով խորհրդաժողովի գումարման ու մշտական սահմանների հաստատման առաջարկությամբ՝ Ադրբեջանը ձգտում էր օգտվել ուժերի բարենպաստ հարաբերակցությունից: Նման պայմաններում Բաքվին ձեռնտու էր երկկողմ ձևաչափով, առանց դաշնակիցների միջամտության, վերջնականապես լուծել տարածքային հարցը ԱԳՀ-ին միացնելով Ղարաբաղը, Ջանգեզուրը և Շարուր-Նախիջևանը: Նույն իրողություններից ելնելով՝ երևանը ձգտում էր հասնել միայն բախումների դադարեցմանը ժամանակավոր զծի հաստատման միջոցով:

1919 թ. օգոստոսի վերջին Ադրբեջանից դուրս բերվեցին անգլիական զորքերը, օգոստոսի 26-ին նրանց վերջին շարասյունը հեռացավ Բաքվից: Դրանով դաշնակիցները զրկվեցին Անդրկովկասում քաղաքական իրադրության վրա ազդելու լուրջ լծակից: Բաքուն հնարավորություն ստացավ վարել ավելի ինքնուրույն քաղաքականություն՝ օգտագործելով ոչ միայն դիվանագիտական մեթոդները, այլև զենքի ուժը: 1919 թ. սեպտեմբերի 22-ին Տ. Բեկզադյանը գրում էր ԳՀ ԱԳՆ-ին, որ Ադրբեջանը պատրաստվում է բռնագրավել Ջանգեզուրը և նրա վրայով Ջուլֆայի միջոցով կապվել Պարսկաստանի, իսկ Շարուր-Նախիջևան-Սուրմալուի վրայով՝ կապվել Թուրքիայի հետ: Նշվում էր, որ ԱԳՀ-ն ոգեշնչվել էր Նախիջևանի, Շարուրի ու Բեյլուք Վեդիի հաջողություններից և մեծ տերությունների ներկայացուցիչների բարյացակամությունից ու իր քաղաքականության մեջ ավելի սանձարձակ դարձել<sup>412</sup>:

1919 թ. սեպտեմբերի 4-ին ԱԳՀ ՁՈՒ գլխավոր շտաբի պետ Սուլեյման Սուլևկիչը Ղարաբաղի գեներալ-նահանգապետին նամակում նշում էր, թե Ղարաբաղի հարցի խաղաղ լուծումը թույլ էր տալիս մտածել, որ Ջանգեզուրի գավառի խաղաղ միացումը տեղի կունենար առանց զինված պայքարի, քանի որ տեղի հայությունը Նախիջևանի ջախջախումից հետո հայտնվել էր երկու կրակի արանքում: Նման իրավիճակում Հայաստանն իրենից վտանգ չէր ներկայացնում, սակայն այդ բարենպաստ դրությունը երկար չէր կարող տևել: Ուստի անհրաժեշտ էր համարվում քրդերից կազմակերպել հեծելազոր և հետևակ՝ «համիդիե» զնդերի օրինակով<sup>413</sup>:

Տեղյակ լինելով ԱԳՀ նախապատրաստությունների և արդեն իսկ սկսված զորքերի առաջխաղացման մասին՝ ԳՀ ԱԳՆ-ը սեպտեմբերի 28-ին ԱԳՀ դիվանագիտական ներկայացուցչին ուղղված հայտագրում պահանջեց դադարեցնել այդ զործողությունները՝ մատանշելով, որ Ջանգեզուրը Հայոց Ազգային խորհրդի կառավարմանը հանձնվել էր դաշնակիցների որոշմամբ: Պատասխան հայտագրում հոկտեմբերի 4-ին Հայկվերդովը հայտնեց, որ Ջանգեզուրի գավառը գտնվում է ԱԳՀ տարածքում, ուստի

<sup>411</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.352, ք.3:

<sup>412</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.50, ք.135:

<sup>413</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.271, ք.47-53:

ՀՀ ԱԳՆ հայտագիրը միջամտություն է ԱԴՀ ներքին գործերին, և ԱԴՀ կառավարությունը պարտավոր չէ զեկուցել ՀՀ կառավարությանը Ադրբեջանի առանձին մարզերի ներքին կառավարմանը վերաբերող միջոցառումների մասին<sup>414</sup>: Դրանով փաստորեն Ադրբեջանն անուղղակի կերպով խոստովանում էր Ձանգեզուրի գրավման ուղղությամբ իր կողմից իրականացվող միջոցառումների մասին և բացահայտորեն հրաժարվում կատարել դաշնակիցների որոշումները: Բաքուն, ստանալով ձեռքերի ազատություն և վստահ զգալով իր ուժերի վրա, ձգտում էր իր օգտին փոխել գոյություն ունեցող ստատուս-քվոն:

Արդեն 1919 թ. հունիս-սեպտեմբերին տեղի ունեցան ԱԴՀ առաջին զինված հարձակումները Ձանգեզուրի վրա, որոնք ավարտվեցին նրա ռազմական պարտությամբ<sup>415</sup>: ՀՀ կառավարությունը բողոք հղեց դաշնակիցներին՝ փորձելով արագացնել Շարուր-Նախիջևանում ամերիկյան զեներալ-նահանգապետի նշանակումը և դաշնակիցների ներկայացուցիչների ուղարկումը Ձանգեզուր, ինչն ավելի վերահսկելի կդարձներ ԱԴՀ քաղաքականությունը<sup>416</sup>: Եթե երևանը ձգտում էր հասնել Հասկելի մշակած համաձայնագրի դրույթների կատարմանը, որոնց թվում էր նաև դրույթը Ձանգեզուրում ստատուս-քվոյի պահպանման մասին, ապա ԱԴՀ-ն ձգտում էր չեղյալ հայտարարել այն՝ արդարացնելու համար իր կողմից նախապատասխանվող ռազմական գործողությունները: Այդ նպատակով Բաքուն պնդում էր, թե ՀՀ-ն կանոնավոր զորք է կենտրոնացրել Ձանգեզուրում՝ դրանով իսկ խախտելով համաձայնագիրը<sup>417</sup>: 1919 թ. հոկտեմբերի 26-ին ՀՀ վարչապետը գնդապետ Հասկելի տեղակալ գնդապետ Ռեային ուղղված նամակում հերքում էր ՀՀ կանոնավոր զորքերի առկայությունը Ձանգեզուրի գավառում և նշում, որ Բաքվի մեղադրանքներն ընդամենը պատրվակ էին՝ մերժելու համար ԱԴՀ կառավարության և գնդապետ Հասկելի միջև կնքված համաձայնագիրը: Սակայն պետք է նշել, որ դաշնակիցները կատարողիկ պահանջեցին Բաքվից ձեռնպահ մնալ Ձանգեզուրի վրա հարձակումից<sup>418</sup>:

ՀՀ-ն նաև փորձեց հասնել երկկողմ խորհրդաժողովի գումարմանը՝ հուսալով նրա միջոցով ժամանակ շահել և խուսափել աննպաստ պայմաններում ռազմական բախումից<sup>419</sup>: 1919 թ. հոկտեմբերին Տ. Բեկզադյանն առաջարկեց գումարել խորհրդաժողով և լուծել վիճելի հարցերը կամ դրանք հանձնել արբիտրաժին: Բաքուն հրաժարվեց նրա օրակարգում ընդգրկել Ղարաբաղի, Ձանգեզուրի և Շարուր-Նախիջևանի հարցերը՝ իր համար անընդունելի համարելով վեճը դրանց շուրջ: ԱԴՀ-ն պատրաստ էր միայն քննարկել Դարալազյազի, Ղազախի և «Գոկչայի» (Սևա-

<sup>414</sup> Տե՛ս ՀԱՄ, ֆ.200, ց.1, գ.50, ք.144, 149, 158:

<sup>415</sup> Տե՛ս *Нагорный Карабах в 1918-1923 гг.*, стр.306:

<sup>416</sup> Տե՛ս ՀԱՄ, ֆ.200, ց.1, գ.50, ք.143, 160:

<sup>417</sup> Տե՛ս ՀԱՄ, ֆ.200, ց.1, գ.50, ք.207:

<sup>418</sup> Տե՛ս ՀԱՄ, ֆ.200, ց.1, գ.50, ք.182, 188:

<sup>419</sup> Տե՛ս *Ռաբոտն*, նշվ. աշխ., էջ 245-246:



նա լիճ) սահմանների հարցը: Չընդունվեց նաև Բեկզադյանի առաջարկը վիճելի շրջաններում ստատուս քվոյի պահպանման վերաբերյալ: Բաքում բանակցությունների մեկ այլ պարտադիր պայման էր համարում ոչ թե ժամանակավոր բաժանարար գծի, այլ մշտական սահմանների որոշումը<sup>420</sup>:

Սակայն վերը նշված պատճառներով դաշնակիցների միջամտությունը և համաձայնության գալու ՅՊ փորձերը չէին կարող եական արդյունքների հանգեցնել: Նոյեմբերի 1-ին սկսվեցին լայնամասշտաբ ռազմական գործողություններ, որոնց Ադրբեջանի կողմից մասնակցում էր մոտ 7000-ոց զորք ու անկանոն ուժեր զենքրալ Ալի Ադա Շիհլիմսկու գլխավորությամբ<sup>421</sup>: Ջանգեզուրի դեմ հանվել էր 3 հետևակ գունդ (6000 զինվոր), 2 հեծյալ գունդ (800 հեծյալ), 8 թեթև հրանոթ և 4 հաուրիցա: ԱՂԴ դիվանագիտական ներկայացուցիչը հերքում էր ԱՂԴ կանոնավոր զորքերի մասնակցությունը հարձակմանը՝ այն վերագրելով քրոակական ավազակախմբերին: Հարձակմանը նախորդեց Խ.Բ. Սուլթանովի կողմ Ջանգեզուրի հայությանը՝ վտարել արկածախնդիրների ու վերջ տալ անիշխանությանը: Հակառակ դեպքում նա նշում էր, որ բավարար ուժ ունի ստիպելու համար նրանց ճանաչել ԱՂԴ իշխանությունը: Սուլթանովն օրինակ էր բերում Լեմբորանը, Մուղանը և Ղարաբաղը, որոնք առանց ուժի կիրառման ճանաչել էին ԱՂԴ իշխանությունը<sup>422</sup>:

Իր հերթին Երևանն անմիջապես բողոք հղեց դաշնակիցներին և Ռուսաստանի Հարավի Ձիմված ուժերին՝ ԱՂԴ քայլերը որակելով՝ որպես զենքի ուժով տարածքային հարցերի լուծման անթույլատրելիության մասին խաղաղ խորհրդաժողովի 1919 թ. հունվարի 24-ի հրահանգների խախտում ու խնդրելով միջնորդել հարձակումը դադարեցնելու համար: Երևանը պատրաստակամություն էր հայտնում դիմել արբիտրաժի և մասնակցել Բաքվում հայ-ադրբեջանական խորհրդաժողովի աշխատանքներին: ԱՂԴ կառավարությանն ուղղված հայտագրում ՅՊ-ն ուղղակի ընդգրծում էր, որ Բաքվի գործողությունները հակասում էին հայ-ադրբեջանական խորհրդաժողովի նպատակներին<sup>423</sup>: Շեշտելով խորհրդաժողովի տապալման վտանգը՝ ՅՊ-ն հույս ուներ այդ կերպ ներագրել Բաքվի վրա: Դաշնակիցները ևս ճնշում էին գործադրում Բաքվի վրա՝ հարձակումը դադարեցնելու և կողմնորին բանակցությունների սեղանի շուրջ նստեցնելու համար: Սակայն Բաքուն սկզբնական շրջանում լռում էր, քանի որ հա-

<sup>420</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.352, ք.3, 7: Այդուհանդերձ Բեկզադյանը, համուն բախտմանի դադարեցման, ցանկալի էր համարում խորհրդաժողովի գոմարումը: ՀՀ ԱԳ-Ն-ը իր հոկտեմբերի 7-ի հայտագրում առաջարկում էր խորհրդաժողովի օրակարգում ընդգրկել ժամանակավոր բաժանարար գիծ սահմանելու, գաղթականների, առևտրական և երկաթուղային կոնվենցիաների ստորագրման և այլ հարցեր:

<sup>421</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.193, ք.172-176; ֆ.200, ց.1, գ.50, ք.212; Нагорный Карабах в 1918-1923 гг., стр.348; Ցառաջ, #48, 1919 թ. նոյեմբերի 18:

<sup>422</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.50, ք.386 և Վ. Վիրաթյան, Հայկական հետախուզությունը առաջին համաշխարհային պատերազմի (1918-1920 թթ.), Երևան, Աստղիկ, 2003, էջ 99:

<sup>423</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.50, ք.196, 207, 209-210, 217, 224-225, 235:

սել էր որոշակի մարտավարական հաջողությունների Ձանգեզուրում՝ տիրանալով մի շարք կարևոր կետերի ու մոտենալով Գորիսին: Դաշնակիցների առջև ԱԳՀ-ն արդարանում էր նրանով, որ Ձանգեզուրում տեղի է ունենում մուսուլմանների ջարդ<sup>424</sup>:

Ի վերջո, ԱԳՀ-ն նոյեմբերի 13-ին դաշնակիցները միաժամանակ դիմեցին ԴՀ և ԱԴԳ կառավարություններին՝ կտրուկ կերպով պահանջելով դադարեցնել ռազմական գործողությունները և նախազգուշացնելով, որ հարցը զենքի ուժով լուծելու նրանց փորձերը կվնասեին իրենց շահերին՝ խաղաղ խորհրդաժողովի աջեքում կասկածի տակ դնելով իրենց պահանջների արդարացիությունը: Բաքուն պատասխանեց, որ Ձանգեզուրը Ադրբեջանի անբաժան մասն է, ինչն ընդունում են նաև դաշնակիցները, ի դեմս անգլիական հրամանատարության և զնդապետ Չասկելի<sup>425</sup>: Ըստ ադրբեջանական կողմի՝ Չասկելը՝ Նախիջևանի հարցով համաձայնագրի կետերից մեկում պահանջել էր ԴՀ կառավարությունից օգնել ԱԴԳ-ին օրինական ճանապարհով լիվիդացնել ապստամբական շարժումը Ձանգեզուրի գավառում և դրանով ստիպել Ձանգեզուրի հայ բնակչությանը ենթարկվել Ադրբեջանին: Մինչդեռ ԴՀ-ն ոչ միայն դա չէր քնել, այլև Ձանգեզուր էր ուղարկել կանոնավոր զորք՝ ապստամբներին ուժեղացնելու համար: Ուստի ԱԴԳ կառավարությունն ստիպված էր եղել Դարաբաղի գեներալ-նահանգապետին ռազմական օգնություն ցույց տալ՝ կարգուկանոնը վերականգնելու և անարխիստական ու բոլշևիկյան տրամադրություններ ունեցող հայ ապստամբներին ճնշելու համար: ԱԴԳ կառավարությունն իր նպատակ էր հռչակում դադարեցնել Ձանգեզուրում մուսուլմանների հալածանքը ու այնտեղ վերադարձնել 60 հազար մուսուլման գաղթականներին: Միաժամանակ հայտնվում էր, որ Խոսրով բեկ Սուլթանովին հանձնարարվել էր չձեռնարկել ռազմական գործողություններ<sup>426</sup>:

Այսպիսով, ԱԴԳ-ն մեկնաբանում էր այլմանագիրն այն տեսակետից, որ դաշնակիցները ճանաչում էին Ձանգեզուրի պատկանելությունը Ադրբեջանին, Ձանգեզուրի Ազգային խորհրդին մեղադրում էր բոլշևիզմի մեջ՝ դրանով ձգտելով շահել դաշնակիցների համակրանքը: ԱԴԳ համաձայնությունը՝ չձեռնարկել ռազմական գործողություններ, պայմանավորված էր ադրբեջանական զորքի ծանր պարտությամբ և Ձանգեզուրը զենքի ուժով գրավման ծրագրի տապալմամբ:

Իր հերթին Երևանը վրդովմունքով ընդունեց դաշնակիցների հավասար վերաբերմունքը՝ պատասխանելով, որ ինքը վաղօրոք զգուշացրել էր դաշնակիցներին ԱԴԳ նախապատրաստությունների մասին ու պահանջել միջոցներ ձեռք առնել ԱԴԳ հարձակման դեմ<sup>427</sup>:

<sup>424</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.50, ք.218, 221, 225: Իսկ դաշնակիցները գտնում էին, որ Ադրբեջանի հարձակումը պայմանավորված էր Բաքվի երկյուղով, որ Դեմիկինի հարձակման դեպքում Հայաստանն, իբրև նրա դաշնակից, կհարձակվեր ԱԴՀ-ի վրա Ձանգեզուրի և Դարաբաղի վրայով:

<sup>425</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.50, ք.250-251:

<sup>426</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.50, ք.266:

<sup>427</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.50, ք.252-253:



1919 թ. նոյեմբերի 19-ին Թիֆլիսում գնդապետ Հասկելի տեղակալ գնդապետ Ռեայի մասնակցությամբ ԱԴՀ և ՀՀ վարչապետներ Ուսուրբեկովի և Խատիսյանի միջև սկսված խորհրդակցության ժամանակ վերջինն առաջարկեց Ձանգեզուրի խնդրի հետ մեկտեղ քննարկել նաև Ձանգիբասարի և այլ շրջանների հարցը: Նշելով, որ Կարսի մարզի երեք գավառ չէին ճանաչում ՀՀ-ն, իսկ Ձանգեզուրի գավառը՝ ԱԴՀ-ն, ԱԴՀ վարչապետը գտնում էր, որ կողմերը պետք է իրար օգնեին նման դեպքերում՝ դրդելով բնակչությանն ընդունել մյուս կողմի իշխանությունը: Ի պատասխան, Խատիսյանը մերժեց միևնույն հարթության վրա դնել Ձանգեզուրը և Ձանգիբասարը՝ նշելով, որ Ձանգեզուրը խոշոր գավառ է, որը երբեք չի գտնվել ԱԴՀ կազմում<sup>428</sup>:

Իսկ գնդապետ Ռեային ուղղված նամակում ՀՀ կառավարությունը նշում էր, որ իրականում Հասկելը ԱԴՀ կառավարության հետ իր վերջին համաձայնագրում հաստատել էր Ձանգեզուրի կառավարման նախկին կարգը՝ այն թողնելով Հայոց Ազգային խորհրդի ձեռքում: Հերքվում էր գավառում ՀՀ կանոնավոր զորքերի առկայությունն ու ընդգծվում, որ Ձանգեզուրում չկային ԱԴՀ դեմ ուղղված ապստամբական շարժումներ, քանի որ նրա իշխանությունը երբեք չէր տարածվել Ձանգեզուրի վրա<sup>429</sup>:

Ուսուրբեկովը կրկնեց այն հայտնի դրույթը, որ ԱԴՀ կառավարությունը Ձանգեզուրը համարում է ԱԴՀ մաս ու նույնիսկ ընդգծեց, որ ԱԴՀ-ն կարող է նույն կերպ պահանջել Կարսի մարզի մուսուլմանական հատվածներն ու Երևանի գավառը: Ասկայն Խատիսյանը շեշտեց, որ չի կարելի կառավարության սովորական հայտարարության հիման վրա համարել, որ այս կամ այն տարածքը պատկանում է իրեն: ՀՀ վարչապետը հայկական պահանջները հիմնավորեց դաշնակիցների ընդունած որոշումներով, որոնցով Ձանգեզուրը պետք է գտնվեր ՀՀ հսկողության ներքո: Չեզոքացնելու համար դաշնակիցների գործոնը՝ Ուսուրբեկովը հայտարարեց, որ Ղարաբաղին ու Ձանգեզուրին վերաբերող նրանց որոշումը կայանում էր նրանում, որ Սուլթանովը նշանակվել էր այդ շրջանի գեներալ-նահանգապետ, ինչն ապացուցում էր դաշնակիցների կողմից այդ տարածքի նկատմամբ ԱԴՀ իշխանության ճանաչումը<sup>430</sup>: Հարկ է նշել, որ ԱԴՀ դիրքորոշումը չունեի բավարար իրավական հիմք: 1919 թ. օգոստոսի 22-ի համաձայնագիրը հստակ սահմանում էր այն տարածքը, որը ժամանակավորապես անցնում էր ԱԴՀ կառավարման ներքո, ի դեմս նահանգապետ Սուլթանովի: Այդ տարածքը ներառում էր միայն Ջևանշիրի, Շուշիի և Կարյազիների գավառների հայաբնակ՝ լեռնային մասերը՝ միաժամանակ բացառելով Ձանգեզուրի գավառը:

<sup>428</sup> Ռեան կողմերին փոխզիջման ու արտաքին ուժերի՝ Թուրքիայի ու Կամավորական բանակի միջամտությանը դիմելուց հրաժարվելու կոչ արեց: Նա նաև կարևորեց ԱԴՀ-ում գործող թուրք գործակալներից ազատվելը:

<sup>429</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.50, ք.268; Ցառաջ, #53, 1919 թ. նոյեմբերի 23:

<sup>430</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.50, ք.309-311:





ոի մուսուլմանաբնակ տարածքները՝ դրանով ձգտելով բացառել ՀՀ կողմից այդ շրջանների նկատմամբ իր իշխանության վերականգնման փորձերը:

ՀՀ-ն ներկայացրեց հետևյալ առարկությունները ԱԴՀ առաջարկություններին: Նշելով, որ ԱԴՀ և Թուրքիայի գործակալների հրահրմամբ Վեդիբասարում, Ջանգիբասարում և այլուր ընդվզումներ էին տեղի ունենում, հայկական կողմն ընդգծում էր, որ կփորձեր խաղաղ ուղիով վերականգնել կարգուկանոնը, իսկ ծայրահեղ դեպքում՝ կստիպեր: Շեշտվում էր, որ ԱԴՀ պահանջների 1-ին կետում բարձրացված հարցը ՀՀ ներքին գործն է: Մերժվում էր Ջանգեզուրի ենթակայությունը Ղարաբաղի գեներալ-նահանգապետին՝ հղում բերելով օգոստոսի 22-ի համաձայնագիրը: Անհնար և աննպատակահարմար էր համարվում պահանջել Ջանգեզուրի բնակչությունից զինաթափվել, քանի որ չկար շրջակա մուսուլմանների չհարձակման երաշխիք: Անընդունելի էր համարվում նաև փախստականների վերադարձն այն պատճառաբանությամբ, որ նրանք գաղթել էին ոչ թե վերջին զինված հակամարտության շրջանում, այլ ավելի քան մեկ տարի առաջ, և, բացի այդ, կողմերի միջև լարված հարաբերությունների պայմաններում գաղթականների վերադարձը կարող էր նոր արյունահեղության պատճառ դառնալ: Մյուս կողմից հայկական կողմը վստահ էր, որ գաղթականների վերադարձի պատրվակի տակ Ադրբեջանը մտադիր էր զորք մտցնել Ջանգեզուր: ՀՀ-ն անընդունելի էր համարում խորհրդածողովի գումարումը Բաքվում՝ պահանջելով ընտրել չեզոք վայր:

Իր հերթին հայկական կողմն առաջարկում էր՝ 1) ՀՀ-ն հետ էր կանչում ռազմական գործողությունների ժամանակ Ջանգեզուր ուղարկված զորքը և իրենտանին, 2) կողմերը նպաստում էին Ջանգեզուրից տանող ճանապարհների բացմանը՝ դրանք տնտեսական նպատակներով օգտագործման համար՝ Ջանգեզուրի Ազգային խորհրդի համաձայնությամբ, 3) ԱԴՀ-ն Ջանգեզուրի սահմաններից հետ էր կանչում զորքերը ու այլևս չէր փորձելու զենքի ուժով գրավել գավառը, 4) Ղարաբաղում Ադրբեջանը պարտավորվում էր չչափել և չտեղաշարժել զորքեր՝ համաձայն օգոստոսի 22-ի համաձայնագրով իր ստանձնած պարտավորությունների<sup>432</sup>:

Նոյեմբերի 23-ին Թիֆլիսում երկու վարչապետների միջև ստորագրվեց համաձայնագիր, որով կողմերը պարտավորվում էին՝ դադարեցնել բախումները ու այլևս չդիմել զենքի ուժի, իրական միջոցներ ձեռնարկել Ջանգեզուր տանող ճանապարհների բացման, նրանցով խաղաղ տեղաշարժման համար, վիճելի բոլոր հարցերը, այդ թվում նաև սահմանային հարցերը լուծել խաղաղ համաձայնության միջոցով, մինչև հաջորդ կետով նախատեսված խորհրդածողովի կողմից որոշումների ընդունումը: Խաղաղ համաձայնության անհնարինության դեպքում կողմերը պարտավորվում էին ընտրել երրորդ կողմ, որը հանդես կգար՝ որպես միջնորդ դատավոր և որի որոշումները պարտադիր կլինեին նրանց համար: ՀՀ և

<sup>432</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.271, ք.54:

ԱՂԳ կառավարությունները պատվիրակություններ էին նշանակելու Բաքվում նոյեմբերի 26-ին կայանալիք երկկողմ խորհրդաժողովին մասնակցելու համար, որը պետք է քննարկեր վիճելի հարցերը<sup>433</sup>:

Համաձայնագրի ստորագրումից հետո ԱՂԳ կառավարությունը պաշտոնական հաղորդագրություն տարածեց Ձանգեզուրի դեպքերի մասին, ըստ որի՝ վերջին մեկ տարում բուլշևիկաբար տրամադրված հայկական ավազակախմբերը Ձանգեզուրում անընդհատ հարձակվում էին մուսուլմանական գյուղերի վրա, իսկ խաղաղ միջոցներով կարգուկանոն հաստատելու ԱՂԳ իշխանությունների փորձերը չէին հաջողվում: Այնուհետև ՀԳ կառավարությունը կանոնավոր զորքեր ուղարկեց Ձանգեզուր, ինչն ստիպեց ԱՂԳ կառավարությանն իր հերթին փոքր զորամաս ուղարկել Ղարաբաղի զեներալ-նահանգապետի տրամադրության տակ՝ կարգուկանոնը վերականգնելու, մուսուլմաններին հարձակումներից պաշտպանելու և ավազակախմբերը ճնշելու համար: Իր առաջխաղացման ընթացքում այդ զորամասը դիմադրության հանդիպեց Տեղ գյուղի մոտ և մերժվեց նրա պահանջը՝ թույլ տալ անցնելու Գորիս: Խոզմավար և Խամանախ գյուղերի մոտ մարտերում ԱՂԳ զորքերը կորցրին 15 սպանված և վիրավոր հայկական կողմի 70 սպանվածի դիմաց: Հերքվում էին տեղեկությունները բազմաթիվ զոհերով ուղեկցվող անընդհատ արյունահեղ մարտերի մասին<sup>434</sup>:

Համաձայնագիրն իրենից ներկայացնում էր անցումային մի փաստաթուղթ, որն ամրագրելով վիճելի բոլոր հարցերը բացառապես խաղաղ ճանապարհով լուծման սկզբունքը՝ փաստորեն դրանով իսկ պահպանում էր ստատուս-քվոն՝ պարտված Ադրբեջանին թույլ չտալով կրկին անգամ փորձելու գրավել Ձանգեզուրը, բայց նաև թույլ չտալով Հայաստանին զինված ճանապարհով վերականգնել իր իշխանությունը Շարուր-Նախիջևանում:

Ձանգեզուրի գրավման փորձի ծախսողունը ծանր անդրադարձավ Բաքվի հեղինակության վրա: Մյուս կողմից, Երևանն ավելի ամրապնդեց իր իշխանությունը Ձանգեզուրում և ձեռնամուխ եղավ զավառի ըմբոստ տարրերի վերջնական վտարմանը: Ձանգեզուրի լեռնային մասի երկու մուսուլմանական անկլավներում՝ Օխչիի և Գեղվա ձորերում ակտիվ զործունեություն էին ծավալել թուրք և ադրբեջանական սպաներն էդիֆ բեյի գլխավորությամբ՝ կատարելով մոբիլիզացիա և պաշտոնապես հայտարարելով, որ այդ շրջաններն ԱՂԳ անբաժան մասերն են: Այնուհետև նրանք փակեցին Ղափանից Գողթան տանող ճանապարհները, ինչպես և սպառնալիք ստեղծեցին տեղի հայության համար: ԱՂԳ կանոնավոր զորքերի հարձակումը հաջողությամբ հետ մղելուց հետո հայկական ուժերը Գարեգին Նժդեհի գլխավորությամբ ստիպված էին նոյեմբերի 20-ին հարձակում գործել ու մինչև դեկտեմբերի 8-ը ոչնչացնել ու տեղահանել Օխ-

<sup>433</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.50, ք.318:

<sup>434</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.50, ք.331, 338; Ծանաթ, #55, 1919 թ. նոյեմբերի 26:



չիի և Գեղվա ծորերի շուրջ 40 մուսուլմանական գյուղեր<sup>435</sup>։ Դրանով Ձանգեզուրի լեռնային հատվածում վերջնականապես ամրապնդվեց ԴՀ իշխանությունը։ Հայկական ուժերը նաև հաջողությամբ հետ մղեցին Նախիջևանի կողմից Հալիլ բեյի գրոհները Դարալագյազի վրա, որոնց նպատակն էր՝ գրավել Դարալագյազը և կտրել Ձանգեզուրը ԴՀ-ից, ու անցնելով հակագրոհի՝ ավարտեցին զավառի ռազմավարական բոլոր կետերի գրավումը<sup>436</sup>։ Օխչիի 5 մուսուլմանական գյուղերից ազատվեց միայն 20 հոգի, իսկ մի քանի ընտանիք ազատեցին հայերը։ Դեկտեմբերի սկզբին Դրոյի էքսպեդիցիոն ջրկատին հրահանգվեց անցնել Ձանգեզուր, կազմակերպել Ձանգեզուրի գործերը, օգնել Դարալագյազին հետ մղելու հարձակումները ու միջոցներ ձեռնարկել Շուշիի, Նախիջևանի և Կարյազինի զավառի կողմից Ձանգեզուրի պաշտպանությունը կազմակերպելու համար։ Նկատի ունենալով ԱԳԴ-ի հետ համաձայնագրի կնքումը՝ հրահանգվում էր ձեռնարկել բացառապես պաշտպանական միջոցառումներ, ինչպես նաև թույլ չտալ բռնություններ ոչ հայ բնակչության նկատմամբ<sup>437</sup>։

ԱԳԴ-ն անմիջապես բողոք հղեց ԴՀ-ին, սակայն նա արդեն ի վիճակի չէր անհապաղ վերսկսել ռազմական գործողություններ։ Դաշնակիցներին ուղղված բողոքներում Բաքուն նշում էր, թե հայերն օգտվում էին նրանից, որ ԱԳԴ-ն նոյեմբերի 23-ի համաձայնագրով գործ չունեի Ձանգեզուրում և կոտորում տեղի մուսուլմաններին։ Դա հանգեցվում էր ամերիկյան սպաների ուղարկել՝ «հայկական ավազակախմբերը» զինաթափելու համար<sup>438</sup>։

1919 թ. դեկտեմբերի 1-ի հայտագրում Բաքուն բողոքում էր Ձանգեզուրում և Դարալագյազում մուսուլման գյուղերի ոչնչացման և քարոզերի (Դարալագյազում 300 տղամարդու սպանություն և 30 կանանց գերում) կապակցությամբ։ Ի պատասխան այդ բողոքի, Երևանը հայտարարեց, որ նոյեմբերի կեսին Հալիլ բեյի գործը հարձակվեց Դարալագյազի վրա, ինչն ստիպեց Ձանգեզուրի գործերին քայլեր ձեռնարկել հարձակումը հետ մղելու ուղղությամբ և գրավել զավառի կարևոր կետերը, որի ընթացքում խաղաղ մուսուլման բնակչությանը վնաս չէր հասցվել։ Նշվում էր նաև, որ քարտեզի վրա չկային ԱԳ նախարար Ջաֆարովի նշած մուսուլմանական գյուղերը Ձանգեզուրի զավառում։ Իսկ դեկտեմբերի 12-ի հայտագրում Երևանը նշում էր, որ տվյալներ չկային Ձանգեզուրում նոյեմբերի 23-ից հետո հայերի որևէ ակտիվ գործողությունների մասին<sup>439</sup>։

<sup>435</sup> Տե՛ս Ռ. Համբարձումեան, Գարեգին Նժդեհ (համառոտ կենսագրական և կենսատարեգրություն), Երևան, Նախիջևան հրատարակչություն, 2006 թ., էջ 19; Է. Ջոնաթյան, Նախիջևանյան հիմնահարցը..., էջ 232։

<sup>436</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.475, ք.52-54։

<sup>437</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.50, ք.348; ց.1, գ.50, ք.351-354, 379; Է. Ջոնաթյան, Նախիջևանյան հիմնահարցը..., էջ 227; R.G. Hovannisian, մշվ. աշխ., Vol. 2, p.225-226: Տե՛ս նաև Յառաջ, #62, 63, 1919 թ. դեկտեմբերի 4, 6։

<sup>438</sup> Տե՛ս ՀԱԱ, ց.1, ֆ.278, գ.6, ք.14-15, Слосло, #93, 1919 թ. դեկտեմբերի 5։

<sup>439</sup> Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.50, ք.341, 345, 396, 428, ֆ.278, ց.1, գ.6, ք.17։

Սպառելով զինված միջամտության հնարավորությունը՝ Բաքուն այրուհանդերձ իր հավակնությունները Ջանգեզուրի նկատմամբ վերահաստատելու համար ներքին գործերի նախարարության հրահանգով Ջանգեզուրի բնակչությանը հռչակեց ԱՂԳ քաղաքացիներ՝ առաջ բերելով ԳԳ բողոքը, որը դա գնահատեց՝ որպես նոյեմբերի 23-ի համաձայնագրի խախտում<sup>440</sup>:

Դաշնակիցներն իրենց հերթին փորձեցին ներազդել իրադրության վրա և ԳԳ-ից պահանջեցին հետ կանչել Ջանգեզուրից իր ուժերը՝ թույլ չտալ: համար վերահաս սրումը: Գնդապետ Չասկելը հայկական կողմին առաջարկեց. որ Ջանգեզուրը մտնեք ԳԳ, իսկ Նախիջևանը՝ ԱՂԳ կազմի մեջ: Սակայն Շրևանը կատեգորիկ նշեց, որ Չայաստանի կողմից հնարավոր միակ զիջումն այն էր, որ Ջանգեզուրը կառավարվի Գայոց Ազգային խորհրդի, իսկ Շարուր-Նախիջևանը՝ աներիկյան գեներալ-նահանգապետի կողմից: Բաժանարար գիծ կարող էր լինել միայն Ջաբուղի գիծը, իսկ Դարաբաղի հարցում ԱՂԳ-ն պետք է անխտիր կատարեր օգոստոսի 22-ի համաձայնագրի կետերը<sup>441</sup>:

Նման պայմաններում 1919 թ. դեկտեմբերի 14-ին Բաքվում գումարվեց հայ-ադրբեջանական խորհրդաժողովը<sup>442</sup>: Դեկտեմբերի 15-ի ոչ պաշտոնական նիստում հոկտեմբերին արդեն իսկ որոշված օրակարգին ԱՂԳ պատվիրակությունն առաջարկեց ավելացնել դատաիրավական հարցերը, ինչպես և կրկին պնդեց տարածքային հարցի առաջնահերթ և վերջնական լուծման վրա<sup>443</sup>: Իր հերթին հայկական կողմը նշում էր, որ կողմերի հակադիր դիրքորոշումները թույլ չէին տա վերջնական լուծում տալ տարածքային հարցին, ուստի հարկավոր էր նախևառաջ լուծել երկկողմ ֆինանսատնտեսական ու զաղթականների հարցերը, ինչը հոգեբանական լավ մթնոլորտ կծնավորեր բնակչության շրջանում՝ նպաստելով վերջնական սահմանազատմանը:

Ադրբեջանական կողմը կրկին բարձրացրեց համադաշնության ստեղծման հարցը՝ որպես տարածքային հարցի լուծման և անվստահության վերացման կարևոր նախապայման: Դա կրկին հանդիպեց ԳԳ պատվիրակության դիմադրությանը, որն ընդգծեց, որ դա Անդրկովկասի բոլոր հանրապետություններին վերաբերող հարց է, ուստի պետք է քննարկվի Անդրկովկասի խորհրդաժողովում: ԳԳ պատվիրակությունը պահանջեց նախապես քննարկել այլ հարցեր՝ ընդգծելով, որ այդ հարցը չափազանց բարդ է և պետք է նախ քննարկվի երկու հանրապետությունների խորհրդարաններում՝ ինչպես նաև նշելով այդ հարցին անդրադառնալու լիազորությունների բացակայությունը<sup>444</sup>: Ի վերջո, որոշվեց այդ հարցը հե-

<sup>440</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.50, ք.360; ՀԱԱ, ֆ.278, ց.1, գ.6, ք.20:

<sup>441</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.50, ք.370-371, ք.374, 377, 402, 404; Ցառաջ, #70, 1919 թ. դեկտեմբերի 17:

<sup>442</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.365, ք.28-32; Ցառաջ, #74, 1919 թ. դեկտեմբերի 24:

<sup>443</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.365, ք.33-38:

<sup>444</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.365, ք.33-38:



տածօգել մյուս միստին, ըստ որում, երկուստեք նշվեց դրական վերաբերմունքը համադաշնության գաղափարի նկատմամբ:

Դեկտեմբերի 17-ի ոչ պաշտոնական միստում կողմերը, հայկական կողմի նշած պատճառներով ընդունելով համադաշնության հարցի տվյալ պահին քննարկման նպատակահարմար չլինելը, որոշեցին բավարարվել հայտարարությամբ նրա ստեղծման ցանկալիության մասին և հարցը հանձնել Անդրկովկասի խորհրդատուներին: Այդ միստում հետաձգվեց տարածքային հարցի քննարկումը և օրակարգում մտցվեցին հյուպատոսական գործակալությունների ստեղծման և դատաիրավական հարցերը<sup>445</sup>: Սակայն մյուս միստում ԱԴԴ կողմը կրկին բարձրացրեց համադաշնության հարցը տարածքային հարցի լուծման համատեքստում՝ ցույց տալով, որ մտադիր չէ քննարկել օրակարգի երկկողմ բազմաբնույթ հարցերը: ԴՅ պատվիրակությունը չհասպարհեց արձանագրել այդ փաստը՝ առաջարկելով ժամանակավորապես դադարեցնել խորհրդատուների աշխատանքները, որպեսզի լիազորություններ ստանա համադաշնության հարցը քննարկելու համար: Կրկին բանավեճ սկսվեց հարցերի առաջնահերթության մասին, և որոշվեց խորհրդատուները տեղափոխել Թիֆլիս<sup>446</sup>:

Այսպիսով, խորհրդատուները տապալվեց՝ չհասնելով գոնե որևէ միջակա արդյունքի: Այն ընդամենը միջոց էր կողմերի համար՝ ժամանակ շահելու և վճռական գոտեմարտին նախապատրաստվելու համար: Դրավկայությունն էին այդ շրջանում Ջանգեզուրի, Դարալազյազի, Գողթանի և հարակից շրջաններում տեղի ունեցող ռազմական գործողությունները, որոնք ուղեկցվում էին բնակչության ջարդերով ու տեղահանությամբ: Դեռ էր ավարտվել խորհրդատուները, երբ դեկտեմբերի կեսերին թուրք-ադրբեջանական զանգվածը կանոնավոր զորամասերի մասնակցությամբ Դալի և Էդիֆ բերքի գլխավորությամբ ոչնչացրեց Դայկական Գողթանը՝ կոտորելով բնակչության մեծ մասին և գերեզմանները կանանց: Երևանը բողոքեց ԱԴԴ կառավարությանը և դաշնակիցներին, որին ի պատասխան, Բաքուն հայտնեց, որ տեղեկություն չունեի այդ մասին, և եթե այդ տվյալները հաստատվեին, մեղավորները կպատժվեին: Մեկ այլ հայտագրում, արդեն ի վիճակի չլինելով հերքել կատարված ջարդը, Բաքուն հայտնում էր, որ Ազուլիսը գրավել էին ցրտահար և սովահար մուսուլման փախչուտականները Ջանգեզուրի, Երևանի, Էջմիածնի և Սուրմալուի գավառներին, որոնք ենթարկվելով ԴՅ կանոնավոր զորքերի հալածանքներին՝ փախել էին Նախիջևան: Բաքուն նշում էր, որ միջոցներ է ձեռնարկում՝ թույլ չտալու հայկական գյուղերի բնակեցումը մուսուլման գաղթականներով: Դրանով նա փորձում էր կշեռքի նժարի վրա դնել Օխսիի և Գեղվա ձորերի ըմբոստ տարրերի նկատմամբ ԴՅ ուժերի գործողությունը և Գողթանի՝ Շարուր-Նախիջևանի մուսուլմանների հանդեպ հյու-հնազանդ հայության ջարդը: Գողթանի հարցում ԱԴԴ քաղաքականությունը ցույց տվեց, որ

<sup>445</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.365, ք.39-41:

<sup>446</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.365, ք.42-45:

նույնիսկ անվերապահ հնազանդություն հայտնելը չէր կարող երաշխիք լինել հայության ֆիզիկական անվտանգության ապահովման համար<sup>447</sup>:

Իրենց հերթին Ջանգեզուրի հայկական ուժերը 1919 թ. հունվարի 19-ին լայնածավալ հարձակման անցան Ջանգեզուրից արևելք՝ Հակարու գետի ուղղությամբ՝ նվաճելով ու տեղահան անելով շուրջ քսան գյուղ: Ի պատասխան Քաջվի բողոքների, Երևանը պատասխանում էր, որ տեղեկություն չուներ այդ մասին և դրա հաստատման դեպքում պատժելու էր մեղավորներին<sup>448</sup>: Այդ բոլոր ռազմական գործողությունները նպատակ էին հետապնդում ապահովել առավել հարմար ռազմավարական դիրքեր Ջանգեզուրի և Ղարաբաղի համար գալիք մարտերում:

Ամփոփելով՝ պետք է նշենք, որ ԱՂԳ-ն չկարողացավ օգտվել իր համար ռազմաքաղաքական բարենպաստ իրավիճակից և ավարտի հասցնել Ելիզավետպոլի նահանգի՝ իր իշխանությունից դուրս գտնվող միակ գավառի՝ Ջանգեզուրի նվաճումը, ինչը լուրջ ռազմավարական հաջողություն կարող էր հանդիսանալ իր համար: Դրա հիմնական պատճառներից էր Բեյութ Վեդիի, Շարուր-Նախիջևանի, Մուղան-Լեռքորանի, և Ղարաբաղի հաջողությունների ֆոնի վրա սեփական ուժերի գերազանցատունը, որը բերեց իսկական ռազմական աղետի Գորիսի մատույցներում: Մյուս կողմից, ԱՂԳ-ն նոր հաջողության հասավ էթնիկական զտման իր քաղաքականության մեջ՝ իրականացնելով Գողթանի հայաթափումը:

### 3.2 ԱՂԳ ԲԱՂԱԲԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՎՏԻՎԱՑՈՒՄԸ ՇԱՐՈՒՐ – ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ԿԱՐՍԻ ՍԱՐՁԻ ՀԱՐՑՈՒՄ 1919 Թ. ՎԵՐՋԻՆ ԵՎ 1920 Թ. ՄԿՁԲԻՆ

1919 թ. ամռանը ՀՀ-ի համար ստեղծվել էր շատ ծանր վիճակ. ԱՂԳ-ի և Օսմանյան թուրքիայի հրահրմամբ մուսուլման բնակչության ընդվզումների արդյունքում երկիրը երեք կողմից հայտնվել էր օղակման մեջ<sup>449</sup>: Նման պայմաններում 1919 թ. օգոստոսին Անդրկովկաս ժամանեց ՀՀ-ում դաշնակիցների գլխավոր հանձնակատար գեդապետ Հասկելը,

<sup>447</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1 գ.427, ք.69-71; գ.475, ք.52-54, գ.484, ք.6, 8; Աշխատատր, #1, 10, 11, 15, 19, 1920 թ. հունվարի 1, 13-14, 18, 25; Բանբեր Հայաստանի արխիվների, # 1-2, 1993, էջ 194-202; Է. Ջոնարթյան, Նախիջևանյան հիմնահարցը..., էջ 233-241; R.G. Hovannisian, նշվ.աշխ., ք. 236-238: Գողթանի հայությունը հավատաց Էդիֆ թեյի խոստումների և չընդունեց Գողթանի հայկական ուժերի հրամանատար Քոչարյանի օգնությունը: Ջարդը կանխելու շօգնեց նաև Ջանգեզուրի գեներալ կոմիսարի վերջնագիրը՝ Ազուլիսի վրա հարձակման դեպքում ոչնչացնել Երևանի ճորի 7 մուսուլման գյուղերը: Պատասխան մամակում «Հարավ-արևմտյան Ադրբեջանի նահանգապետ» Ջամալիսկին ջարդերի մեղքը քարոզում էր Օխյիի և Քիչի-Ղարաբաղի մուսուլման գաղթականների ավազակախմբի վրա: Տե՛ս Բանբեր Հայաստանի արխիվների, # 1-2, 1993, էջ 192-193:

<sup>448</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1 գ.475, ք.15, 17, 23-25, 29, 31-32, 60; R.G. Hovannisian, նշվ. աշխ., Vol. 2, ք. 239: Հատկանշական է, որ դաշնակիցներն, ի դեմս Մեծ Բրիտանիայի գերագույն կոմիսար Օ. Ուորդոպի, կրկին դրսևորեցին կողմնակալ մտեցում, ինչի վրա Ուորդոպի ուշադրությունը գրավեց ՀՀ կառավարությունը հունվարի 30-ին իր միտաի ժամանակ: Տե՛ս Негорный Карабах в 1918-1923 гг., стр.367-369; Г.Махмураш, նշվ.աշխ., стр. 185:

<sup>449</sup> Տե՛ս Է. Ջոնարթյան, Նախիջևանյան հիմնահարցը..., էջ 186-190:



ինչը փաստորեն ՀՀ-ին «աջակցության» միակ դրսևորումը եղավ: Բաքվում զգուշավորությամբ էին վերաբերվում ամերիկացի հանձնակատարի ժամանմանը: Երևանում ԱԴՀ դիվանագիտական ներկայացուցիչ Ս. Խան Թեքիմսկին օգոստոսի սկզբին իր կառավարությանն առաջարկում էր ժամանակ չկորցնել և մինչև Հասկելի ժամանումը 2 շաբաթում գրավել Ջանգեզուրը և շարժվել մինչև Դամարլու<sup>450</sup>: Եվ իրոք, ՀՀ խորհրդարանում օգոստոսի 22-ի իր ելույթում Հասկելը նշեց, որ ԱԴՀ-ն խախտել է դաշնակիցների կողմից սահմանված ժամանակավոր բաժանարար գիծը, ուստի ինքը Բաքվում քայլեր կձեռնարկի դրան վերջ տալու համար: Սակայն նա միաժամանակ հորդորում էր, որ ժամանակը չէ ՀՀ-ի համար իր էներգիան վատնել հարևանների հետ քաղաքական վեճերի վրա, քանի որ տարածքի փոքր հատվածներ գրավելը որևէ կերպով չի կարող կամխորշել Փարիզի խորհրդաժողովի կողմից սահմանների որոշումը<sup>451</sup>:

Օգոստոսի 28-ին Հասկելը Բաքվում ևս արժանացավ հանդիսավոր ընդունելության: ԱԴՀ ղեկավարությունը մեծ ջանքեր թափեց՝ Հասկելին հանդգելու, որ այն, ինչ իրեն ասվել է Երևանում, չի համապատասխանում իրականությանը: ԱԴՀ դիվանագիտությունն այդ հարցում հաջողության հասավ, և Հասկելն անգամ հրաժարվեց Երևանում արած իր իսկ հայտարարություններից: Այսպես, վարչապետ Ուսուրբեկովի և ԱԳ նախարար Ջաֆարովի դժգոհությանը ՀՀ խորհրդարանում ԱԴՀ ազդեցիկության մասին Հասկելի հայտարարության կապակցությամբ, Հասկելը պատասխանեց, որ իր ելույթը սխալ էր թարգմանվել, ինքը Հայաստանի փաստաբանը չէ, այլ եկել է մարդասիրական օգնության իրականացմանը և խաղաղ գոյակցության հաստատմանը նպաստելու համար<sup>452</sup>: ԱԴՀ ղեկավարության հետ բանակցությունների ժամանակ Հասկելը նշեց ՀՀ և ԱԴՀ միջև բաժանարար գծի հաստատման անհրաժեշտությունը, ըստ որում, նրա կարծիքով՝ Դարաբաղը և Ջանգեզուրը պետք է վերջնականապես անցնեն ԱԴՀ-ին, իսկ Շարուր-Նախիջևանը կազմեր չեզոք գոտի, որը պետք է կառավարվեր տեղական բնակչության կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով՝ եվրոպական կամ ամերիկյան զենեքալ-նահանգապետի գլխավորությամբ: Ուսուրբեկովը Շարուր-Նախիջևանը համարում էր ԱԴՀ անբաժան մաս, սակայն, համաձայնելով գնալ փոխզիջումային այդ տարբերակին, օգոստոսի 29-ին գրավոր կերպով մի շարք ուղղումներ մտցրեց Հասկելի նախագծի մեջ, այն է՝ 1) տարածքը, որով պետք է անցկացվեր Բաքու-Ջուլֆա երկաթուղին, պետք է լիովին անցներ ԱԴՀ-ին, 2) չեզոք գոտուն շրջանառության մեջ պետք է լինեին ԱԴՀ բոնեբը, 3) այնտեղ պետք է համաներում հայտարարվեր, 4) չեզոք գոտին պետք է ՀՀ ազդեցությունից զերծ լիներ, և այնտեղ չպետք է տեղակայվեին հայկա-

<sup>450</sup> Տե՛ս Գաղտնի փաստաթղթերը..., էջ 40:

<sup>451</sup> Տե՛ս R.G. Hovannisian, Տշվ.աշխ., Vol. 2, p.197; է. Ջոխաբյան, Նախիջևանյան ինժնեհարցը..., էջ 202:

<sup>452</sup> Տե՛ս Слово, #9, 1919 թ. օգոստոսի 30; R.G. Hovannisian, Տշվ.աշխ., Vol. 2, p.198:

կան գործեր, այլ միայն վերադառնային գաղթականները, 5) գեներալ-նահանգապետի օգնականին պետք է նշանակել ԱՂԳ-ն<sup>453</sup>։

Կողմերը որոշեցին մինչև նախագծի վերջնական ձևակերպումը դադարեցնել ռազմական գործողությունները<sup>454</sup>։ Վերադառնալով թիֆլիս Գասկելը Բաքվի հետ համաձայնեցված նախագիծն ուղարկեց ԳԳ-ին։ Այն նախատեսում էր ամերիկացի գեներալ-նահանգապետի գլխավորությամբ չեզոք գոտու ստեղծում Շարուր-Դարալազյազում և Նախիջևանում։ Տեղի վարչակազմը կազմվելու էր մուսուլմաններից, բացառությամբ այն վայրերի, որտեղ հայերը մեծամասնություն էին կազմում։ ԳԳ-ն և ԱՂԳ-ն դուրս էին բերում իրենց գործերը և գործակալներին երկրամասից և հայտարարում էին ընդհանուր համաներում։ Չեզոք գոտի գործ կարող էր մտցվել միայն գեներալ-նահանգապետի պահանջով։ Բաքում բոլոր ջանքերը պետք է գործադրեր չեզոք գոտում և Երևանի գաղառում մուսուլմանական բնակչությանը, իսկ Երևանը՝ չեզոք գոտում և Ջանգեզուրի գավառում հայությանը խաղաղեցնելու համար։ ԱՂԳ-ն հնարավորինս թեթևացնելու էր պարենի մատակարարումը Շուշիի և Գորիսի շրջաններում։ Նա կառուցելու և շահագործելու էր Բաքու-Ջուլֆա երկաթուղին, որը գտնվելու էր իր միանձնյա իշխանության ներքո։ Վարչական ծախսերը փակվելու էին տեղական հարկերով, իսկ դրանք բավարար չլինելու դեպքում լրացուցիչ գումարները տրամադրելու էր ԱՂԳ-ն։ Բեյուք Վեդիի բնակչությունը տեղափոխվում էր չեզոք գոտի։ Բացվելու էին Շարուր-Նախիջևանով անցնող և Երևանը պարսկական սահմանին կապող երկաթուղին և հեռագրագիծը։ Չեզոք գոտու երկաթուղին գտնվելու էր գեներալ-նահանգապետի հսկողության տակ և գործելու էր՝ որպես ԳԳ երկաթուղու մաս։ ԱՂԳ-ն միջոցներ էր ձեռնարկելու հայ գաղթականների վերաբնակեցման ուղղությամբ։ ԳԳ-ն և ԱՂԳ-ն կերաշխավորեին իրենց տարածքներում հայերի և մուսուլմանների կյանքն ու գույքը<sup>455</sup>։

Փաստորեն Գասկելի դիրքորոշումը կտրուկ շրջադարձի ենթարկվեց, և նա, առանց ԳԳ կառավարության համաձայնության, ենթարկվելով Բաքվի քարոզչությանը, կազմեց մի նախագիծ, որն ընդունվելու դեպքում նշանակում էր Բաքվի մեծ հաղթանակ, քանի որ կարալազյազի ընդգրկումով չեզոք գոտու սահմաններում Ջանգեզուրը կտրվում էր ԳԳ-ից, իսկ ԱՂԳ-ն նրա վրայով կապվում էր Արաքսի հովտի հետ։ ԱՂԳ-ն արտոնյալ կարգավիճակում էր հայտնվում Շարուր-Նախիջևանում, բացառիկ իրավունքներ էր ստանում Բաքու-Ջուլֆա երկաթգծի կառուցման և շահագործման գործում՝ դրանով իր վերահսկողության տակ առնելով Ջանգե-

<sup>453</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.344, ք.225։

<sup>454</sup> ԱՂ-Հ խաղաղասիրությանը քավարարված՝ Հասկելը հեռագրով ՀՀ կառավարությանը հայտնեց, որ ինքը Բաքվի հետ համաձայնության է եկել ՀՀ և ԱՂ-Հ միջև ամհապաղ զինադադարի հաստատման մասին և առաջարկեց, որ ՀՀ գործերն առաջ չգնային իրենց գրաղեցրած դիրքերից։ ՀՀ պատասխան հայտագիրը տե՛ս ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.193, ք.2; Տոսո, #19, 1919 ք. սեպտեմբերի 10; Յառաջ, #1, 1919 ք. սեպտեմբերի 20։

<sup>455</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.193, ք.19; և. Տոհրարյան, Նախիջևանյան հիմնահարցը..., էջ 204; R.G. Hovannisian, մշվ. աշխ., Vol. 2, ք.198-199։



զուրի հարավը: Նախագիծը միևնույն սամոդակի վրա էր դնում մի կողմից՝ Երեվանի գավառը և մյուս կողմից՝ Ջանգեզուրն ու Դարաբաղը՝ դրանով իսկ, կարծեք թե, ճանաչելով ԱԴԳ ինքնիշխանությունը վերջինների մկատմամբ՝ այնչափ, որչափ ԳԳ ինքնիշխանությունը Երևանի գավառի նկատմամբ<sup>456</sup>:

Տիաճ անակնկալի եկած Երևանը պատվիրակություն ուղարկեց Թիֆլիս, ի դեմս վարչապետ Խատիսյանի և Ռուբեն Տեր Մինասյանի, որոնք պահանջեցին չեզոք գոտուց բացառել Դարալազյազը, պահպանել ստատուս քվոն Ջանգեզուրում, Շարուր-Նախիջևանում արտոնյալ իրավունքներ ընձեռել ԳԳ-ին, իսկ Բաքու-Ջուլֆա երկաթուղու կառուցումը վերապահել այն երկրներին, որոնց տարածքով այն պետք է անցներ, կամ էլ այդ հարցը թողնել հայ-ադրբեջանական համաձայնագրի կարգավորմանը<sup>457</sup>:

Դասկելը, հիմնավոր համարելով հայկական կողմի առաջարկությունները, բանակցություններ սկսեց Թիֆլիսում գտնվող վարչապետ Ռուսթբեկովի հետ, որը սակայն հրաժարվում էր գիշումներ անել արդեն իսկ որոշված նախագծում, հատկապես Դարալազյազի և Բաքու-Ջուլֆա երկաթուղուն վերաբերող կետերում, ինչպես և պնդում էր, որ ամերիկյան զենքերալ-նահանգապետը պետք է ունենար միայն վերահսկողական գործառույթներ, մինչևևս վարչական իշխանությունը պետք է հանձնվեր չեզոք գոտում մեծամասնություն կազմող բնակչության կողմից ընտրված Ազգային խորհրդին: Չեզոք գոտու բյուջեն քննարկելու էր ԱԴԳ խորհրդարանը, և պակասը վճարելու էր ԱԴԳ-ն: Գոտու բնակչությունը չէր գինաթափվում, իսկ տարածքային հարցի լուծման հետ կապված բոլոր հանցագործությունների համար հայտարարվում էր համաներում: Երկարատև բանակցություններից հետո Ռուսթբեկովը համաձայնեց չեզոք գոտուց Դարալազյազի բացառմանը, սակայն փոխարենը պահանջեց չեզոք գոտուց դուրս բերել մեկ Օրդուբադի շրջանը և այն հանձնել ԱԴԳ իշխա-

<sup>456</sup> Բաքուն Հասկելի դիրքորոշման վրա ձգտում էր ներագրել մեկ Երևանի մահաճի մուսուլմանների միջոցով: Չեզոք գոտու մեջ չընդգրկված մուսուլմանները Հասկելին և Ռուսթբեկովին ուղղված դիմումներում պահանջում էին նրա սահմաններում ընդգրկել մեկ ԱԴԳ «ամրաժամ մաս» կազմող Սուրմալուի, Վեդիքասարի, Միլիտանի շրջանները՝ անընդունելի համարելով թեկուզ սամանակալով ներարկումը ՀՀ-ին: 1919 թ. սեպտեմբերի 9-ին ԱԴԳ գործակալներ Սուրմալուի և Վեդիլուի քարոզչության արդյունքում վերոհիշյալ շրջանների և Շարուր-Նախիջևանի մուսուլմանների անունից Հասկելին ուղղված դիմումում շեշտվում էր վերջինների վճարակազմությունը զենքը ձեռքներից պաշարել ՀՀ իշխանության դեմ: Տե՛ս ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.193, ք.225; Յառաջ, #14, 23, 1919 թ. հոկտեմբերի 7, 18; А. Гаджиев, Демократические республики..., стр. 150-151: Տեղի ունեցան Էջմիածնի և Սուրմալուի մուսուլմանների մեր ընդվզումներ, որոնք ճնշվեցին ՀՀ կառավարության կողմից, որը դրանով կամխեց Ջանգիքասարի շրջանի ապստամբությունը: Տե՛ս Յառաջ, #25-26, 1919 թ. հոկտեմբերի 21-22:

<sup>457</sup> Տե՛ս Է. Ջոհրաբյան, Նախիջևանյան հիմնահարցը..., էջ 205; R.G. Hovannisian, ԳՂ.պշխ., Vol. 2, p.201:

նությանը<sup>458</sup>։ Այլ կերպ ասած՝ արդեն իսկ ՀՀ իշխանության տակ գտնվող հայկական Դարալագյազ գավառը ՀՀ-ին «գիջելու» դիմաց ԱԴՀ-ն պահանջում էր Օրդուբադը։

Բանակցությունները փակուղի մտան, և Հասկելը կազմեց 9 կետից բաղկացած նոր նախագիծ, որով Ձանգեզուրում պահպանվում էր ստատուս քվոն, Դարալագյազը չէր ընդգրկվում չեզոք գոտու կազմում, Բեյուք Վեդիի բնակչությունը չէր վերաբնակեցվում, սակայն պետք է զինաթափվեր, Բաքու-Ջուլֆա երկաթուղու հարցը կարգավորվելու էր հայ-ադրբեջանական համաձայնագրով, իսկ չեզոք գոտու պաշտպակազմի ծախսերը պետք է հավասարապես հոգային ՀՀ-ն և ԱԴՀ-ն կամ ԱՄՆ-ը<sup>459</sup>։ Արդեն բավական փորձ ունենալով հայ-ադրբեջանական հակասություններից՝ Հասկելը Ադրբեջանի կառավարությունից պահանջեց ընդունել նոր նախագիծը՝ հակառակ դեպքում սպառնալով չքմնարկել Բաքվի կողմից հովանավորվող Դադստանի բնակչության դիմումները Դադստանում չեզոք գոտու ստեղծման վերաբերյալ<sup>460</sup>։ ԱԴՀ ԱԳ նախարար Մ.Յու. Ջաֆարովի և զինվորական նախարար Մեհմանդարովի փորձերը փոփոխություններ մտցնել նախագծի մեջ ևս տապալվեցին։ Հասկելը մնաց անդրդվելի<sup>461</sup>։ Արդյունքում հոկտեմբերի 6-ին Հասկելին ուղղված հեռագրում Ջաֆարովը հայտնում էր, որ, չիրաժարվելով վիճելի շրջանների նկատմամբ իրավունքներից, Ադրբեջանը դրա հետ մեկտեղ ընդունում է Հասկելի նախագիծն ի գիտություն՝ հույս հայտնելով, որ խաղաղ խորհրդաժողովը հաշվի կառնի այդ շրջանների հանդեպ Բաքվի իրավունքները։ ԱԴՀ կառավարությունը հրաժարվում էր ընդունել նոր նախագիծն այն պատճառաբանությամբ, որ այն հակասում էր ադրբեջանական ժողովրդի շահերին<sup>462</sup>։

Բաքվի այս սկզբունքայնությունը պայմանավորված էր այն պարզ հանգամանքով, որ Հասկելն, առանց իր տրամադրության տակ ունենալու զինված ուժեր, չէր կարողանա հիմնել ամերիկյան զեներալ-նահանգապետություն։ Ուստի ԱԴՀ-ն գրավեց անտարբեր դիտորդի դեր՝ չցանկանալով մեղադրվել Հասկելի նախագծի տապալման մեջ։ Հավանաբար, Բաքուն նաև մինչև վերջ հույս էր փայփայում, որ առանց իր համաձայնության, Հասկելը չէր գնա մուսուլմանաբնակ երկրամասում զեներալ-նահանգապետություն հիմնելուն։

<sup>458</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.193, ք.88; Է. Ջոհրաբյան, Նախիջևանյան հիմնահարցը..., էջ 205-206; Բանբեր Հայաստանի արխիվների, # 1-2, Երևան, 1993, էջ 120-123; R.G. Hovannisian, *Գլխ.աշխ.*, Vol. 2, ք.201:

<sup>459</sup> Տե՛ս Բանբեր Հայաստանի արխիվների, # 1-2, Երևան, 1993, էջ 123; Է. Ջոհրաբյան, Նախիջևանյան հիմնահարցը..., էջ 212:

<sup>460</sup> Տե՛ս R.G. Hovannisian, *Գլխ.աշխ.*, Vol. 2, ք.202 և A. Гаджиев, *Демократические республики...*, стр.153:

<sup>461</sup> ԱԴՀ կառավարությունը դեմ էր նոր նախագծի որոշ կետերին, որին ի պատասխան, Հասկելը վերջնադրային կերպով ընդգծեց, որ ԱԴՀ-ն իրավունք չունի սահմանել ամերիկյան կառավարման պայմանները, և նախագծի պայմաններն ուղարկվել են ԱԴՀ-ին միայն ի գիտություն։ Տե՛ս A. Гаджиев, *Демократические республики...*, стр. 152-153:

<sup>462</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.193, ք.88, 107-108; Слово, #67, 1919 թ. մայիսի 5:



Հոկտեմբերի 16-ին գնդապետ Ռեան Նախիջևանի մուսուլմանական Ազգային խորհրդին ուղղված հեռագրում հաղորդեց ամերիկյան գնդապետ Էդմունդ Դելլիի գլխավորությամբ գեներալ-մահանգապետության հիմնադրման մասին, որը հոկտեմբերի 23-ին Նախիջևանում պետք է անցներ իր պարտականությունների կատարմանը ԴԴ և ԱԴԴ ներկայացուցիչների մասնակցությամբ: Սակայն Բաքուն չուղարկեց իր ներկայացուցիչի և անգամ իր դիվանագիտական ներկայացուցչին չէր հաղորդել, թե ինչ դիրքորոշում ուներ ամերիկյան գեներալ-մահանգապետության հաստատման հարցում<sup>463</sup>: Նման պայմաններում գնդապետ Ռեան և Է. Դելլին մեկնեցին միայն ամերիկյան սպաների ուղեկցությամբ՝ առանց ԴԴ ներկայացուցչի: Ժամանելով Նախիջևան և հանդիպելով Ս.բ. Ջամալին-սկուն ու Քելբալի հան Նախիջևանսկուն՝ գնդապետ Ռեան հրապարակեց Դասկելի ծրագիրը<sup>464</sup> և պահանջեց այն տարածել հանրության մեջ, սակայն մերժում ստացավ: Մյուս օրը տեղի ունեցավ նրա հանդիպումը Ազգային խորհրդի հետ, որը ևս հրաժարվեց ընդունել ծրագիրը անգամ եթե այն արժանանար ԱԴԴ կառավարության հավանությանը: Իր հերթին Դալի բեյը հայտնում էր, որ մինչև հարցի վերջնական կարգավորումը ինքը կպահպանի կարգուկանոնը երկրամասում և կընդունի գնդապետ Դելլի-ին՝ որպես դաշնակիցների ներկայացուցիչ, բայց՝ ոչ որպես գեներալ-մահանգապետ:

Արդյունքում գնդապետ Ռեան ստիպված էր զիջել և 1919 թ. հոկտեմբերի 29-ին հեռանալ երկրամասից՝ Նախիջևանում թողնելով գնդապետ Դելլիին դաշնակիցների ներկայացուցչի կարգավիճակով: Դասկելը և Ռեան մեղադրեցին ԱԴԴ կառավարությանը չեզոք գտնու ընդունման և ամերիկյան մահանգապետին քարոյական աջակցություն ցուցաբերելու նպատակով Բաքվի ներկայացուցչի ուղարկմանը վերաբերող իր պարտավորությունների խախտման մեջ: Դրան ի պատասխան, Ջաֆարովը պնդում էր, որ իր կառավարությունն ընդամենը հայտարարել էր, որ ստանձնելու էր պասիվ դիտորդի դեր<sup>465</sup>:

Դասկելի ծրագիրը փաստորեն տապալվեց, և դա Բաքվի լուրջ հաղթանակն էր: Ուսուրբեկովի կառավարությունը գիտակցում էր, որ տարածաշրջանում դաշնակիցների զինված ուժերի քաղաքականության պայմաններում կարելի էր անպատիժ կերպով ավելի կոշտ դիրքորոշում գրա-

<sup>463</sup> Տե՛ս Ա. Գադժևեյ, *Демократические республики...*, стр. 156; Յառաջ, #29, 1919 թ. հոկտեմբերի 25; *Слово*, #54, 1919 թ. հոկտեմբերի 21; Գաղտնի փաստաթղթերը..., էջ 41-42: Ի պատասխան, ԱԴԿ դիվանագիտական ներկայացուցիչ Հախվերդովի հարցման, Բաքում հայտնում էր, որ Հասկելը չէր ընդունել աղյուրեզմանական կողմի պայմանները, ուստի Աղյուրեզմանի կառավարությունը չէր տել էր, որ կմնա պասիվ դիտորդի դերում և դիմադրություն ցույց չի տա, եթե Հասկելը որոշի չեզոք գտնու հաստատել Ըարոս-Նախիջևանում:

<sup>464</sup> Հասկելի ծրագրի լրիվ տեքստը տե՛ս Է. Ջոնարյան, *Նախիջևանյան հիմնահարցը...*, էջ 213-214:

<sup>465</sup> Տե՛ս Ա. Գադժևեյ, *Демократические республики...*, стр. 156-157; R.G. Hovannisian, Vol. 2, նշվ. աշխ., p.205; Է. Ջոնարյան, *Նախիջևանյան հիմնահարցը...*, էջ 215-216:

վել ԱԴԴ կովկասյան քաղաքակաճնության նպատակների իրականացման գործում:

Սակայն հենց Ադրբեջանի ազդեցությունը երկրամասում, ի դեմս նահանգապետ Ս.բ. Ջամալինսկու բախվում էր տեղական էլիտայի դիմադրությանը Քելբալի համը գլխավորությամբ, որը չէր ուզում զրկվել իր արտոնյալ կիսաանկախ կարգավիճակից: Քելբալի համը փաստորեն իր ծեռքում էր կենտրոնացրել իշխանությունը երկրամասում (գանձարանը, երկաթուղու, փոստի և հեռագրի վերահսկողությունը, հարկային գործը, զինված ուժերը), և նրա ու Ս.բ. Ջամալինսկու միջև այդ հողի վրա անընդհատ խորանում էին հակասությունները: Վերջինը Բաքվին հաղորդում էր, որ Քելբալի համը բացահայտորեն ծաղրում էր ԱԴԴ իշխանությունը: Երկրամասում կարգուկանոն հաստատելու միակ միջոց Ջամալինսկին համարում էր կանոնավոր զորամասերի առաքումը Նախիջևան: Քելբալի համին չեզոքացնելու նպատակով ԱԴԴ կառավարությունը նրան հրավիրեց Բաքու՝ առաջարկելով բարձր պաշտոն պետական մարմիններում, սակայն նա հրաժարվեց<sup>466</sup>:

Շարուր-Նախիջևանում Բաքվի իշխանության ամրապնդման գործում լուրջ մրցակից էր նաև թուրքական ազդեցությունը, ի դեմս Չալիլ բեյի, որն անընդհատ աճում էր՝ թուրքիայի արևելյան վիլայեթներում քեմալական շարժման ծավալմանը զուգընթաց: Ամրապնդելով իր դիրքերը՝ Չալիլ բեյն սկսեց իր ծեռքում կենտրոնացնել իշխանությունը Շարուր-Նախիջևանում՝ բացահայտ պայքարի մեջ մտնելով Ս.բ. Ջամալինսկու հետ: Արալքիսի, Վեդիբասարի, Միլիստանի ներկայացուցիչների՝ Նախիջևանում գումարված համագումարը երկրամասում հայտարարել էր ռազմական դրություն, Չալիլ բեյին հռչակել դիկտատոր, իսկ Քելբալի համին՝ քաղաքացիական հարցերով տեղակալ: Չալիլ բեյի հաջողությանը նպաստում էր Ջամալինսկու վարչակազմի ծանր ֆինանսական դրությունը, որն էլ ավելի էր բարդանում մուսուլման գաղթականների կարիքները հոգալու խնդրով: 1920 թ. հունվարին Ջամալինսկին ուղղակիորեն խնդրում էր ԱԴԴ դիվանագիտական ներկայացուցչին ազատել իրեն դավաճան Չալիլ բեյից և դրան ուղարկել՝ երկրամասը ճգնաժամից դուրս բերելու համար: Իսկ փետրվարի 3-ին նա արդեն նշում էր, որ Չալիլ բեյն իրեն հռչակել էր «խմբի գլխավոր» և ձգտում էր հեղաշրջում կազմակերպել ու կոտորել իր կողմնակիցներին<sup>467</sup>:

Շարուր-Նախիջևանում թուրքիայի և տեղական էլիտայի ազդեցության ուժեղացման արդյունքում 1920 թ. մարտին Սամեդ բեյ Ջամա-

<sup>466</sup> Տե՛ս Ա. Гаджиев, *Демократические республики...*, стр. 164-167:

<sup>467</sup> Տե՛ս Գալտոնի փաստաթղթեր..., էջ 48-50; Է. Ջոհրաբյան, Նախիջևանյան հիմնահարցը..., էջ 220; Բանբեր Հայաստանի արխիվների, # 1-2, 1993, էջ 165-166, 159: ԱԴԴ դիվանագիտական ներկայացուցիչ Հախվերդովը փետրվարի 4-ին ԱԴԴ ԱԳՆ-ին ուղղած հեռագրում առաջարկում էր դրամական օգնություն ցույց տալ Ջամալինսկուն և խնդրել Հալիլ փաշային հետ կանչել Հալիլ բեյին: Բաքում խառնացավ միջոցներ ձեռք առնել Հալիլ բեյի նկատմամբ և գումար ուղարկել, սակայն արջեն ոչ էր. փետրվարի սկզբին Հալիլ բեյը կոտորեց Ջամալինսկու կողմնակիցներին:



լինակին ստիպված էր հեռանալ երկրամասից, և փաստորեն լուծարվեց ադրբեջանական գեներալ-մահանգապետությունը: Դրանով Ուսուրբեկովի կառավարությունը վերջնականապես կորցրեց իր ազդեցությունը Շարուր-Նախիջևանում: Նախիջևանում ադրբեջանական ազդեցության անկման պատճառն այն էր, որ երկրամասը փաստորեն անջատված էր Ադրբեջանից քաղաքական և աշխարհագրական առումներով: Նրա միացումը ԱԴԳ-ի հետ կրում էր սոսկ դեկլարատիվ բնույթ, ադրբեջանական մահանգապետի իշխանությունը երկրամասում շատ սահմանափակ բնույթ ուներ, քանի որ վերջինի տրամադրության տակ չկային զինված ուժեր, վարչական և տնտեսական ռեսուրսներ<sup>468</sup>: Իշխանության լծակները կենտրոնացված էին տեղական էլիտայի ձեռքում, որը չէր ցանկանում հրաժարվել իր կիսաանկախ կարգավիճակից և ենթարկվել Բաքվի դրածոներին: Բացի այդ, երկրամասում իր ազդեցության հաստատման գործում Ադրբեջանն ուներ լուրջ մրցակից, ի դեմս Թուրքիայի, որը Շարուր-Նախիջևանում ապահովել էր ամուր դիրքեր թուրք զինվորականության միջոցով:

Ապրիլին Հարավ-արևմտյան Կովկասի ժամանակավոր կառավարության անկումից հետո Ադրբեջանն ամենևին չդադարեցրեց Կարսի և Բաթումի մարզերի նկատմամբ ռազմաքաղաքական գերակայության հաստատման փորձերը: Ստեղծվեց Կարսի նոր Շուրա, որն իր ազդեցության տակ էր միավորում Կարսի մարզի մուսուլմաններին: Հեցեց նրան նկատի ուներ վարչապետ Խան Խոյսկին՝ Ս. Խան Թեքինսկուն հանձնարարելով կապ հաստատել «Կարսի կառավարության» հետ և նրան զուցարբերել անհրաժեշտ աջակցություն<sup>469</sup>:

1919 թ. ամռանը Կարսի մարզի հարավային՝ Կաղզվանի, Սարիղամիշի, Մերդենեկի շրջաններում թուրքերի ու քրդերի ընդվզումները հիմնականում ճնշվեցին հայկական ուժերի կողմից: Ընդհանուր առմամբ Հայաստանը վերահսկողության տակ էր պահում մարզը: Սակայն այլ էր իրավիճակը մարզի հյուսիսային՝ Ջարիշատի, Շորազյալի, Աղբաբայի և Չըլդըրի շրջաններում, որոնք փաստորեն ՀՀ իշխանությունից դուրս էին գտնվում: Այդ շրջաններում ակտիվ գործունեություն էին ծավալել ԱԴԳ և Թուրքիայի գործակալները<sup>470</sup>: Նրանք հսկողության տակ էին պահում ռազմավարական նշանակություն ունեցող Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղին: Կարսի փոխմահանգապետ Չալխուշյանը ՀՀ ՆԳՆ տեղակալ Մալխասյանին 1920 թ. հունվարին գրում էր, որ ամենաանհանգիստ շրջանը Ջարիշատն էր, որտեղ աշխատում էին ԱԴԳ գործակալները Իսմաիլ բեկ

<sup>468</sup> Հաջիևը ճշում է, որ ադրբեջանական մահանգապետի կարգավիճակը կարելի է բնորոշել՝ որպես Ադրբեջանի ներկայացուցիչ Նախիջևանում: Տե՛ս Ա. Դեդժուե, *Демократические республи-ки...*, стр. 178:

<sup>469</sup> Տե՛ս Ռուբեն, նշվ. աշխ., էջ 210-211; Գաղտնի փաստաթղթերը..., էջ 23:

<sup>470</sup> Տե՛ս Ռուբեն, նշվ. աշխ., էջ 212:

Նազիրալիսի, Կասուն Հալիլբեկովի և Աղալիբեկ Կազիսի գլխավորությամբ<sup>471</sup>։

1920 թ. հունվարին իրադրությունն այդ շրջաններում ավելի սրվեց։ ԱԳՀ և թուրքական գործակալների դրոմամբ Ջարիշատի և Աղբաբայի մուսուլմանների խորհրդակցությունը որոշեց խզել առևտրական և այլ կապերը հայերի հետ, վտարել ՀՀ վարչակազմը և հայտարարել մոբիլիզացիա։ Հունվարի 24-ին շրջանից վտարվեցին ՀՀ իշխանությունները, տեղի ունեցան հայերի սպանություններ։ Արդյունքում ՀՀ զինված ուժերը գեներալ Հովսեփյանի գլխավորությամբ, ջախջախելով տեղական ուժերը, հպատակեցրին Ջարիշատի շրջանը<sup>472</sup>։

Կարսի մուսուլմանների Ազգային խորհրդի ներկայացուցիչը Թիֆլիսում անհապաղ դաշնակիցներին բողոք հղեց՝ ՀՀ կառավարությանը մեղադրելով Կարսի մարզի մուսուլմաններից բնաջնջելու քաղաքականության մեջ<sup>473</sup>։ Բաբուն իր հերթին արձագանքեց այդ իրադարձություններին՝ ՀՀ ԱԳՀ-ին փետրվարի 8-ին ուղղված բողոքի հայտագրում ընդգծելով, որ ԱԳՀ-ն անտարբեր չի մնալու Անդրկովկասի սահմաններում մուսուլմանների հանդեպ բռնությունների նկատմամբ<sup>474</sup>։ Դրանով ԱԳՀ-ն վերահաստատում էր իր քաղաքականության մեջ ազդեցիկ՝ պանիսլամիստական և պանթուրքիստական հոսանքների առկայությունը և Անդրկովկասի բոլոր մուսուլմանների նկատմամբ իր ինքնիշխանության հաստատման ծգտումը<sup>475</sup>։ Ի պատասխան, ՀՀ ԱԳՀ-ը շեշտում էր, որ դա միջամտություն էր ՀՀ ներքին գործերին և մեջ էր բերում մուսուլմանական Ազգային խորհրդի նախագահ Մեշադի Սամեդ Հաջիսի հեռագիրը վարչապետ Ալ. Խատիսյանին, որում նա նշում էր եկվոր տարրի կողմից անկարգությունների հրահրման և մուսուլմանական գյուղերի թալանի մասին և ողջունում էր ՀՀ կառավարության կողմից զորքերի ուղարկումը կարգուկանոնի հաստատման համար<sup>476</sup>։

Փորձելով ապահովել նաև դաշնակիցների միջամտությունը՝ ԱԳՀ կառավարությունը դիմեց նրանց՝ խնդրելով կազմել միջազգային հանձնաժողով՝ Կարսի դեպքերը քննելու համար, սակայն մերժում ստացավ այն պատճառաբանությամբ, որ դաշնակիցները չունեին ազատ ներկայացուցիչներ՝ հանձնաժողով կազմելու համար։ ԱԳՀ խորհրդարանը մարտի

<sup>471</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.201, Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարություն, ց.1, գ.281, ք.20-21։

<sup>472</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, գ.249, ք.79; Շոսո, 1920 թ. #30, 31, 1920 թ. փետրվարի 8, 10; Ռուբեն, նշվ. աշխ., էջ 248։ Ջարիշատի հպատակեցումից հետո նրանք հեռացան Բաքու և Թիֆլիս։ Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.427, ք.148։

<sup>473</sup> Մակայան մյուս կողմից փետրվարի 15-ին Կարս ժամանեց Արդասանի և Ջարիշատի շրջանների մուսուլմանների պատվիրակությունը, որը մահանգապետ Ղորղանյանին խնդրեց խստորեն պատժել եկվոր արկածախնդիրներին։ Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.249, ք.221; Շոսո, 1920թ. #38, 1920 թ. փետրվարի 18։

<sup>474</sup> Տե՛ս Աշխատատր, #35, 36, 1920 թ. փետրվարի 13-14; Cem-Ender Arslanoglu, նշվ.աշխ., ս.300; Շոսո, 1920 թ. #49, 1920 թ. մարտի 2։

<sup>475</sup> Տե՛ս Cem-Ender Arslanoglu, նշվ. աշխ., ս. 300; Աշխատատր, #49, 1920 թ. մարտի 2։

<sup>476</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.427, ք.64, 81։



8-9-ի նիստերում հարց բարձրացրեց «զինաթափման պատրվակով 73 իշխանությունների կողմից Կարսի մարզում 10000 մուսուլմանների ոչնչացման» մասին՝ որոշելով բողոք հայտնել ողջ աշխարհին 73 գործողությունների դեմ: Այդ կապակցությամբ Ռ. Տեր-Մինասյանը գրում է, որ «Զարիշադի խնդիրը մարտուեց, չնայելով, որ Ադրբեջանից բողոքներ եղան, մարտուեց, որովհետև մասամբ 3ասկէն էր պատասխանատու, եւ այդ ժամանակաշրջանում դաշնակիցների լիազոր 3ասկէն դեռ մի ոյժ էր եւ հնայք կնեռկայացնէր թուրքիայի եւ Ադրբեջանի համար»<sup>477</sup>:

ԱՂԳ-ն Կարսի դեպքերի հարցը բարձրացրեց նաև Անդրկովկասի հանրապետությունների 1920 թ. ապրիլի խորհրդաժողովում՝ ձգտելով հասնել նրան, որ Դարաբադի հետ մեկտեղ հանձնաժողով ուղարկվի նաև Կարսի մարզ: Խորհրդաժողովի ապրիլի 19-ի նիստում ԱՂԳ պատվիրակությունը ներկայացրեց Երևան-Կարսի հայրենակցական միության հեռագրերը, որոնք համաձայն՝ չէին դադարում բռնությունները Կարսի մարզի մուսուլմանների հանդեպ. տեղի էին ունեցել ձերբակալություններ, սպանություններ, բնակչությունից խլվել էր մեկ միլիոն ռուբլի, ինչպես և պահանջվել էր վճարել երկու միլիոն ռուբլի՝ որպես ռազմատուգանք<sup>478</sup>: Թեև նա կարողացավ հասնել որոշման ընդունմանը, որ հանձնաժողովի գործունեության մեջ ընդգրկվեր նաև Կարսի մարզում տեղի ունեցած բախումների հետաքննությունը, դա նրա միակ հաջողությունն էր, որն ուներ մարտավարական բնույթ և չէր կարող ներազդել մարզի քաղաքական իրավիճակի վրա:

Այսպիսով, եթե Շարուր-Նախիջևանում ԱՂԳ-ն, թեև մեծ դժվարությամբ, կարողացավ առժամանակ ապահովել որոշակի ռազմաքաղաքական ազդեցություն, երկրամաս առաքելով բազմաթիվ սպաների, իրահանգիչների ու ցուցաբերելով նյութական լայնամասշտաբ աջակցություն, ապա Կարսի մարզում Բաքուն այդպես էլ չկարողացավ ձեռք բերել քիչ թե շատ զգալի ազդեցություն: Դա բացատրվում էր հիմնականում մարզի մուսուլմանների շրջանում թուրքիայի ուժեղ դիրքերով և աշխարհագրական առումով մարզի կտրվածությամբ ԱՂԳ-ից:

### 3.3 ԱՂԳ ԳՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՌԱՍՏԱՆԻ ԳՐԱՎԻ ԶԻՆԱԿԸ ՌԺԵՐԻ ԴԵՏ 1919 Թ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՆ ԵՎ 1920 Թ. ՍԿԶԻՆ

1919 թ. օգոստոսին, երբ արդեն ավարտվում էր անգլիական զորքերի դուրսբերումը ԱՂԳ տարածքից, երկիրը հայտնվել էր չափազանց ծանր կացության մեջ: ԱՂԳ զինված ուժերն ի վիճակի չէին դիմադրել Դեմիկիմի բանակի հնարավոր ներխուժմանը և մյուս կողմից, ԱՂԳ-ն զբրկվում էր անգլիացիների ռազմաքաղաքական աջակցությունից: Անգլիացիները հեռանալուց առաջ Կամավորական բանակին հանձնեցին նաև Կասպիական նավատորմը, ինչն անհնար էր դարձնում Բաքվի պաշտպա-

<sup>477</sup> Տե՛ս Слово, 1920 թ. #58, 1920 թ. մարտի 12: Ռուբլն, 6շվ.աշխ., էջ 250:

<sup>478</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.411, ց.1, ք.94, 106:

նուրթուրնը: Լուրեր էին պատվում, որ Ոսուրբեկովի կառավարությունը հրաժարական էր տալու, իսկ Դեմիկինը պահանջել էր հանձնել Բաքուն և շրջակայքը՝ բուլճարացիների դեմ պայքարում իր թիկունքն ապահովելու և ռուս բնակչության զինվորագրում անցկացնելու համար: Մամուլը նշում էր, թե արդեն կնքվել էր համաձայնագիր, որով Բաքուն անցնում էր Կամավորական բանակին<sup>479</sup>:

Լարված մթնոլորտը ցրելու համար օգոստոսի 28-ին վարչապետ Ոսուրբեկովը, սոցիալիստական խմբակցության հարցմանն ի պատասխան, նշեց, որ պետությունը ձեռք էր առել պաշտպանական բոլոր միջոցները: Ըստ նրա՝ Կամավորական բանակի ծոտումը՝ բանակցելու ԱՂԴ հետ, հիմք է տալիս ենթադրելու, որ վիճելի հարցերը կհաջողվի լուծել խաղաղ միջոցներով: Ոսուրբեկովը հայտնեց, որ ԱՂԴ-ն բողոքել է անգլիացիներին բաժանարար գծի տեղաշարժման և Կասպիական նավատորմը Կամավորական բանակին հանձնելու դեմ: Ոսուրբեկովն իր ելույթում տեղեկացրեց նաև, որ, ի պատասխան Կասպիական նավատորմի հանձնման դեմ բողոքի, գեներալ Քորին իրեն հայտնել էր, որ նավատորմի հանձնման պայման է եղել Անդրկովկասի հանրապետությունների անձեռնմխելիությունը: Անգլիական գեներալը նաև նշել էր, որ բացի այդ մի քանի նավից, Դեմիկինին տրվել է շատ այլ զենք, ընդհուպ մինչև տանկեր, ու եթե այդ ամենը Դեմիկինն ուղղորդ Ադրբեջանի դեմ, ապա Կասպիական նավատորմի նավերը ծովում կաթիլ կլինեն: Վարչապետը նշեց, որ ԱՂԴ-ն շարունակելու է օգնել լեռնականների՝ վերականգնելու իրենց ինքնուրույնությունը<sup>480</sup>:

Ստեղծված միջազգային կացությունը մտահոգում էր նաև Վրաստանին. 1919 թ. օգոստոսին տեղի ունեցավ Ասիմանադիր ժողովի անդամ Ի. Ռամիշվիլու այցը Բաքու՝ քննարկելու Դեմիկինի հնարավոր հարձակման դեմ համատեղ պաշտպանական միջոցառումների ձեռնարկման հարցը: Այցի արդյունքում կողմերն սկսեցին միասնական վրաց-ադրբեջանական պաշտպանական խորհրդի ստեղծումը Բաքվում, որը պետք է իրազդեցիկ ռազմական դաշինքի դրույթները<sup>481</sup>:

1919 թ. հուլիսին Անդրկովկասում Ռուսաստանի Զարավի Ձինված ուժերի գլխավոր հրամանատարի ներկայացուցիչ Ղազանկվեց և Անդրկովկաս մեկնեց գեներալ Բարաթովը: Վերջինիս տրված գաղտնի հրահանգը Ա. Դեմիկինը բնութագրում է՝ որպես «Անդրկովկասում մեր ողջ քաղաքականության իրական արտահայտությունը սկզբից մինչև վերջ և այնտեղ տեղի ունեցած իրադարձությունների ըմբռնման բանալին»<sup>482</sup>:

<sup>479</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.344, ք.297; А.Г. Кареев, նշվ.աշխ., стр.46:

<sup>480</sup> Տե՛ս Слово, #24, 1919 թ. սեպտեմբերի 16:

<sup>481</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.344, ք.281, 376: Նկատի ունենալով, որ այդ շրջանում տեղի էր ունենում նաև գեներալ Բարաթովի պատմիրակության այնքան Անդրկովկաս, կարելի է ենթադրել, որ Ի. Ռամիշվիլու այցը նպատակ ուներ մշակել միասնական դիրքորոշում Կամավորական բանակի հետ բանակցություններում:

<sup>482</sup> Տե՛ս А. Деникин, նշվ. աշխ., Т.4, стр 196:



Բարաթովին հրահանգվում էր, նկատի ունենալով, որ ողջ Անդրկովկասը 1914 թ. սահմաններում պետք է դիտվեր՝ որպես Ռուսաստանյան պետության անբաժան մասը, հող նախապատրաստել Անդրկովկասը Ռուսաստանի հետ մեկ ամբողջությամբ մեջ սահուն վերամիավորման ուղղությամբ՝ համառուսաստանյան պետական իշխանության վերջնական հաստատումը, թույլատրելի էր համարվում Անդրկովկասի արդեն ձևավորված և գոյություն ունեցող ինքնուրույն կառավարումը: Աղբյուրների դեպքում Դենիկինը, ԱՂԳ-ն համարելով Ռուսաստանի անբաժան մասը, ընդունում էր նրա ժամանակավոր ինքնուրույն կառավարումը, ընդհուպ մինչև համառուսաստանյան պետական իշխանության վերջնական հաստատումը և մտադիր չէր Դադստանյան մարզի հարավային սահմաններից անցնել, եթե ԱՂԳ կողմից չձեռնարկվեին թշնամական գործողություններ: «Աղբյուրներից ես պահանջում էի հաղորդակցության ազատություն Կասպից ծովում և Վլադիկավկազի երկաթգծի մերձծովյան գծով, առևտրական կապերի կանոնակարգում (նավթ) և խորհրդային Ռուսաստանի մատակարարման բացառում»<sup>483</sup>:

1919 թ. օգոստոսին Բաքվում բանակցություններ սկսվեցին Բարաթովի և ԱՂԳ կառավարության միջև: Բանակցությունների օրակարգը հետևյալն էր՝ Աղբյուրները պահանջում էր Դադստանը վերածել չեզոք գոտու և մաքրել վերջինը Կամավորական բանակի զորամասերից: Պահանջվում էր, որ Դենիկինը ճանաչեր առկա ստատուս քվոն (այսինքն՝ Աղբյուրների անկախ գոյությունը – Դ.Կ.): Այդ հարցերի լուծման դեպքում Բաքուն պատրաստ էր կնքել առևտրական պայմանագիր, փոստ-հեռագրական կոնվենցիա և հաստատել ուղիղ երկաթուղային հաղորդակցություն: Ընդ որում, ԱՂԳ վարչապետը հստակ նշում էր, որ Կամավորական բանակի հետ որևէ առանձին համաձայնության մասին խոսք գնալ չէր կարող և դրա պարտադիր պայման էր իր դաշնակից Վրաստանի և Կամավորական բանակի միջև համաձայնագրի միաժամանակյա ստորագրումը<sup>484</sup>: Իր հերթին Բարաթովն առաջ էր քաշում բուլշևիզմի դեմ Աղբյուրների ակտիվ պայքարի, ապրանքափոխանակության հաստատման (այն է՝ մատակարարման–Դ.Կ.), Բաքվի նավահանգստում Կամավորական բանակի Կասպիական նավատորմի նավերի վերանորոգման հնարավորության հարցերը՝ դրա դիմաց համաձայնելով ճանաչել ԱՂԳ ինքնուրույնությունը մինչև Դամառուսաստանյան սահմանադիր ժողովի գումարումը<sup>485</sup>:

<sup>483</sup> Տե՛ս А. Деникин, *Взл. шл.*, Т.4, стр. 196-198, 200, 235-236:

<sup>484</sup> Տե՛ս Наше время, #176, 1919 թ. սեպտեմբերի 10; Искра, #169, 1919 թ. սեպտեմբերի 6:

<sup>485</sup> Տե՛ս Кавказское слово, #13, 1919 թ. սեպտեմբերի 3; Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 117-119: Բաքվի մամուլը նշում էր, որ Բարաթովի նպատակն էր նաև Բաքվում բուլշևիզմի դեմ պայքարի նպատակով ժազմակայանի հիմնումն այն դեպքի համար, եթե հանկարծ Կրասնովոդսկ քաղաքը գրավվեր վերջինների կողմից: Սակայն Բարաթովը հերքեց այդ տեղեկությունը: Տե՛ս Кавказское слово, #15, 1919 թ. սեպտեմբերի 5:

Դեմիկիմը չէր կարող գնալ Ադրբեջանի անկախության ճանաչման, այն էլ այն ժամանակ, երբ Կամավորական բանակը քաղաքացիական պատերազմում հասել էր առավելագույն հաջողությունների: Բայց միաժամանակ նա ձգտում էր ստանալ Բաքվի նավթը: Առկա էին լուրջ տարածայնություններ նաև հակաբուլշևիկյան պայքարի խնդրում, քանի որ Բաքուն, պաշտոնապես կանգնած լինելով հակաբուլշևիկյան պլանֆորմի վրա, այդուհանդերձ մտադիր չէր գնալ Դեմիկիմի հետ դաշինքի: Դրա պատճառը ԱԴԳ կառավարության, հատկապես նրա սոցիալիստական թևի անվստահությունն էր Դեմիկիմի հանդեպ: Երբ օգոստոսի 27-ին գեներալ Բարաբովը ԱԴԳ խորհրդարանում կրկին նշեց, որ Կամավորական բանակն ագրեսիվ մտադրություններ չունի ԱԴԳ-ի հանդեպ, սոցիալիստների ներկայացուցիչ Ա.թ. Պեպինովը հայտարարեց, որ Ադրբեջանի ժողովուրդը նրան չի հավատում, քանի որ Դեմիկիմը մնան խստատունկ տվեց Դադստանի լեռնականներին, ինչն իրեն չխանգարեց վերջ տալ նրանց անկախությանը<sup>486</sup>: Չնայած մամուլում տարածված լուրերին<sup>487</sup>, բանակցությունները չհանգեցրին ԱԴԳ-ի հետ համաձայնագրի ստորագրմանը: Նրա հեռանալուց հետո բանակցային գործընթացն ԱԴԳ-ի հետ ընդհատվեց<sup>488</sup>.

1919 թ. սեպտեմբերի վերջին լարվածությունը կողմերի միջև կրկին աճեց. Կամավորական բանակի հրամանատարությունը ԱԴԳ կառավարությանն ուղղված հեռագրում նշում էր, որ համաձայն 1828 թ. փետրվարի 10-ին թուրքմենչայի պայմանագրի 8-րդ հոդվածի՝ միայն Ռուսաստանն իրավունք ունի ռազմաճակատ պահել Կասպից ծովում, իսկ առևտրաբանավեր՝ Ռուսաստանը և Պարսկաստանը: Դրա հիման վրա ԱԴԳ-ից պահանջվում էր, որ իր առևտրաբանավերջ նավարկելին ռուսական դրոշի ներքո, իսկ ռազմաճակատներն ընդհանրապես ծով դուրս չգային<sup>489</sup>:

Այդ հայտարարությունը մեծ մտահոգություն առաջացրեց Բաքվում՝ գնահատվելով որպես ձգտում՝ խախտելու հաստատված բարիդրացիական հարաբերությունները և ագրեսիվ ելույթ: «Азербайджан» պաշտոնաթերթը Կամավորական բանակի նոր պահանջի առնչությամբ գրում էր, որ, եթե ռուս-պարսկական պայմանագրի հիման վրա կարելի էր պահանջներ ներկայացնել ԱԴԳ-ին, ապա այդ դեպքում թուրքմենչայի

<sup>486</sup> Տե՛ս *Кавказское слово*, #12, 18, 1919 թ. սեպտեմբերի 2, 9:

<sup>487</sup> *Наше время*-ն գրում էր, որ բանակցությունների արդյունքում ստորագրվել էր համաձայնագիր, որով Կամավորական բանակը ճանաչում էր ԱԴԳ ինքնուրույնությունը՝ հարցի վերջնական լուծումը բողոքելով Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի իրավասությանը, իսկ Բաքում պարտավորվում էր բոլոր միջոցները ձեռք առնել ԱԴԳ-ում բոլոր բուլշևիկյան դոստոյաները վերացնելու համար: Պաշտոնական մամուլը և ԱԴԳ կառավարությունը հերքում էին այդ լուրերը: Տե՛ս *Наше время*, #170, 173, 1919 թ. սեպտեմբերի 3, 6:

<sup>488</sup> Վրացական *Сорбса*-ն նշում էր, որ հավանաբար Բարաբովի աված քաղաքական խտրումները չէին կիսվում Կամավորական բանակի ղեկավարության կողմից: Տե՛ս ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.193, ք.138; ֆ.200, ց.1, գ.344, ք.320:

<sup>489</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.193, ք.112; *Слово*, #63, 1919 թ. հոկտեմբերի 31; Հայրենիք, #2300, 1919 թ. մայիսի 21:



պայմանագրով Ադրբեջանը հրաժարվել է Կասպից ծովից, Գյուլիստանի պայմանագրով՝ Ղարաբաղից, Շիրվանից, Բաքվից, Գանձակից, այսինքն՝ ինքնասպանության է դատապարտել իրեն: ԱՂԳ ԱԳև-ն իր պատասխանում նշում էր նաև, որ թուրքմենչախի պայմանագիրը՝ որպես ռուս-պարսկական պայմանագիր, որևէ հիմք չունի ԱՂԳ-ի համար: ԱՂԳ կառավարությունն անհապաղ բողոք հղեց դաշնակիցներին, որում նրանց ուշադրությունն էր հրավիրվում այն փաստի վրա, որ խախտվում էր անգլիական հրամանատարության Բաքվի տրված այն խոստումը, թե Կամավորական բանակին հանձնված նավատորմը չէր կիրառվի Ադրբեջանի դեմ: Դրա հետ մեկտեղ Ադրբեջանն անհապաղ ձեռնամուխ եղավ հնարավոր ներխուժմանը նախապատրաստվելուն: Սկսվեց Նարզեն կղզու ամրացումը Վրաստանից ստացված հեռահար հրետանիով, հիմնվեց Բաքվի ամրացված շրջան: Սակայն սպառնալիքն այնքան մոտ էր թվում, որ Բաքվի ամրացված շրջանի պետը գլխավոր շտաբի կողմից հրահանգել էր նավահանգիստում գտնվող բոլոր նավերը նախապատրաստել պայթեցման: Փաստորեն, նախատեսվում էր Բաքվի եվակուացիան<sup>490</sup>:

Ռազմական միջոցառումների հետ մեկտեղ ԱՂԳ-ն ուժեղացրեց աջակցությունը Դաղստանում 1919 թ. օգոստոսին նոր ուժով ծավալված ապստամբությանը Ուզուն Չաջիի գլխավորությամբ<sup>491</sup>: Սի կողմից, Բաքուն դիվանագիտական, ռազմական և նյութական աջակցություն էր ցուցաբերում ապստամբներին՝ ձգտելով վերականգնել բուֆերն ի դեմս Լեռնականների Զանրապետության, կամ գրավել այն և միացնել ԱՂԳ-ին, իսկ մյուս կողմից, Ուսուբբեկովը դիմեց գնդապետ Զասկեխին՝ խնդրելով նրա միջնորդությունը Կամավորական բանակի և Դաղստանի միջև բաժանարար գծի հաստատման և ռազմական հակամարտության կարգավորման գործում<sup>492</sup>:

Աջակցությունը Դաղստանին պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ Բաքվի քաղաքականության մեջ շարունակում էր կարևոր գործոն հանդիսանալ Նուրի փաշան, որը մեծ ազդեցություն ուներ Ուսուբբեկովի կառավարության վրա և հենվելով Բաքվի վրա՝ ակտիվ պայքար էր ծավալել Դաղստանում Կամավորական բանակի դեմ՝ այդ հարցում սկզբնական շրջանում գործակցելով նաև բուլշևիկների հետ: Սակայն Կամավորական բանակի՝ երկրամասից դուրսնորմից հետո նա իր ջանքերը կենտրոնացրեց բուլշևիկների դեմ՝ թույլ չտալու համար ապստամբության զարգացումն իր համար անցանկալի ուղղությամբ<sup>493</sup>:

<sup>490</sup> Տե՛ս А. Раевский, Английская интервенция ..., стр. 115; Յախաջ, #22, 40, 1919թ. հոկտեմբերի 27, նոյեմբերի 8:

<sup>491</sup> Տե՛ս А. Деникин, в 2-х т., т. 5, стр. 658-659; Н. Байкара, в 2-х т., с. 253; Слово, #30, 32, 63, 103, 1919 թ. սեպտեմբերի 23, 25, հոկտեմբերի 31, նոյեմբերի 18; Борьба, #250, 1919թ.:

<sup>492</sup> Տե՛ս Слово, #42, 1919 թ. հոկտեմբերի 7:

<sup>493</sup> Տե՛ս Т. Согрян, в 2-х т., с. 321; ՀԱՄԼ, ֆ. 200, ց. 1, գ. 50, ք. 11; А. Деникин, в 2-х т., т. 5, стр. 560-561; И. Б. Гаджиев, Совместная борьба бакинского пролетариата..., стр. 43:

Մյուս կողմից, Դադստանի ապստամբության հանդեպ Բաքվի դիրքորոշումը պայմանավորված էր երկու գործոնով: Առաջին, ապստամբության մեջ շարունակվում էր մեծ դեր խաղալ բոլշևիկյան հոսանքը, ինչը չէր բխում Բաքվի և Նուրի փաշայի շահերից: ԱԴԳ-ն ձգտում էր թույլ չտալ բոլշևիկների ազդեցության աճն իր հարևան երկրամասում, ինչը հղի էր նրանց դիրքերի ուժեղացմամբ Բաքվի աշխատավորության շրջանում: Ոչ պակաս կարևոր նշանակություն ուներ այն հանգամանքը, որ ԱԴԳ-ն ռազմական տեսակետից հայտնվել էր շատ խոցելի վիճակում Կամավորական բանակի հնարավոր հարձակման առջև: Բացի այդ, Դադստանի հանդեպ Բաքվի քաղաքականության վրա շարունակվում էր զգալի ազդեցություն ունենալ Սեծ Բրիտանիան, որը Բաքվից պահանջում էր ձեռնպահ մնալ ապստամբներից և քակցելուց՝ ձգտելով հասնել ապստամբության ճնշմանը և Դեմիկինի ջանքերի կենտրոնացմանը Մոսկվայի ուղղությամբ<sup>494</sup>: Դրանով է բացատրվում այն, որ, ի տարբերություն Վրաստանի, որն ակտիվ ռազմական և նյութական օգնություն էր ցուցաբերում լեռնականներին, ԱԴԳ-ն դրսևորում էր ավելի զգուշավոր քաղաքականություն: Այսպես, Ուսուրբեկլի կառավարությունը ձգտում էր բացառել բոլշևիկյան ջոկատների ներթափանցումը ԱԴԳ տարածքից Դադստան, խոչընդոտում էր Վրաստանից կամավորական ջոկատների տարանցումը իր տարածքով լեռնականներին օգնության: Բացի այդ ԱԴԳ-ից Կամավորական բանակին առաքվում էր պարեն և այլ նյութեր<sup>495</sup>:

Կամավորական բանակի հետ հարաբերությունների լարումը սրեց ներքաղաքական կացությունն Ադրբեջանում. սեպտեմբերին ուժեղացան տարածայնությունները Մուսավաթի, սոցիալիստների և էիրարի կոալիցիայի ներսում՝ հանգեցնելով Ուսուրբեկլի կառավարության հրաժարականին: Սոցիալիստները պահանջում էին ակտիվ աջակցություն ցուցաբերել Դադստանին Կամավորական բանակի դեմ պայքարում, մինչդեռ Մուսավաթը վարում էր ավելի զգուշավոր քաղաքականություն: Ադրբեջանը մեղադրվում էր երկրի ներսում դեմիկինյան գործակալների դեմ բավարար պայքար չնդելու, բաժանարար զծի հաստատման գործում թուլություն դրսևորելու մեջ<sup>496</sup>: Իթֆիհադը ևս խստորեն քննադատում էր կառա-

<sup>494</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.193, ք.89, 121; А. Деникин, Զվլ. աշխ., Т.5, стр. 661:

<sup>495</sup> Բաքվի վարչազինը խոր դժգոհություն էր առաջ բերում լեռնականների մոտ: Տե՛ս А. Раевский, *Английская интервенция ...*, стр.115; И.Б. Габриел, *Совместная борьба бакинского пролетариата...*, стр.40-41; ՀԱԱ, ֆ.276, ց.193, ք.95:

<sup>496</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.198, ք.269: Կառավարության հրաժարականը *Азербайджань-ը* քաղաքում էր նրանով, որ դեմիկինյան վտանգի շուրջ բանավեճերի արդյունքում խորհրդարանում կառավարանետ կոալիցիայի վերոնիշյալ կուսակցությունները քվեարկության դրեցին առանձին բանաձևեր: Ըստ որում, Մուսավաթի առաջ քաշած բանաձևը պաշտպանեցին կոալիցիայի մեջ չմտնող քաղաքական ուժերը, ինչից պարզ դարձավ, որ կոալիցիան փաստորեն գոյություն չուներ: Կառավարական ճգնաժամը ծաղրվեց հաղթահարել միայն դեկտեմբերին: Տե՛ս Слово, #25, 32, 36, 46, 52, 57, 60, 65, 72, 78, 96, 1919 ք. սեպտեմբերի 17, 25, 30, հոկտեմբերի 1, 18, 24, 28, նոյեմբերի 1-2, 11, 18, դեկտեմբերի 9; Борьба, #262, 266, 291, 1919 ք. նոյեմբերի 16, 21, դեկտեմբերի 21; Տառաջ, #4, 5, 6, 8, 25, 51, 54, 1919 ք. սեպտեմբերի 24-26, 28, հոկտեմբերի 21, նոյեմբերի 21, 23:



վարության քաղաքական կուրսը՝ գտնելով, որ փրկությունը թուրքական կողմնորոշման մեջ է, քանի որ թուրքերը, պաշտպանելով իրենց պետականությունը, դրանով երաշխավորում էին ոչ միայն Ադրբեջանի, այլև ողջ մահմեդականության ամբողջականությունը<sup>497</sup>:

Այս սրման ֆոնի վրա անհաշուղությամբ ավարտվեցին 1919 թ. հոկտեմբերին Տագանրոգում Ռուսաստանի Հարավի Ջինված ուժերի շտաբին կից անգլիական ռազմական առաքելության ղեկավար գեներալ Հոլմանի միջնորդությամբ Կուբանի կառավարությանը կից Ադրբեջանի ներկայացուցչի և Կամավորական բանակի գեներալ Լուկոմսկու միջև բանակցությունները: Վերջինը կրկին անգամ վերահաստատեց Ռուսաստանի Հարավի Ջինված ուժերի նախկին դիրքորոշումը, ըստ որի՝ Կամավորական բանակը «Ադրբեջանը դիտում է, որպես ինքնուրույն և անկախ պետություն, սակայն դա ժամանակավոր միջոց է ... Ինչպես Ադրբեջանը, այնպես էլ մյուս նորաստեղծ պետությունները հանդիսացել և այժմ էլ հանդիսանում են Ռուսաստանի մաս, որոնց ճակատագիրն իրավասու է վճռել միայն Սահմանադիր ժողովը»<sup>498</sup>: Մինչդեռ ԱԴՀ կառավարության տեսակետից ստորագրվելիք համաձայնագիրը պետք է պարտադիր երաշխավորեր Ադրբեջանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը: Այդ ամենի հետևանքով ձախողվեց բանակցությունների այս փուլը և:

Պաշտպանական միջոցառումների հետ մեկտեղ Ադրբեջանը փորձում էր համաձայնության եզրեր գտնել Դենիկինի հետ, սակայն այն այդպես էլ չկայացավ<sup>499</sup>: Ի վերջո, 1919 թ. նոյեմբերի 9-ին տեղի ունեցավ հարաբերությունների վերջնական խզում: Գեներալ Դենիկինի նոր հրամանում ասվում էր. «Հայլի առնելով ռուսական բանակի հանդեպ ադրբեջանական իշխանությունների թշնամական վերաբերմունքը և Հայաստանի հողերի վրա ադրբեջանական զորքերի դավադրական հարձակումները՝ հրամայում եմ ադրբեջանական զորքերում գտնվող ռուսական ծառայության բոլոր սպաներին լքել նրանց շարքերը»<sup>500</sup>:

Հարաբերությունների խզումը ԱԴՀ-ին դրեց ռազմական գործողությունների ուղղակի սպառնալիքի տակ: Բազում կրկին սկսեց քայլեր ձեռնարկել երկրի հյուսիսային սահմանների մոտ զորքերի կենտրոնացման

<sup>497</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.193, ք.98:

<sup>498</sup> Տե՛ս А.Раевский, Английская интервенция ..., стр. 111:

<sup>499</sup> См. в том же месте, стр.116: Որոշման վերջին մասը վերաբերում էր Լեռնականների Հանրապետությունում ԱԴՀ դիվանագիտական ներկայացուցչին, որին գեներալ Էրդեհին վտարել էր Դաղստանից երկրամասը գրավելուց հետո:

<sup>500</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.164, ք.58; Ցառաջ, #68, 1919 թ. դեկտեմբերի 13: Հարկ է նշել, որ նոյեմբերի 12-ին ՀՀ ԱԳՆ-ն ինքը դիմեց Ռուսաստանի Հարավի Ջինված ուժերի ռազմական ներկայացուցչին՝ նշելով, որ թեև համաձայնություն էր ձեռք բերվել նոյեմբերի 20-ին հայ-ադրբեջանական խորհրդատուով անցկացնելու մասին, սայց ԱԴՀ-ն հարձակվել էր Ջանգեզուրի վրա: ՀՀ ԱԳՆ-ը խնդրում էր այդ մասին հայտնի գեներալ Դենիկինին և միջնորդել, որ ինքը ԱԴՀ կառավարությանը հայտնեի ռազմական գործողությունների անհավաղ դադարեցման անհրաժեշտության մասին: Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.164, ք.58; Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 167:

ուղղությամբ: ԱՊՀ ներխուժման հավանականությունն իրոք մեծ էր, ինչի մասին հավաստիացնում էր Բաքվում Կամավորական բանակի ներկայացուցիչ Կ. Գուլիցինը 77 դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանի հետ զրույցի ժամանակ: Գուլիցինը հայտնում էր, որ Կամավորական բանակը մոտ ժամանակներում վերջնագիր է ներկայացնելու ԱՊՀ-ին, որով պահանջվելու է վերջ տալ Դադստանում Բաքվի վարած քաղաքականությանը և ԱՊՀ-ում ռուսական քաղաքացիների հանդեպ հալածանքներին<sup>501</sup>: 1919 թ. նոյեմբերի 19-ին զեներալ Դենիկինը հայտարարեց նաև Վրաստանի և ԱՊՀ-ի լրիվ տնտեսական շրջափակում՝ պատճառաբանելով դա նրանով, որ ինքը «չի կարող թույլ տալ, որ Վրաստանի և ԱՊՀ ինքնահռչակ կազմավորումները, որոնք ակնհայտորեն թշնամաբար են տրամադրված ռուսական պետականության նկատմամբ և առաջացել են ի վնաս ռուսական պետական շահերի, պարենամթերք ստանան բուլշևիկներից ազատագրված Ռուսաստանի սովալյուկ շրջանների հաշվին»<sup>502</sup>:

1919 թ. վերջին բուլշևիկներից կրած ծանր պարտությունները նպաստավոր պայմաններ ստեղծեցին Կամավորական բանակի և Ադրբեջանի մերձեցման համար. այս անգամ Դենիկինն ստիպված էր մեղմացնել իր կոշտ դիրքորոշումը և համաձայնության եզրեր գտնել Բաքվի հետ: Դաշնակիցներն իրենց հերթին ևս շահագրգռված էին Կամավորական բանակի և Անդրկովկասի համապետությունների միջև հակաբուլշևիկյան պլատֆորմի վրա դաշինքի ստեղծմամբ. ուստի և սկսեցին ակտիվ ռազմական օգնություն ցուցաբերել վերջիններին, իսկ 1920 թ. հունվարին դե ֆակտո ճանաչեցին նրանց անկախությունը<sup>503</sup>: 1920 թ. հունվարին տեղի ունեցավ Կամավորական բանակի պատվիրակության այցը Բաքու, որն իր հետ բերեց առաջարկություն, ըստ որի՝ կողմերը պետք է լռելյայն համաձայնության գալին պահպանելու ստատուս քվո մինչև Սահմանադրի ժողովի գումարումը: Առաջարկվում էր պահպանել առկա կառավարման ձևերը՝ պայմանով սակայն, որ բոլոր արտաքին կապերը կիրականացվեին միայն կողմերի միասնական ներկայացուցչության միջոցով<sup>504</sup>: Դրան հաջորդեց Դենիկինի կողմից Ադրբեջանի դե-ֆակտո ճանաչումը 1920 թ. փետրվարին<sup>505</sup>: Սակայն բուլշևիկների արագ առաջխաղացումը, Կամավոր-

<sup>501</sup>Գուլիցինը նշել էր նաև, որ ԱՊՀ-ի հետ հարաբերությունների խզումն արդեն որոշված բան է: Որպես Ադրբեջան ներխուժման մեկ այլ պայման դրանք՝ Բեկզադյանը նշում էր այն, որ Կամավորական բանակի մավատորմն արդեն իսկ երկու տարի չէր նորոգվել ու քանի որ Կասպից ծովում Բաքվից բացի այլ մավախանգիտա չկար նորոգումն անկացնելու համար, անխուսափելի էր դառնում Դենիկինի կողմից Բաքվի գրավումը: Տե՛ս ՀԱԱ, ֆ.278, գ.1, զ.10, ք.15:

<sup>502</sup> Տե՛ս Եօթեճա, #284, 1919 թ. դեկտեմբերի 12:

<sup>503</sup> Տե՛ս *Наше время*, #9, 1920 թ. հունվարի 14:

<sup>504</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, գ.1, զ.412, ք.7; *Наше время*, #7, 1920 թ. հունվարի 11; Եօթեճա, #53, 1920թ. մարտի 6; *Слово*, #48, 1920 թ. փետրվարի 29:

<sup>505</sup> Տե՛ս *Н. Байкara*, նշվ.աշխ., с.252; *Слово*, #30, 35, 1920 թ. փետրվարի 8, 14:



րական բանակի ջախջախումը<sup>506</sup> և նահանջը Ղրիմ հանգեցրին Ռուսաստանի Հարավի ոչ բոլշևիկյան կառավարությունների վերջնական տապալմանը՝ անհնար դարձնելով հակաբոլշևիկյան կոալիցիայի ստեղծումը: Բոլշևիկյան վտանգն արդեն անմիջականորեն սպառնում էր Արշ-ին, որը մնամ պայմաններում ավելի շատ հակված էր պահպանել չեզոքությունը՝ պատրվակ չտալու համար Խորհրդային Ռուսաստանի հարձակմանը:

Ամփոփելով՝ պետք է նշել, որ, չնայած դաշնակիցների ջանքերին, Ադրբեյջանի և Ռուսաստանի Հարավի ձիմված ուժերի միջև տեղի չունեցավ ներձեցում հակաբոլշևիկյան պլանֆորմի վրա: Դրա հիմնական պատճառներն էին՝ մի կողմից, Դենիկինի հավակնությունները ռազմական գերակայության հասնելու Ադրբեյջանի նկատմամբ, իսկ մյուս կողմից, Արշ-ի հավակնությունները Դաղստանի նկատմամբ, ադրբեյջանաթուրքական և ադրբեյջան-վրացական գործակցությունը Դաղստանում ապստամբությանն աջակցելու գործում, որոնց գումարվում էին խոր հակասությունները կողմերի միջև Արշ-ի պետական-քաղաքական կարգավիճակի որոշման հարցում:

### 3.4 ԱՐՇ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՐԱՔԱՐԻ ՈՒ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՀԱՐՑՈՒՄ 1920 Թ. ՍԿԶԲԻՆ

1919 թ. նոյեմբերի 23-ի համաձայնագիրը և դեկտեմբերի հայաադրբեյջանական խորհրդածողովը ոչ միայն չհանգեցրին տարածքային հարցի լուծմանը, այլև նույնիսկ չորոշեցին դրա կարգավորման սկզբունքները և մեթոդները: Ո՛չ պատերազմ և ո՛չ խաղաղություն վիճակը չէր կարող երկար տևել: Կողմերից յուրաքանչյուրը ծագում էր ամրապնդվել իր ազդեցության տակ գտնվող տարածքում, այդ թվում նաև հակառակորդ էթնիկ տարրի վտարման միջոցով: Արդյունքում Ձանգեզուրում, Դարբադում և Գողթանում շարունակվում էին զինված ընդհարումները և քարերը, որոնք իրադրությունն անընդհատ լարվածության մեջ էին պահում:

<sup>506</sup> Կամավորական բանակի Պետրովսկի կայազորը և Կասպիական նավատորմն ապրիլին մահանջեցին Բաքու, որտեղ շատ ավելի լավ ընդունելության արժանացան Արշ-ը կառավարության, քան Էնգելիտսը իրենց դաշնակից անգլիացիների կողմից: Բաքում համաձայնվեց նրանց կացարան և ճանապարհ տալ, որի դիմաց Կամավորականներն Ադրբեյջանին հանձնեցին հսկայական քանակությամբ զենք և զինամթերք: Ջորաժախի հրամանատար գեներալ Դրացենկուն ՀՀ դիվանագիտական ներկայացուցչի հետ զրույցի ժամանակ նշում էր, որ գերադասեց գոյքը հանձնել իրենց բշմամիներին՝ ադրբեյջանցիներին, քան թե գերիների կարգավիճակով հանձնվել անգլիացի «այաչանակիցներին»: Դրացենկույի կողմից զենքի զինումն Արշ-ին առաջ քերեց պաշտոնական երևանի խիստ դժգոհությունը, որը դա գնահատեց՝ որպես ՀՀ նկատմամբ ոչ քարեկամական քայլ: Տե՛ս ՀԱԱ, ֆ.278, ց.1, Գ.14, ք.87; ֆ.200, Գ.412, ք.22-23; E. Токаржевский, նշվ. աշխ., стр. 248; O. Баликин, Письма А.И. Хатисяна А.О. Оганджаняну, Լրաբեր հասարակական գիտությունների, # 3, Երևան, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի հրատարակչություն, 1996, стр.202:

Արդեն 1920 թ. հունվարից ԱԴԴ ղեկավարության շրջանում ի հայտ եկան կոշտ քաղաքականության կողմնակիցների ազդեցության աճի նախանշաններ: Բաքվում ԴԴ դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը գրում էր, որ դժգոհություն կա ԱԴԴ կառավարության «տարտամ» քաղաքականությունից, ինչը հավանական էր դարձնում ԱԴԴ կառավարությունում ազդեցիկ դերակատարներ վարչապետ Ուսուբբեկովի, Խան Խոյսկու և Մելիք Ասլանովի հրաժարականը<sup>507</sup>: Հաղորդագրության մեջ նշվում էր, որ Բաքուն այս անգամ մտադիր էր վերջնականապես լուծել Ղարաբաղի և Զանգեզուրի հարցը՝ դրանք միացնելով ԱԴԴ-ին ու ապահովելով կանոնավոր հաղորդակցությունը Նախիջևանի հետ<sup>508</sup>:

Այսպես օրինակ, Ղարաբաղի հարցում կոշտ գործողությունների կողմնակից էր հատկապես Իթֆիհադը: Հունվարի կեսին Բաքվում Նուրի և Հալիլ փաշաների մասնակցությամբ կայացած կուսակցական համագումարում Իթֆիհադի առաջնորդ Կարաբեյ Կարաբեկովն առաջարկեց ԱԴԴ կառավարությունից պահանջել երկրի մեծահարուստներից հավաքել 1 մլրդ. ռուբլի և հատկացնել Նուրի և Հալիլ փաշաներին 200000-ոց բանակ կազմելու համար: Նաև առաջարկվում էր Ադրբեջան հրավիրել Մուստաֆա Քեմալին ենթասպաների և «լավ պանիսլամիստների» խմբի հետ՝ «բազմաչարչար կրոնակիցներին տանջանքներից փրկելու համար»<sup>509</sup>:

Տ. Բեկզադյանը նշում էր, որ Սուլթանովի՝ հատուկ առաջնությունը շտապ Ղարաբաղ մեկնելը, քրդական դիվիզիա կազմավորելը, ապացուցում էին ԱԴԴ-ի ազդեցիվ նպատակները: Բաքուն մեծ հույսեր էր կապել քրդական դիվիզիայի հետ՝ Ղարաբաղի և Զանգեզուրի նվաճման գործում: Տ. Բեկզադյանը վստահություն էր հայտնում, որ Սուլթանովի նոր ձեռնարկը՝ զինաթափել Վարանդայի և Դիզակի հայությանը, որոնք միմյանց էին կապում Ղարաբաղը ու Զանգեզուրը, անկասկած, հանդիպելու էր դիմադրություն հայերի կողմից: Սակայն վարչապետ Ուսուբբեկովը կտրականապես հերքում էր դա՝ նշելով, որ քանի դեռ ինքը ղեկավարում է կառավարությունը, հակահայկական շարժում տեղի չէր ունենա, իսկ դեպի ԴԴ սահմաններ ուժեր ուղարկելը բացատրում էր այնտեղ ԴԴ զորքերի կենտրոնացմամբ<sup>510</sup>:

Չի բացառվում, որ Ուսուբբեկովի կառավարության քաղաքական կուրսի կոշտացումը պայմանավորված էր նրա կաբինետի բարդ ներքաղաքական կացությամբ: Խորհրդային Ռուսաստանի հետ լարված հարաբերությունների պայմաններում երկրում տեղի էր ունենում Մուսավաթի դիրքերի թուլացում և արմատական ծախս ու աջ ուժերի՝ Իթֆիհադի և սոցիալիստների մերձեցում և հեղինակության աճ: Ուստի իր դիրքերն ամ-

<sup>507</sup> Տե՛ս Эвоян В., Беликин О., Из истории Нагорного Карабаха (1918-1921 гг.), Բանքեր Հայաստանի արխիվների, #1, Երևան, ՀԽՍՀ Միմիստրների Խորհրդին կից Գիտավթ արխիվային վարչություն, 1989, սր. 115:

<sup>508</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.278, ց.1, գ.21, ք.50:

<sup>509</sup> Տե՛ս Բանքեր Հայաստանի արխիվների, #1, 1989, սր. 115:

<sup>510</sup> Տե՛ս ֆ.278, ց.1, գ.14, ք.4:



քայանդելու, քաղաքական ուժերը հյուսիսից վերահաս վտանգի դեմ համախմբելու նպատակով Ոստրեբեկովի կառավարության համար լավ հնարավորություն էր հաջող ռազմական օպերացիան ըմբոստ Ղարաբաղի և Ջանգեզուրի դեմ:

Եթե ԴԴ-ին ձեռնտու էր Ղարաբաղում ստատուս քվոյի պահպանումը 1919 թ. օգոստոսի 22-ի համաձայնագրի հիման վրա, ապա ԱԴԳ-ն մտադիր էր վերջ դնել այդ ժամանակավոր կարգավիճակին: Սկզբում Բաքուն փորձեց իր նպատակին հասնել խաղաղ միջոցներով. 1920 թ. փետրվարի 19-ին գեներալ-նահանգապետ Խ.Ք. Սուլթանովը Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդին առաջարկեց քննարկել Ղարաբաղը ԱԴԳ կազմի մեջ՝ որպես նրա անբաժան մաս վերջնականապես մտնելու հարցը: Իր նամակում նա գրում էր, որ խաղաղ խորհրդաժողովն այլևս չկար, Ֆրանսիան և Իտալիան չէին կարողանում լուծել անգամ իրենց սեփական խրնդիրները և ընդգծում էր սեփական ուժերով այդ «աննորմալ իրավիճակից» դուրս գալու անհրաժեշտությունը<sup>511</sup>:

Դիվանագիտական ակտիվությանը զուգահեռ ԱԴԳ-ն դիմեց ռազմական ճնշմանը: Հենց այդ շրջանում Ղարաբաղ ժամանեցին Նուրի փաշան և գեներալ Նովրոզովը մի քանի հազարանոց զորքով և Ջևանշիրի հայությունից վերջնագրով պահանջեցին մաքրել Թարթառի հովիտը<sup>512</sup>: ԱԴԳ-ն ուժեր էր կենտրոնացրել նաև այլ ճակատներում, մասնավորապես Շարուր-Նախիջևանում, ինչը կրկին անգամ ցույց էր տալիս, որ իրադրության սրման և ռազմական գործողությունների հրահրման մեղավորը Բաքուն էր<sup>513</sup>:

Սակայն Ղարաբաղի հայության 8-րդ համագումարը, արձանագրելով ԱԴԳ կողմից 1919 թ. օգոստոսի 22-ի համաձայնագրի խախտումը, որոշեց՝ 1) պահանջել ԱԴԳ կառավարությունից ողջ ծավալով կատարել նրա պայմանները, 2) բողոքել Ղարաբաղում հայերի պարբերաբար կըրկընվող սպանությունների դեմ և կոչ անել քաղաքակիրթ աշխարհին վերջ տալ ԱԴԳ այդ քաղաքականությանը: Համագումարն զգուշացնում էր, որ նման դեպքերի կրկնությունը Ղարաբաղի հայերին կստիպի միջոցների դիմել իրենց կյանքի և զույթի պաշտպանության համար<sup>514</sup>:

Իր հերթին երևանը բողոք հայտնեց ԱԴԳ-ին և միաժամանակ խընդրեց դաշնակիցների ներկայացուցիչների միջամտությունը հարձակումը կանխելու համար<sup>515</sup>: Սակայն Բաքուն կարողացավ ապակողմնորոշել դաշնակիցներին և այնպես քողարկել իր նախապատրաստությունները, որ նրանց տվյալներով ԱԴԳ-ն, ընդհակառակը, գործերը Ղարաբաղից տե-

<sup>511</sup> Տե՛ս Աշխատառք, #9, 1920 թ. ապրիլի 15:

<sup>512</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.475, թ.63; Աշխատառք, #43, 49, 71, 1920 թ. փետրվարի 24, մարտի 2, մարտի 30; Վ. Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 98; Харюрий Карабах в 1918-1923 гг., стр.386:

<sup>513</sup> Տե՛ս Բանբեր Հայաստանի արխիվների, # 1-2, 1993, էջ 167-168:

<sup>514</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.563, թ.29-35 և Աշխատառք, #9, 1920 թ. ապրիլի 15:

<sup>515</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.249, թ.198; գ.475, թ.64-71:

դափոխում էր Բաքու<sup>516</sup>: ԳՅ բողոքի հայտագրին ի պատասխան, Բաքուն իր գործողությունները պատճառաբանում էր Երևանի կողմից ճոյնմբերի 23-ի համաձայնագրի խախտմամբ, Ձանգեզուրի մուսուլմանների ջարդով և Շուշիի ուղղությամբ հարձակումներով՝ նշելով, որ Ղարաբաղ էր ուղարկվել փոքրաթիվ ջոկատ, որի ներկայությունն արդեն իսկ կանխել էր հայկական ծրագրերի իրագործումը<sup>517</sup>:

Ավարտելով զորքերի կենտրոնացումը՝ Բաքուն վերջնագիր ներկայացրեց Ղարաբաղի Ազգային խորհրդին՝ պահանջելով զինաթափվել և իր զորքերը բաց թողնել Ղարաբաղի ներքին շրջաններ՝ այլապես սպառնալով ուժ կիրառել: Սկսվեցին բռնություններ հայության նկատմամբ. խանքենդիում և Աղղանում սպանվեց մոտ 400 մարդ, փակվեց Շուշի-Եվլախ ճանապարհը<sup>518</sup>:

Այսպիսով, Բաքուն կրկին որդեգրեց այն մարտավարությունը, որն իրեն հաջողություն բերեց 1919 թ. ամռանը՝ Ազգային խորհրդին ստիպելով ճանաչել իր իշխանությունը: Սակայն, ի տարբերություն այդ շրջանի, տեղի էր ունեցել երկու եական փոփոխություն: Առաջին, Անդրկովկասում բրիտանական ռազմական ներկայության ավարտով դաշնակիցները զուրկ էին իրադրության վրա ներազդելու լծակներից: Երկրորդ, Ձանգեզուր-Ղարաբաղի շրջանում ամրապնդվել էին ԳՅ դիրքերը, որի վկայությունն էր Ձանգեզուրի հաջող պաշտպանությունը: Ղարաբաղի թիկունքում արդեն կանգնած էր հզոր ուժ, որն ընդունակ էր ոչ միայն պաշտպանվելու, այլև նախահարձակ լինելու:

1920 թ. մարտի 22-ի Այս 23-ի գիշերը բռնկվեց Ղարաբաղի հայության ապստամբությունը: Ելն հանկարծակի բերեց Բաքվին, որն սպասում էր կրկին հպատակության հայտնելուն: 1920 թ. մարտի 25-ին ԳՅ դիվանագիտական ներկայացուցչի հետ հանդիպման ժամանակ ԱԳ նախարար հան խոյսկին, հայկական կողմին մեղադրելով կանխամտածված ապստամբության մեջ, նշում էր, որ այն լիովին անսպասելի էր ԱԳ-ի համար: Ի պատասխան Ա. Գարությունյանի հայտարարության, որ ԱԳ-ն խախտեց օգոստոսի 22-ի համաձայնագիրը, զորք մտցնելով Ղարաբաղ, հան խոյսկին դա արդարացրեց այն հանգամանքով, որ Բաքուն ստիպված էր զորք պահել Ձանգեզուրի սահմաններում՝ Ձանգեզուրի ազդեցությունը վերացնելու համար: ԱԳ ԱԳ նախարարը շեշտում էր վերջին շրջանում Երևանի ազդեցիվ քաղաքականությունը: ԳՅ և ԱԳ միջև դիվա-

<sup>516</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.249, ք.88, 106, 119: Փորձելով ներազդել կողմերի վրա՝ դաշնակիցները նախազգուշացնում էին, որ հարձակվող կողմը կզրկվեր իրենց հովանավորությունից: Օ. Ուորդոպլը նաև հույս էր հայտնում, որ Ձանգեզուրում հայկական զորք չկա՝ նախազգուշացնելով, որ դա կարող էր հանդիսանալ պատրվակ ԱԳ-ի կողմից ռազմական գործողություններն սկսելու համար:

<sup>517</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.271, ք.47-53; Աշխատատուր, # 49, 1920 թ. մարտի 2:

<sup>518</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.475, ք.117; գ.271, ք.47-53; Բանբեր Հայաստանի արխիվների, #1, 1989, տր. 116: ԱԳ-ի ԱԳ-ն իր մարտի 16-ի հայտագրում հերքում էր այդ ամենը՝ հայերի սպանությունը պատճառաբանելով փետրվարի 21-ին Խանքենդիի մոտ սպանված աղբյուրների գնդկորի դիակի հայտնաբերմամբ, որը հանցեցրել էր երկու հայի սպանության Խանքենդիում և վեց հայի սպանության Աղղանում ու Խաջարյում: Տե՛ս Աշխատատուր, # 65, 1920 թ. մարտի 21:



նագիտական խորհրդակցությունները շարունակվեցին մինչև Անդրկովկասյի խորհրդաժողովի սկիզբը, սակայն հրադադար հաստատել չհաջողվեց<sup>519</sup>։ Ապստամբները գրավեցին Ասկերանը՝ շրջափակելով Շուշիի, հանքենդիի և այլ վայրերի աղբբջանական կայազորները<sup>520</sup>։ Ապստամբությունը հարձար պատրվակ դարձավ ԱԴԴ համար, որը կազմակերպեց Շուշիի հայության ջարդը՝ դրանով կրկին անգամ վերահաստատելով, որ Ղարաբաղի հայության հանդեպ որևէ հանդուրժողականություն չէր կարող լինել<sup>521</sup>։

Բաբուն, ըմբռնելով իրավիճակի լրջությունը, քայլեր ձեռնարկեց երկրի ուժերը համախմբելու, ինչպես նաև դաշնակիցների աջակցությունն ստանալու համար։ Աղբբջանն անմիջապես բողոքի հայտագրեր ուղղեց Երևանին և դաշնակիցներին, որոնցից հետևում էր, որ ապստամբությունը նախապատրաստվել էր Գր Վառաձարության կողմից<sup>522</sup>։ Ղարաբաղի հայության ընդվզումը մեծ հարված էր Ոստրբեկովի կառավարության համար։ Գր դիվանագիտական ներկայացուցչի հետ հանդիպման ժամանակ ԱԴԴ վարչապետը հայտնել էր, որ իրեն մեղադրում էին հայասիրության մեջ և կատարվածի մեղքը բարդում իր վրա՝ դա համարելով իր անվճարական և պաշտպանողական քաղաքականության հետևանք։ Ոստրբեկովը նույնիսկ պատրաստվել էր հրաժարական տալ, սակայն Մուսավաթն այն չէր ընդունել<sup>523</sup>։

Փաստորեն Ոստրբեկովը զնաց ռազմական գործողությունների խորացման՝ իր կառավարությունը վերջնական վարկաբեկումից փրկելու համար։ ԱԴԴ քաղաքական ուժերն սկսեցին համախմբվել ապստամբությունը ճնշելու համար։ Մուսավաթն իր մարտի 30-ի որոշում մեջ, ԳԴ-ին մեղադրելով ապստամբության հրահրման համար, նշում էր, որ Աղբբջանն ստիպված էր զենք վերցնել իր ինքնիշխան իրավունքները պաշտպանելու համար։ 1920 թ. ապրիլի 1-ին ԱԴԴ խորհրդարանի նիստում կառավարության քաղաքականությունը պաշտպանեցին թե՛ կառավարանետ և թե՛ ընդդիմադիր կուսակցությունները<sup>524</sup>։ Սակայն կառավարության մեջ կային տարամայնություններ ռազմական ուժի կիրառման հարցի շուրջ։ Զինվորական նախարար զենբերալ Մեհմանդարովը կառավարության նիս-

<sup>519</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.563, ք.89։

<sup>520</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.249, ք.261։ Ապստամբության նախապատրաստման մասին մանրամասն տե՛ս Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 210-212։

<sup>521</sup> Տե՛ս Բ.Գ. Туман, նշվ. աշխ., стр. 3; Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 218-220։

<sup>522</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.563, ք.67; գ.475, ք.171; ֆ.278, ց.1, գ.14, ք.74 և ք.95; Военный Карабах в 1918-1923 гг., стр.417-418։

<sup>523</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.278, ց.1, գ.14, ք.74։

<sup>524</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.563, ք.67; Աշխատար #4, 1920 թ. ապրիլի 6; ՀԱԱ, ֆ.278, ց.1, գ.14, ք.84։ ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Հարությունյանը գրում էր, որ խորհրդարանի ժախակողմյան խմբակցություններն իրենց ազդեցիկ տրամադրությամբ գերազանցել էին նույնիսկ մուսավաթականներին։ Ա. Հարությունյանը կարծիք էր հայտնում, որ այդ պատերազմը Ղարաբաղի հայության համար ճակատագրական նշանակություն ունի։ ԱԴԴ քաղաքական ուժերը հրապարակավ հայտարարում էին, որ հաղթանակի դեպքում Աղբբջանի կողմից գրություն չէր լինելու։

տում հայտարարել էր, որ վստահություն չունեի բանակի հանդեպ, որը ռազմական գործողությունների դեպքում, անկասկած պարտություն կկրեր<sup>525</sup>:

Իր հերթին երևանը հերքեց մեղադրանքներն իր հասցեին՝ հայտնելով, որ Ղարաբաղում չկան ու չեն ուղարկվել կանոնավոր զորքեր: ԱՂՂ-ից պահանջվում էր դադարեցնել ռազմական գործողություններն Անդրկովկասի խորհրդատուների միջոցով, որն էլ պետք է կարգավորեր վիճելի հարցերը: Դաշնակիցներին ուղղված հայտագրերում երևանն ընդգծում էր Ադրբեջանի կողմից օգոստոսի 22-ի համաձայնագրի խախտումն ու եզրակացնում, որ Բաքվի նպատակը Ջանգեզուրի և Ղարաբաղի 300 հազար հայության բնաջնջումն էր ու Նախիջևանի վրայով Թուրքիայի հետ կապվելը<sup>526</sup>:

Ռազմական գործողություններն ընթանում էին մակ Գողթանի, Բեյլուք Վեդիի, Ղազախի ճակատներում, ինչը վկայում էր, որ Բաքուն վճռականաբար էր տրամադրված ռազմական գործողություններում հաջողության հասնելու և դրանով Թիֆլիսում կայանալից խորհրդատուներին իր բանակցային դիրքերն ամրապնդելու հարցում<sup>527</sup>: Դազախի ճակատում հայկական զորքերը հաջողության հասան՝ զրավելով սահմանամերձ մի քանի գյուղեր: Այդ ճակատում հրադադարը հաստատվեց միայն ապրիլի 18-ին ԳԴ Դիլիջանի և ԱՂՂ Ղազախի գավառների ներկայացուցիչների միջև համապատասխան համաձայնության ձեռքբերումով<sup>528</sup>: Հատկանշական է, որ ԱՂՂ զորքերի շարքերում Հայաստանի դեմ կռվում էին վրացիներ<sup>529</sup>:

Դաշնակիցները, չկարողանալով կամխել փաստացի պատերազմի սկսվելը, ձգտում էին ամեն գնով թույլ չտալ նրա խորացումը՝ մտահոգված լինելով բացառապես Անդրկովկասի հանրապետությունների համախմբման միջոցով հակախորհրդային ճակատի ստեղծման բարդ գործով: 1920 թ. ապրիլի 1-ին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչները ԱՂՂ-ին ու ԳԴ-ին կոչ արեցին դադարեցնել ռազմական գործողությունները՝ հակառակ դեպքում սպառնալով զրկել օգնությունից: Նշվում էր, որ եթե հաշտության կոչը չընդունվեր այն պահին, երբ վճռվում էր ողջ Անդրկովկասի բախտը, Բաքվին ու երևանին ժանր հետևանքներ էին սպասում: Դաշնակիցները որոշում էին ընդունել միջազգային հանձնաժողով ուղարկել Ղարաբաղ՝ հետաքննելու զինված հակա-

<sup>525</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.278, ց.1, գ.14, ք.54:

<sup>526</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.249, ք.249-252; գ.475, ք.173, 186: Տե՛ս մակ Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 222-224:

<sup>527</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.249, ք.230; Լրաբեր հասարակական գիտությունների, # 3, 1996, տր. 198, 199-200:

<sup>528</sup> Տե՛ս Աշխատատր, # 67, 8, 1920 թ. մարտի 24, ապրիլի 14; ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.563, ք.66,95:

<sup>529</sup> Հ. Օհանջանյանին ուղղված մամուլում Ա. Խատախյանը մատմանում էր կոմկրեմ օրինակներ ու խնդրում էր վրացական կողմից սպանվելու հետաքննել նրանց: Տե՛ս Լրաբեր հասարակական գիտությունների, # 3, 1996, տր. 199-200:



մարտության պատճառները և հավաստիանալու, որ կողմերը քայլեր էին ձեռնարկել ճակատի ողջ զծով կրակը դադարեցնելու ուղղությամբ<sup>530</sup>:

Պատասխան հեռագրերում Բաքուն, մեղքը կրկին բարդելով երևանի վրա և ընդգծելով վիճելի հարցերի խաղաղ կարգավորման իր քաղաքական գիծը, ողջունում էր դաշնակիցների հանձնաժողովի կազմակերպումը՝ առաջարկելով, որ այն հետաքննելու ժամանակագրական կարգով՝ սկսած 1918 թ., Անդրկովկասում հայ-մուսուլմանական փոխադարձ ջարդերի և բախումների պատճառները: Դա Բաքուն պատճառաբանում էր նրանով, որ Ղարաբաղի դեպքերի առանձնացումը Անդրկովկասում դրանց նախորդած իրադարձություններից հետաքննությունը սխալ ուղու վրա կդներ: Բացի այդ, շեշտվում էր, որ դաշնակիցները մերժել էին ԱԴԳ կառավարության խնդրանքը՝ հանձնաժողով ուղարկելու 1920 թ. փետրվարի 29-ին հայկական զորքերի կողմից Կարսի մարզի մուսուլմանների կոտորածի հարցը հետաքննելու համար: Նման պայմաններում միայն Ղարաբաղ հանձնաժողով ուղարկելը ԱԴԳ ժողովրդի կողմից կմեկնարկվեր՝ որպես դաշնակիցների կողմից Անդրկովկասի ժողովուրդների հանդեպ խտրական վերաբերմունք և ձգտում՝ օգնել ԱԴԳ զորամասերի վրա «նենգաբար» հարձակում գործած հայերին<sup>531</sup>:

Դրանով Ուսուրբեկովի կառավարությունը երկու նպատակ էր հետապնդում՝ հետաձգել իրադարձարի հաստատումը և կրկին անգամ վերահաստատել իր հավակնությունները Կարսի մարզի նկատմամբ: 1920 թ. ապրիլի սկզբին զինված ուժերի մեծ մասը ու կամավորների ուժերը կենտրոնացնելով Ղարաբաղում՝ Ադրբեյջանը մեծ զոհերի գնով կարողացավ որոշակի հաջողության հասնել՝ վերագրավելով Ասկերանը ու շրջափակումից հանելով Շուշիի ու Խանքենդիի կայազորները: Ուստի Բաքուն ձգտում էր իրադարձարի հաստատման պահին հնարավորին չափ ընդլայնել Ղարաբաղում իր վերահսկողության տակ գտնվող տարածքը: Սակայն ապրիլի 14-ին Դրոյի ղեկավարությամբ ԳԳ կանոնավոր զորքերի մուտքով Ղարաբաղ իրադարձությունը փոխվեց հօգուտ հայության<sup>532</sup>:

Այս պայմաններում 1920 թ. ապրիլի 9-ին Թիֆլիսում բացվեց Անդրկովկասի հանրապետությունների խորհրդաժողովը<sup>533</sup>: Ի սկզբանե պարզ էր, որ առանց զինադարձարի հաստատման, խոսք չէր կարող գնալ

<sup>530</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.563, ք.23, 77:

<sup>531</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.563, ք.66, 80-84, 89 և Աշխատատր # 7, 1920 թ. ապրիլի 9:

<sup>532</sup> Տե՛ս Азербайджанская Демократическая Республика, под ред. Н. Агамалиева и др., Институт истории АН Азербайджана им. А.Бакиханова, Баку, Элм, 1998 г., стр. 246; ՀԱԱ, ֆ.278, ց.1, գ.14, ք.87; ֆ.200, ց.1, գ.563, ք.173; Աշխատատր # 6, 1920 թ. ապրիլի 8:

<sup>533</sup> Խորհրդաժողովում ազգային պատվիրակությունների կազմը տես՝ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.411, ք.56: Վ. Վիրաբյանը դիպուկ կերպով քննադատում է ՀՀ և ԱԴՀ պատվիրակների մասնագիտական որակները: Տե՛ս Վ. Վիրաբյան, Հայաստանը Անդրկովկասյան հանրապետությունների 1920 թ. ապրիլյան խորհրդաժողովում, Երևան, Աստղիկ, 2004, էջ 7: Խորհրդաժողովը պետք է բացվեր դեռ մարտի 30-ին, սակայն Բաքվի ջանքերով այն հետաձգվեց: Դրանով ԱԴՀ-ն հույս ուներ ժամանակ շահել Ղարաբաղի ապստամբությունը ճնշելու համար: Տե՛ս R.G. Hovannisian, նշվ. աշխ., Vol. 3, p.166:

խորհրդաժողովի արդյունավետ աշխատանքի մասին: Ուստի Վրաստանի և ՀՀ պատվիրակություններն առաջարկեցին քննարկել Ղարաբաղում ռազմական գործողությունների դադարեցման հարցը, նախքան անցնելը խորհրդաժողովի օրակարգին: Սակայն ԱԴՀ պատվիրակությունը, սկզբունքորեն չառարկելով դրան, հայտարարեց, որ չունեի համապատասխան լիազորություններ<sup>534</sup>: Միայն 1920 թ. ապրիլի 11-ի նիստում ԱԴՀ պատվիրակությունն ստացավ կառավարության համաձայնությունը, և Վրաստանի պատվիրակ Լորդկիպանիձենն առաջ քաշեց բանաձևի նախագիծ, որի շուրջ ծավալվեցին լուրջ բանավեճեր: ԱԴՀ պատվիրակությունը, նպատակ ունենալով թույլ չտալ Ղարաբաղի դեպքերի առանձնացումը, նշեց, որ պատերազմն ընթանում էր ոչ միայն Ադրբեջանում, այլև նրա տարածքից դուրս, օրինակ՝ ՀՀ տարածքում, ու քանի որ բախումները տեղի էին ունենում ոչ թե ՀՀ ու ԱԴՀ հպատակների, այլ ընդհանրապես հայերի ու մուսուլմանների միջև, բանաձևում պետք էր ամրագրել այդ փաստը: ՀՀ պատվիրակությունն, ընդդիմանալով դրան, նշում էր, որ այդ դեպքում «մուսուլմաններ» ձևակերպումը կներառեր նաև թուրքերին ու քրդերին և առաջարկում էր արձանագրել բախումների վայրերը՝ Ղարաբաղը, Ջանգեզուրը, Նուխին, Նախիջևանը, Օրդուբազը և բախումների բոլոր այլ վայրերն Անդրկովկասի սահմաններում:

Բանավեճի արդյունքում ընդունվեց բանաձև. 1) անհապաղ դադարեցնել բոլոր բախումները, որոնք տեղի են ունենում այժմ Ղազախում, Նախիջևանում, Օրդուբազում և Ղարաբաղում, 2) ՀՀ և ԱԴՀ կառավարությունները անհապաղ պետք է վճռական միջոցներ ձեռք առնեին՝ բացառելու միմյանց սահմաններում հայ և մուսուլման բնակչության միջև բախումները<sup>535</sup>:

1920 թ. ապրիլի 12-ի նիստում մինչև ռազմական բախումները գոյություն ունեցած իրավական վիճակի մասին հարցի քննարկման ժամանակ ԱԴՀ պատվիրակությունն, ի դեմս Օլգերդի Բեյ Կրիչինսկու, կտրականապես հրաժարվեց ծանաչել օգոստոսի 22-ի համաձայնագիրը՝ որպես Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակը սահմանող միջազգային իրավական ակտ: Ըստ նրա՝ այդ համաձայնագիրը խախտվել էր շատ կետերում և իր ուժը կորցրել Ղարաբաղի գյուղացիության ապստամբության պահից, ուստի խոսք կարող էր գնալ միայն մինչև 1919 թ. նոյեմբերի 23-ի համաձայնագիրը գոյություն ունեցող սահմաններին վերադառնալու մասին: Կրիչինսկու կարծիքով օգոստոսի 22-ի համաձայնագիրը միջազգային ակտ չէր, այլ միայն ԱԴՀ ներքին կառավարման

<sup>534</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.411, ք.56: ԱԴՀ պատվիրակության դիրքորոշման արդյունքում տուպալվեց նաև խորհրդաժողովի ապրիլի 10-ի նիստը: Տե՛ս Слосов, # 87, 88, 1920 թ. ապրիլի 20-21:

<sup>535</sup> Տե՛ս Слосов #89, 1920 թ. ապրիլի 22; Боряба, #82, 1920 թ. ապրիլի 14; Վ. Վիրաթյան, Հայաստանը Անդրկովկասյան հանրապետությունների..., էջ 11-13: ՀՀ կառավարությունն իր համաձայնությունը տվեց անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները: Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.411, ք.69:



ակտ, որով ԱԳԴ իշխանության ճանաչման պահից Ղարաբաղի հարցը դարձավ ԱԳԴ ներքին հարց:

Նման դիրքորոշումը հստակ կերպով ցույց էր տալիս, որ Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի հետ ստորագրված ժամանակավոր համաձայնագրի չեղյալ հայտարարումով Բաքուն ձգտում էր վերջ դնել այդ հարցի միջազգային կարգավիճակին ու ամրագրել իր ինքնիշխանությունն իրեն երբևիցե չպատկանած երկրամասի նկատմամբ:

Ի պատասխան, ՀՀ պատվիրակ Հ. Օհանջանյանը հայտնեց, որ, եթե օգոստոսի 22-ի համաձայնագիրը խախտվել էր Ղարաբաղի գյուղացիության կողմից, ապա ԱԳԴ-ն իր հերթին խախտել էր նոյեմբերի 23-ի համաձայնագիրը՝ արբիտրաժի փոխարեն դիմելով զենքի ուժի: Հայկական կողմը պնդում էր, որ Բաքուն չի տիրում Ղարաբաղին, և նրա հարաբերություններն այդ տարածքի հետ կարգավորվում են համաձայնագրով, որը միջազգային իրավական ակտ է:

Քննարկումների արդյունքում ընդունվեց բանաձև, որը նախատեսում էր վերականգնել այն իրավական կարգավիճակը, որը գոյություն ուներ մինչև բախումները և բխում էր հայ-ադրբեջանական և անդրկովկասյան խորհրդածողովներում ձեռք բերված համաձայնագրից, ինչպես և համապատասխան կառավարությունների հետ Ազգային խորհուրդների պայմանագրերից: Բանաձևը հղում էր կատարում թե՛ 1919 թ. օգոստոսի 22-ի և թե՛ 1919 թ. նոյեմբերի 23-ի ակտերին, ինչը նշանակում էր ադրբեջանական դիվանագիտության ծախողում<sup>536</sup>: Թերևս դա էր պատճառը, որ արդեն հաջորդ՝ 1920 թ. ապրիլի 13-ի նիստին ԱԳԴ պատվիրակությունը հրապարակեց Օ.բ. Կրիչինսկու հայտարարությունը բանաձևի կապակցությամբ, որով «օգոստոսի 22-ի պայմանագրից բխող իրավական վիճակը նախատեսում է Ղարաբաղի հայտնի մասերի ենթակայությունը ԱԳԴ կառավարությանը որոշակի տարածքային սահմաններում, որոնք, եթե ներկայումս խախտվել են տեղի ունեցած բախումների պատճառով, ապա պետք է հիշյալ բանաձևի համաձայն՝ վերականգնվեն»<sup>537</sup>: Ընդ որում, ադրբեջանական կողմը պահանջեց իր մեկնաբանությունը հրապարակել բանաձևի հետ միասին, իսկ այդ հարցում հանդիպելով հայ-վրացական դիմադրությանը՝ ընդհանրապես հրաժարվեց համաձայնել բանաձևի հրապարակմանը՝ պատճառաբանելով Բաքվից ստացված հրահանգները բանաձևի անընդունելիության մասին: Արդյունքում որոշվեց վերանայել բանաձևը, և դրանով փաստորեն ԱԳԴ պատվիրակներն ուղղեցին նախորդ նիստում իրենց կատարած սխալը<sup>538</sup>:

<sup>536</sup> Տե՛ս *Слово* # 90, 1920 թ. ապրիլի 23; *Борьба*, #90, 1920 թ. ապրիլի 23: Ապրիլի 12-ին խորհրդածողովը նաև որոշում ընդունեց ստեղծել նաևկողմ վեց հոգանոց համաձայնագրով, որը տեղում պետք է վերահսկեր խորհրդածողովի՝ բախումների դադարեցմանը ու status quo-ի վերականգնմանը վերաբերող բանաձևերի իրագործումը, ինչպես նաև ստանմասիքեր բախումների պատճառներն ու պատկերը:

<sup>537</sup> Տե՛ս *Слово* # 91, 1920 թ. ապրիլի 24:

<sup>538</sup> Տե՛ս Վ. Վիրաբյան, Հայաստանը Անդրկովկասյան հանրապետությունների..., էջ 20-21:

1920 թ. ապրիլի 14-ի նիստում Օ.բ. Կրիչինսկին առաջարկեց բանաձևում «իրավական կարգավիճակ» բառից հետո ավելացնել «ժամանակավոր բաժանարար գծերի իմաստով» բառերը՝ դրանով ստատուս քվոյի վերականգնումը հանգեցնելով բացառապես սահմանների վերականգնմանը, այսինքն՝ Ղարաբաղը ԱԴԳ ռազմաքաղաքական վերահսկողության տակ կրկին մտնելուն: Ի պատասխան ԳԳ պատվիրակության հայտարարությանը, որ այդ փոփոխությունը լիովին փոխում էր օգոստոսի 22-ի համաձայնագրի իմաստը, Կրիչինսկին հայտարարեց, որ խորհրդրդաժողովում հայկական կողմի ներկայացրած պայմանագրի տեքստը սոսկ Ղարաբաղի Ազգային խորհրդի՝ 26 կետերում ամփոփված ցանկություններն էին, որոնք ԱԴԳ կառավարության կողմից չէին ստորագրվել: Ըստ նրա՝ ԱԴԳ-ին Ղարաբաղի ենթակայության պայմանները գրավոր չէին ամրագրվել, այլ այդ պայմանների ճանաչումը Բաքվի կողմից սոսկ բարոյական պարտավորություն էր, որը գործում էր, քանի դեռ բնակչությունը պահպանում էր իր լոյալությունը: Կրիչինսկին նաև համարձակություն ունեցավ հայտարարել, որ այլևս գոյություն չունեի միջազգային շփման այն սուբյեկտը (Ղարաբաղի Ազգային խորհուրդ-Գ.Կ.), որը կարող էր պահանջել որևէ պայմանագրի կատարում: Ըստ նրա՝ Ազգային խորհրդի կողմից ԱԴԳ իշխանության թելուզև ժամանակավոր ճանաչման պահից խորհրդի իշխանությունը վերացավ՝ տարրալուծվելով Ադրբեջանի ինքնիշխանության մեջ ու ներկա պահին Ղարաբաղի տարածքում կար միայն այդ ինքնիշխանությունը<sup>539</sup>:

Չայկական կողմն, ի պատասխան, նշում էր, որ պայմանագրի մյուս կողմը՝ Ազգային խորհուրդը, չէր վերացել, իսկ Ադրբեջանը, խախտելով իր պայմանագրային պարտավորությունները, զրկվում էր նրանով սահմանված իր իրավունքներից: Վրացական կողմը լիովին պաշտպանում էր ԳԳ դիրքորոշումը՝ համարելով, որ Ղարաբաղի հարցն անվիճելիորեն ուներ միջազգային բնույթ և անհրաժեշտ էր հաշվի նստել օգոստոսի 22-ի պայմանագրի հետ<sup>540</sup>:

Բննարկումների արդյունքում ընդունվեց Լորդկիպանիձեի առաջարկությունը՝ ընդունել նախորդ բանաձևը՝ նրանում ավելացնելով դրույթ գոյություն ունեցող սահմանների վերականգնման մասին: Բանաձևիկ կից ընդունվեց ԱԴԳ պատվիրակության հայտարարությունը, որով ԱԴԳ կառավարությունը խոստանում էր պահպանել Ղարաբաղի հայ բնակչության բոլոր ազգային-մշակութային իրավունքները, որոնցից նա օգտվում էր<sup>541</sup>: Բանաձևն ուներ փոխադիջումային բնույթ ու, թեև ԱԴԳ շահերի տեսակետից շատ ավելի բարենպաստ էր, քան բանաձևի նախորդ խմբագրումը, բայցևայնպես չէր չեզոքացնում օգոստոսի 22-ի համաձայնագիրը ու ոչ էլ փոխարինում նրան՝ իրենից ներկայացնելով ԱԴԳ զուտ

<sup>539</sup> Տե՛ս Վ. Վիրաբյան, Հայաստանը Անդրկովկասյան հանրապետությունների..., էջ 21-26:

<sup>540</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>541</sup> Տե՛ս Слово, # 95, 1920 թ. ապրիլի 29: Այս հարցի շուրջ տե՛ս նաև В.Г. Тунян, նշվ.աշխ., стр. 39-40:



մարտավարական հաջողություն: Բաքուն չկարողացավ հասնել համա-  
ծայնագրի վերանայմանը ու Ղարաբաղի նկատմամբ ԱԴԳ ինքնիշխանու-  
թյան հաստատմանը:

Խորհրդաժողովի 1920 թ. ապրիլի 17-ի նիստում, քննարկելով Ղա-  
զախի շրջան մեկնած հանձնաժողովի<sup>542</sup> զեկույցը, ԱԴԳ պատվիրակու-  
թյունը պահանջեց Ղարաբաղի հարցն առանձնացնել Ղազախի հարցից<sup>543</sup>:  
ԱԴԳ ԱԳ նախարար Խան Խոյսկին դա պատճառաբանում էր նրանով, որ  
Ղազախի գավառում տեղի էր ունեցել բաժանարար գծի խախտում հայե-  
րի կողմից, որը պետք էր պարզապես վերականգնել: Մինչդեռ Ղարաբա-  
ղը ԱԴԳ տարածք էր, որի դեպքում խոսքը գնում էր ԱԴԳ ներքին իրավա-  
տության և բնակչության ապստամբության մասին: ԱԴԳ պատվիրակու-  
թյունը խոստանում էր, որ Ղարաբաղի հայությունը կօգտվեր ազգային-  
մշակութային իրավունքներից, ինչը բխում էր նաև Բաքվի շահերից, քանի  
որ Ադրբեջանը կանգնած էր լուրջ վտանգի առջև ու ժամանակ չուներ  
զբաղվելու Ղարաբաղով: Արդարացնելով Ադրբեջանի գործողությունները  
Ղարաբաղում՝ Խան Խոյսկին նշում էր, որ չէր կարելի թույլ տալ, որ պե-  
տության համար ծայրահեղ վտանգի պահին անընդհատ մշտական  
սպառնալիք լիներ թիկունքից: Ի պատասխան, ԳԳ պատվիրակությունը  
պահանջեց ընդունել ընդհանուր որոշում, որը կվերաբերեր խորհրդաժո-  
ղովի 1920 թ. ապրիլի 11-ի բանաձևում նշված բոլոր շրջաններում իրա-  
վական նախկին վիճակի վերականգնմանն ու բնակչության վերադարձին  
իր բնակության վայրերը: Ընդգծելով ԱԴԳ կողմնակալությունը՝ ԳԳ պա-  
տվիրակները դժգոհում էին, որ շտապ հանձնաժողով ուղարկվեց Ղազախ,  
թեև այնտեղ այրվել էր ընդամենը 9 գյուղ: Եվ մինևույն ժամանակ Ղարա-  
բաղում 40 հայկական գյուղի բնակչություն մնացել էր անօթևան, սակայն  
խորհրդաժողովը չէր շտապում<sup>544</sup>:

1920 թ. ապրիլի 18-ի նիստում ընդունվեց առանձին որոշում Ղա-  
զախի հարցի շուրջ. ըստ որի՝ հանձնաժողովն ամիրաժեշտ էր համարում  
Ղազախի գավառում վերականգնել մինչև բախումները գոյություն ունե-  
ցած փաստացի վիճակը և բնակչությանը վերադարձի հնարավորություն  
տալ<sup>545</sup>: Ի պատասխան ԱԴԳ ԱԳՆ ապրիլի 17-ի բողոքի հայտագրի ԳԳ  
կողմից Ղազախի շրջանում գրավված հողերը չազատելու կապակցու-  
թյամբ, ԳԳ ԱԳՆ-ը հերքում էր դա՝ նշելով, որ տվել է համապատասխան  
իրահանգներ ու միաժամանակ պահանջելով հայտնել, թե ինչ իրահանգ-  
ներ էր տվել Բաքուն Ելիզավետպոլի շրջանում և Ղարաբաղում ԱԴԳ գոր-  
քերի ապելսիվ գործողությունների կապակցությամբ: Փաստորեն, Երևա-

<sup>542</sup> Հանձնաժողովը Ղազախ էր մեկնել ապրիլի 15-ին և նրա կազմում էին՝ Մամիկոնյանց, Աղաև  
և Մախարաձե: Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.411, ք.96:

<sup>543</sup> ԱԴԳ պատվիրակության ջանքերով սկզբից հանձնաժողով ուղարկվեց Ղազախի գավառ, որ-  
տեղ հայկական ուժերը գրավել էին մի շարք ադրբեջանական գյուղեր: Միաժամանակ Բաքուն  
հնարավորինս ձգտում էր երկարաձգել մյուս հանձնաժողովի մեկնումը Ղարաբաղ: Տե՛ս *Слов*,  
#93, 95, 1920թ. ապրիլի 27 և 29:

<sup>544</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.563, ք.4-8:

<sup>545</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.563, ք.9:

նը ձգտում էր օգտագործել իր հաջողությունը Ղազախի գավառում՝ ստիպելու համար Բաքվին զիջումների գնալ Ղարաբաղում<sup>548</sup>:

Արձանագրելով հաջողություն Ղազախի հարցում՝ Ադրբեջանը շարունակեց խոչընդոտել Ղարաբաղ մեկնող հանձնաժողովի աշխատանքների սկսվելուն՝ պարբերաբար պահանջելով հստակեցնել նրա իրավասությունը շրջանակներն ու առաջ քաշելով գուտ ֆորմալ բնույթի այլ խոչընդոտներ: Եթե Ղազախի պարագայում Բաքուն պնդում էր, որ հանձնաժողովը պետք է սահմանափակվեր բացառապես այդ գավառում տեղի ունեցած բախումների ուսումնասիրությամբ, ապա այս դեպքում պահանջվում էր, որ այն մեկնի նաև բոլոր մյուս վայրեր, որտեղ տեղի են ունենում ազգամիջյան ընդհանրանումներ, այդ թվում նաև Կարսի մարզ<sup>547</sup>:

Մինչ Անդրկովկասի խորհրդաժողովն անցկացնում էր անարդյունք քննարկումներ, Ղարաբաղ ժամանեցին Դրոյի և Նժդեհի ուժերը: Դրոն ստանձնեց երկրամասի պաշտպանությունը՝ նախապատրաստելով հարձակում Ղարաբաղի վերջնական ազատագրման համար<sup>548</sup>: 1920 թ. ապրիլի 22-ին Թաղավարդ գյուղում գումարված Ղարաբաղի հայության 9-րդ համագումարը չեղյալ հայտարարեց օգոստոսի 22-ի համաձայնագիրը և երկրամասը հռչակեց ԳԳ անբաժան մաս<sup>549</sup>: ԱԳԳ խորհրդայնացման նախօրեին Բաքուն լիովին կորցրել էր վերահսկողությունը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ:

Այսպիսով, Ղարաբաղի ու Ջանգեզուրի պատկանելության հարցը վերջնականապես իր օտոնի լուծելու Ադրբեջանի վերջին փորձը 1920 թ. ապրիլին ծախողվեց, քանի որ այս անգամ դաշնակիցները չէին կարող գործնական աջակցություն ցուցաբերել Բաքվին և, որ այնուհետև կարևոր է, Գայաստանն իր դիրքերն ամրապնդելով Ջանգեզուրում, կարողացավ վճռական պահին անհրաժեշտ օգնություն ցուցաբերել Ղարաբաղում ծագած ապստամբությանը: ԱԳԳ-ն գերազանհատեց իր ռազմաքաղաքական ներուժը և ճակատագրական պահին իր գինով ուժերի զգալի մասը ներքաշեց զինված հակամարտության մեջ, որի ռազմական արդյունքները ևս փայլուն չէին: Ռազմական հաղթանակ չտանելով՝ Բաքուն փորձեց Անդրկովկասի խորհրդաժողովում արձանագրել դիվանագիտական հաղ-

<sup>546</sup> Հարցի շուրջ տե՛ս նաև Վ. Վիրաբյան, Հայաստանը Անդրկովկասյան հանրապետությունների 1920 թ. ապրիլյան խորհրդաժողովում, էջ 26-30; Снос, #88, 1920 թ. ապրիլի 21:

<sup>547</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.563, ք.11-15: Ղարաբաղում քախտումների դադարեցման նպատակով ստեղծված հանձնաժողովը ԱԳԳ կողմից ձգձգումների պատճառով Շուշի ժամանեց միայն ապրիլի 22-ին, իսկ Նախիջևան ճուլճ նպատակով ուղարկված հանձնաժողովը միայն ապրիլի 25-ին հասավ Երևան՝ այդպես էլ չհասցնելով մեկնել Նախիջևան: Երկու հանձնաժողովներն էլ փաստորեն չհասցրեցին աշխատանք ծավալել Կարմիր բանակի ԱԳԳ ներխուժման և վերջինի խորհրդայնացման պատճառով: Տե՛ս R.G. Hovhannissian, նշվ. աշխ., Vol. 3, p.171:

Անդրկովկասի խորհրդաժողովը չունեցավ փակման պաշտոնական միտ, քանի որ նրա աշխատանքները հետաձգվեցին մինչև խորհրդաժողովի նշանակած հանձնաժողովների վերադարձը, որի ընթացքում Կարմիր բանակը ներխուժեց Ադրբեջան ու ԱԳԳ-ն հաստատվեց խորհրդային իշխանություն:

<sup>548</sup> Տե՛ս Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 229:

<sup>549</sup> Տե՛ս R.G. Hovhannissian, նշվ. աշխ., Vol. 3, p.158-159; Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 233:



բանակ՝ ձգտելով հասնել օգոստոսի 22-ի հայտնի համաձայնագրի չեղ-  
յալ հայտարարմանը: Սակայն այստեղ ևս նրա ջանքերը ծախողվեցին:  
Ղարաբաղում ԱՂԴ-ի ծավալած զինված հակամարտությունը կատարյալ  
արկածախնդրություն էր, որն էլ ավելի ծանրացրեց Բաքվի ներքին և ար-  
տաքին քաղաքական դրությունը՝ ուժեղացնելով նրա խոցելիությունը  
բուլշևիկյան ներխուժման նախօրեին:

ԱՂԴ-ն իր գոյության շրջանում չկարողացավ լուծել Ղարաբաղը և  
Ջանգեզուրը իր կազմի մեջ ընդգրկելու հարցը: Խաղաղ խորհրդաժողովի  
կողմից այդ հարցերի վերաբերյալ որևէ որոշում չընդունվեց, իսկ ԴԴ և  
ԱՂԴ միջև երկկողմ համաձայնության հիման վրա սահմանազատումը բա-  
ցառվում էր կողմերի լիովին հակադիր դիրքորոշումների պատճառով:  
Ադրբեջանի անկման պահին Ղարաբաղի հայության 9-րդ համագումարը  
չեղյալ համարեց 1919 թ. օգոստոսի 22-ի համաձայնագիրը՝ այն միակ  
իրավական փաստաթուղթը, որով Ղարաբաղը սոսկ ժամանակավոր՝ մին-  
չև խաղաղ խորհրդաժողովի որոշումը, ճանաչում էր Բաքվի իշխանություն-  
ը: Այսպիսով, Ղարաբաղը երբեք չկազմեց անկախ Ադրբեջանի մասը:

### 3.5 ԱՂԴ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ: ԱՂԴ ԱՆԿՈՒՄԸ

1920 թ. սկզբին Ադրբեջանի միջազգային իրավիճակում տեղի ունե-  
ցան արմատական փոփոխություններ, որոնք նոր հիմնախնդիրներ առաջ  
բերեցին Բաքվի համար: Ռուսաստանի Հարավի Ձինված ուժերի ջախ-  
ջախման արդյունքում նրանց փոխարինելու եկավ նոր՝ ավելի զորեղ ու  
կազմակերպված ուժ՝ Խորհրդային Ռուսաստանը, որն ընդհուպ մոտենա-  
լով Ադրբեջանի սահմաններին՝ իրական սպառնալիք էր ներկայացնում  
ադրբեջանական պետականությանը: Նման պայմաններում Ադրբեջանը  
կրկին կանգնեց դիլեմայի առջև՝ կա՛մ լիովին վերակողմնորոշել իր ար-  
տաքին քաղաքականությունը և փորձել համաձայնության գալ Խորհրդ-  
դային Ռուսաստանի հետ ու պահպանել իր պետականությունը, կա՛մ շա-  
րունակել հենվել Անտանտի վրա՝ հուսալով նրա ռազմաքաղաքական օգ-  
նությանը ամրապնդել երկրի միջազգային դիրքերը:

Երկրի բարդ միջազգային դրությունը սրեց նաև Ադրբեջանի ներ-  
քաղաքական կացությունը: Ադրբեջանի խորհրդարանի հիմնական քա-  
ղաքական ուժերի՝ Մուսավաթի, անկուսակցականների, Էիրարի և սոցիա-  
լիստների միջև լուրջ տարաձայնություններ սկսվեցին պետության ար-  
տաքին քաղաքականության գերակայությունների որոշման հողի վրա:  
Համաձայնություն չկար նաև Մուսավաթի ներսում, որը պառակտվել էր  
ծախ և աջ թևերի: Մ.Հ. Հաջինսկու գլխավորած ծախ մուսավաթականե-  
րը խիստ քննադատում էին ԱՂԴ ներքին ու արտաքին քաղաքականու-  
թյունը<sup>550</sup>:

<sup>550</sup> Sh'v Azerbaydžanская Демократическая Республика, стр.250; Աշխատատար, #28, 1920 թ.  
հունվարի 5; T. Swietochowski Russian Azerbaijan..., p.173:

երկրի քաղաքական ուժերը փաստորեն բաժանվեցին երկու հակադիր ճամբարների: Առաջին ճամբարում գտնվող Մուսավաթը և անկուսակցականների խմբակցությունը Անտանտի հետ համագործակցության խորացման և բոլշևիզմի դեմ պայքարի կողմնակից էին: Հունվարի 28-ին Մուսավաթի առաջնորդներից Ռասուլզադեն նշում էր իր ելույթում. «... Արևելքը չի կարող համակերպվել բոլշևիզմին: Նրանք, ովքեր մեզ հրավիրում են բոլշևիզմի միջոցով ազատագրել Արևելքը, չեն ճանաչում բոլշևիզմը: Մենք ուժ չունենք փրկելու իսլամը և թյուրքական աշխարհը: Հակառակը, այդ դեպքում մենք էլ կկործանվենք: Մուսուլմանական ազգերի փրկությունը ոչ թե մուսուլմանների ոխերիմ թշնամի ռուս-սլավոնականության միջոցով կլինի, այլ յուրաքանչյուր ազգի ներքին զարթոնքին: Բոլշևիզմները չեն ճանաչի Ադրբեջանի անկախությունը: Նրանք 2 տարի է, ինչ չեն կարողանում համաձայնության գալ Լեհաստանի և Ֆինլանդիայի հետ»<sup>551</sup>: 1919 թ. դեկտեմբերի 28-ին կայացած Մուսավաթի խորհրդակցությունը վարչապետ Ռուսթեմկոյի գլխավորությամբ որոշում ընդունեց կառավարությանն առաջարկել՝ 1) Հաջինսկուն հեռացնել ներքին գործերի նախարարի պաշտոնից և նրան փոխարինել բոլշևիզմների դեմ լուրջ պայքար մղելուն ընդունակ պաշտոնյայով, 2) ցրել խորհրդարանը և կառավարությանը տրամադրել լայն լիազորություններ ներքին և արտաքին քաղաքականության ոլորտներում<sup>552</sup>:

Իր հերթին ամենախոշոր ընդդիմադիր կուսակցությունը Իթթիհադը կողմնորոշվում էր դեպի խորհրդային Ռուսաստան՝ գտնելով, որ բոլշևիզմը պայքարում էր ողջ մարդկության, այդ թվում նաև մուսուլմանների ազատագրման համար կապիտալիզմից և արևմտյան իմպերիալիզմից: Ինչ վերաբերում է բոլշևիզմի ոչ կրոնական բնույթին, Իթթիհադը համարում էր, որ օգուտությունը իսլամական աշխարհին ընդդեմ արևմտյան իմպերիալիզմի փոխհատուցում էր այդ գործում<sup>553</sup>:

Տեղի էր ունենում նաև ծախ՝ սոցիալիստական ուժերի համախըմբում. այդ թևի ամենախոշոր կուսակցության՝ Հունմեթի ներսում տեղի ունեցած պառակտման արդյունքում անջատվեց Կարակի և Հունեյնովի գլխավորած ծախ հունմեթականների խմբավորումը, որն ընդունելով

<sup>551</sup> Տե՛ս Աշխատատր, #23, 1920 թ. հունվարի 30:

<sup>552</sup> Տե՛ս Азербайджанская Демократическая Республика, стр.252-253:

<sup>553</sup> См. в том же месте, стр.249; Աշխատատր, #33, 1920 թ. փետրվարի 11; Наше время, #9, 1920 թ. հունվարի 14; Աշխատատր, #18, 1920 թ. հունվարի 24:

Իթթիհադի ներսում ևս կային զգալիարկան տարածայնություններ պանիսլամիստական և պանթուրքական քեների միջև, որն ավարտվեց պանիսլամիստների հաղթանակով: Տե՛ս Աշխատատր, #38, 1920 թ. փետրվարի 14:

Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը ՀՀ ԱԳՆ-ին մարտի 31-ին տեղեկացնում էր, որ բոլշևիզմների հետ ԱԳՀ համաձայնության դիպլոմի ազդեցիվ քաղաքականությունը ՀՀ հանդեպ կուժեղանար: Անդրկովկասի խորհրդատուովում ՀՀ ծայրե լսելի դարձնելու համար մա նպատակահարմար էր համարում բոլշևիզմների հետ կիսապաշտոնական հարաբերությունների հաստատումը, ինչն «ստիք» կտար ԱԳՀ-ին կարծելու, որ որոշ պարագաներում հնարավոր կլինի ՀՀ ճնշումը բոլշևիզմների ճնշման հետ միաժամանակ: Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.440, ք.17:



«Աղդրեջանական կոմունիստական կուսակցություն-Յունմեթ» անունը, դարձավ Աղդրեջանում բոլշևիզմի զարգացման հիմնաքարերից մեկը<sup>554</sup>։ Թեև Նորաստեղծ կուսակցությունը գտնվում էր ՌԿ(բ)Կ ազդեցության ներքո, այն ծգտում էր կայանալ՝ որպես ինքնուրույն քաղաքական ուժ իր ազգային ինքնությանը, և դա նրան հաջողվեց. 1920 թ. փետրվարի 11-12-ին Բաքվում Յունմեթի և ՌԿ(բ)Կ մասնակցությամբ կայացած խորհրդաժողովում հռչակվեց Աղդրեջանական Կոմունիստական բոլշևիկյան կուսակցության ստեղծումը<sup>555</sup>։

Ներքաղաքական հակասություններն Աղդրեջանում ավելի էին ուժգնանում այն անհաշտ պայքարի պատճառով, որն ընթանում էր Աղդրեջանում և ողջ Անդրկովկասում մի կողմից՝ Անտանտի տերությունների, մյուս կողմից՝ հորհրդային Ռուսաստանի միջև, որում վերջինիս դաշնակցի դերում էր հանդես գալիս Անատոլիայում 1919 թ. ծավալված ազգայնական շարժումը Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ։ Բոլշևիկների առաջխաղացումը դեպի Անդրկովկաս մեծ երկյուղ էր առաջ բերում Անտանտի մոտ։ Վերջինը գիտակցում էր, որ Անդրկովկասի նվաճումը հորհրդային Ռուսաստանի կողմից հղի էր բոլշևիզմի տարածումով Իրանում, Թուրքիայում և ողջ Մերձավոր Արևելքում։ Ուստի Անտանտի տերությունները հետզհետե ավելի էին հակվում ճանաչելու Անդրկովկասի հանրապետությունները, նպաստելու նրանց անկախության ամրապնդմանը, տարածքային հարցի լուծմանը, Անդրկովկասի միության ստեղծմանը և ցուցաբերելու անհրաժեշտ ռազմական և նյութական օգնություն։ Արդյունքում 1920 թ. հունվարի 12-ին դաշնակիցների Գերագույն խորհուրդը դե-ֆակտո ճանաչեց ԱԳԿ և Վրաստանի անկախությունը, որից հետո ռազմական փորձագետների խորհուրդը ԱԳԿ և Վրաստանի պատվիրակությունների մասնակցությամբ ձեռնամուխ եղավ երկու հանրապետություններին ռազմական օգնության ցուցաբերման հնարավորության ուսումնասիրությանը<sup>556</sup>։

<sup>554</sup> Հունմեթի պատակտումը խրախուսվել էր Ռուսաստանի Կոմկոսի կողմից, որի նպատակն էր՝ առանձնացնել Հունմեթի կոմունիստական թևը և սկսել աջակցել նրան կազմակերպորեն ամրապնդելու։ Պատակտումից հետո ձայն հունմեթականներն իրենց շարքերում ներառեցին աղդրեջանական էսեռների «էրինջի» կուսակցության ձայն թևը Ռ. Ախտանովի գլխավորությամբ։ Տե՛ս T. Swietochowski, Russian Azerbaijan..., p.166-167; Азербайджанская Демократическая Республика, стр.250:

<sup>555</sup> ՌԿ(բ)Կ երկրամասային կոմիտեի մոտեցմամբ Հունմեթը պետք է լիներ ՌԿ(բ)Կ տարածքային կազմակերպություն։ Մակայն Աստրախանում գործող, իսկ հետո Խորհրդային Ռուսաստանի կառավարության մեջ կարևոր պաշտոններ զբաղեցնող հունմեթականներ Ն. Նարինանովի, Մուսաբեկովի և այլոց աջակցությամբ ՌԿ(բ)Կ Քարդյուրոն համաձայնություն տվեց Հունմեթը կոմունիստական ինքնավար կուսակցություն հռչակելուն։ Տե՛ս T. Swietochowski, Russian Azerbaijan..., p.168-169, 171: Տե՛ս նաև История государственя и права Азербайджанской ССР, Баку, Азербайджанский Государственный Университет им. С.М. Кирова, Юридический факультет, 1973, стр.9:

<sup>556</sup> Տե՛ս Азербайджанская Демократическая Республика, стр.220-227; Г.Махмуриян, նշվ.աշխ., стр.173-174, 178; T. Swietochowski, Russian Azerbaijan..., p.159; З. Авалов, նշվ.աշխ., стр.240,244-246: Ընդ որում, դաշնակիցները իրաժարվեցին զինված ուժեր ուղարկել Անդրկովկաս։

Սակայն ճանաչելով ԱԴԳ գոյության փաստը՝ դրա հետ մեկտեղ ԱՄՆ-տանտո փաստորեն հրաժարվում էր պաշտպանել Բաքվի նվաճողական հավակնությունները: Արդեն ԱԴԳ-ի անկումից հետո 1920 թ. դեկտեմբերի 1-ին Ազգերի Լիգան մերժեց նրա՝ Լիգային անդամակցելու դիմումը՝ իր որոշումը հիմնավորելով նրանով, որ 1. դժվար էր հստակ որոշել այն տարածքը, որի վրա տարածվում էր ԱԴԳ կառավարության ինքնիշխանությունը, 2. հարևան պետությունների հետ սահմանային վեճերի պատճառով հնարավոր չէր ճշգրիտ որոշել ԱԴԳ առկա սահմանները<sup>557</sup>:

Անտանտի տերությունների կողմից Ադրբեջանի անկախության ճանաչումն ստիպեց Մուսավաթին դադարեցնել երկմտանքները և կանգնել վերջնականապես արևմտամետ կողմնորոշման ճանապարհին, քանի որ նա երկյուղում էր զրկվել Անտանտի աջակցությունից և կորցնել իր անկախությունը՝ գնալով բուլշևիկների և քեմալականների հետ մերժեցման<sup>558</sup>: Ադրբեջանական պատմագրությունը սակայն հերքում է ԱԴԳ-ի և Անտանտի տերությունների միջև սերտ հարաբերությունների առկայությունը, իսկ Բաքվի կողմից քեմալական շարժմանը չաջակցելն արդարացում է այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ ԱԴԳ ու Թուրքիայի միջև ընդհանուր սահմանների բացակայությունը, ԳԳ-ի ու Անտանտի կողմից ԱԴԳ-ն Թուրքիայի հետ կապող ճանապարհների վերահսկողությունը ու նորաստեղծ և փոքր ադրբեջանական պետության կողմից նման քայլի քաղաքական աննպատակահարմարությունը<sup>559</sup>:

ԱԴԳ ներքաղաքական, կյանքի և արտաքին կողմնորոշման վրա ազդող մեկ այլ հզոր գործոն էր Անատոլիայում Մուստաֆա Բեմալի գլխավորությամբ ծավալված ազգայնական լայնածավալ շարժումն ընդդեմ Անտանտի կողմից Թուրքիայի մասնատման: Դաշնակիցների և նրանց հովանավորյալ Թուրքիայի սուլթանական կառավարության դեմ պայքարող քեմալական շարժումը դրանով իսկ ընդհանուր գծեր ուներ բուլշևիկների հետ և հանձնի խորհրդային Ռուսաստանի, տեսնում էր այն ուժը, որն ընդունակ էր իրական աջակցություն ցուցաբերել իրեն<sup>560</sup>: Իր հերթին խորհրդային Ռուսաստանը քեմալական շարժումը դիտում էր՝ որպես առա-

<sup>557</sup> Տե՛ս՝ N. Hovhannisyán, *The Karabakh Problem. The Thorny Road to Freedom and Independence*, National Academy of Sciences of Armenia, Institute of Oriental Studies, Yerevan, Zangak-1997, 2004, p.28-29:

<sup>558</sup> Տե՛ս՝ B. Aslan, նշվ. աշխ., ս.31, 33; Աշխատառք, #33, 1920թ. փետրվարի 11: Աշխատառքը նշում էր, որ շնորհիվ ԱԴԳ-ի դե-ֆակտո ճանաչման, Մուսավաթը կանգնեց Ադրբեջանի անկախության ճանապարհին: Միևյուրե Իթքիխալի 1-ին համագումարը պահանջում էր ճամայել ԱԴԳ-ն անկախությունը, իսկ թուրքական մամուլը Ադրբեջանը որակում էր՝ որպես Օսմանյան կայսրության հաստատուն հենարան և ընդգծում Ադրբեջանի և Թուրքիայի միջև որևէ տարրերության բացակայությունը: Թեթրը եզրակացնում էր, որ Բաքվում իրար էին քայվում ոչ թե ծախ ու աջ, այլ թուրքական և ադրբեջանական հոսանքները:

<sup>559</sup> Տե՛ս՝ H. Bajkara, նշվ. աշխ., c.268

<sup>560</sup> Սակայն միաժամանակ Բեմալը քաջ գիտակցում էր, որ խոսք չէր կարող գնալ քուլևիզմը՝ որպես քեմալական շարժման զաղափարախոսություն որդեգրելու մասին: Տե՛ս՝ T. Swietochowski, *Russian Azerbaijan...*, p.161; H. Bajkara, նշվ. աշխ., c.261-262:



ջաղեմ շարժում մուսուլմանական աշխարհում, որի զարգացումը կամրապընդեր բուլշևիկների դիրքերն Արևելքում<sup>561</sup>:

Քեմալականներն ԱՂԴ կառավարությունը համարում էին գործիք Անտանտի տերությունների ձեռքում, առավել ևս, որ Ուսուրբեկովի կաթինետը հակվածություն էր ցուցաբերում աջակցելու շարժմանը՝ երկուղեղով Անտանտի տերությունների հետ հարաբերությունների խզումից<sup>562</sup>: Մյուս կողմից, Ադրբեջանը դիտվում էր՝ որպես հարմար հարթակ հորհրդրային Ռուսաստանի հետ շփումներ հաստատելու գործում: Բուլշևիկների հետ կապվելու համար Քեմալական թուրքիայի գլխավոր ներկայացուցիչն Ադրբեջանում Քեմալի մերձավոր Ֆուտու Սաբիտն էր, որն արդեն 1919 թ. հոկտեմբերին թուրքական 15-րդ կորպուսի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրին հաղորդում էր, որ բուլշևիկները պատրաստակամություն էին հայտնում ցուցաբերել անհրաժեշտ քանակի ֆինանսական օգնություն: Եփումներ իրականացվում էին նաև Հալիլ փաշայի միջոցով, որը կապեր էր հաստատել ՌԿ(բ)Կ երկրամասային կոմիտեի հետ և որի վրա ևս պարտավորություն էր դրվել կազմակերպել հորհրդային Ռուսաստանի ռազմական օգնությունը քեմալական շարժմանը<sup>563</sup>:

1920 թ. հունվարի 2-ին հորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Չիչերինը դիմեց Ադրբեջանին և Վրաստանին՝ առաջարկելով ռազմական դաշինք կնքել ընդդեմ Դեմիկինի: Ընդ որում, Չիչերինի առաջին նոտան իր բնույթով ավելի շուտ կոչ էր Ադրբեջանի և Վրաստանի աշխատավորներին, քան անկախ պետություններին ուղղված դիվանագիտական հայտագիր<sup>564</sup>: Սոցիալիստների, էրարի և Իթթիհադի խմբակցություններն անմիջապես պահանջեցին անհապաղ համաձայնության գալ բուլշևիկների հետ ու մորթիլզացնել ուժերն ընդդեմ Դեմիկինի<sup>565</sup>: Սակայն ԱՂԴ կառավարության գումարած Պետական պաշտպանության կոմիտեն հունվարի 6-ին որոշում ընդունեց առաջարկել ԱԳՆ-ին, որ Ադրբեջանը՝ որպես անկախ պետություն, նախապես Վրաստանի հետ խորհրդրակցելուց հետո բանակցություններ սկսի հորհրդային Ռուսաստանի հետ: Նաև որոշվեց պարզել Մեծ Բրիտանիայի դիրքորոշումն ու օգուա-

<sup>561</sup> Տե՛ս Բ. Казанджян, Большевики и младотурки: новые документы о российско-турецких отношениях (1920-1922 гг.), Институт Востоковедения Национальной Академии Наук Республики Армения, Москва, Институт Востоковедения Российской Академии Наук, 1996, стр. 2-3:

<sup>562</sup> Տե՛ս К. Karabekir, İstiklal Harbimiz, Çilt 1, İstanbul, Emre Yayınları, 1995, s.1309; В. Аслан, նշվ. աշխ., s.31-32; Н. Байкара, նշվ. աշխ., с.270-271: Քյազիմ Կարաբեքիրն այդ կապակցությանը գրում էր. «Մուսավարական կառավարությունը վախենում էր մեզ հետ շփումներից և բուլշևիկների դեմ պաշտպանությանը էր զբաղված: Ինչու՞ է մեզանից վախենում և ինչո՞ւ ու ինչպիսի՞ս է բուլշևիկների քանակի դեմ կռիվոս»: Տե՛ս В. Аслан, նշվ. աշխ., s.33:

<sup>563</sup> Տե՛ս В.Аслан, նշվ.աշխ., s.29, 32; Т. Swietochowski, Russian Azerbaijan..., p.162; N. Abbasli, նշվ.աշխ., s.77; Н. Байкара, նշվ. աշխ., с.269:

<sup>564</sup> Տե՛ս Т. Swietochowski, Russian Azerbaijan..., p.174:

<sup>565</sup> Տե՛ս Наше время, #7, 1920 թ. հունվարի 14; Слово, #8, 1920 թ. հունվարի 13; Азербайджанская Демократическая Республика, стр.254; Борьба, #24, 1920 թ. փետրվարի 1:

գործել նրա ազդեցությունը՝ հանրապետության շահերից ելնելով<sup>566</sup>։ ԱՂԴ կառավարությունը հունվարի 14-ի պատասխան հայտագրում մերժում էր Մոսկվայի առաջարկությունը այն պատճառաբանությամբ, որ Ադրբեյջանը՝ որպես անկախ պետություն, իրավունք չուներ միջամտելու Ռուսաստանի ներքին գործերին։ ԱՂԴ կառավարությունը նաև պատրաստակամություն էր հայտնում բարիդրացիական հարաբերություններ հաստատել խորհրդային Ռուսաստանի հետ երկու պետությունների ինքնիշխանության ճանաչման հիման վրա։

Փաստորեն իր պատասխան հայտագրով Բաքուն ակնարկում էր իր ներքին գործերին միջամտելու անթույլատրելիությունը<sup>567</sup>։ Բաքվի համար խորհրդային առաջարկի մերժման կարևոր դրոշմապատճառ հանդիսացավ Անտանտի Գերագույն խորհրդի կողմից հունվարի 12-ին ԱՂԴ անկախության դե ֆակտո ճանաչումը<sup>568</sup>։

Խորհրդային Ռուսաստանը շարունակեց դիվանագիտական ճնշում գործադրել Բաքվի վրա<sup>569</sup>։ 1920 թ. հունվարի 23-ի հեռագրում Չիչերինը եզրակացնում էր, որ Բաքուն չպատասխանեց Մոսկվայի առաջարկությանը ու կրկին պնդում էր հակադեմոկրատիկական դաշինքի ստեղծման վրա։ Միաժամանակ Բաքուն մեղադրվում էր Դեմիկիմի հետ գործակցության մեջ։ Չիչերինն ընդգծում էր, որ միասնական Ռուսաստանի իր գաղափարով Դեմիկիմն սպառնում էր նաև ԱՂԴ-ի անկախությանը, մինչդեռ խորհրդային Ռուսաստանը միշտ էլ ճանաչել է ազգերի ինքնորոշման իրավունքը՝ որպես օրինակ բերելով Մոսկվայի կողմից Լեհաստանի, Ֆինլանդիայի, Էստոնիայի անկախության ճանաչումը<sup>570</sup>։

Փետրվարի 1-ի պատասխան հայտագրում ԱՂԴ ԱԳ նախարար խան Խոյսկին հերքում էր Դեմիկիմի հետ գործակցության մեղադրանքները՝ հղում անելով Բաքվից զեներալ Պրժևալսկու և իր շտաբի արտաքսույնը, իր աջակցությունը Դեմիկիմի դեմ լեռնակայանների պայքարին և այլն։ Բաքուն կրկին արժանագրում էր, որ խորհրդային Ռուսաստանն, ի տարբերություն Լեհաստանի, Ֆինլանդիայի և Էստոնիայի, փաստորեն չէր ճա-

<sup>566</sup> Տե՛ս Архивы Азербайджана..., стр.163:

<sup>567</sup> См. в том же месте, стр.166, Азербайджанская Демократическая Республика, стр.253, Борьба, #10, 1920 թ. հունվարի 15, Т.Насиров, №7, աշխ., стр.110: Հայտագրում նշվում էր, որ ԱՂԴ-ն վճռական էր իր անկախությունը պաշտպանելու գործում, սուսի և համառ պայքար էր մղել զենեթալ Դեմիկիմի դեմ։ Դրանով Բաքուն ձգտում էր մեղմել իր մերժումն ու միաժամանակ ցույց տալ, որ հանդիսանում է Դեմիկիմի հակառակորդը։

<sup>568</sup> Տե՛ս Т. Swietochowski, Russian Azerbaijan..., p.174:

<sup>569</sup> Վ. Լեմիկիմի հեղինակած Ուլ(ը)Կ Կենտկոմի Բաղրայրոյի տրոշման նախագծում արտագործող-կոմստիկն համեմարարվում էր անվստահության և մեծ զավվածության քաղաքականություն վարել ԱՂԴ հանդեպ, քանի որ վերջինը չէր ընդունել Դեմիկիմի դեմ համատեղ պայքարի վերաբերյալ առաջարկությունը և ծառայություններ էր մատուցում Մեծ Բրիտանիայի ռազմական ուժերին։ Նշվում էր, որ ընդգծելով խորհրդային Ռուսաստանի կողմից յուրաքանչյուր ազգի աշխատավոր զանգվածների ինքնորոշման իրավունքի ճանաչումը, արտագործողկոմստիկն պետք է վճռականորեն բողոքեր ԱՂԴ կառավարության նման վարքագծի դեմ։ Տե՛ս Архивы Азербайджана..., стр. 169:

<sup>570</sup> См. в том же месте, стр.172:



նաշում ԱԴՀ անկախությունը ու հենց դրանով էր պայմանավորում քանակությունների կայացումը<sup>571</sup>:

Խորհրդային Ռուսաստանի կողմից ամենաադեպ դիվանագիտական ճնշման պայմաններում ԱԴՀ ներսում ծավալվեց հզոր պայքար երկրի երկու քաղաքական ճամբարների միջև: Խորհրդային Ռուսաստանի հանդեպ կոշտ քաղաքականության կողմնակից խմբավորմանը Ուսուրբեկովի գլխավորությամբ սկզբնական շրջանում հաջողվեց ներքին գործերի նախարարի պաշտոնից հեռացնել Մուսավաթի ռուսական կողմնորոշում ունեցող թևի փաստացի առաջնորդ Մ.Յ. Հաջինսկուն: Ամշուշտ, նրանք գիտակցում էին, որ նման քայլը կարող է հանգեցնել կառավարությունից սոցիալիստների և Իթֆիհարի դուրս գալուն, ուստի և ձգտելով բացառել դեպքերի նման զարգացումը՝ Մ.Յ. Հաջինսկուն թողեցին կառավարության կազմում՝ որպես առևտրի և արդյունաբերության նախարար: Սակայն կառավարական ճգնաժամը չհաջողվեց կանխել. ի նշան բողոքի, Իթֆիհադը և սոցիալիստները, իսկ հետո՝ էիրարը կառավարությունից հետ կանչեցին իրենց ներկայացուցիչներին: Մուսավաթին մնում էր 2 ելք՝ կամ հանձնաձևության գալ ընդդիմության հետ՝ զիջումներ անելով արտաքին քաղաքականության մեջ, կամ միանձնյա կազմել կառավարություն՝ ստանձնելով պատասխանատվությունը երկրի ճակատագրի համար<sup>572</sup>:

<sup>571</sup> Տե՛ս Աշխատատր, #36, 1920 ք. փետրվարի 14: Փետրվարի 20-ին իր հայտագրում Չիչերինը նշում էր, որ իր յուրյամբ Բարուն փաստորեն համարում էր, որ Խորհրդային Ռուսաստանի պայքարը Դեմոկրիին դեմ չէր շոշափում ԱԴՀ աշխատավորական զանգվածների շահերը: Չիչերինը, բերելով Լեստոմիայի օրինակը, ընդգծում էր, որ պետության անկախության ճանաչումը երկարատև քանակությունների արդյունք պետք է լիներ, ինչը չէր կարող թաժամվել թագմաթիվ այլ հարցերից: Մարտի 7-ի պատասխան հեռագրում Խան Խոյսկին կրկնում էր այն դրույթը, որ ԱԴՀ-ն չեզոք պետություն է ու չի միջամտի ռուս ժողովրդի պայքարին: ԱԴՀ-ն պարտաստակամություն էր հայտնում քանակությունները վարել՝ ամերաժեշտ համարելով քաղաքացիական հարաբերությունների հաստատումը՝ պայմանով, որ ճանաչվի ԱԴՀ անկախությունը: «Լևկաևի ունենալով Խորհրդային Ռուսաստանի քազում հայտարարություններն ազգերի ինքնորոշման իրավունքի վրա կանգնած լինելու մասին՝ ԱԴՀ կառավարությունը չէր կարող ներստրել, որ նույն սկզբունքի վրա հենված իր դիրքը կարող է վեճի առարկա լինել: ... Եթե ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչումը Խորհրդային Ռուսաստանի համար լիներ աննկուն սկզբունք, այդ դեպքում մա չէր կարող կայանալ մեջ դրվել քարդ ու երկար քանակություններից ... , քանի որ այդ սկզբունքը քանակությունների կարիք չունի, ... այլպես ... կդառնա քանակցող կողմի վրա ազդելու միջոց, այսինքն՝ այն գործիքը, որն օգտագործել են իմպերիալիստական պետությունները: Աբուսաստատություն էր ԱԴՀ-ի պատրաստակամությունը քանակցել Մուսավաթի հետ քաղաքացիական հարաբերությունների հաստատելու վերաբերյալ: Տե՛ս Աշխատատր, #49, 58, 1920 ք. մարտի 2, 12:

<sup>572</sup> Մ.Հ. Հաջինսկուն հեռացնելը պայմանավորված էր երկրում բուլշևիկների դեմ պայքարի ակտիվացման ամերաժեշտությամբ: Նոր պաշտոնում ևս Հաջինսկուն մտոնեցումները ձեռք բերեցին շատ պաշտպանների, այդ բնույթով՝ Մ.Է. Ռատուլզադեին, որը քացահայտորեն հարցն կառակցությունն ուսանում էր: Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.417, ք.59-62; Աշխատատր, #29, 31, 33, 45, 11, 1920 ք. փետրվարի 6, 8, 11, 28, ապրիլի 17; Боряба, #32, 1920 ք. փետրվարի 11; Т. Swietochowski, Russian Azerbaijan..., ք.176; Азербайджанская Демократическая Республика, стр.257-258:

Ստեղծված պայմաններում Ուսուրբեկովի կառավարությունը չզընաց արմատական փոփոխությունների երկրի արտաքին քաղաքական կողմնորոշման մեջ: Մի կողմից, նա ձգտում էր համաձայնության գալ խորհրդային Ռուսաստանի հետ և զիջումների գնով կանխել մոտալուտ ներխուժումը: Այդ իսկ պատճառով Մուսավաթը ձեռնպահ էր մնում կըտրուկ քայլերից ներքաղաքական դաշտում ու չէր ուզում միանձնյա կազմել կառավարություն և դրանով իսկ ստանձնել պատասխանատվություն երկրի ճակատագրի համար<sup>573</sup>: Սակայն մյուս կողմից էլ կառավարությունը ձեռնարկում էր ռազմաքաղաքական բնույթի մի շարք միջոցառումներ՝ ուղղված պետության պաշտպանունակության և միջազգային դիրքերի ամրապնդմանը խորհրդային Ռուսաստանի հետ բախման նախօրեին: Այդ քայլերից էին՝ ռազմական օպերացիան Ղարաբաղը և Ջանգեխուրը գրավելու ուղղությամբ, որը նպատակն էր՝ ապահովել Ադրբեյջանի թիկունքը իբր թե ԴԴ կողմից հնարավոր հարձակումից և Անդրկովկասի հանրապետությունների խորհրդաժողովում արտաքին քաղաքականության համաձայնեցման ու համադաշնության ստեղծման հարցերի առաջ քաշումը: Դրանով Բաքուն ձգտում էր երաշխավորել Անդրկովկասի հանրապետությունների միասնական հակախորհրդային ճակատը: Այդ իսկ պատճառով Բաքուն առանձնակի շահագրգռվածություն էր ցուցաբերում խորհրդաժողովի գումարման հարցում: 1920 թ. ապրիլի 9-ին Թիֆլիսում բացված խորհրդաժողովի օրակարգում ընդգրկվեցին Անդրկովկասի հանրապետությունների մշտական օրգանի ստեղծման, արտաքին քաղաքականության ոլորտում հանրապետությունների գործողությունների համաձայնեցման և համադաշնության ստեղծման հարցերը:

Խորհրդաժողովի ապրիլի 13-ի նիստում ԱԳԴ պատվիրակները ներկայացրեցին նախագիծ «Անդրկովկասի հանրապետությունների խորհրդրդի մասին կանոնադրություն» վերտառությամբ, ըստ որի՝ այդ մշտական օրգանի լիազորությունների մեջ մտնելու էր հանրապետությունների արտաքին անվտանգության, նրանց անկախության և չեզոքության համար պաշտպանության մասին հոգ տանելը: Ապրիլի 16-ի նիստում նրանք առաջարկեցին սկզբից քննարկել արտաքին քաղաքականության համաձայնեցման, իսկ հետո միայն՝ տարածքային հարցը: Վրաստանի պատվիրակությունն անմիջապես պաշտպանեց այդ նախաձեռնությունը, մինչդեռ ԴԴ ներկայացուցիչների դիրքորոշմամբ՝ քանի դեռ չէին լուծվել տարածքային հարցերը, խորհրդաժողովի որոշումներն իրական ուժ չէին ունենա: ԴԴ պատվիրակ Տ. Բեկզադյանը մշեց, որ եթե խորհրդաժողովը համոզես զա հանրապետությունների անկախության համոզեպ արտաքին նկրտումների, այսինքն՝ հյուսիսից եկող վտանգի դեմ ընդհանուր պայքարի օգտին, ապա ԴԴ պատվիրակությունը կառաջարկի քննարկել հարավից եկող վտանգի հարցը, քանի որ թուրքերը դաշինքի մեջ են բուլշևիկներ

<sup>573</sup> Sb'u Azerbajdžanskaja Demokratičeskaja Respublika, str.259; Slovo, #90, 1920 p. ապրիլի 23; Наше время, #26, 1920 p. ապրիլի 22:



րի հետ: Խորհրդաժողովն, ըստ նրա, պետք է պարզեր ԱԴԳ կառավարության վերաբերմունքը հայկական պետականության հանդեպ և ստույգ տվյալներ ձեռք բերեր ԱԴԳ և Թուրքիայի միջև իբրև գոյություն ունեցող պայմանագրի մասին: Ուստի սկզբունքորեն դեմ չլինելով արտաքին քաղաքականության մասին հարցը դնելուն՝ Բեկզադյանը խնդրեց այն ընդլայնել՝ ներառելով հարավից եկող վտանգը: ԱԴԳ պատվիրակ Վեքիլովը պաշտպանեց Բեկզադյանի առաջարկը և իր կառավարության անունից պաշտոնապես հերքեց ադրբեջանա-թուրքական դաշինքի գոյությունը՝ դա զնահատելով՝ որպես սադրանք:

Խորհրդաժողովն այդ հարցին կրկին անդրադարձավ ապրիլի 19-ի նիստում, որի ժամանակ ևս Վրաստանի և ԱԴԳ պատվիրակների փորձերը՝ փոխելու ԳԳ դիրքորոշումը, մնացին անարդյունք: Դայկական կողմը շեշտեց, որ կային մի շարք ներքին հարցեր, որոնք ունեին արտաքին բնույթ և անհետաձգելի էին: Այսպես, հարվածները Ղարաբաղին, Ձանգեզուրին, Սուրմալուին տանում էին դեպի Թուրքիայի սիրտը և նախապատրաստվել էին Դայաստանի վրա հարավից՝ Թուրքիայի կողմից հարձակվելու համար: Ի վերջո ադրբեջանա-վրացական համատեղ ջանքերով Խորհրդաժողովը հարցն օրակարգի մեջ դրեց հետևյալ ձևակերպմամբ. «Արտաքին քաղաքականության մեջ գործողությունների համաձայնեցումը հանրապետությունների միջև ներքին բախումների դադարեցման հարակցության մեջ»: Դրանով իսկ ԱԴԳ-ն չէր կարող խուսափել ներքին հարցերի քննարկումից: Խորհրդաժողովի ապրիլի 21-ի նիստում ԳԳ պատվիրակությունն առաջ քաշեց բանաձևի նախագիծ, որով հանրապետությունների միջև բախումների պատճառները վերացնելու համար անհրաժեշտ էր համարվում պայմանագրերի կնքում, որոնցով Անդրկովկասի հանրապետությունները կպարտավորվեին չկատարել միմյանց անկախությանն սպառնացող քայլեր և չկնքել անջատ պայմանագրեր մյուս կողմերի անկախությանն սպառնացող արտաքին ուժերի հետ: Առաջարկվում էր կնքել պայմանագրեր վիճելի տարածքների ճշգրտման, ապրանքափոխանակության հաստատման, տրանզիտի, վերաբնակեցման, արտավայրերից օգտվելու կարգի, ԳԳ կարիքների համար ԱԴԳ կողմից նավթի անարգել առաքման և այլ հարցերի վերաբերյալ: Դրանով էր ԳԳ պատվիրակությունը պայմանավորում հատուկ պայմանագրի ստորագրումը արտաքին քաղաքականության համաձայնեցման մասին, ինչը հիմնավոր դիրքորոշում էր և թխում էր ԳԳ կենսական շահերից: ԳԳ պատվիրակների պնդմամբ՝ խոսքը գնում էր միայն սկզբունքների վերականգնման ամրագրման մասին, ինչը կարելի էր անել մեկ-երկու նիստերի ընթացքում: Սակայն, իրականում հայկական կողմի առաջ քաշած պայմանների շուրջ Անդրկովկասի հանրապետություններն արդեն իսկ մեկուկես տարի ի վիճակի չէին համաձայնության հասնել: Արդյունքում Խորհրդաժողովն արձանագրեց արտաքին քաղաքականության կորդինացման հարցում համաձայնության ձախողումը: Պատճառն այն էր, որ Բազում չկարողացավ փարատել անվստահության մթնոլորտը և ապացուցել իր նպատակների ան-

կեղծ լինելը հայ-ադրբեջանական հակասությունների հաղթահարման հարցում: Տապալվեցին ԱՂՅ ռազմական քայլերը 77 դեմ, և արդյունքում ԱՂՅ բանակը դադարեց հանդիսանալ իրավիճակի վրա ազդող գործոն<sup>574</sup>:

Այդ ընթացքում խորհրդային Ռուսաստանը վերջնականապես հակվեց Ադրբեջան գինված ներխուժմանը<sup>575</sup>: ԱՂՅ սահմանների մոտ էին կուտակվում խորհրդային զորքերը, Բաքվում Մոսկվայի ռազմական ու ֆինանսական աջակցությամբ ստեղծվում էին տեղի բոլշևիկների զինված խմբեր<sup>576</sup>: ԱՂՅ բողոքի հայտագիրն իր սահմանների մոտ խորհրդային զորքերի կենտրոնացման դեմ մնաց անպատասխան<sup>577</sup>:

Միաժամանակ ակտիվացավ համագործակցությունը բոլշևիկների ու քեմալական շարժման միջև. նրանց միջև վերջնական համաձայնություն ձեռք բերվեց Ադրբեջանի և ողջ տարածաշրջանի ճակատագրի վերաբերյալ: 1920 թ. ապրիլի 26-ին Լենինին ուղղված նամակում Մուստաֆա Քեմալն առաջարկում էր իր վրա վերցնել ռազմական գործողությունները Հայաստանի դեմ, հնչալես և ստիպել Ադրբեջանին ընդունել խորհրդային իշխանությունը<sup>578</sup>: 1920 թ. ապրիլի սկզբին Բաքվում գտնվող քեմալական շարժման ներկայացուցիչների տարբեր խմբեր կազմակերպեցին խորհրդակցություն՝ նպատակ ունենալով համաձայնեցնել իրենց գործողությունները: Կորդինացնող մարմինը Հալիլ փաշայի և Ֆ. Սաբիտի մասնակցությամբ ընդունեց որոշում, որով սահմանվում էին Ադրբեջանի նկատմամբ քեմալականների քաղաքականության հիմնաքարերը: Դրանք էին՝ 1) ԱՂՅ առևա բրիտանամետ կառավարության հնարավորինս արագ տապալում և նրա փոխարինում մի կառավարությամբ, որը կգործակցեր բոլշևիկների հետ, 2) կոմիտեի ձևավորում, որը կարագացներ կառավար-

<sup>574</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.365, ք.10; գ.411, ք.56; գ.576, ք.1-3, 11-18; ֆ.276, ց.1, գ.184, ք.67; Слово, # 56, 87-89, 91, 1920 թ. մարտի 10, ապրիլի 20-22, 24; Վ. Վիրաբյան, Հայաստանը Անդրկովկասյան հանրապետությունների 1920 թ. ապրիլյան խորհրդածողովում, էջ 9-10, 31-35: Տե՛ս նաև մատուցող Երևանի արևածայնագրության մվելացան քանակում բոլշևիկյան լայնածավալ քարոզչությունը և գինված ուժերի ղեկավարությունը: Տե՛ս Т. Swietochowski, Russian Azerbaijan..., p.176-177; М. Волхонский, В. Муханов, նշվ. աշխ, стр. 197-199:

<sup>575</sup> Կովկասի ճակատի հեղափոխական ռազմական խորհրդի անդամներին 1920 թ. մարտի 17-ին Լենինը գրում էր, որ ծայրահեղ անիրաժեշտ է գրավել Բաքուն ու պահանջում էր քոլոր քանքերն ուղղել այդ խնդրի լուծմանը՝ միաժամանակ անհրաժեշտ համարելով հայտարարություններում լինել զգույշ և հնարավորինս հավաստիանալ տեղական ամուր խորհրդային իշխանության մասնապատրաստման մեջ: Տե՛ս М. Волхонский, В. Муханов, նշվ. աշխ, стр.20:

<sup>576</sup> Տե՛ս Азербайджанская Демократическая Республика, стр. 259-260; Борьба, #24, 1920 թ. փետրվարի 1: Ադրբեջանի նվաճման մախապատրաստական աշխատանքները համաձայնեցնում էր Օրջոնիկիձեի գլխավորությամբ ստեղծված հատուկ մարմինը՝ Կալբյուրտն, մինչդեռ Ուլ(Բ)Կ երկրամասային կոմիտեի և ադրբեջանցի բոլշևիկների դեմ սահմանափակվել էր այնպիսի գործողությունների իրականացմամբ, որոնք անհրաժեշտ էին ներխուժմանը ներքին հեղափոխության անսր տարտ համար: Տե՛ս Т. Swietochowski, Russian Azerbaijan..., p.177; Азербайджанская Демократическая Республика, стр.263:

<sup>577</sup> Տե՛ս Աշխատանք, #14, 1920 թ. ապրիլի 21:

<sup>578</sup> Տե՛ս Азербайджанская Демократическая Республика, стр.262, Դրոշակ, #2, 1926 թ. փետրվար, «Թիֆլիզ-խորհրդային շարքերտրիմները», էջ 41; Р. Казанджян, Большевики и младотурки..., стр. 2,5; Г. Махмурия, նշվ. աշխ., стр.206:



րության փոփոխությունը, 3) Բաքուն չէր գրավվելու Կարմիր բանակի կողմից, քանի դեռ թուրքական կոմունիստական կուսակցությունը չէր դիմել նման խնդրանքով<sup>579</sup>:

Եթե Բաքվում գործող քեմալականները ձգտում էին պայահովել Ադրբեջանի հնարավորինս խաղաղ ու անարյուն խորհրդայնացումը, ապա Ադրբեջանի քաղաքական ուժերը հույս ունեին նրանց միջնորդությամբ բացառել Կարմիր բանակի մուտքն Ադրբեջան<sup>580</sup>: Հալիլ փաշան ձգտում էր նրանց համոզել, որ կարիք չկար երկյուղելու Կարմիր բանակից, քանի որ այն միայն նպատակ ուներ Ադրբեջանի տարածքով տարանցել դեպի Ղարաբաղ ու Հայաստան, իսկ այնտեղից՝ Անատոլիա՝ այնտեղ ծավալվող ազգային շարժմանն օգնության: Ընդ որում, ինքը պետք է ստանձներ 11-րդ բանակի հրամանատարությունը<sup>581</sup>: Փաստորեն, խորհրդային Ռուսաստանը և Քեմալական թուրքիան վերջնականապես համաձայնության եկան ԱԴՀ ճակատագրի հարցում, և թուրքիան, որն առանցքային դերակատարություն ուներ ԱԴՀ ստեղծման գործում, այժմ մտադիր էր, իր իսկ շահերից ելնելով, վերջ տալ դրան<sup>582</sup>: Նման անբարենըպատ միջազգային իրավիճակի պայմաններում ԱԴՀ-ն զրկվում էր երկրի անկախության պահպանման գործում խուսանավելու հնարավորությունից, ինչը և ցույց տվեց դեպքերի հետագա զարգացումը:

1920 թ. ապրիլի 27-ին ԱԿ(Բ)Կ և Ադրբեջանում գտնվող թուրք զինվորականների զինված խմբերն սկսեցին զինված հեղաշրջումը՝ կարճ ժամանակում գրավելով երկրի ու նրա մայրաքաղաքի ռազմավարական մի շարք կարևոր կետեր, կառավարությանը կտրելով իրեն հավատարիմ մնացած զորամասերից ու անհնար դարձնելով զինված դիմադրությունը: Բաքվի կայազորը և ԱԴՀ ռազմական նավատորմն անցան նրանց կողմը: Նույն օրը խորհրդային 11-րդ բանակն անցավ Ադրբեջանի սահմանը ու

<sup>579</sup> Տե՛ս Կ. Karabekir, նշվ. աշխ., ս. 1303: Որոշման մեջ նշվում էր, որ Բաքվում արդեն գտնվող և առաջիկայում ժամանելիք թուրք սպաներն անցնելու էին ժառանգության «հեղափոխական բանակի» շարքերում: Տե՛ս նույն աղբյուր, ս. 1304:

<sup>580</sup> Մասնավորապես, Կարմիր բանակի՝ ԱԴՀ մտնելու դեմ էին հանդես գալիս թուրքական և Ադրբեջանական կոմկուսները: Կարմիր բանակի մուտքն Ադրբեջանի տարածք նրանք հնարավոր էին համարում միայն ԱԴՀ կառավարության դեմ թուրքական կոմկուսի կողմից կատարելից հեղաշրջման անհաջողության դեպքում: Տե՛ս Կ. Karabekir, նշվ. աշխ., ս. 1304: Ադրբեջանական կոմկուսի պատվիրակությունը 11-րդ բանակի հրամանատարության հետ համաձայնության եկավ, որով Կարմիր բանակը կուսակցության կողմից հեղաշրջման սկսվելուց հետո 24 ժամվա ընթացքում ձեռնպահ էր մնար Ադրբեջանի սահմանն անցնելուց:

<sup>581</sup> Տե՛ս Կ. Karabekir, նշվ. աշխ., ս. 1302; Կ. Бајкара, նշվ. աշխ., с. 263, 266; Т. Swietochowski, Russian Azerbaijan..., p. 179-180: 11-րդ բանակի հրամանատարությունն ստանձնելու համար Հալիլ փաշան ապրիլի 26-ին մեկնեց Դաղստան, որտեղ սակայն բանակի հրամանատար Լևանդովսկին հայտնեց, որ Մոսկվան ճանհ հրահանգ չէր տվել:

<sup>582</sup> Ապրիլի 26-ին Վ. Լենինին առջված նամակում Մուստաֆա Քեմալը քացիիքաց հայտնում էր, որ Վրաստանի վրա խորհրդային Ռուսաստանի հարձակման դեպքում թուրքիան կհարձակվեր Հայաստանի վրա, ինչպես նաև կպարտավորվեր ստիպել Ադրբեջանին՝ ճանաչելու խորհրդային իշխանությունը: Տե՛ս Կ. Бајкара, նշվ. աշխ., с. 262:

սկսեց արագ առաջխաղացումը Բաքվի ուղղությամբ<sup>583</sup>։ ԱԿ(Բ)Կ Ռազմհեղկոմն իր հռչակագրում հայտարարեց Մուսավաթի «դավաճան, հանցագործ ու հակահեղափոխական» կառավարության տապալումը և իշխանության անցումը Ն. Նարիմանովի գլխավորած Ռազմհեղկոմին։ Նույն օրը Ռազմհեղկոմը ԱՂԳ խորհրդարանին ներկայացրած վերջնագրով պահանջեց իշխանությունը հանձնել 12 ժամվա ընթացքում։ Մուսավաթի որոշ անդամներ, այդ թվում՝ Շ. Ռուստամբեկովն, առաջարկեցին հեռանալ Ելիզավետպոլ՝ այնտեղ բոլշևիկների դեմ պայքարը կազմակերպելու համար։ Սակայն ընդդիմությունը՝ Մուսավաթի մյուս թևը Մ.Յ. Հաջինսկու գլխավորությամբ, սոցիալիստները, Իթթիհաթը, Իթթիհաթը, չպաշտպանեցին այդ առաջարկը և հանդես եկան վերջնագրի ընդունման օգտին՝ պատգամավորներին հավաստիացնելով, որ Կարմիր բանակը մտադիր էր ոչ թե մտնել Բաքու, այլ մեկնել Թուրքիային օգնության։ Արդյունքում ապրիլի 27-ի երեկոյան խորհրդարանն ընդունեց վերջնագիրը՝ իր հերթին առաջ քաշելով իշխանությունը հանձնելու մի շարք պայմաններ, այն է՝ 1) պահպանվում էր Ադրբեջանի անկախությունը, 2) ԱԿ(Բ)Կ կողմից ստեղծվելիք կառավարությունը ժամանակավոր մարմին էր լինելու, իսկ ԱՂԳ կառավարման ձևը որոշվելու էր Ադրբեջանի բանվորական, գյուղացիական և զինվորական պատգամավորների խորհրդի կողմից, 3) կոմունիստական ժամանակավոր կառավարությունը երաշխավորելու էր ԱՂԳ կառավարության և խորհրդարանի անդամների կյանքն ու գույքը և միջոցներ էր ձեռնարկելու՝ թույլ չտալու համար Կարմիր բանակի զինված մուտքը Բաքու, 4) աշխատանքից ազատվելու էին միայն պատասխանատու պաշտոններ զբաղեցնողները, մինչդեռ պետական ծառայողների մեծ մասը պետք է մնար իր տեղերում, 5) ԱՂԳ նոր կառավարությունը պետք է բոլոր միջոցներով պայքար մղեր բոլոր այն արտաքին ուժերի դեմ, որոնք նպատակ ունեին չլքնացնել ԱՂԳ անկախությունը<sup>584</sup>։ Այնուհետև խորհրդարանը լուծարվեց, որին հետևեց ապրիլի 28-ին Ադրբեջանում խորհրդային իշխանության հռչակումը։

Տարածաշրջանում երկու հզոր ուժերի՝ խորհրդային Ռուսաստանի և Քեմալական Թուրքիայի միջև սերտ գործակցության ու Ադրբեջանի ճակատագրի հարցում կատարյալ համաձայնության պայմաններում ԱՂԳ խորհրդայնացումը դառնում էր անխուսափելի, և Ռուսբեկովի կառավարության կողմից այս կամ այն քաղաքական զօի որդեգրումն ընդհանուր առմամբ որևէ նական ներգործություն չէր կարող ունենալ իրադարձությունների տրամաբանական զարգացման վրա։ Դրա հետ մեկտեղ պետք է

<sup>583</sup> Հեղաշրջման մեջ կարևոր դեր էին խաղում թուրք զինվորականները, հատկապես նրանցից կազմված խորհրդարանի պահապան գումը, որոնք գրավեցին մի շարք կարևոր կետեր Բաքվում, ձեռքակալեցին մայրաքաղաքի գեներալ-մահամզապետ Մ. Տիխասին, կամիսարզիեցին կառավարության փախուսող Բաքվից։ Տե՛ս T. Swietochowski, Russian Azerbaijan..., p.181; Азербайджанская Демократическая Республика, стр.264, 266-269; Бореба #95 1920 г. ապրիլի 29։

<sup>584</sup> Տե՛ս Азербайджанская Демократическая Республика, стр.265-266; T. Swietochowski, Russian Azerbaijan..., p.181-183։ Նույն օրը Ռազմհեղկոմը հեռագիր հղեց Վ. Լենինին՝ օգնություն խնդրելով խորհրդային Ռուսաստանից։



նշել, որ ԱԴԳ կառավարությունը կատարեց մի շարք մարտավարական բնույթի սխալներ, որոնք արագացրին երկրի խորհրդայնացումը:

Ազգերի Լիգայի կողմից Լիգային անդամակցելու ԱԴԳ դիմումի մերժումը հանդիսանում էր հարևան պետությունների հանդեպ ԱԴԳ տարածքային հավակնությունների նկատմամբ միջազգային հանրության բացասական դիրքորոշման անուղղակի արտահայտություն:

Ամփոփելով աշխատանքը և ի մի բերելով արդյունքները՝ կարելի է գալ հետևյալ հիմնական եզրակացություններին:

- Աղբբեջանական պետականության առաջացման հիմքում ընկած է երկու հիմնական գործոն: Առաջին, Ռուսաստանում 1917 թ. փետրվարյան հեղափոխության հետևանքով ակտիվացած Կովկասի թաթարների ազգային շարժումը, որն իր նպատակներում ազգային ինքնավարության պահանջից հետզհետե բարձրացավ ազգային ինքնորոշման և անկախ պետականության ստեղծման պահանջի: Երկրորդ՝ ավելի ծանրակշիռ գործոնը արտաքին ուժն էր, ի դեմս ազգակից և կրոնակից Օսմանյան կայսրության, որը հանդիսացավ «Աղբբեջան» պետության ստեղծման գործընթացն արագացնող ազդակ:
- Աղբբեջանական Դեմոկրատական Դանրապետության կովկասյան քաղաքականության հիմնական ուղղություններն էին՝
  1. Անդրկովկասի քիչ թե շատ մուսուլմանաբնակ բոլոր շրջանների միավորումը նոր պետականության սահմաններում, մասնավորապես Թիֆլիսի նահանգի արևելյան՝ Թիֆլիսի, Բորչալուի, Սղնախի գավառների մուսուլմանաբնակ շրջանների, Ջաքաթալայի օկրուգի, Բաթումի մարզի, Երևանի նահանգի արևելյան և հարավային գավառների՝ Նոր Բայազետի, Երևանի, Էջմիածնի գավառների մասերի, Շարուր-Դարալագյազի, Նախիջևանի, Սուրմալուի գավառների, Կարսի մարզի, ինչպես և Դաղստանի միավորումը;
  2. ցամաքային կապի ապահովումը Թուրքիայի հետ, որն, ի թիվս Նախիջևանի, Շարուր-Դարալագյազի, Սուրմալուի գավառների, Կարսի մարզի միավորման, ենթադրում էր Ելիզավետպոլի նահանգի Ջանգեզուրի, Ջևանշիրի, Շուշիի, Կարյազինի գավառների միավորում;
  3. Ռուսաստանի Դարավի Ձինված ուժերից պետության անկախությանը բխող վտանգի չեզոքացումը:
- ԱՂԴ տարածաշրջանային քաղաքականությունը 1918-1920 թթ. ընդհանուր առմամբ հանդիսացել է ծավալապաշտական քաղաքականություն՝ ուղղված Դայաստանի և Վրաստանի վերոհիշյալ տարածքների նվաճմանը: Միայն Ռուսաստանի Դարավի Ձինված ուժերի հետ հարաբերություններում ԱՂԴ-ն, չնայած Դաղստանի նկատմամբ հավակնություններին, ընդհանուր առմամբ չէր հետապնդում նվաճողական նպատակներ՝ այդ ուղղությամբ իր առջև ունենալով պետականության պահպանման և ամրապնդման գերխնդիրը:
- Աղբբեջանի տարածաշրջանային քաղաքականությունն անցել է երեք շրջան: Բաժանման հիմքում ընկած էին այն առանցքային գործոնները, որոնք լուրջ ազդեցություն թողեցին հանրապետության զարգացման և նրա կովկասյան քաղաքականության վրա: Դրանք են՝



1. ԱՂԴ-ում Օսմանյան կայսրության լիակատար ռազմաքաղաքական գերիշխանության շրջանը, որն ընդգրկում է 1918 թ. մայիսից 1918 թ. հոկտեմբեր ընկած շրջանը;
2. Ադրբեջանում Մեծ Բրիտանիայի ռազմաքաղաքական ազդեցության շրջանը, որն ընդգրկում է 1918 թ. նոյեմբերից 1919 թ. օգոստոս (երկրից անգլիական զորքերի դուրսբերում) ընկած շրջանը;
3. Ադրբեջանի հարաբերական ինքնուրույնությունն իր տարածաշրջանային քաղաքականության իրականացման մեջ 1919 թ. օգոստոսից մինչև 1920 թ. ապրիլ:

Առաջին շրջանում Ադրբեջանի արտաքին քաղաքականության և ընդհանրապես ադրբեջանական պետականության զարգացման ուղղության որոշման վրա ներազդող առանցքային գործոն դարձավ Օսմանյան Թուրքիան: Զննարկվող շրջանում ԱՂԴ կովկասյան քաղաքականության գլխավոր միջոց էր հանդիսանում ռազմական ուժն, ի դեմս թուրքական զորքերի: Տարածաշրջանում իր քաղաքական նպատակներին հասնելու մյուս կարևոր միջոցը տնտեսական լծակներն էին, որոնք Բաքուն հաջողությամբ կիրառում էր Վրաստանի դեմ: ԱՂԴ գոյության առաջին փուլում սկիզբ դրվեց հանրապետությունում այլ ազգերով կոմպակտ բնակեցված տարածքների էթնիկական զտման քաղաքականությանը, որը նպատակաուղղված էր Արևելյան Անդրկովկասում թուրք էթնոսի գերիշխանության ապահովմանը:

ԱՂԴ գոյության երկրորդ շրջանում ԱՂԴ կառավարությունը դեպի Անտանտ կտրուկ քաղաքական վերակողմնորոշման և արտաքուստ ժողովրդավարական քաղաքական գծի դրսևորման շնորհիվ ոչ միայն կարողացավ լուծել պետականության պահպանման կենսական խնդիրը, այլև չեզոքացրեց ռուսական ազդեցությունը Բաքվում և Մուղան-Լենքորանում:

Բաքուն շարունակեց Անդրկովկասի մուսուլմանաբնակ և ռազմավարական ու տնտեսական կարևոր նշանակություն ունեցող տարածքների նկատմամբ իր տիրապետության հաստատման քաղաքականությունը: Սակայն այս անգամ, ի տարբերություն նախորդ շրջանի, ԱՂԴ կողմից ռազմական ուժի կիրառման հնարավորությունները սահմանափակված էին դաշնակիցների կողմից, ուստի նա ստիպված էր գործել դիվանագիտական միջոցներով, ինչպես և քաղաքական ու նյութական աջակցության միջոցով: ԱՂԴ կովկասյան քաղաքականությանը բնորոշ դարձավ դիվանագիտական ակտիվ գործունեությունը իր դիրքորոշումը քաղաքական, տնտեսական, ռազմավարական և այլ բնույթի փաստարկներով հիմնավորման ուղղությամբ: Դարաբաղի և Ջանգեզուրի նկատմամբ իր հավակնություններն Ադրբեջանը հիմնավորում էր տնտեսական և ռազմավարական սկզբունքներով, մինչդեռ Կարսի և Բաթումի մարզերի, Շարուր-Նախիջևանի և Երևանի նահանգի մյուս կոմպակտ մուսուլմանական բնակչություն ունեցող շրջանների դեպքում առաջ էր քաշում ազգերի ինքնորոշման սկզբունքը:

- ԶՆՆարկվող շրջանում տեղի ունեցավ մերձեցում Վրաստանի հետ ընդհանուր ռազմաքաղաքական և տնտեսական մի շարք գործոնների հիման վրա, այն է՝ Մրանջ դիրքորոշումների համաձայնությունը տարածքային վիճելի հարցերի կարգավորման սկզբունքների և մեթոդների հարցում, ԱԴԴ-ի և Վրաստանի միջազգային ճանաչման խնդիրը, արտաքին վտանգը՝ ի դեմս Ռուսաստանի Հարավի Ձիմված ուժերի: ԱԴԴ-ի և Վրաստանի քաղաքական մերձեցման գործընթացն ամրագրվեց Բաքվի և Թիֆլիսի երկկողմ ռազմաքաղաքական դաշինքում:
- Ռուսաստանի Հարավի Ձիմված ուժերի հետ հարաբերություններում Բաքուն ապավինում էր դաշնակիցների աջակցությանը՝ հմտորեն օգտվելով ռուս-բրիտանական աշխարհաքաղաքական հակասություններից: Միաժամանակ ԱԴԴ-ն, ի տարբերություն Վրաստանի, դրսևորում էր որոշակի զգույշ քաղաքական վարքագիծ՝ ձգտելով հնարավորին չափ նվազեցնել Կամավորական բանակի հետ բախման դրդապատճառների շրջանակը:
- ԱԴԴ գոյության երրորդ շրջանը իրենով նշանավորեց Ադրբեջանի կովկասյան քաղաքականության մեջ ռազմական բաղկացուցչի աճը: Բաքուն վերսկսեց Ղարաբաղի և Ջանգեզուրի նվաճման փորձերը՝ կիրառելով մարտավարական այնպիսի միջոցներ, ինչպիսիք էին՝ ռազմական ուժի գործադրումը, տնտեսական շրջափակումը և էթնիկական գտումները: Ուժային քաղաքականության տապալման պայմաններում Բաքուն փորձեց իր նպատակներին հասնել դիվանագիտական միջոցներով՝ Անդրկովկասի հանրապետությունների 1920 թ. ապրիլի խորհրդատուողովում դրսևորելով Ղարաբաղի և Ջանգեզուրի հարցերում իր ստանձնած միջազգային պարտավորություններից հրաժարվելու, տարածաշրջանային համագործակցության հաստատումը և զարգացումը տարածքային հարցի լուծմամբ պայմանավորելու քաղաքական գիծ:
- Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության անկման հիմնական պատճառը աշխարհաքաղաքական ամբարձրապատ իրավիճակն էր՝ պայմանավորված ընձալա-բոլշևիկյան մերձեցմամբ:
- Ազգերի Լիգայի կողմից Լիգային անդամակցելու ԱԴԴ դիմումի մերժումը հանդիսանում էր հարևան պետությունների հանդեպ ԱԴԴ տարածքային հավակնությունների նկատմամբ միջազգային հանրության բացասական դիրքորոշման անուղղակի դրսևորում: Մյուս կողմից, այդ հանգամանքը վկայում է, որ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը չի ունեցել միջազգայնորեն ճանաչված սահմաններ և հետևաբար, ներկայիս Ադրբեջանը չի կարող իրավահաջորդության հիմքի վրա հավակնություններ ներկայացնել պատմական Հայաստանի տարածքներ հանդիսացող Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի նկատմամբ: ԼՂ հիմնահարցը որևէ առնչություն չունի ներկայիս Ադրբեջանի տարածքային ամբողջականության հետ:
- Համադրելով ուժերի դասավորությունը տարածաշրջանում 1918-1920 թթ. Հարավային Կովկասում առկա ներկայիս միջազգային իրավիճակի հետ՝ կարելի է եզրակացնել, որ դրանք ունեն շատ ընդհանրություններ,



օրինակ, վրաց-ադրբեջանական մերձեցումը, նրանց արևմտյան հստակ կողմնորոշումը ու միաժամանակ՝ սերտ հարաբերությունները Թուրքիայի հետ, հայ-թուրքական լարված հարաբերությունները, ԼՂ հիմնահարցով պայմանավորված հայ-ադրբեջանական հակամարտությունը: Ներկայումս, ինչպես և զրեթե մեկ դար առաջ, տարածաշրջանային մի շարք իրողությունների համանմանության վերլուծությունը թույլ է տալիս խուսափել Հայաստանի առաջին Հանրապետության ղեկավարության կողմից թույլ տրված սխալներից և բացթողումներից:

ԱԳՀ կովկասյան քաղաքականության մեթոդների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջազգային բարենպաստ իրավիճակի առկայության պայմաններում Ադրբեջանը չէր վարանում դիմել զենքի ուժին՝ իր արտաքին քաղաքական խնդիրների կարգավորման նպատակով:

RESUME  
THE CAUCASIAN POLICY OF THE AZERBAIJANI DEMOCRATIC  
REPUBLIC IN 1918-1920

The research of the history of the Azerbaijani Democratic Republic (ADR) is important not only in the scientific, but also practical sense and political actuality, as we can better comprehend the origins and prerequisites of today's political processes in Azerbaijan and the South Caucasus in a whole, particularly the origins of the Nagorno-Karabakh conflict. The Caucasian policy of ADR is quite an interesting field of research. Within these frames this work is focused on the relations of ADR with the Republic of Armenia, Georgia and the Armed Forces of the South of Russia.

Some of the priorities of the regional policy of the ADR are still on the agenda of modern Azerbaijan. The research in this field will help us to understand the process of the evolution of the Caucasian policy of Azerbaijan. Here we should also consider the fact, that the Azerbaijani Republic has declared itself as the successor of the ADR.

The main objectives of this work are as follows: showing the prerequisites of the establishment of the ADR in the context of the international situation of Transcaucasia and the foreign orientation of the Caucasian Tatars, research of the main directions of the ADR regional policy, its priorities and the methods of realization, determination of the level of influence of the states of Entente, the Ottoman Empire and the Armed Forces of the South of Russia on it, as well as the research of the position of the international community (the League of Nations) regarding ADR's state borders and the territorial claims of Baku.

This work is based on the sources of the National Archive of Armenia, some published collections of official documents, works of famous Armenian, Soviet and Russian, Azerbaijani, Turkish and Western authors and specialists in the history of Transcaucasia of the beginning of the 20<sup>th</sup> century. We'd like to also stress the importance of the memoirs of politicians, statesmen and military of the discussed period, as well as the wide range of materials of the Armenian, Georgian, Azerbaijani and Russian press of Transcaucasia.

The work consists of an introduction, three chapters, conclusion and list of used sources and literature.

The *first chapter "Proclamation of the Azerbaijani Democratic Republic and determination of the priorities of its Caucasian policy: May-October, 1918"* includes the internal and external prerequisites of the Azerbaijani statehood, the foreign orientation of the political forces of the Caucasian Tatars and their position regarding the founding of their own state, as well as the regional policy of the Ottoman Empire, the role of Azerbaijan in the latter and various aspects of Azerbaijani foreign policy.

The first paragraph refers to the development of the national movements of the Caucasian Tatars after the February Revolution of 1917. The most popular political force of the Caucasian Tatars, that is, the Federalists' party of Musavat



sought for territorial autonomy and then put forward the issue of the establishment of its statehood with the support of the Ottoman Empire and reaching domination in the region. It made an attempt to take over the Baku province, but their armed riot in March of 1918 failed. It obviously shows, that despite some auspicious internal conditions, the national movement of the Caucasian Tatars wasn't able to carry out its pretentious plans. This factor led to the activation of the movement named "İlhak", aimed at unification with the Ottoman Empire. On May 28, 1918 the Azerbaijani National Council proclaimed the establishment of the Azerbaijani Democratic Republic. The proclamation mentioned that the new state consisted of the eastern and southern parts of Transcaucasia. This provision of the proclamation obviously meant, that Azerbaijan was to pursue a policy of territorial expansion, and its first target was Armenia. The principle of expansion became one of the cornerstones of the ADR.

The second paragraph focuses on the relations between the Ottoman Empire and the ADR, as well as the struggle for Baku and the role of that city in the policy of the ADR and the Ottoman Empire. Just after its foundation the new republic was under strong military and political control of Ottoman Turkey. National interests of Ottoman Turkey prevailed over the ADR's interests, though the objectives of both countries in the region mainly coincided. The real power in Azerbaijan was concentrated in the hands of Nuri Pasha, the commander of the Army of Islam. Under his pressure the Azerbaijani government was seriously transformed in favor of the pro-Turkish forces of the ADR. But over the most essential problem of Baku Turkey and Azerbaijan had common interests. For Khan Khoiski's cabinet Baku was the future capital of the ADR, and its takeover would reinforce the Azeri statehood. As for Turkey, Baku was a strategic base on the road to Turkestan, North Caucasus and Iranian Azerbaijan.

The takeover of Baku entailed massacres of the Armenian population, which is being justified by modern Azerbaijani historiography as an act of revenge for "mass killings of the Caucasian Tatars in Baku by Armenians". Meanwhile Azerbaijani historians deny any involvement of the ADR government in the massacre. Actually even in the Azerbaijani historiography we can find certain facts, that the initiative of the massacre belonged to Khan-Khoiski's cabinet and, it was a deliberate action. The massacre of Armenians was a clear expression of the ADR's policy of ethnic cleansing, aimed at ensuring the domination of Tatar ethnicity in East Transcaucasia.

The third paragraph reflects the ADR's regional policy during the first period, particularly the aspects of contradictions with Armenia and Georgia on territorial issues, issues of distribution of the common property of the Transcaucasian Federation, as well as financial issues.

The most essential peculiarity of the period was the Ottoman military domination in the region, ensuring auspicious conditions for Azerbaijan in achieving its pretentious claims. The ADR began to carry out a policy of territorial expansion regarding both of its Transcaucasian neighbors. Its territorial claims

regarding Georgia extended over parts of three eastern *uezds* of the Tiflis *gubernia*. In the case of Armenia the ADR sought to overtake Karabagh and Zangezur. Owing to the Ottoman military Baku managed to seize Shushi, but it was just a tactical success, as the Armenians of Karabagh continued the stubborn resistance and meanwhile the presence of General Andranik's forces prevented the Azeri-Turkish attack on the *uezd*. In the discussed period not a single Armenian-Azerbaijani agreement was signed on the extension of the ADR sovereignty over Karabagh and Zangezur. This fact denies the falsifications of Azerbaijani historians, that the ADR had "benevolently" ceded Yerevan to Armenia in exchange for the latter's obligation not to have claims on Karabagh and Zangezur.

With the active support of Germany Georgia managed to neutralize the Azerbaijani expansion. In its relations with Tiflis the ADR actively used the methods of economic pressure, such as fuel and food blockade.

Another aspect of the ADR regional policy was the strategy of ethnic cleansing aimed at the creation a monoethnic Tatar-populated territory in East Transcaucasia. Its expressions were the mass killings of Armenians in the Nukhi and Aresh *uezds*, Russian settlers of Mugan-Lenkoran and Lezginis of the northern districts of the ADR.

The second chapter "*The Caucasian policy of the ADR in the conditions of domination of the Entente in the region: November 1918-August 1919*" reflects the aspects of the transformation of the ADR regional policy, caused by the victory of the Entente Powers in the First World War. Its first paragraph refers to the new objectives of the ADR Caucasian policy and the steps of Baku to overcome the negative impact of the drastic changes of the international situation in Transcaucasia.

At first the British headquarters in Transcaucasia had a very negative position towards the Azerbaijani state and its government, which had discredited itself by its cordial relations with the Ottoman Empire. The British general Thomson even declined the existence of the independent Azerbaijani Republic, considering it a part of Russia. In such difficult conditions the Khan Khoiski cabinet had to change its foreign orientation in favour of the Entente powers in its desperate attempts to save the Republic. The ADR policy of concessions and playing up to the British in combination with seemingly democratic reforms in the system of state governance on the one hand and the traditional Russian-British antagonism on the other became the key reasons for the de-facto recognition of the ADR by the British headquarters.

Owing to the British support Russian forces were withdrawn from the Baku province and General Bicherakhov's Caucasus-Caspian government dissolved. After that Mugan-Lenkoran remained the only zone of Russian influence in the East Transcaucasus.

The theme of the second paragraph is the prerequisites and other aspects of the founding of the Provisional Government of South-Western Caucasus (*Kars Milli Shura*) in the Kars and Batumi provinces under Ottoman protection. Through



that state-like body the Ottoman maintained their political and military influence in the region and the opportunity of re-conquering the Kars and Batumi provinces. The Azerbaijani historiography overestimates the role of the ADR in the life of *Kars Milli Shura* and claims, that the latter had a clear orientation towards Azerbaijan with its democratic form of governance and leaders thinking with European standards. Anyway, Azerbaijan rendered political and diplomatic assistance to *Kars Milli Shura*, aimed at the prevention of the Kars and Batumi provinces' incorporation into Armenia and Georgia and the reinforcement of *Kars Milli Shura* as a counterbalance against its Transcaucasian neighbors. But the ADR's policy in this direction failed because of the lack of the necessary political and military potential, the ignorance of the opportunity of joint Armenian-Georgian counteraction and the strictly negative position of the British.

The third paragraph reflects the new accents in the ADR policy on the problem of Karabagh and Zangezur. Azerbaijani claims on these regions were based on economic and strategic reasons, that is the problem of nomads, economic ties of Nagorno-Karabagh with Azerbaijan. From its side Yerevan truly insisted, that the problem of nomads and their herds was incorrectly politicized, while it was purely an economic issue.

The British obviously took the side of the ADR in their quarrel with Armenia as the incorporation of Nagorno Karabagh into Azerbaijan was in conformity with their national interests (factors of the Baku oil, the Muslim population of the British Empire and the Russian-British contradictions in the East). At first the British tried to impose the Azerbaijani power on the Armenians of Karabagh and Zangezur by measures of diplomatic and political pressure. After the failure of these attempts under the connivance of the British Baku undertook the economic blockade of Karabagh and then organized the cruel Armenian massacre in the village of Kaibalikend and some other villages. Under the joint Azerbaijani-British pressure the Karabagh National Council had to sign an agreement with the ADR, according to which it recognized the provisional rule of Baku till the resolution of the Paris peace-conference on the final status of Karabagh. This was a diplomatic success for Baku, but on the other hand the ADR wasn't able to extend its sovereignty to Karabagh. Meanwhile, the active resistance of Zangezur neutralized the Azerbaijani attempts to takeover it.

The fourth paragraph refers to the ADR policy of extending its rule over the Muslim-populated districts of the Yerevan *gubernia*. In this case the claims of Baku were based on the right of national self-determination. Azerbaijan carried out a policy of political, diplomatic and economic support to the so-called Araxes Republic, proclaimed on the territory of Sharur-Nakhichevan. The support was coordinated by the ADR diplomatic envoy in Yerevan Mamed Khan Tekinski. The latter's activity was brought to light by the Armenian intelligence.

Only in May 1919 the Republic of Armenia was able to extend its rule to the territory of the Araxes valley from Baouk-Vedi up to Ordubad. But after the withdrawal of the British forces the ADR was given a free hand in its policy in

Sharur-Nakhichevan. Baku unleashed a Muslim revolt, which brought to the loss of those territories by Armenia. The main reasons of this success of the ADR policy were as follows: Armenian garrisons were small and disposed on a wide territory; the British had confined the Armenian rule in the region, which undermined the authority of the Republic Armenia; the Muslim leaders of Sharur-Nakhichevan weren't exiled, as it took place in Kars, Baku managed to set strong contacts with the Muslims of Sharur-Nakhichevan through its diplomatic envoy in Yerevan, to coordinate their activity and render regular financial and military assistance. The sum up of these factors predetermined Baku's victory.

The fifth paragraph reflects the aspects of the Azerbaijani-Georgian relations, work of the conference of Caucasian Republics, the prerequisites of the military alliance between Azerbaijan and Georgia, its nature and aims.

Since the ADR and Georgia had territorial disputes and economic contradictions, the factors, promoting their rapprochement were much more important and weighty. They possessed the main routes of Transcaucasia and its greatest regional economic centers, as Tiflis, Baku, and Batumi. These factors made unavoidable their economic cooperation. They had much more complicated territorial disputes with their third neighbor Armenia and etc. But the prior reason of their rapprochement was the external threat, that is the Volunteer Movement in the South of Russia.

Among the most disputable issues of the Conference of four Caucasian Republics (including the Republic of Mountaineers) were the issues of territorial delimitation and the problem of joint counteraction against the external threat. Azerbaijan and Georgia demonstrated unanimity on the issue of key principles for the settlement of territorial disputes, adhering to economic and strategic principles, while Armenia was advocating the principle of national self-determination. Finally it was resolved to settle the disputes through bilateral agreements, or, in case of its impossibility, to hand over the disputes to international arbitration.

In the conditions of the Volunteer Army's advancement to the borders of the ADR and Georgia, the key point in the agenda of the conference became the issue of forming a joint defense alliance. But unlike the ADR and Georgia, the main menace for Armenia came from the Ottoman. Besides, Armenia had friendly relations with the Volunteer Army, considering it as a counterbalance against the Azerbaijani expansionism. Therefore, Armenia declined to enter into the alliance. In such conditions on June 16, 1919 the Azerbaijani-Georgian military alliance came to existence. It was aimed against any external threat to the independence of both Republics. Being convinced, that it is threatened with a war on two fronts against the Armed Forces of the South of Russia, the ADR considered the alliance as a factor of neutralization of that threat.

The sixth paragraph is dedicated to the research of political contradictions between the ADR and the Armed Forces of the South of Russia under the command of General Denikin. Relations with the Volunteer Army were of key significance for the general line of the ADR regional policy with Armenia, Georgia



and the Mountaineers, as the possibility of revival of the united Russia continued to be the main obstacle on the difficult road of the formation and international recognition of the Azerbaijani statehood. Elimination of that obstacle was the supreme goal of the ADR policy in the northern track.

In the spring of 1919 the Volunteer Army captured almost the whole territory of Northern Caucasus, except Daghestan. The ADR took the side of the Mountaineers in their struggle against Denikin, as it was to be a buffer against the Volunteer Army and an important factor of the political balance in Transcaucasia. The ADR also took into account its religious and ethnic ties with the Mountaineers. Meanwhile Baku seriously discussed the possibility of incorporation of Daghestan into Azerbaijan. Baku initiated wide diplomatic support to the Republic of Mountaineers, seeking also for the British political support.

The occupation of Daghestan in May 1919 made Baku undertake political and military steps to reinforce the defense potential of the Republic. But in the conditions of lacking its own resources the ADR relied mostly on the British. The latter were determined to prevent the Volunteer invasion to Transcaucasia. But on the other hand the necessity to support Denikin in the civil war with Bolsheviks made the British seek for a certain compromise. In August 1919 the British set a demarcation line, according to which Daghestan remained under the domination of the Volunteer Army in exchange for the exclusion of the latter's invasion of Azerbaijan. Though Baku lost in the struggle for Daghestan, the ADR managed to maintain its independence mainly owing to the British support.

*The third chapter "The Caucasian policy of the ADR in the period from August 1919 to April 1920"* refers to the period of relative independence of Baku in its regional policy, caused by the withdrawal of the British forces from Transcaucasia. This chapter represents the internal and external prerequisites of the ADR's fall.

The first paragraph reflects the aspects of the ADR's activation on the issue of Zangezur. With the extension of the Azerbaijani rule over Karabagh and the Muslim revolt in Baouk-Vedi and Sharur Nakhichevan Zangezur found itself encircled from three sides. These auspicious conditions revived the expectations of Baku for the takeover of Zangezur by force. The domination over Zangezur would allow Azerbaijan to unite its forces with the Muslims of Sharur-Nakhichevan and set a stable overland communication with Turkey. But the 1919 November attack on Zangezur led to a military catastrophe for the ADR, as the latter exaggerated its military potential against a background of series of successes in Baouk-Vedi, Sharur-Nakhichevan, Mugan-Lenkoran and Karabagh. Baku had to resume talks with Armenia and sign an agreement, which maintained the status-quo of Zangezur, thus confirming ADR's diplomatic and military setback.

Owing to the military victory Armenia reinforced its positions in Zangezur and exiled the rebellious Tatars. Meantime Azerbaijan reached new success in its policy of ethnic cleansing by committing the mass killing of the peaceful Armenian population of Goghtan. The Armenian-Azerbaijani conference in December 1919

wasn't able to reduce tensions in bilateral relations. It was only a measure for two sides to gain time and get ready for the new phase of hostilities.

The second paragraph refers to the activity of Baku in the second half of 1919, aimed at the reinforcement of its political influence in Sharur-Nakhichevan and the Kars province.

In August 1919 the Allied High Commissioner for Armenia Colonel Haskell arrived in Yerevan and made every effort to reach a provisional settlement of the issue of Sharur-Nakhichevan. At first Baku managed to impose a draft agreement on Haskell, according to which a neutral zone was to be set in Sharur-Daralagyaz and Nakhichevan under the authority of US governor. But the real power was to belong to the local Muslims and Baku would assume the expenses. Thus Baku also obtained auspicious conditions to extend its power over Zangezur. But Yerevan for its turn managed to ensure the balanced nature of the agreement. Anyway, Haskell's attempts failed, as the US governor hadn't military forces at his disposal and wasn't able to resist the joint Azerbaijani-Turkish counteraction.

But the ADR governor in Sharur-Nakhichevan Jamalinsky confronted the resistance of the strong local Muslim elite, led by Kelbali Khan, which was eager to maintain his autonomous, privileged status. The second rival of the ADR in the region was the Ottoman influence, represented by Khalil Bey. The quarrel between these two ended by the final elimination of the Azerbaijani domination in Sharur-Nakhichevan.

The ADR also failed in its counteraction against the activity of Armenia in January 1920 aimed at the extension of its authority to the northern districts of the Kars province.

The third paragraph is dedicated to the aspects of relations of the ADR with the Armed Forces of the South of Russia in the second half of 1919 and the beginning of 1920. In August the Volunteer delegation of General Baratov visited Azerbaijan. It was given instructions to pave the way for smooth reincorporation of Transcaucasia within Russia. It was considered admissible to allow the existence of de-facto independent Transcaucasian governments until the revival of the central Russian authority. The talks didn't bring to any tangible result, as the positions of two sides were polarized. Baku claimed to withdraw the Volunteer forces from Daghestan and set a neutral zone there, as well as to recognize its status-quo. In such conditions the tensions again increased and led to the economic blockade of Azerbaijan and its ally Georgia by the Armed Forces of the South of Russia and Denikin's popular order of November 9 in which he called for the Russian officers of the Azerbaijani Army to abandon their service.

The Volunteer Army's military setback in the civil war made the rapprochement with the ADR possible, and General Denikin even de-facto recognized the ADR in February 1920. But the impetuous advance of the Red Army to the south prevented the Allied efforts to create a joint military alliance between the Armed Forces of the South of Russia, Azerbaijan and Georgia.



The fourth chapter refers to the Azerbaijani policy on the issue of Karabagh and Zangezur at the beginning of 1920. During this period Baku toughened its policy, seeking again for the solution of the problem by force. This was caused by unpopularity of the Usubbekov cabinet and the above-mentioned strategic objectives of the ADR regional policy.

At first Baku claimed the nullification of the 1919 August agreement and the recognition of the ADR sovereignty over Karabagh by the Armenian National Council of Karabagh. Meantime it initiated the economic blockade of Karabagh, concentrated its troops in the region and resumed the attempts of ethnic cleansing. These were the reasons for rebellion of the Karabagh Armenians. The attacking side was the ADR but not Armenia. Baku wasn't able to stifle the rebellion. Moreover, the concentration of the ADR Army in Karabagh left the front against the Red Army open.

Baku tried to compensate its military setback in the Conference of the Transcaucasian Republics in April 1920. But the ADR delegation gained only tactical success, as the resolution of the Conference on the Karabagh problem didn't nullify or replace the 1919 August agreement.

By the fall of the ADR the Karabagh National Council had proclaimed Karabagh part of the Republic of Armenia. Thus, Karabagh never became part of independent Azerbaijan.

The fifth paragraph reflects the reasons for the fall of the ADR and the approaches of the main Azerbaijani political forces on the essential issue of the foreign orientation of the Republic in the conditions of the increasing Bolshevik threat. The ADR government had to solve a dilemma: to initiate a drastic reorientation of its foreign policy towards the agreement with Soviet Russia or to continue to rely solely upon the Entente Powers. Despite the joint pressure of the oppositional party Ittihad and the Socialist bloc and the contradictions inside the governing Musavat party the Usubbekov cabinet gave preference to the Entente, thus relying upon its diplomatic and material support. The Entente Powers de-facto recognized the ADR and Georgia in January, 1920 trying in this way to reinforce the international positions of these Republics. Meanwhile the Entente in fact declined the recognition of the Baku expansionist claims. Soon after the fall of the ADR in December 1920 the League of Nations declined the ADR address for membership, stating that it was impossible to clearly determine the territory under the Azerbaijani sovereignty and its state borders.

On the other hand, the international situation of Transcaucasia essentially changed because of the Nationalist Movement in Eastern Anatolia, led by Mustafa Kemal and the reinforcement of the international positions of Soviet Russia. These two joined their efforts against the Entente. This cooperation and the Soviet-Kemalist agreement on the ADR issue led to the fall of the Azerbaijani statehood in April 28 1920.

In the *concluding remarks* the following conclusions are drawn up.

- The main two reasons of the establishment of the ADR were first the national movement of the Caucasian Tatars, which was activated after the February Revolution of 1917. And the second, the weightier factor was the Ottoman Empire, which gave a strong impulse, accelerating the process of the creation of the Azerbaijani statehood. Owing to the Ottoman support Azerbaijan achieved vast territories.
- The main priorities of the Caucasian policy of Azerbaijan were the reincorporation of much or less the Muslim-populated territories within its borders, setting overland direct communication with Turkey and the neutralization of the threat to its independence by the Armed Forces of South of Russia.
- The ADR Caucasian policy was aggressive in its nature, aimed at the takeover of parts of Armenia and Georgia. Only in the relations with the Armed Forces of South of Russia Azerbaijan in general didn't pursue expansionist goals (excluding its claims to Daghestan).
- The ADR regional policy is divided into three periods: first, the period of the Ottoman political and military domination over Azerbaijan; second, the period of the British influence and third, the period of the ADR relative independence in its policy. During the first period the main methods of the ADR policy were the use of military (Ottoman) forces and economic pressure. In this period Armenia and Azerbaijan didn't sign any international agreement on the ADR sovereignty over Karabagh and Zangezur.
- During the second period the drastic reorientation of the ADR government towards the Entente Powers and the implementation of seemingly democratic reforms promoted the solution of the vitally important problem of maintenance of the Azerbaijani statehood, as well as the neutralization of the Russian influence in the East of Transcaucasia.
- In this period the ADR was restricted by the Allies in the possibility of use of force. That's why Baku had to act by the means of diplomatic and economic support. In the case of Karabagh and Zangezur the Azerbaijani claims were based on economic and strategic principles, while in the case of the Kars province and the Muslim-populated areas of the Yerevan *gubernia* Baku put forward the principle of national self-determination.
- In the relations with the Armed Forces of South of Russia Baku relied upon the Allies' support, making use of the Russian-British geopolitical contradictions. Meantime, the ADR carried out a balanced and cautious policy, seeking the reduction of the possible reasons for armed conflict with the Volunteer Army.
- The third period was marked with the rise of the military component in the ADR Caucasian policy, which was caused by the withdrawal of the British forces from the region. Baku resumed the attempts to takeover Karabagh and Zangezur by force. In the conditions of the failure of its



policy of force the ADR made an attempt to achieve its goals by diplomatic means. In the conference of the Republics of Transcaucasia in April 1920 in Tiflis the ADR pursued the political line of the denial of its own international commitments on the issues of Karabagh and Zangezur and the stipulation of the regional cooperation for the solution of territorial disputes.

- The main reason for the fall of the ADR was the adverse international situation, caused by the rapprochement of the Kemalist movement with Soviet Russia.
- The decline of the ADR's address for membership in the League of Nations by the latter was a clear expression of the negative stance of the international community on the territorial claims of the ADR towards its neighbouring countries. On the other hand, this fact shows, that the ADR didn't have internationally recognized state borders and therefore today's Azerbaijan can't pretend on the ground of being the legal successor of the ADR to the territories of Armenia Nagorno-Karabagh and Nakhichevan. The Nagorno-Karabagh problem has not any relevance to the territorial integrity of the Azerbaijani Republic.
- The research of the methods of the ADR Caucasian policy shows, that in the auspicious international conditions the ADR didn't hesitate to apply force for the achievement of its goals.

Առսիվային նյութեր

1. Հայաստանի Ազգային Արխիվ (ՀԱԱ), Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարություն 1918-1920, ֆ.200, ց.1, գ.12, 17, 23, 44, 45, 49, 50, 57, 79, 85, 112, 139, 143, 146, 149, 154, 158, 164, 167, 181, 186, 190, 198, 209, 212, 243, 244, 263, 271, 282, 291, 293, 294, 309, 344, 352, 358, 365, 411, 412, 417, 427, 475, 484, 563, 576:
2. ՀԱԱ, Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարություն, ֆ.201, ց.1, գ.281:
3. ՀԱԱ, Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդ 1917-1918, ֆ.222, ց.1. գ.24:
4. ՀԱԱ, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Վրաստանում, ֆ.276, ց.1., գ.16, 70, 114, 120, 133, 184, 193:
5. ՀԱԱ, Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Ռուսաստանի Հարավում, ֆ.277, ց.1, գ.5
6. ՀԱԱ, Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ադրբեջանում 1919-1920, ֆ.278, ց.1, գ.2, 3, 4, 5, 6, 8, 10, 12, 14, 16, 21, 25, 44, 45, 46:
7. Государственный архив Российской Федерации (ГАРФ), ф.130, оп.2, д.184.
8. ГАРФ, ф.446, оп.2, д.33.
9. Российский государственный военно-исторический архив (РГВИА) ф.2000, Главное Управление Генерального Штаба, оп.1. д.1274, л.2-4.

Առսիվային ժողովածուներ

1. Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ.: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ա. Վիրաբյանի խմբագրությամբ, Երևան, Հայաստանի Հանրապետության Պատմության Արխիվ, 2003, 523 էջ:
2. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Գ. Գալոյանի և Վ. Դազախեցյանի խմբագրությամբ, Երեվան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2000, 454 էջ:
3. Գաղտնի փաստաթղթերը: Ադրբեջանի դաւադրական գործունեությունից մի էջ, Երևան, Գլխավոր Շտաբի Տպարան, 1920, 56 էջ:
4. Андраник Озаян. Документы и материалы, Институт истории АН Республики Армения, Ереван, Главное архивное управление при Совете Министров РА, 1991, 494 с.
5. Архивы Азербайджана, #1-2, Из истории иностранной интервенции в Азербайджане: Документы и материалы, сост. Л.Алиева и др., Баку, 1988, 238 с.



6. Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, Типография Правительства Грузинской республики, 1919, 514 с.
7. Документы по истории борьбы за победу Советской власти в Азербайджане (1917-1918 гг.), Т.1, Баку, 1949.
8. Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов, Институт истории Академии Наук Армении, Главное архивное управление при СМ Республики Армения, Кафедра истории Армянского народа Ереванского Государственного Университета, Ереван, Издательство Академии Наук Армении, 1992, 755 с.

### Հուշեր

1. Իշխանեան Ե., Լեռնային Ղարաբաղ 1917-1920, Երևան, «Հայաստան», 1999, 730 էջ:
2. Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթենք, «Նոր օր» տպագրություն, 1930, 367 էջ:
3. Ուրբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատոր 7, Թեհրան, Գ. Հրատարակութիւն, 1982, 363 էջ:
4. Վրացյան Ա., Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան», 1993, 704 էջ:
5. Байков В., Воспоминания о революции в Закавказье 1917-1920 гг., Архив русской революции, изданный И. В. Гессеном, Т.9, Москва, Политиздат, Терра, 1991, с.91-195
6. Деникин А., Очерки русской смуты, Т.4-5, Москва, Айрис Пресс, 2005, 831 с.
7. Ллойд Джордж Д., Правда о мирных договорах, Т.1, Москва, Издательство иностранной литературы, 1957, 655 с.
8. Черчилль У., Мировой кризис, Москва, Государственное военное издательство, 1932, 328 с.
9. Essad-Bey, Blood and Oil in the Orient, Baku, Aran Press, 1997, 340 p. <sup>14</sup>
10. Rawlinson A., Adventures in the Near East 1918-1922, New-York, Dodd a.o., 1924, 353 p.
11. Karabekir K., İstiklal harbimiz, Çilt 1, İstanbul, Emre Yayınları, 1995, 520 s.
12. Keykurun N., Azerbaycan İstiklal Mücadelesinden Hatıralar 1905-1920, Azerbaycan Cumhuriyeti Milli Emniyet Genel Müdürlü, Ankara, İlke Kitabevi Yayınları, 1998, 217 s.
13. Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Mentешenin Anıları, İstanbul, Hürriyet Vakfe Yayınları, 1986, 254 s.

### Մենագրություններ և հոդվածներ

1. Աղայան Ծ., Ամերիկացի: Ղարաշրջան, դեպքեր, դեմքեր, Երևան, ՀԲՀ հրատարակություն, 1994, 813 էջ:

2. Արրահամյան Յ., Թուրքական նվաճողների դեմ Ղարաբաղի աշխատավորության մղած պայքարի պատմությունից (1918 թ. օգոստոս-հոկտեմբեր), Բանբեր Հայաստանի արխիվների, #2, Երևան, ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին կից Գլխավոր արխիվային վարչություն, 1989, էջ 162-177:
3. Ավետիսյան Ս., Նախիջևանի պատմության վավերագրեր (1889-1920 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, #3, Երևան, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի հրատարակչություն, 1996, էջ 186-196:
4. Գալոյան Գ., Պատմության քառուղիներում, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1982, 461 էջ:
5. Գեներալ Նազարբեկովի հուշերը, Բանբեր Հայաստանի արխիվների, #3, Երևան, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արխիվային գործի վարչություն, 1992, էջ 34-151:
6. Գրիգորյան Ռ., «Փաստաթղթեր Զանգեզուրի 1918-1919 թթ. ինքնապաշտպանական կռիվների մասին», Լրաբեր հասարակական գիտությունների, #6, Երևան, Հայկական ԽՍՀ Գիտությունների Ակադեմիայի հրատարակչություն, 1989, էջ 73-86:
7. Չոհրաբյան Է., Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918, Երևան, Հայագիտակ, 2000, 144 էջ:
8. Չոհրաբյան Է., Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները», (1918 թ. դեկտ.-1920 թ. ապրիլ), Երևան, «Տիգրան Մեծ», 2002, 266 էջ:
9. Խուրշուդյան Լ., Ստեփան Շահումյան, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1959, 342 էջ:
10. Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր 4, Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիա, 1978, 720 էջ:
11. Հարությունյան Յ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատարակչություն, 1996, 298 էջ:
12. Համբարձումեան Ռ., Գարեգին Նժդեհ, կենսագրական յաւելումներ, անոխպ գրութիւններ ու խորհրդածութիւններ, Երևան, Նախիջևան հրատարակչութիւն, 2005, 498 էջ:
13. Համբարձումեան Ռ., Գարեգին Նժդեհ (համառոտ կենսագրական եւ կենսատարեգրութիւն), Երևան, Նախիջևան հրատարակչութիւն, 2006, 111 էջ:
14. Մախմուդյան Գ., Անգլիական ռազմական վարչակարգը Անդրկովկասում և Հայաստանի կառավարությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, #2, Երևան, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի հրատարակչություն, 2001, էջ 62-80:
15. Մուրադյան Ա., Էջեր, Յ. Տեր-Աստվածատրյանցի «Աղետների յուշագիրը» նորահայտ օրագրից (1918 թ.), Մերձավոր Արևելքի երկրներ և ժողովուրդներ XXIII, ՀՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, Զանգակ-97, 2004, էջ 226-241:



16. Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ.: Փաստաթղթեր և նյութեր, Բանբեր Հայաստանի արխիվների, #1-2, Երևան, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արխիվային գործի վարչություն, 1993, 391 էջ:
17. Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի Հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918 թ. հունիս-նոյեմբեր), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2004, 183 էջ:
18. Վիրաբյան Վ., Հայկական հետախուզությունը առաջին համրապետության տարիներին (1918-1920 թթ.), Երևան, Աստղիկ, 2003, 226 էջ:
19. Վիրաբյան Վ., Հայաստանը Անդրկովկասյան համրապետությունների 1920 թ. ապրիլյան խորհրդաժողովում, Երևան, Աստղիկ, 2004, 41 էջ:
20. Абасов А., Генерал Мехмандаров, Баку, "О-во Знание АзССР. В помощь лекторам и пропагандистам", 1977, 80 с.
21. Абдурогимов Г., Кавказская Албания — Лезгистан. история и современность, С.-Петербург, Издательство Дагестанского госпедуниверситета, 1995, 607 с.
22. Абрамян Г., Политика английских завоевателей по отношению к Арцаху (ноябрь 1918 — август 1919), Լրաբեր հասարակական գիտությունների, #7, Երևան, Հայկական ԽՍՀ Գիտությունների Ակադեմիայի հրատարակչություն, 1989, с.13-24.
23. Аваловъ З., Независимость Грузии въ международной политике 1918-1921 гг., Парижъ, Б. и., 1924, 318с.
24. Азербайджанская Демократическая Республика, под ред. Н. Агамалиева и др., Институт истории АН Азербайджана им. А.Бакиханова, Баку, Элм, 1998, 306 с.
25. Балаев А., Азербайджанское национально-демократическое движение 1917-1920, Баку, Элм, 1990, 95 с.
26. Балаев А., Азербайджанское национальное движение в 1917-1918 гг., Баку, Элм, 1998, 279 с.
27. Баликян О., Письма А. И. Хатисяна А. О. Оганджянню, Լրաբեր հասարակական գիտությունների, #3, Երևան, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի հրատարակչություն, 1996, с.197-212.
28. Векилов Р., История возникновения Азербайджанской Республики, Баку, Элм, 1995, 62 с.
29. Волхонский, М. Муханов В., По следам Азербайджанской Демократической Республики, Москва, Издательство "Европа", 2007, 274 с.
30. Гаджиев А., Демократические республики Юго-западного Кавказа (Карсская и Араз-Тюркская Республики), Азербайджанский институт стратегических исследований развития Кавказа, Баку, Нурлан, 2004, 279 с.
31. Гаджиев И. Б., Совместная борьба бакинского пролетариата и трудящихся Дагестана против английских интервентов и деникинской контрреволюции в 1919-1920 гг., Махачкала, О-во по распростране-

- нию политических и научных знаний РДФСР, Дагестанское отделение, 1960, 54 с.
32. Гаджиев И.Б., Совместная борьба трудящихся Азербайджана и Дагестана за власть Советов в 1918-1920 гг., Махачкала, Даскнигиздат, 1968, 90 с.
  33. Гарибджанян Г. Б., Страницы истории армянского народа, Ереван, издательство "Гитутюн" НАН РА, 1998, 274 с.
  34. Гасанова Э., Идеология буржуазного национализма в Турции, Баку, Изд-во АН АзССР, 1966, 162 с.
  35. Гурко-Кряжин В., Краткая история Персии, История Ирана, Киев-Москва, Альтернатива-Евролинц, 2003, с. 50-134.
  36. Гусейнов И., Борьба трудящихся Азербайджана против деникинщины в 1919-1920 гг., Сборник статей по истории Азербайджана, Выпуск 2, Академия Наук Азербайджанской ССР, Институт истории им. А. Бакиханова, Баку, тип. "Красный Восток", 1949, с. 246-275.
  37. Гусейнов М. Д., Тюркская демократическая партия федералистов «Мусават» в прошлом и настоящем, Баку, Азгиз, 1927, 91 с.
  38. Дарабади П., Военные проблемы политической истории Азербайджана начала XX века, АН Азербайджана, Музей истории Азербайджана, Баку, Элм, 1991, 203 с.
  39. Енукидзе Д., Крах империалистической интервенции в Закавказье, Тбилиси, Госиздат. Грузинской ССР, сектор политической литературы, 1954, 294 с.
  40. Изъ исторіи армяно-грузинскихъ отношеній: 1918 годъ, Тифлисъ, Типография Правительства Грузинской республики, 1919, 125 с.
  41. Исмаил М., История Азербайджана (Краткий обзор с древнейших времен до 1920 г.), Баку, Азернешр, 1995, 95 с.
  42. История Азербайджана, Т.3, Баку, Академия Наук Азербайджанской ССР, Институт истории, 1963, 537 с.
  43. История государства и права Азербайджанской ССР под редакцией М. Халафова и др., Баку, Академия Наук Азербайджанской ССР, сектор философии, 1964, 313 с.
  44. История государства и права Азербайджанской ССР, Академия Наук Азербайджанской ССР, институт философии и права Азербайджанский Государственный Университет им. С. М. Кирова, Юридический факультет, Баку, Элм, 1973, 552 с.
  45. Казанджян Р., К предыстории самоопределения Нагорного Карабаха, Институт Востоковедения Национальной Академии Наук Республики Армения, Москва, Армянская община Москвы, 1997, 52 с.
  46. Казанджян Р., Большевики и младотурки: новые документы о российско-турецких отношениях (1920 -1922 гг.), Институт Востоковедения Национальной Академии Наук Республики Армения, Москва, Институт Востоковедения Российской Академии Наук, 1996, 25 с.
  47. Казиев М., Нариман Нариманов, Баку, Азернешр, 1970, 187 с.



48. Караев А., Из недавнего прошлого. Материалы к истории Азербайджанской Ком. Партии (6), Баку, "Бакинский рабочий", 1926, 132 с.
49. Кочар М., Армяно-турецкие общественно-политические отношения и Армянский вопрос в конце 19-начале 20 вв., Ереван, Издательство Ереванского Университета, 1988, 306 с.
50. Лудшувейт Е., Турция в годы первой мировой войны 1914-1918, Москва, Изд-во Московского Университета, 1966, 386 с.
51. Махмуриян Г., Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг. Бремя белого человека, Ереван, "Лусакн", 2002, 309 с.
52. Мурадян П., История — память поколений. Проблемы истории Нагорного Карабаха, Ереван, "Айастан", 1990, 158 с.
53. Насиров Т., Борьба за власть в Азербайджане 1917-1920, Баку, Элм, 1993, 119 с.
54. Осипов М., К вопросу об английской интервенции в Азербайджане в 1918-1919 гг., Сборник статей по истории Азербайджана, Выпуск 2, Академия Наук Азербайджанской ССР, Институт истории им. А. Бакиханова, Баку, тип. "Красный Восток", 1949, с. 206-220.
55. Пипия Г., Политика Германии в Закавказье в 1918 г. Сборник документов, Тбилиси, издательство "Сабчота Сакартвело", 1971, 239 с.
56. Привольный А., Над Муганью зарево Октября, Баку, Азернешр, 1967, 199 с.
57. Раевский А., Английская интервенция и мусаватское правительство, Баку, Истарт. отд. ЦК и БК АКП(6), 1927, 195 с.
58. Раевский А., Английские "друзья" и мусаватские "патриоты", Баку, Азгиз, 1927, 69 с.
59. Раевский А., Мусаватское правительство на Версальской конференции, Баку, Азербайджанский научно-исследовательский институт, Известия, Т.1, Выпуск 1, 1930, 115 с.
60. Раевский А., Партия Мусават и ее контрреволюционная работа, Баку, Азгиз, 1929, 64 с.
61. Раггаузер Я., Революция и гражданская война в Баку, Баку, Истарт отдел ЦК и БК АКП (6), 1927, 520 с.
62. Саркисян А., Из истории Нагорного Карабаха (1918-1921 гг.), Բնիքերի Հայաստանի արխիվների, #3, Երևան, ՀԻՍՀ Մինիստրների Խորհրդին կից Գլխավոր արխիվային վարչություն, 1989, с. 63-104
63. Смит М., Партия «Мусават» и формирование азербайджанского социал-демократического национализма, История национальных политических партий России, Москва, РОССПЭН, 1997, с. 164-172
64. Стеклов А., Армия мусаватского Азербайджана, Баку, Азгиз, 1928, 74 с.
65. Токарежеский Е., Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане, Баку, Академия Наук Азербайджанской ССР, Институт истории, 1957, 332 с.
66. Тунян В., Карабахский конфликт: историко-геополитический аспект, Ереван, типография ГИУА, 1999, 100 с.

67. Шахатунян А., Административный передел Закавказского края, Тифлис, тип. Ашхатавор, 1918, 206 с.
68. Энциклопедический Словарь, под редакцией профессора И. Е. Андреевского, Т.1, С.-Петербург, Семеновская Типо-Литография (И. А. Эфрона), 1890, 480 с.
69. Эвоян В., Баликян О., Из истории Нагорного Карабаха (1918-1921 гг.), Բանբր Դպրատանի արխիվների, #1, Երևան, ՀԽՍՀ Մինիստրությանի հորհրդին կից Գլխավոր արխիվային վարչություն, 1989, с. 86-130.
70. Начъев А., Гарс вѣ Араз-Турк Республикаларынын тарихинден, Баки, 1990
71. Нәсибзадә Н., Азербайжан Демократик Республикасы, Баки, 1990
72. Байкара Н., Азербайжан истиглал мубаризәси тарихи, Баки, 1992
73. Audrey L. Altstadt, The Azerbaijani Turks: Power and Identity under Russian Rule, Stanford, California, Hoover Institution Press, Stanford University, 1992, 331 p.
74. Hovhannisyán N., The Karabakh Problem. The Thorny Road to Freedom and Independence, National Academy of Sciences of Armenia, Institute of Oriental Studies, Yerevan, Zangak-1997, 2004, 147 p.
75. Hovhannisian R. G., Republic of Armenia, Vol.1, 616 p. Vol 2., 603 p., Vol. 3, 534 p., Berkeley-Los Angeles-London, University of California Press, 1982, 1996,
76. Kazemzadeh F., The Struggle for Transcaucasia 1917-1921, New-York, Philos. Lib., Oxford: Ronald, 1951, 356 p.
77. Suny R. G., The Baku Commune 1917-1918, Princeton, New Jersey, Princeton University Press, 1972, 413 p.
78. Suny R. G., The Making of the Georgian Nation, Bloomington and Indianapolis, Indiana University Press, 1994, 418 p.
79. Swietochowski T., Russia and Azerbaijan: a Borderland in Transition, New-York, Columbia University Press, 1998, 290 p.
80. Swietochowski T., Russian Azerbaijan: 1905-1920, the Shaping of National Identity a Muslim Community, Cambridge, Cambridge University Press, 1985, 256 p.
81. Abbaslı N., Azərbaycan Özgürlük Mücadelesi, İstanbul, Beyaz Balina Yayınları, 2001, 335 s.
82. Aslan B., Türkiye-Azerbaycan İlişkileri ve İbrahim Ebilov 1920-1923, İstanbul, Kaynak Yayınları, 2004, 357 s.
83. Cem-Ender Arslanoğlu, Kars Milli – İslam Şurası 5.11.1919-17.1.1919 ve Cenubigarbi Kafkas Hükümeti Muvakkata-İ Milliyesi 18.ocak-13.nisan.1919, Ankara, Azerbaycan Kültür Derneği Yayınları, 1986, 309 s.
84. Sorgun T., Halil Paşa İttihad ve terakki'den cumhuriyeti'ye bitmeyen savaş, İstanbul, Beyaz Balina Yayınları, 1997, 439 s.



85. Sureyya Aydemir S., Balkanlardan Orta Asyaya: Enver Paşa, Cilt 3, İstanbul, Remzi Kitabevi Yayınları, 1999, 660 s.

### Ամսույ

1. Աշխատատը, 1919-1920 թթ.
2. Արև, 1918-1919 թթ.
3. Դրօշակ, 1925 թ., # 3, 1925 թ. սեպտեմբեր, էջ 68-71, «Հայաստանը եւ իր հարեւանները», էջ 72-77, «Շարուր-Նախիջեւան եւ քուրք-թաթարական քաղաքականութիւնը»
4. Դրօշակ, # 2, 1926 թ. փետրվար, էջ 40-45, «Թխրք-խորհրդային հարաբերութիւնները», էջ 46-52, «Գանձակ-Ղարաբաղի վեճը»
5. Դրօշակ # 5, 1927 թ. մայիս, էջ 146-152, «Անդրկովկաս»
6. Ժողովրդի ձայն 1918-1919 թթ.
7. Հայրենիք, 1918-1919 թթ.
8. Հորիզոն, 1918 թ.
9. Մշակ, 1918-1919 թթ.
10. Յանաջ, 1919 թ.
11. Азербайджань, 1919 г.
12. Бакинский рабочий, 1918 г.
13. Борьба, 1919-1920 гг.
14. Дагестанская правда, [www.dagpravda.ru](http://www.dagpravda.ru) – 2.11.2005
15. Единая Россия, 1919 г.
16. Искра, 1918 г.
17. Кавказское слово/Закавказское слово/Слово, 1918-1920 гг.
18. Набатъ, 1919 г.
19. Наше время, 1918-1920 гг.
20. Зеркало, [www.zerkalo.az](http://www.zerkalo.az)-2,9,16,23.12.2006, 13,20,27.01.2007:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....	5
ԳԼՈՒԽ 1 ԱՂԻԲԵՋԱՆԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ. 1918 Թ. ՄԱՅԻՍ-ՀՈԿՏԵՄԲԵՐ.....	7
ԳԼՈՒԽ 2 ԱՂԴ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՏԱՆՏԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ. 1918 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ-1919 Թ. ՕԳՈՍՏՈՍ.....	51
ԳԼՈՒԽ 3 ԱՂԴ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1919 Թ. ՕԳՈՍՏՈՍԻՑ 1920 Թ. ԱՊՐԻԼ ԸՆԿԱԾ ՇՐՋԱՆՈՒՄ.....	123
ՎԵՐՋԱԲԱՆ.....	178
RESUME.....	182
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	192
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....	200